



ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY



ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
RA MINISTRY OF DIASPORA
МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գիտաժողովի նյութերի ժողովածու
Նվիրված է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին

**ПРОБЛЕМЫ И ПРИОРИТЕТЫ СОЦИАЛЬНО-
ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Сборник материалов конференции
Посвящен 100-летию геноцида армян

**URGENT ISSUES AND PRIORITIES OF
SOCIO-ECONOMIC DEVELOPMENT IN
REPUBLIC OF ARMENIA**

Collection of Scientific Articles
Dedicated to 100th anniversary of the Armenian Genocide

Երևան

Ереван 2015 Yerevan

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05
Հ 247

*Հրատարակության է երաշխավորվել
Եվրասիա միջազգային համալսարանի
գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝

Սուրեն Օհանյան (գլխավոր խմբագիր), աշխ.գ.դ., պրոֆեսոր
Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր
Հայկ Մարգարյան, տ.գ.դ., պրոֆեսոր
Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ.
Աշոտ Մարդոյան, տ.գ.թ., դոցենտ
Լիլյա Ավետիսյան, տ.գ.թ., դոցենտ
Սամվել Քոթանջյան, տ.գ.թ.
Գառնիկ Մաֆարյան, ի.գ.դ., պրոֆեսոր
Մտեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր
Լիլիթ Տոնոյան, ի.գ.թ.
Աշոտ Ենգոյան, ք.գ.դ., պրոֆեսոր
Աննա Օհանյան, ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի փ.գ.դ., պրոֆեսոր
Հակոբ Հարությունյան, փ.գ.թ., դոցենտ
Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր
Կարեն Վեյյան, ք.գ.թ., դոցենտ

Խմբագրական խորհրդի քարտուղար՝ Նունե Ջումարդյան

Հ 247

**Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման
հիմնախնդիրները և առաջնահերթությունները:** Գիտաժողովի նյութերի
ժողովածու: Նվիրված է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին
/խմբ. խորհուրդ. - Եր.: Եվրասիա միջազգային համալսարան,
Գիրք 5. 2015. – 154 էջ:

Գիտական նյութերի ժողովածուն ներկայացնում է Եվրասիա միջազգային
համալսարանում 2015 թ. ապրիլի 18-ին կայացած ամենամյա գիտաժողովի նյութերը՝
նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Տպագրված նյութերը կարող են օգտակար լինել գիտական աշխատողների,
դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, պետական կառավարման
ապարատի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05

ISBN 978-9939-866-01-7

© Եվրասիա միջազգային համալսարան, 2015

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05
Հ 247

*Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия*

Редакционная коллегия

Сурен Оганян (главный редактор), д.г.н., профессор
Ашот Маркосян, д.э.н., профессор
Айк Саркисян, д.э.н., профессор
Оганес Арытюнян, к.э.н.
Ашот Мардоян, к.э.н., доцент
Лиля Аветисян, к.э.н., доцент
Самвел Котанджян, к.э.н.
Гарник Сафарян, д.ю.н., профессор
Степан Цагикян, д.ю.н., профессор
Лилит Тоноян, к.ю.н.
Ашот Енгоян, д.полит.н., профессор
Анна Оганян, д. филос.н. Стонхиллского Университета США, профессор
Акоп Арутюнян, к. филос.н., доцент
Самвел Мурадян, д.ф.н., профессор
Карен Велян, к.ф.н., доцент

Секретарь редакционной коллегии: Нуне Джомардян

Հ 247

**Проблемы и приоритеты социально - экономического развития
Республики Армения** /материалы научной конференции. Посвящен
100-летию геноцида армян/ ред. коллегия - Ер., Международный
университет Евразия, Книга 5. 2015. – 154 стр.

Сборник материалов научной конференции Международного университета Евразия представляет материалы состоявшейся 18 апреля 2015г. ежегодной научной конференции, посвященной 100-летию геноцида армян.

Опубликованные материалы могут быть полезны научным работникам, преподавателям, аспирантам, студентам, работникам государственного аппарата управления, а также широкому кругу читателей.

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05

ISBN 978-9939-866-01-7

© Международный университет Евразия, 2015

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05
Հ 247

*Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University*

Editorial Board:

Ashot Markosyan (Chairman), Doctor of Economics, Professor
Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor
Hayk Sargsyan, Doctor of Economics, Professor
Hovanes Harutyunyan, Ph.D. in Economics
Ashot Mardoyan, Ph.D. in Economics, Associate Professor
Lilya Avetisyan, Ph.D. in Economics, Associate Professor
Samvel Kotanjyan, Ph.D. in Economics
Garnik Safaryan, Doctor of Law, Professor
Lilit Tonoyan, Ph.D. in Law
Ashot Engoyan, Doctor of Political Sciences
Anna Ohanyan, Ph.D. in Political Sciences at Stonehill College, USA, Professor
Hakob Harutyunyan, Ph.D. in Philosophy, Associate Professor
Aram Barlezizyan, Doctor of Philology, Professor
Karen Velyan, Ph.D. in Philology, Associate Professor

Secretary of Editorial Board: Nune Jomardyan

Հ 247 **Urgent Issues and Priorities of Socio-Economic Development in RA/**
Collection of papers presented at the conference. Dedicated to 100th
anniversary of the Armenian Genocide/editorial board. - Yerevan,
Eurasia international University, Volume 5, 2015. 190 pages.

The articles contained in this volume are the collection of papers presented at the annual conference at Eurasia International University on April 18, 2015. The conference was dedicated to 100th anniversary of the Armenian Genocide.

The published papers can be useful to scientists, professors, governmental employees, as well as a wide range of readers.

ՀՏԴ 338:06
ԳՄԴ 65.05

ISBN 978-9939-866-01-7

© Eurasia International University, 2015

ԱՌԱՋԱԲԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանում 2015թ. ապրիլի 18-ին, ՀՀ սփյուռքի նախարարության հետ համատեղ, տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները ամենամյա միջբուհական գիտաժողովը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Գիտաժողովի աշխատանքներն իրականացվեցին երեք բաժանմունքներում:

Առաջին բաժանմունքում ներկայացվեցին զեկույցներ «Հայոց ցեղասպանության դասերը և արդիականությունը» խորագրի ներքո: Ցեղասպանության հիմնախնդիրներին առնչվող հարցերի քննարկմանը մասնակցեցին և իրենց հետազոտությունները ներկայացրեցին Եվրասիա միջազգային համալսարանի, ԵՄՀ-ում Էրազմուս Մունդուս ծրագրի մասնակից Բեռլինի Հումբոլդի անվան համալսարանի, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի, Սփյուռքի նախարարության ներկայացուցիչներ, դասախոսներ և ասպիրանտներ:

Գիտաժողովի երկրորդ ու երրորդ բաժանմունքներում քննարկվեցին տնտեսագիտական և լեզվաբանական հիմնախնդիրներին առնչվող արդի թեմաներ:

Սույն գիտական ժողովածուն ներառում է գիտական նստաշրջանին ներկայացված և ընտրված այն զեկույցները, որոնք առանձնանում են գիտական հետազոտության կատարման պատշաճ մակարդակով և տեսական ու գործնական հետազոտության խորությամբ:

ԲԱԺԻՆ 1

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԿԻՆԸ

Հրանուշ Հակոբյան

ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հոդվածում հայ կինը ներկայացված է որպես ընտանիքի պահապան, ազգային ինքնության պահպանության ջահակիր, բարեգործ, մշակույթի պահպանման և զարգացման երաշխավոր, Հայ դատի համար մղվող պայքարի առաջամարտիկ, կանանց խնդիրներին և իրավունքներին առնչվող գործընթացների մասնակից:

Բանալի բառեր. ցեղասպանություն, հայ կին, Ավետիս Ահարոնյան, տեղահանություններ, հայրենագրվում, Զապել Եսայան, Օսմանյան կայսրություն, Դիանա Արգար, Հայ օգնության միություն:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը միավորել է ողջ հայ ժողովրդին:

Դեռևս 2011 թվականին ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովը, որի նպատակն էր խթանել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացը, համակարգել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները, մարդկության ուշադրությունը սևեռել հայրենագրված և ցեղասպան եղած ազգի իրավունքներին, հետևանքների վերացմանը:

Աշխարհասփյուռ հայությունն այս օրերին առավել բռունցքված է, քանի որ յուրաքանչյուրիս ուղեկցում է այն գիտակցությունը, որ մեր հավաքականությամբ ահագնանում է պայքարը ցեղասպանության դեմ, և ամենքս փորձում ենք մեր ներդրումն ու մասնակցությունն ունենալ այդ պայքարն իր վերջնական հանգրվանին հասցնելու հարցում:

Հայ ժողովրդի համար ամենաողբերգական պահերին, նաև պատմական զարգացման ներկա փուլում, իր անփոխարինելի մասնակցությունն ու դերակատարումն ունի հայ կինը, որն ի սկզբանե հակված է եղել լիուլի կատարելու իր մայրական դերը, կյանքն ինքնամոռաց նվիրաբերելու իր զավակներին ու ազգին, հոգալու ընտանիքի հոգսերը՝ ցուցաբերելով գերմարդկային զոհողություններ:

Ո՞վ է հայ կինը: Բոլոր ժամանակներում նա եղել է կենսունակ ու արարչագործ, իմաստուն ու հնարամիտ, նուրբ ու գեղանի, բայց անհրաժեշտության պահին՝ օժտված իր օջախը պաշտպանելու, իր կողակցին սատար կանգնելու, մարտնչելու ու տքնելու կարողությամբ:

Հայ կինն իր փխրուն ուսերին կրել և կրում է ազգապահպանության, նրա վերարտադրության, ոգու, տեսակի ու ընտանեկան ավանդույթների պահպանման բեռը: Եվ պատահական չէ, որ հայ հասարակությունը պաշտում ու մեծարում է կնոջը, մորը, աստվածացնում նրան՝ կոչելով Անահիտ, Աստղիկ, Նանե:

Հայ կնոջ համար օրինակ է Ոսկեմայր Անահիտ դիցուհին, որ մայրության և պտղաբերության խորհրդանիշն էր, ազգի ինամակալը: Մովսես Խորենացին այսպիսի մի բնորոշում ունի՝ «...*Խորագետ գեղեցկուհիները դարձել են իրենց ընտանիքի Անահիտը և իրենց հոգու կրակով են վառ պահել հայոց օջախը: Ամեն տուն իր Մեծ Մայրն է ունեցել...*», որին պաշտել են զավակները:

Ամուր, ազգային և բարոյական արժեքներով առաջնորդվող ընտանիքը կարող է միայն լինել մեր պետականության հիմքը և ազգի հզորության երաշխիքը, որի երաշխավորն է հայ կինը: Այստեղ տեղին է հիշել Գարեգին Նժդեհի հետևյալ խոսքերը. «*Մայրերի ափի մէջ պիտ փնտռել ազգերի ճակատագիրը*»: Ասել է, թե կինը պատասխանատվություն է կրում լինելու զգոն ու շրջահայաց և առաջադիմության տակ հասկանալու համաշխարհային նվաճումների յուրացումն ու դրանց օգտագործումն ի նպաստ ազգապահպանման գործի:

Հայ կինը Հայրենիքի պաշտպանն է: Պատմությանը հայտնի ողբերգական շատ դեպքեր կան, երբ հայ կինն իր պատիվն ու արժանապատվությունը պահելու համար նետվել է անդունդը կամ գետը, սակայն կան նաև բազմաթիվ դեպքեր, երբ զենքը ձեռքին, ֆիդայու հագուստով ելել է պայքարի:

Ավետիս Ահարոնյանն այսպես է բնորոշում հայ կնոջը. «*Հզոր եղաւ հայ կինը մեր պատմութեան ընթացքին: Աշխարհը չգիտէ, թէ ինչ երկաթէ կամք, ինչ անընկճելի կորով, ինչ անձնուրաց արիութիւն եւ որչափ առաքինութիւն կայ այդ թխադէմ, այդ հեզ ու բարի աչքերով, ամօթխած ու արդար էակի մէջ, որ կոչուում է հայ կին, հայ մայր: Վասպուրականի, Մուշ ու Բուլանքիի, Բարձր Հայքի մարէները, Ղարաբաղի այսները, Այրարատեան դաշտի մամիկներն ու ծաղիկ հարսները Հայոց Աշխարհի յարալէզ ոգիներ եղան մեր գույումի օրերին, ցեղի վերքերը լիզեցին եւ ազգը վերակենդանացրին ու պահպանեցին*»: Նրանցից առավելապես հայտնի են Աղբյուր Սերոբի կինը՝ *Սոսեն*, որն ահ ու սարսափ էր նույնիսկ թուրքերի համար, Վանի հերոսուհի *Աղավնի Վարպետյանի* սխրանքները՝ Վան քաղաքի հայկական թաղամասի պայքարի գործում, *Շաքեն*, որը քաջաբար պայքարեց թուրքական խմբի դեմ մինչև վերջին փամփուշտը և ուրիշներ:

Հայ կինը տղամարդու հետ մարտնչել է Ավարայրի ճակատամարտում և հասել մինչև Կիլիկիա, Ցեղասպանության գողգոթայից՝ Մուշ, Մասուն, Զեյթուն ու Մուսա լեռ, Սարդարապատից՝ Մեծ հայրենական, Սփյուռքի հայապահպանության մարտադաշտից՝ Արցախյան գոյամարտ ու անկախ Հայրենիքի կերտում:

Հայ կնոջ համար ազգային նշանակության խնդիրները մշտապես առաջնային են եղել: Դեռ թարմ ու կենդանի է հիշատակն այն 14 կանանց ու աղջիկների, ովքեր կովեցին արցախյան ճակատի առաջին գծում, ովքեր թաքցրեցին արցունք ու կսկիծ, դարմանեցին զինվորների վերքերը, ովքեր ամուր պահեցին թիկունքն ու կովող տղաներին հանապազօրյա հացով սնեցին, ովքեր աղոթեցին, իրենց հոգու անսպառ կորովը, ջերմությունը փոխանցեցին իրենց մարտընչող որդիներին ու ամուսիններին:

Այսօր էլ մեր հաղթանակած բանակում 20 տոկոսը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ են: «Ո՛չ իմաստասերներ, ո՛չ էլ թագավորներ օգնության կանչեք Հայրենիքին, այլ մայրական ազդեցությունը միայն», - հավաստում է Գարեգին Նժդեհը:

Հավաստացյալ է հայ կինը: Երբ քրիստոնեությունը մուտք գործեց Հայաստան, նրա տարածողների մեջ առաջինները եղան արքունի գերդաստանի հայուհիները՝ Սանատրուկ թագավորի դուստր Սանդուխտը, Տրդատ թագավորի կինն ու քույրը՝ Աշխենն ու Խոսրովիդուխտը, եղան հայուհիներ, որոնք նահատակվեցին՝ հանուն հավատքի: Հայ եկեղեցու շուրջ անուրանալի դեր են կատարում այսօր մեր տիկնանց միություններն ու բարեսիրական կազմակերպությունները:

Ցեղասպանությունն ու հայ կինը: Պատմության հոլովությունում աներևակայելի փորձությունների միջով է անցել հայ կինը՝ ավերներ, հրդեհվող օջախներ, սով, օտարություն անասելի ցավ ու տառապանք: Սակայն ամենասուկալի փորձությունը, որ նրան բաժին ընկավ, **Հայոց ցեղասպանությունն էր:** Օսմանյան կայսրությունը սկսեց իրագործել իր մանրամասն ծրագրված ցեղասպանության, հայրենագրկման, հայ ժողովրդի մշակույթն ու քաղաքակրթությունը, հողն ու հարուստ ունեցվածքը սեփականելու հրեշավոր ոճիրը՝ առաջին փուլում հավաքելով ու բնաջնջելով ազգի գլուխը՝ մտավորականներին ու արվեստագետներին, հայ տղամարդկանց մասսայական սպանություններով ու ռազմաճակատի առաջին գիծ ուղարկելով:

Ծրագրի հաջորդ փուլը ծերերի, մանուկների ու կանանց հրեշավոր տեղահանություններն էին, որոնք արագորեն վերափոխվեցին «մահվան երթերի»:

Օսմանյան կայսրության կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանությունն աշխարհով մեկ ցրեց հայ ժողովրդին՝ մեկ անգամ ու ընդմիջտ խախտելով նրա ապրելակերպը:

Հրանտ Դինքը, նկատի ունենալով ցեղասպանության թվականն ու «տարողությունը», այն անվանեց «1915 մեթր խորությամբ ջրհոր մը»: «Ջրհոր», որն իր մեջ ամփոփում է ողջ հայ ժողովրդի ողբերգությունը՝

- Հայրենագրկում ու սպանոյ,
- Մտավորականության ու արվեստագետների բնաջնջում,
- Բժշկական փորձարկումներ,
- Տարեցների, երեխաների ու կանանց բռնի տեղահանում,
- Տղամարդկանց մասսայական սպանություն, տառապանքների անխնա ենթարկում,

- Պատմամշակութային ժառանգության ոչնչացում,
- Կողոպտված, ավերված քաղաքներ ու գյուղեր,
- Պղծված եկեղեցիներ ու վանքեր և այլն:

Ընդհանուր այս պատկերի վրա, փորձելով ներկայացնել կնոջ, մոր ողբերգությունը կամ վիճակը, առանձնացնենք հետևյալ հիմնական կետերը.

1. Յեղասպանությունը հայ կանանց համար կրկնակի ցավ էր, որովհետև հայ կինը զուգահեռաբար ենթարկվեց նաև բռնաբարության, բռնի ամուսնության, ստրկացման, առևանգվեց օսմանյան բանակի զինվորների, քրդական ավազակախմբերի կամ բեդվիիների կողմից,

2. Ձևավորվեց հայ գերի կանանց շուկան,

3. Նրանցից շատերն իրենց կամքին հակառակ ստիպված եղան ընդունել մահմեդականությունը, մոռացան իրենց հայկական ինքնությունն ու կորցրին մայրենի լեզվով խոսելու ունակությունը,

4. Նրանք ապրում էին ընտանիքի և պատվի պաշտպանության անընդհատ պայքարի մեջ:

Հայ կանանց հանդեպ բռնությունները հավասարազոր էին ցեղասպանության: Այս առումով ցեղասպանությունն արգելող ու պատժող Միացյալ ազգերի համաձայնագրի երկրորդ հոդվածում բռնաբարումները... ցեղասպանական արարքներ էին կոչվում, *«որովհետև ոչ միայն ֆիզիքական եւ մտային առաւելագոյն վնաս կը հասցնեն անոնք, այլեւ ազգային եւ կրօնական հաւաքականութիւն մը ի սպառ կը ջնջեն՝ այրերը սպաննելով, կիներն ու աղջիկներն ալ ցեղասպանական բռնաբարումի ենթարկելով: Յայտնապէս բռնաբարքներուն նպատակը՝ ամբողջ շրջաններ իրենց բնիկ տարրէն մաքրելն էր»¹:*

Այսպես թուրքը նպատակ ուներ նվաստացնել, բարոյալքել, դիմադրողականությունը սպառել նույնիսկ անչափահաս՝ 8-9 տարեկան աղջիկների: Դրա համար է, որ շատ հայուհիներ, իրենց երեխաների ձեռքը բռնած, հանձնվում էին Եփրատի ալիքներին կամ բարձունքներից վար նետվում:

Կանայք յուրովի ծանր էին «հաղթահարում» ստեղծված իրավիճակը: Օրինակ՝ Շապին Գարահիսարի կանայք ըմբոստացան տեղահանության որոշմանը համակերպված տղամարդկանց դեմ և նախընտրեցին մահկանացուն կնքել տանը: Ուրֆացի կանայք էլ թշնամու ձեռքը չընկնելու համար գերադասեցին մահադեղ խմել: Մի շարք գավառներում մայրերը կրակի էին տալիս իրենց տները, որտեղ գտնվում էին իրենց երիտասարդ աղջիկները, ոմանք ինքնասպան էին լինում կամ խելագարվում:

Եղան նաև կանայք, որ երեխաների և իրենց կյանքը փրկելու համար իրենց կամքին հակառակ՝ ստիպված մահմեդականություն ընդունեցին և ցեղային ավանդույթի համաձայն՝ ստացան հատուկ դաջվածքներ: Դաջվածքները հաճախ կետերի կամ «x»-ի տեսք ունեին և պայմանավորում են հովանավորություն, ուժ կամ պտղաբերություն, բայց հայ կանաց պարագայում այն իսկական X՝ անհայտ դարձավ՝ անճանաչ, անինքնություն: Բազմահազար կանայք չբացահայտված հոգեբանական ողբերգության նահատակներ, Հայոց ցեղասպանու-

¹ Ս. Զեյթլեան, Հայ կնոջ կեանքի ուղիին հետքերով, Անթիլիաս, 2013, էջ 141:

թյան կենդանի զոհեր դարձան: Իսկ թե հոգեբանական ի՞նչ քավարանում տառապեցին, ի՞նչ սարսափներ, մեղքի անասելի զգացողություններ, ներանձնական ողբերգություն ու ցնցումներ ապրեցին Բազմահազար իսլամացած հայ կանայք, Վարթոյի աշիրեթի օրինակով սաբերում տասնյակ տարիներ թաքնված ցեղախմբերի կանայք ու դեռատի աղջիկները, անհնար է նկարագրել:

Ո՞վ է հատուցել այս բոլոր հանցանքների ու ողբերգությունների համար. ոչ ոք: Այսօր մենք ոչ միայն պետք է հիշենք, այլև պահանջենք: Մենք պետք է հատուցում պահանջենք մեր քույրերի կրած հոգու տանջանքների համար: Պահանջենք ոչ միայն 1.5 միլիոն զոհերի համար, այլ շուրջ 15 միլիոն չճնված երեխաների համար, ազգին գլխատելու համար: Մեր ազգն ամենապարզ հաշվարկներով այսօր ոչ թե 10, այլ 25 միլիոն պետք է լիներ:

Իսլամների համար հայ կանանց ու աղջիկների հետ ամուսնությունը օսմանյան քաղաքականության ուղղություններից մեկն էր՝ ցեղասպանության ևս մեկ որակում:

1916թ. ապրիլի 30-ին Անատոլիայի բոլոր շրջաններին հրամանագիր ուղարկվեց: Սրա մասին հիշատակություն ունի պատմաբան Ֆուադ Տունտարը. «Կիները, աղջիկներն ու անչափահասները ցրուել գիւղերու եւ քաղաքներու մէջ, ուր հայեր և օտարներ գոյութիւն չունին, որպէսզի տեղական բարքերով դաստիարակուին եւ ձուլուին»: Հրամանագրի մեկ այլ կետով այդ ամուսնությունները պարտադիր էին համարվում: Դրանցից հետո էլ հայ կանանց նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէր. անընդհատ կասկածի տակ էին: Հետագայում նրանցից շատերը քշվեցին իսլամ և արաբական գյուղերը²:

Այս առիթով հարկ է նշել նաև, որ ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ին ընդունված և 1951թ. հունվարի 12-ին ուժի մեջ մտած **Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայում**³ ոչ միայն կանանց, այլև երեխաների ներգրավումն իսլամական տներում որակում է որպես ցեղասպանություն⁴:

Զապել Եսայան անուն-ազգանունը հայտնի է բոլորիս: Նա ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլև հայ կնոջ իրավունքների պաշտպանը: Նա, որպես հայկական ազգային պատվիրակության նշանակովի քննիչ, մասնակցություն է ունեցել Փարիզի խաղաղության խորհրդաժողովին և իր ելույթում ներկայացրել, թե ինչպես էին կանայք և աղջիկները բռնության կամ առևանգումի ենթարկվելու փոխարեն մահը նախընտրում, ինչպես էր խելագարված մայրն իր կույս աղջկան ոստիկաններին հանձնում, որպեսզի մյուս զավակները կարողանային ջուր խմել, թե ինչպես էր եղբայրը քրոջը սպանում, որպեսզի նա թշնամու ձեռքը չընկնի և այլն:

Սրան զուգահեռ Զապել Եսայանը նշում է նաև, որ հայ կինը եղել է նաև դիմադրողական շարժումների մասնակից՝ ունենալով բարոյական բարձր մակարդակ, քաջություն ու ոգի՝ դարեր շարունակ մեծ դեր կատարելով քրիստո-

² Նույն տեղում, էջ 144:

³ http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf

⁴ Նույն տեղում, էջ 145:

նեական հավատքը, հայկական ինքնությունն ու քաղաքակրթությունն անխափան պահելու գործում⁵:

Զապել Եսայանը տարբեր ճանապարհներով առևանգված կանանց ու երեխաներին բաժանում է մի քանի խմբի: Մեջբերում ենք՝

1. «*Բազմաթիվ կանանց և երեխաների փախցնում էին քաղաքներից ու գյուղերից: Հարևան մուսուլմանները նրանց առաջարկում են թաքնվել իրենց տանը: Համատարած խուճապի պայմաններում առևանգում էին անտեր մնացած երեխաներին, երիտասարդ աղջիկներին: Այսպես՝ Էրզրումում թուրք սպաները առևանգում էին քաղաքի նշանավոր ընտանիքների աղջիկներին: Գերմանացի մի սպա փախցնում է Էրզրումի ամենագեղեցիկ կնոջը՝ Գալֆայանին: Տրապիզոնում քաղաքացիական և զինվորական հազուստով սպաները հավաքում են քաղաքի բարետես, կրթված աղջիկներին և հանձնում «Միություն և առաջադիմություն» կուսակցության անդամներին: Հույն մետրոպոլիտի տանը կամ այլ վայրերում ապաստանած աղջիկներն առևանգվում են նույն նպատակի համար»:*

2. «*Երբ քարավանները քաղաքից կամ գյուղից հեռանում էին, տղամարդկանց առանձնացնում էին կանանցից ու աղջիկներից ու զագանաբար սպանում, իսկ երեխաները, երիտասարդ աղջիկներն ու կանայք՝ փախցվում: Նրանք, ում հաջողվում էր փախչել ու փրկել պատիվը, սպանվում էին ճանապարհներին: Քարավաններն ուղեկցող ոստիկանները մեկ-երկու օր քջելուց հետո քարավանը կանգնեցնում էին աղբյուրի մոտ, սակայն արգելում էին ջուր խմել: Չգիտեմ՝ քանի կույս ու երիտասարդ աղջիկ պետք է հանձնվեր ոստիկաններին՝ ջուր խմելու թույլտվություն ստանալու համար: Դա էր ջուր խմելու գինը: Այս ահասարսուտ մեթոդը կիրառվում էր պարբերաբար: Հատկապես այդպիսին էր դրությունը Կամախ-Հալեպ ճանապարհին և Եփրատի ափերին»:*

3. «*Երբ այս խեղճերը հասնում էին որևէ բնակավայրի, քարավանները հսկող ոստիկանների հովանավորությամբ նրանց ճամբարների վրա հարձակվում էին քրդերը, չերքեզները, չեչենները, Բալկաններից եկած գաղթական մուսուլմանները: Վերջիններս վերցնում ու տանում էին ամեն ինչ, նույնիսկ՝ հազուստը»⁶:*

Զապել Եսայանի ելույթը հայանպաստ ազդեցություն թողեց Ֆրանսիայի հանրային կարծիքի վրա: Նրա ելույթից մի ուշագրավ մեջբերում ևս. «*Հագարաւոր հայուհիներ ալ հարեմներու մէջ փրկութիւն կ'երագեն: Հակառակ այս ճգնաժամային կացութեան՝ այս կիները կը հաւատան, որ իրենց տառապանքը եւ հարիւր-հազարաւոր անմեղներու անհետացումը ճանաչում պիտի գտնէ եւ իրենց գերմարդկային զոհողութիւնները պիտի սրբագործուին անկախ Հայաստանի ծնունդով:...Հայութիւնը միայն արդարութիւն կը պահանջէ»⁷, ինչը*

⁵ Նույն տեղում, էջ 143:

⁶ <http://civilnet.am/2014/08/25/zabel-yesayan-genocide-report-nubaryan-umit-kurt-alev-er-agos/#.VSJNk5OTB-z>

⁷ Նույն տեղում, էջ 143:

արդար դատաստանի պահանջն է, որը 100 տարվա ընդմիջումից հետո դեռ չի հասել իր հանգուցալուծմանը:

Խոսքից գործի անցնելով՝ Զապել Եսայանը Ֆրանսիայում գտնվող *Հեղուշ Եղիազարյան-Փափազյանի, Ռուբինա Օհանջանյանի, Զարուհի Մասեհյանի* հետ սկսեց դիմումներ գրել թուրքական հարեմներում գտնվող հայուհիների փրկության համար, սակայն անարդյունք. Իսլամացած, թրքացած, քրդացած կամ արաբացած կանայք ցեղասպանության անհայտ զոհեր են համարվում:

Հայ կանանց վերապրած մեկ այլ դաժանություն էին գերիների շուկաները: Այդ մասին հնարավոր է կարդալ *Իվ Տերնոնի՝ Մարդինի ցեղասպանության մասին* պատմող գրքում:

Տերնոնի համոզմամբ՝ Օսմանյան կայսրությունում, չնայած 1909-ից ստրուկների շուկաների պաշտոնապես վերացմանը, մինչև պատերազմի ավարտը հայ կանանց և երեխաների համար այդ շուկաները բացվում էին:

Վաճառողներն իրենց «ապրանքից» կարճ ժամանակում ազատվել էին ցանկանում, այդ պատճառով՝ հայերի գինը շատ ցածր էր: 5 -7 տարեկան երեխաները կարող էին վաճառվել 5 - 20 քուրուշով, ինչը հավասար էր մեկ գառնուկի գնին: Երիտասարդ աղջիկը կամ 14 - 15 տարեկան երիտասարդը 2-3 մեջիդիեյով (արծաթե դրամ) գնորդ էր գտնում: Գները փոփոխվում էին հայի ընտանիքի ունեցած դիրքով պայմանավորված: Այդ կանանց կամ աղջիկներին տիրացողներն ապագայում կարող էին օրինական ճանապարհով ձեռք բերել նրանց ունեցվածքը⁸:

Ցեղասպանությունից հետո վերապրողներն օգնության կարիք ունեին: Այս ուղղությամբ հսկայական աշխատանքներ էին տարվում անհատների և կազմակերպությունների կողմից: Ազգերի լիզան կազմեց հինգերորդ հանձնախումբը կանանց և երեխաների բռնի տեղահանման, իսլամացման և ստրկացման հետևանքները դարմանելու համար: Այն նաև ստեղծեց կանանց և երեխաների վաճառքն արգելող Խորհրդատու հանձնախումբ, որ միջազգային խորհրդաժողովի ընդունած որոշումների իրականացումը հսկի:

Դաշնակից երկրների ցուցումով Օսմանյան կառավարության ներքին գործերի նախարարությունը 1919թ. փետրվարի 5-ին շրջաբերական նամակ է ուղարկում՝ պատվիրելով իսլամ ընտանիքներում գտնվող կանանց և երեխաներին հանձնել Պոլսո պատրիարքարանի հովանու ներքո գործող հանձնախմբին:

1921թ. պատրիարքարանի տեղեկագրքում նշվում է, որ դեռևս 63.000 կանայք և որբեր գտնվում են Պոլսի և շրջանի նահանգներում, 5.800-ն էլ՝ արաբական ընտանիքներում: Մինչդեռ ըստ Ազգերի լիզայի տեղեկատվության՝ 90.819 հայ կանայք ու երեխաներ վերադարձվել են և նույնքան դեռ իսլամական տներում են գտնվում⁹:

Կանանց և երեխաներին իրենց գերողներից ազատվելու համար օգնեցին օտարազգի միսիոներներ, որոնց հանդեպ հայ ժողովրդի խորին երախտագիտությունն անսպառ է: Նրանք են՝ դանիացի *Մարիա Յակոբսոնը, Ալմա Յոհ-*

⁸ <http://womennet.am/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81-%D6%81>

⁹ Ս. Զեյթեան, Հայ կնոջ կեանքի ուղիին հետքերով, Անթիլիաս, 2013, էջ 147:

նաստը, Քարեն Եփփեն, Էստոնացի *Հեղվիզ Բյուլը* և նորվեգացի *Բողիլ Կատարինե Բյորնը*, մարդիկ, ովքեր օտարազգի էին ու հայ մահացան՝ իրենց կյանքը, իսկապես, նվիրաբերելով հայերի փրկության գործին:

Մեծ դերակատարություն ունեցավ նաև 1920-ին Ճապոնիայում և Հեռավոր Արևելքում Հայաստանի Առաջին Հանրապետության դեսպան **Դիանա Աբգարը**: Նրան հաջողվում է օգնել բազմաթիվ հայ գաղթականների, ովքեր Սիբիրի եւ Ճապոնիայի վրայով փորձում էին անցնել ԱՄՆ:

Ասում են, որ Ճապոնիայում միշտ էլ հայերի նկատմամբ բարեհաճ վերաբերմունք են ունեցել, և անժխտելի է Դիանա Աբգարի մեծ ավանդը հայ-ճապոնական բարիդրացիական հարաբերությունների կայացման գործում: Թողնելով իր աշխատանքը՝ նա անձամբ է գնացել ճապոնական իշխանությունների և հյուպատոսների մոտ՝ փախստական հայերի փաստաթղթերի խնդիրները կարգավորելու և նրանց ճանապարհորդությունը դյուրացնելու համար: Նա իր առևտրական գործակալությունը օգտագործել է որպես հայ գաղթականների դիվանագիտական առաքելության գրասենյակ, իսկ իր տունը՝ նրանց ժամանակավոր ապաստարան¹⁰:

1915-ին, երբ Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն ահազանգեց, և Ամերիկայում տարածվեց ջարդերի լուրը՝ նախագահ Վուդրո Վիլսոնի հրամանով ստեղծվեց Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեն, որը հետագայում դարձավ **Մերձավոր Արևելքի հիմնադրամ**: Կազմակերպությունը փրկեց ցեղասպանությունից մազապուրծ 132.000 որբ, որբանոցներ հիմնեց Թուրքիայում, Հայաստանում, Լիբանանում, Սիրիայում, Եգիպտոսում, Հունաստանում, Բուլղարիայում, Կիպրոսում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Այստեղ էլ ակնհայտ է դառնում հայ կնոջ ազգապահպան դերակատարումը. կանացի և մայրական դերից բացի՝ նա, փաստորեն, նաև ներգրավված էր հասարակական, ազգային խնդիրների լուծման գործերում:

Հայաստանի Առաջին Հանրապետության շրջանում հայ կինն իրականացնում էր որբահավաքման, նրանց խնամելու, կրթելու աշխատանքներ: Նրանցից առավելապես հայտնի է **Ջարուհի Մեղավորյան-Սաղյանը**: Որբախնամ այս աշխատանքների համար միջոցներ էր տրամադրում 1915թ. սեպտեմբերի 16-ին հիմնված **Մերձավոր Արևելքի օգնության կազմակերպությունը**, որը միաժամանակ վարչական և նյութական պատասխանատվություն էր կրում 1895թ. գերմանացի միսիոներների կողմից հաստատված Մարաշի չորս որբանոցների և հիվանդանոցի համար:

Գործում էր նաև **Փրկության տունը**, որտեղ պատսպարվում էին թուրքական և արաբական տներից փրկված բռնի իսլամացած կանայք և աղջիկներ: Ապաստարանի պատասխանատուն **Գոհար Շամյանն** էր, որը նահատակվեց Մուստաֆա Քեմալի ազգայնականների կողմից:

Խնամատարական աշխատանքներ իրականացնելու առումով կարևորվում է **Կարմիր խաչի** հիմնադրումը: Այն կոչված էր խնամելու վիրավորներին և հիվանդներին, հոգալու որբերի և տարագիր ընտանիքների կարիքները: Ղեկա-

¹⁰ <http://womennet.am/%D5%A4%A1%D5%B6/>

վարը *Հռիփսիմե (Լույս) Մեծատուրյան-Սասունին* էր: Նրա կողքին էին *Ջավոն Շանթը, Մարի Սուքիասյանը, Վերժին Տեր-Կարապետյանը, Արաքսի Արծրունին, Արշալույս Արմենյանը, Բերկրուհի Առաքելյանը, Վերժին Ֆաթթալը, Բեգա Գլճյանը, Ազատուհի Ռաֆայելյանը* և *Թալի Գրուշյանը*:

Հայաստանի խորհրդայնացումով Կարմիր խաչի աշխատանքները դադարեցին, Լույան բանտարկվեց: Ազատվելով 1921թ. փետրվարի 18-ի ապստամբության ճնշումից հետո՝ նա տեղափոխվում է Փարիզ և սկսում աշխատել Միացյալ Նահանգներում 1910թ. հիմնված *Հայ օգնության միության Ֆրանսիայի մասնաճյուղի Կապույտ խաչում*, որը գործում էր հանուն տարասիյուտ հայության վերականգնման: Հետագայում նա տեղափոխվում է Լիբանան և նվիրվում *Լիբանանի օգնության խաչի* աշխատանքներին:

Գործող կազմակերպություններից կարող ենք առանձնացնել Կահիրեում հիմնված ՀԲԸՄ հովանու տակ գործող *Եգիպտահայ կանանց որբախնամ կազմակերպությունը, Աղքատախնամը, Այծենիկ տիկնանց միությունը, Հայ կարոտյալների խնամակալությունը, Հայկական ազգային համախմբումը* և այլն:

Իրանի և Օսմանյան կայսրության մեջ գործող ամերիկյան կրթական, կրոնական և մարդասիրական կազմակերպությունները միանալով՝ հիմնեցին հայկական և սիրիական օգնության Ամերիկյան հանձնախումբը՝ առաջին միջազգային կազմակերպությունը, որը կոչվեց *Մերձավոր Արևելքի օգնության միություն*:

Ազգային վերականգնումի տեսակետից բախտորոշ եղավ **Խաչատուր Մալումյանի** ջանքերով Ամերիկայի հայ կանանց խմբերի համատեղումով 1910-ին ստեղծված *Հայ օգնության միությունը*, որը կրթական, առողջապահական լայն աշխատանք էր իրականացնում: Անդամներին ուղղված շրջաբերականում ասվում էր. «*Պետք է կազմակերպել ժողովուրդը, պետք է օգնութեան հասնիլ երկրի հայրենիքի գործին, պետք է ձեռք մեկնել կարիքի մեջ գտնուողին եւ ամենէն աւելի պետք է ինքնապաշտպանութեան գործը առաջ տանիլ, որպէսզի այլեւս չկրկնուին ջարդի և արհաւիրքի սասանեցնող օրերը...*»:

Ամփոփելով վերոնշյալը՝ արձանագրենք, որ հայ կինը հայ ընտանիքի պահպանն է, հայ կինն ազգային ինքնության պահպանման գործի ջահակիրն է, հայ կինը բարեգործ է, հայ կինը մշակույթի պահպանման և զարգացման երաշխավորն է, հայ կինը Հայ դատի համար մղվող պայքարի առաջամարտիկն է, հայ կինը կանանց իրավունքների և նրանց խնդիրներին առնչվող գործընթացների մասնակից է: Եվ որպես այսպիսին՝ նա իր բոլոր ուժերը ներդնում է նպաստելու համազգային հիմնախնդիրների լուծմանը, օգտակար լինելու մեր երկու հանրապետությունների կառուցմանն ու առաջընթացին, մշակելու և իրականացնելու այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն Մփյուռքում հայապահպանությանը՝ լեզվի, մշակույթի, հավատքի, ընտանիքի, հայկական ավանդույթների պահպանմանը, միասնաբար օգտակար լինելու մեր երկրին, մեր պետությանը:

ГЕНОЦИД АРМЯН И ОБРАЗ АРМЯНСКОЙ ЖЕНЩИНЫ

Грануш Акопян
Министр диаспоры РА
Доктор юридических наук, профессор

В статье армянская женщина представлена как хранительница очага и культуры, защитница национальной самобытности, добродетельная, лидер борьбы за Армянский вопрос, участник процессов по проблемам и правам женщин.

Ключевые слова: геноцид, армянская женщина, Аветис Агаронян, депортации, депатриация, Забел Есаян, Османская империя, Диана Абгар, Союз армянской помощи.

THE ARMENIAN GENOCIDE AND PHENOMENON OF ARMENIAN WOMAN

Hranush Hakobyan
RA Minister of Diaspora Affaires
Doctor of Law, Full Professor

The article touches upon the phenomenon of the Armenian woman. She serves as a sample of family defender along with being the torch-bearer of Armenian identity. In the article the Armenian woman is represented as a benefactor and the warrant of culture preservation and development. She is represented as a pioneer in the struggle of the Armenian Cause along with being strongly participated in the processes concerning the woman rights and problems.

Keywords: Genocide, Armenian woman, Avetis Aharonyan, deportations, depatriation, Zabel Yesayan, Ottoman Empire, Diana Abgar, Armenian Relief Society

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅՈՒՄ**

Գառնիկ Մաֆարյան

*Եվրասիա միջազգային համալսարանի
իրավաբանական ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում է Հայոց ցեղասպանության հետ կապված Թուրքիայի կառավարության միջազգային պատասխանատվության և ցեղասպանության փոխհատուցման հարցերը:

Բանալի բառեր. ցեղասպանություն, պատասխանատվություն, հանցագործություն, վաղեմություն, կոնվենցիա, միջազգային պայմանագրեր:

Այս տարի լրացավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Մեկ դար է անցել այն հրեշավոր ոճրագործությունից, որն իրականացրեց Օսմանյան Թուրքիան՝ 1915-1923 թվականներին:

Ցեղասպանագետները և պատմագետները իրավացիորեն գտնում են, որ հայ ժողովրդի զգալի զանգվածը՝ 1.5 մլն. սպանվել կամ զոհ է գնացել սովին, հիվանդություններին և տեղահանմանը՝ 1915-1916 թվականներին, իսկ 1918 թվականից մինչև 1923 թվականը՝ Արևելյան Հայաստանում ցեղասպանության զոհ դարձան ևս մեկ միլիոն հայ:

Ցեղասպանության իրողության հարցը ժամանակին արձանագրել են միջազգային մի շարք պետությունների համատեղ հայտարարությամբ, դեսպաններն ու այլ դիվանագետները, հասարակական-քաղաքական գործիչները, զինվորականները, ականատես-վկաները և այլն: Այդ առթիվ հրատարակվել են բազմաթիվ փաստավավերագրական, պաշտոնական փաստաթղթերի ժողովածուներ, պատմագիտական աշխատություններ, որոնցում ոչ միայն աներկբա հաստատվում է հայերի զանգվածային կոտորածները, այլ այդ հրեշավոր ոճրագործությունը որակվում է «ցեղասպանություն», այսինքն՝ միջազգային անվտանգության և մարդկության դեմ ուղղված հանցագործություն:

Մարդկության պատմության մեջ առաջին ցեղասպանության հեղինակը՝ Օսմանյան Թուրքիան, իսկ նրա իրավահաջորդ՝ Թուրքիայի Հանրապետությունը մինչև այժմ չի կրել արժանի պատասխանատվություն: Դեռ ավելի, ցեղասպանը լկտիաբար շարունակում է իր ժխտողական քաղաքականությունը՝ օգտագործելով տարբեր եղանակներ և մեթոդներ (պետական մակարդակով ոչնչացնելով, նենգափոխելով արխիվային նյութերը, խեղաթյուրելով պատմավավերական փաստերը, կեղծելով կամ գլխիվայր ներկայացնելով դիվանագիտական, պաշտոնական գրազրույթությունները և միջազգային իրավական նորմերը և այլն):

Հանրահայտ է, երբ ժամանակին հանցագործը արժանի պատասխանատվության չի ենթարկվում, դառնում է ավելի լկտի, բիրտ և անպատասխանատու: Այդ է վկայում ժամանակակից Թուրքիայի վարքագիծը, նրա վարած քաղաքականությունը հայ ժողովրդի և հայոց ցեղասպանության նկատմամբ: Ցեղասպանությունը որպես ծանրագույն միջազգային հանցագործություն, ամենից առաջ ներկայանում է որպես իրավաբանական կատեգորիա և հետևաբար այս կամ այն հանցավոր արարքը (կոտորած, ջարդեր, սպանություններ) որպես ցեղասպանություն կատարելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք հատկանիշներ, որոնք բնորոշ են այդ ահավոր հանցագործությանը:

Այս առումով գտնում ենք, որ պետք է մի կարևոր ճշգրտում անել ցեղասպանությունների ուսումնասիրության մեթոդաբանությունում:

Հեղինակների ճնշող մեծամասնության կողմից, այդ թվում նաև հայ հետազոտողների, գտնում են ցեղասպանությունն որպես հանցագործություն, ուղեկցել է մարդկությանը ողջ պատմության ընթացքում և բերում են, իրենց կարծիքով, բազմաթիվ օրինակներ (օրինակ՝ Նոր կտակարանում հիշատակված մանուկների սպանությունները, հնագույն և միջին դարերի արշավանքները, ջարդերն ու կոտորածները, ինկվիզիցիան, նոր և նորագույն ժամանակաշրջանների գաղութային քաղաքականությունը և այլն) և դրանք դիտարկում են որպես ցեղասպանություն:

Որպես կանոն, Հայոց ցեղասպանությունը դիտարկում են որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն:

Այդ առթիվ նշեմ, որ Հայոց ցեղասպանությունը մարդկության ողջ պատմության մեջ առաջինն է որպես այդպիսին: Փորձեմ հիմնավորել իմ տեսակետը:

Ինչպես նշեցի ցեղասպանությունը և դրա դասական օրինակը հանդիսացող Հայոց ցեղասպանությունը, ամենից առաջ, իրավաբանական կատեգորիա է և հետևաբար այն էապես տարբերվում է մյուս ոչ պակաս հրեշավոր հանցագործություններից՝ ջարդեր, կոտորածներ, ինկվիզիցիա, գաղութացում և այլն: Այս առումով անհրաժեշտ է առանձնացնել հայոց ցեղասպանության մի շարք առանձնահատկություններ.

Առաջին առանձնահատկությունը այն է, որ Հայոց ցեղասպանությունն իրականացվել է նախապես ծրագրավորված և մանրամասն պլանավորված պետական հանցավոր քաղաքականության միջոցով:

Ահա դրանից մեկի վկայությունը. երիտթուրքերի կառավարությունը Թալիաթի ստորագրությամբ գաղտնի կարգադրություն է ուղղել վիլայեթների իշխանություններին, որում նշված էր, որ անհրաժեշտ է ոչնչացնել Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությունը: «Կառավարությունը, նշվում էր կարգադրության մեջ, իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չինայել անգամ օրորոցի երեխաներին»¹:

¹ S է 'u The memoirs of Naim Bey, Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians. London, 1920, էջ 16 /մեջբերումն ըստ Հայ ժողովրդի պատմություն: Հատոր VI : Հայաստանը 1870-1917 թվականներին: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ: Երևան, 1981, էջ 555/:

Արևմտահայերի մասսայական տեղահանությունն ու բռնագաղթը այլ բան չէր, քան նրանց մասսայական բնաջնջում: Ժան դը Մորգանը, դոկտոր Հ.Լեպսիուսը և ուրիշներ հայերի տեղահանությունը համարում են «դիմակավորված կոտորած», «ծրագրված ոչնչացում»: 1915-1916 թվականներին երիտթուրքերի կառավարությունը հրի ու սրի միջոցով արևմտահայերին մասսայականորեն տեղահան արեց հայրենի բնակավայրերից, կողոպտեց նրանց ունեցվածքը, ավերեց ու ամայացրեց ամբողջ Արևմտյան Հայաստանը, բնաջնջեց մեկուկես միլիոն հայ:

Թուրքիայի մեծ վեզիր Թալեաթ փաշան լկտիաբար հայտարարում էր. «Երեք ամսում ես ավելի շատ բան արեցի հայկական հարցը լուծելու համար, քան Աբդուլ Համիդը 30 տարում». «Հայկական հարց այլևս գոյություն չունի, որովհետև այլևս հայեր գոյություն չունեն»: «Չարժե հայերի մասին վիճել,-ասում է նա Ամերիկայի դեսպան Հ.Մորգենթաուին,-որովհետև մենք արդեն ոչնչացրել ենք նրանց երեք քառորդին»:

Հայոց ցեղասպանության սանձազերծման մեջ Թուրքիայինն ամեն կերպ օգնում` և օժողակում է Գերմանական կայսրությունը: Այս առումով` վերջինս հանցյալն է հայոց ցեղասպանության հանցակիցը:

Երկրորդ առանձնահատկությունը` այն է, որ բուն ցեղասպանությանը նախորդել է, այսպես կոչված, նախացեղասպանության շրջանը (ինչպես ժամանակին դիտարկել է նաև հայտնի միջազգայնագետ Յուրի Բարսեղովը), որի ժամանակ ձևավորվում և մշակվում է կատարվելիք ցեղասպանության «հիմնավորման» և «արդարացման» համար ռասիստական գաղափարախոսությունը: Հայոց ցեղասպանության դեպքում` պանթուրքիզմը կամ Մեծ Թուրանի գաղափարախոսությունը, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ նացիզմը (ֆաշիզմը): Այս գաղափարախոսության մյուս գործառույթն է հոգեբանորեն նախապատրաստել սեփական ժողովրդին` կատարվելիք ոճրագործության իրականացման համար:

Երրորդ առանձնահատկությունը նրանում է, որ Հայոց ցեղասպանությունը իրականացվել է խիստ գաղտնիության պայմաններում, որը դրսևորվում էր Օսմանյան կայսրության կենտրոնական և տեղական իշխանությունների խիստ գաղտնի որոշումների ընդունման ձևով: (Այս առթիվ կան բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր):

Գաղտնիության հիմնական նպատակն էր ոչ միայն թաքցնել միջազգային հանրությունից ցեղասպանության իրողությունը և սարսափելի հետևանքները, այլևս հանկարծակի բերել հայ ժողովրդին, թույլ չտալ կողմնորոշվել և համախմբել իր սեփական ուժերը` դիմակայելու, ինչու չէ նաև արժանի հակահարված հասցնելու (ինչպես տեղի ունեցավ մի շարք շրջաններում) համար:

Չորրորդ առանձնահատկությունը նրանում է, որ Հայոց ցեղասպանությունը կատարվել է **ուղղակի դիտավորությամբ**, դա ցեղասպանության **սուբյեկտիվ կողմն է**, որը նշանակում է, որ տվյալ հանցագործության սուբյեկտը Օսմանյան կայսրությունը գիտակցել է իր արարքի հանրորեն և միջազգայնորեն վտանագավորության աստիճանը` այն է պայմանականորեն ձևավորված

ազգային, էթնիկական և կրոնական խմբի՝ հայ ժողովրդի ամբողջությամբ կամ մասամբ ոչնչացնելը և ցանկացել է դրանց (հետևանքների) առաջացմանը:

Ցեղասպանության **նպատակը** էապես տարբերվում է այլ սովորական քրեական հանցագործությունների (սպանությունների) նպատակներից և շարժառիթներից, քանի որ ցեղասպանության հիմնական նպատակն է՝ ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական հողի վրա այդպիսի խմբերի ֆիզիկական բնաջնջումը:

Եթե այս տեսանկյունից դիտարկենք համաշխարհային պատմությանը հայտնի ջարդերը, կոտորածները, արշավանքները մինչև Հայոց Մեծ ցեղասպանությունը, ապա դրանցից ոչ մեկը չի կարելի դիտարկել ցեղասպանություն՝ որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն: Հակառակ դեպքում՝ և Ալեքսանդր Մակեդոնացուն, Չինգիզ Խանին, Նապոլեոն Բոնապարտին և շատ ու շատ տիրակալների ու գորավարների կարելի է դիտարկել որպես ցեղասպաններ, որը, մեր կարծիքով արդարացի չէ, ոչ պայմանականորեն և ոչ էլ իրավաբանորեն: Չնայած նրանց հրամանները և գործողությունները ոչ պակաս դաժան և հանցավոր էին:

Հայոց ցեղասպանության *հինգերորդ* առանձնահատկությունը նրանում է, որ հայերի բնաջնջումը հիմնականում կատարվել է հայերի բնօրանում՝ հայրենիքում՝ սկզբում՝ Արևմտյան Հայաստանում (1915-1916թթ) այնուհետև՝ Արևելյան Հայաստանում (1918-1923թթ), իհարկե նաև Օսմանյան կայսրության մի շարք շրջաններում:

Հայոց ցեղասպանության *վեցերորդ* առանձնահատկությունը նրանում է, որ այն **շարունակական** հանցագործություն է, այսինքն՝ «շարունակվող ցեղասպանություն է», քանի որ ցեղասպանության սուբյեկտը՝ Թուրքիան դեռևս չի ճանաչել և դատապարտել իր նախնիների Օսմանյան կայսրության՝ մարդկության դեմ կատարած հանցավոր արարքը, դեռ ավելին՝ պետական քաղաքականության մակարդակով շարունակում է ցեղասպանության նկատմամբ իր ժխտողական քաղաքականությունը, ոչ միայն չի հատուցել նյութական և բարոյական վնասը, այլև ոչնչացում և նենգափոխում է արխիվային նյութերը, պատմամշակութային արժեքները խեղաթյուրում է պատմավավերական փաստերը և այլն, այսինքն՝ հետևողականորեն շարունակում է իր նախնիների ցեղասպան քաղաքականությունը, հետևաբար ուղղակիորեն դառնալով մեղսակից՝ նրա վրա է տարածվում «Ցեղասպանության կանխարգելման և դրա պատժի մասին» կոնվենցիան (1948թ.) «Պատերազմի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ ժամկետներ չկիրառելու մասին» կոնվենցիան (1968թ.) և ad hoc գործող միջազգային տրիբունալների Ռուանդայի, նախկին Հարավսլավիայի գործերով:

Ցեղասպանության հետևանքով հայ ժողովուրդը կրեց մարդկային, նյութական և հոգեբանական անդառնալի կորուստներ: Դժբախտաբար, պետք է ընդգծել, որ այսօրվա դրությամբ, անդառնալի կորուստների առումով՝ Հայոց ցեղասպանությունը իր նմանը չունի մարդկային նորագույն պատմության մեջ:

Արևմտյան Հայաստանի հայ բնակչությունը զրկվեց հայրենիքից ու կորցրեց իր բնօրանը համարվող տարածքներից, ինչպես նաև ունեցվածքից:

Լուրջ փոփոխություններ տեղի ունեցավ ժողովրդի կենդանի մնացած հատվածի հոգեբանության, նրա հասարակական և քաղաքական մտածելակերպի, հոգևոր կերտվածքի բուն էության մեջ, ինչպես Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում:

Հայոց ցեղասպանության պատասխանատվության համար միջազգային իրավական հիմքերն են՝ ինչպես ցեղասպանության ժամանակաշրջանում գործող միջազգային իրավական սովորույթը, միջազգային պայմանագրային նորմերը և պետությունների պրակտիկան, այնպես էլ միջազգային իրավունքի կոնվենցիաները, միջազգային պայմանագրային նորմերը և ad hoc գործող միջազգային տրիբունալների որոշումները:

Այս կապակցությամբ դժվար է համաձայնվել որոշ հեղինակների (այդ թվում հայ) այն կարծիքի հետ, ըստ որի. «Հայոց ցեղասպանության նկատմամբ կիրառելի իրավունքի հիմնահարցը քննարկելիս, նրանք նպատակահարմար են համարում հետազոտողների ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ սովյալ տեսանկյունից վերլուծության առարկա պետք է դառնա ոչ թե ցեղասպանության հանցագործության համար միջազգային իրավական պատասխանատվություն նախատեսող առկա միջազգային և ներպետական իրավակարգավորումները, այլ Հայոց Ցեղասպանության իրագործման ժամանակահատվածում գոյություն ունեցածները»²:

Այդ դիրքորոշումը, մեր կարծիքով, մեթոդաբանական ճիշտ մոտեցում չէ: Գտնում ենք, որ Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը կազմում են միմյանց հետ շաղկապված և միմյանցով պայմանավորված ժամանակաշրջանի և արդի ժամանակաշրջանի միջազգային սովորութեան իրավունքի և պայմանագրային նորմերի համակցությունը: Դրանք արհեստականորեն չի կարելի սահմանազատել միմյանցից, քանի որ՝ **առաջին**՝ ցեղասպանության ժամանակաշրջանի միջազգային սովորութային իրավունքի և միջազգային իրավունքի նորմերը ամեննին էլ չեն կորցրել իրենց իրավաբանական ուժը, **երկրորդ**՝ դրանք հանդիսացել են իրավական աղբյուրներ արդի միջազգային պայմանագրային իրավունքի (այդ թվում 1948թ. Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժելու մասին կոնվենցիայի) ձևավորման ու զարգացման համար, **երրորդ**, ինչպես նշեցինք, քանի դեռ ցեղասպանության սուբյեկտը (Թուրքիան) շարունակում է ցեղասպանության ժխտողական պետական քաղաքականությունը՝ ամենաստոր եղանակներով ու մեթոդներով (հայկական պատմամշակութային հուշարձանների ոչնչացմամբ կամ կեղծմամբ, ազգային խտրականության և ընդհուպ մինչև սպանություն՝ ազգային հողի վրա՝ Հրանտ Դինքի), հետևաբար հայոց ցեղասպանությունը կարող ենք դիտարկել որպես շարունակվող հանցագործություն:

Հայոց ցեղասպանության հետևանքով աշխարհասփյուռ հայ ժողովուրդը դեռևս չի վերադարձել իր բնօրրանը՝ Արևմտյան Հայաստան, Թուրքիան դեռևս

² Տե՛ս Վլադիմիր Վարդանյան, Եղիշե Կիրակոսյան, Լևոն Գևորգյան, Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը: Իրավական ուղեցույց: Երևան, 2014, էջ 6:

չի ճանաչել և դատապարտել իր կողմից իրականացրած հրեշավոր հանցագործությունը, ինչպես նաև չի վերացրել այդ ծանրագույն հանցագործության հետևանքները, որոնք օբյեկտիվորեն հնարավոր է վերացնել, օրինակ՝ նյութական և բարոյական վնասը և այլն: Հետևաբար չի ավարտվել նաև Թուրքիայի ցեղասպան քաղաքականությունը կամ ցեղասպանությունը (շարունակվող ցեղասպանություն) հայ ժողովրդի նկատմամբ:

Այստեղից կարելի է եզրակացնել, որ Հայոց ցեղասպանության միջազգային-իրավական պատասխանատվության համար իրավական հիմք են հանդիսանում ինչպես 19-րդ դարի երկրորդ կեսի, այնպես էլ 20-րդ դարի և արդի ժամանակաշրջանի միջազգային կոնվենցիաները և ad hoc գործող միջազգային տրիբունալների որոշումները (նախադեպային իրավունքը), որոնք առնչվում են ցեղասպանության հանցակազմի հետ:

Ժամանակակից Թուրքիայի Հանրապետության միջազգային-իրավական պատասխանատվության ենթարկելու իրավաչափությունը նաև նրանում է, որ նա ոչ միայն իրավահաջորդն է Օսմանյան Կայսրության կողմից կատարված ցեղասպանության համար, այլև իր կողմից առ այսօր շարունակվող ցեղասպան քաղաքականության (շարունակվող ցեղասպանության) համար:

Առաջին միջազգային իրավական ակտը, որը 1915թ. հայերի կոտորածները որակեց որպես մարդկային և քաղաքակրթության (այսինքն՝ միջազգային հանրության) դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն (ըստ էության՝ ցեղասպանություն, չնայած որ այս եզրույթը այն ժամանակ հայտնի չէր), դա Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի համատեղ հայտարարությունն (հռչակագիրը) է, որում, մասնավորապես, նշվում է. «Ողջ անցած ամսվա ընթացքում Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ քրդերի ու թուրքերի կողմից օսմանյան իշխանությունների ակնհայտ թողտվությամբ, իսկ երբեմն նաև դրանց ուղղակի աջակցությամբ...«Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարվող այդ նոր հանցագործություններից Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի կառավարությունները սույնով հրապարակայնորեն հայտարարում են Բարձր Դռանը, որ նրանք այդ հանցագործությունների համար անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև նրա այն տեղական ներկայացուցիչների վրա, որոնք առնչված կլինեն կոտորածին»³:

Անտանտի երկրները փորձեցին իրագործել Մայիսյան հռչակագրի դրույթները 1920թ. օգոստոսի 10-ի Սևրի խաղաղության պայմանագրում: Նշված պայմանագիրը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված միջազգային հանցագործությունների վերաբերյալ մի շարք դրույթներ պարունակում: Մոտավորապես, Պայմանագրի Գլուխ 7-ում՝ «Պատժամիջոցներ» (հոդվածներ 226-230), նախատեսված էին նորմեր պատերազմական հանցագործությունների և «կոտորածների (massacres)», այսինքն՝ հայերի դեմ իրագործած

³ Տե՛ս Գеноцид армян в Османской империи: Сборник документов и материалов. Под. Ред. М.Г. Нерсисяна. 2-е изд., дап. Ереван, 1983, с. 602-603.

հանցագործության հանցագործության առընչությամբ պատասանատվության ենթարկելու համար: Այսպես, օրինակ, հոդված 226-ը նախատեսում է, որ «Թուրքական կառավարությունը չանաչում է Դաշնակից և Միավորված Տերությունների՝ նշված հանցագործությունները կատարողներին պատասխանատվության ենթարկելու իրավունքը»: Հոդված 230-ն իր հերթին պարտավորեցնում էր Թուրքիային «հանձնել Դաշնակից Տերություններին այդ հանցագործությունների մեջ մեղադրվող անձան»: Բացի դրանից, Օսմանյան կայսրությունը, լինելով 1878թ. Բեռլինի պայմանագրի, 1899թ. Ցամաքային պատերազմի օրենքների ու սովորույթների մասին Հաագայի երկրորդ կոնվենցիայի և այլ միջազգային իրավական փաստաթղթերի մասնակից, ստորագրելով Սևրի պայմանագիրը և ստանձնելով մի շարք այլ միջազգային իրավական պարտականություններ, ըստ միջազգային իրավունքի պարտավորված էր կանխարգելել կայսրության հայկական բնակչության ամբողջական կամ մասնակի ոչնչացումը: Հետևաբար, Հայոց ցեղասպանությունը դիտարկվում է ոչ միայն իբրև **սովորույթային միջազգային իրավունքի նորմերի, այլ նաև Օսմանյան կայսրության միջազգային պայմանագրային պարտավորությունների խախտում** (ընդգծումը՝ Գ.Ս): Լինելով միջազգային հանրության մի մասնիկ՝ Օսմանյան կայսրությունը պարտավոր էր գործել միջազգային իրավունքին համապատասխան, որն արգելում էր նշված հանցագործությունները»⁴:

Ինչպես նշեցի, Հայոց ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմնական փաստաթղթերից է ոչ միայն ցեղասպանության ժամանակաշրջանի միջազգային իրավական սովորույթը և միջազգային պայմանագրերը և միջազգային իրավական ակտերը, հատկապես՝ «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան է, որն ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 1951թ. հունվարի 12-ին:

Ոմանք պնդում են, որ հիշյալ կոնվենցիայի դրույթները հետադարձ ուժ չունեն և հետևաբար, չեն տարածվում դրանից առաջ եղած ցեղասպանությունների, այդ թվում նաև Հայոց ցեղասպանության վրա, քանի որ կխախտվի միջազգային քրեական իրավունքի հայտնի սկզբունքներից մեկը՝ «չկա հանցագործություն առանց օրենքի» («nulum crimen sine lege»): Ամենին էլ չհակառակվելով նման սկզբունքին, որի ակունքները հասնում են դեռևս հին հռոմեական իրավունքի համակարգը, այդուհանդերձ, փորձենք հիմնավորել Ցեղասպանության Կոնվենցիայի կիրառելիության հնարավորությունը՝ Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության համատեքստում:

Փաստարկ առաջին՝ ցեղասպանության ժամանակակից հասկացությունը մշակել է լեհ-ամերիկյան իրավաբան Ռաֆայել Լեմկինը, որը պատմության ընթացքում եղած այլ ջարդերի հետ միասին, հիշատակում է նաև հայերի կոտորածները և հենց հայերի կոտորածների պատմության ուսումնասիրությունից է նա հետևություն արել ցեղասպանության, այսինքն՝ մարդկային կայուն խմբի

⁴ Տե՛ս Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 13-14:

ոչնչացումը որպես այդպիսին: Հայերի ցեղասպանությամբ է նաև հիմնավորվում այդպիսի հանցագործության առկայությունը երկրորդ համաշխարհային պատմության ընթացքում՝ հրեաների Հոլոքոստը՝ որպես ցեղասպանություն:

Երկրորդ փաստարկը. Ցեղասպանության կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո (1951թ. հունվարի 12-ին) **հետադարձ ուժով** (ընդգծումը՝ Գ.Ս.) տարածվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունների պատժելիության վրա⁵: Հետևաբար, եթե մեկ անգամ Ցեղասպանության կոնվենցիան ունեցել է հետադարձ ուժի իրավագործությունը, ապա ինչու՞ այն չպետք է տարածվի մարդկության պատմության մեջ Հայոց ցեղասպանության վրա, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն և որի հիման վրա էլ մշակվել է այդ ոճրագործության քրեա-իրավական հասկացությունը և որակումը:

Երրորդ փաստարկը. Ցեղասպանության կոնվենցիան ուղղակիորեն տարածվում է Հայոց ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության վրա, քանի որ Թուրքիայի Հանրապետությունը ոչ միայն որպես իրավահաջորդի կարգավիճակով է պատասխանատու, այլև «շարունակվող ցեղասպանության» համար, քանի դեռ չի վերացել ցեղասպանության այն հետևանքները, որոնք օբյեկտիվորեն ենթակա են վերացման՝ ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը, նյութական և բարոյական վնասների հատուցումը, հակահայկական ագրեսիվ և ցեղասպանության ժխտողական քաղաքականության շարունակականությունը և այլն:

Չորրորդ փաստարկը. 1968թ. «Պատերազմի և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ վաղեմության ժամկետներ չկիրառելու մասին» կոնվենցիայի համաձայն, Հայոց ցեղասպանության համար պատասխանատվության վրա ոչ մի վաղեմության ժամկետ չի կարող տարածվել, հենց դրանով են տարբերվում միջազգային ծանրագույն հանցագործությունները սովորական քրեական հանցագործություններից:

Այս առումով իրավացի են այն հեղինակները, որոնք պնդում են, որ «վաղեմության որևէ ժամկետ չի կարող կիրառել պետության պատասխանատվության նկատմամբ, և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միջազգային դատական կամ արբիտրաժային աստիճանը պետք է որոշի՝ ընդունելի՞ են, թե ոչ որևէ պետության միջազգային իրավական պահանջները»⁶:

Հինգերորդ փաստարկը. Ժամանակակից միջազգային քրեական իրավունքի տեսությունը 1915թ. հայերի զանգվածային կոտորածները որակում է որպես

⁵ St' u R.Lemkin, Axis rule Europe: tows of occupation of government; proposals for redress. Washington: Carnegie Endowment for International Peace, Division of International Law, 1944, p. 80 n.3, Raphael Lemkin, A crime without a name //American Scholar, Volume 15, N 2(April 1946), pp. 227-23.

⁶ Հայերի ցեղասպանության համար միջազգային-իրավական պատասխանատվության հիմքերը, էջ 22:

առաջին «ցեղասպանություն», որը լիովին համընկնում է Ցեղասպանության կոնվենցիայով նախատեսված հանցակազմին⁷:

Հետևաբար, երբ Հայոց ցեղասպանությունը դիտարկում ենք որպես մարդկության դեմ ուղղված ամբողջական շարունակվող ոճրագործություն, ապա «Ցեղասպանության հանցագործության կանխման և դրա համար պատժի մասին» կոնվենցիան անվերապահորեն տարածվում է Հայոց ցեղասպանության վրա և կազմում է այն միջազգային-իրավական ակտերի անկապտելի բաղադրիչը, որոնք գործել են մինչև հիշյալ կոնվենցիայի ընդունումը: Այս առումով Հայոց ցեղասպանության որակման և դատապարտման համար միջազգային իրավական փաստաթղթեր են հանդիսանում նաև ad. Hoc գործող միջազգային տրիբունալների որոշումները (մասնավորապես՝ նախկին Հարավսլավիայի, Ռուսանդայի գործերով): Ինչպես նաև նշել ենք, Թուրքիան առ այսօր տարբեր խարդավանքներով ու դավերով շարունակում է Հայոց ցեղասպանության ժխտողական քաղաքականությունը: Հետևաբար, խիստ արդիական է նաև ցեղասպանության ժխտողական քաղաքականության համար պատասխանատվության հիմնահարցը, ինչը ևս դատապարտելի է միջազգային իրավունքի նորմերով:

Միջազգային ողջ հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը նշանակալի քայլ կլինի նման հանցագործությունների կանխարգելման, ինչպես նաև մարդկանց ու ազգերի անվտանգ և ապահով կեցության ու բնականոն զարգացման համար:

⁷ Стн Международное уголовное право. Под общей редакции академик В.Н. Кудрецева. М., «Наука», 1999, с. 130; Наумов А.В., Кибальника. Российская академия. М., 2014, с. 2016-2016.

ПРОБЛЕМА ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЗА ГЕНОЦИД АРМЯН

Гарник Сафарян

*Заведующий юридической кафедрой Международного
Университета Евразия*

Доктор юридических наук, профессор

Данная статья детально рассматривает вопросы международной ответственности и возмещения турецким правительством за геноцид армян.

Ключевые слова: геноцид, ответственность, преступление, давность, конвенция, международные договоры.

LEGAL RESPONSIBILITY ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE

Garnik Safaryan

Head of Law Department at Eurasia International University

Doctor of Law, Full Professor

This very article thoroughly touches upon some issues of international responsibility and compensation of the Armenian Genocide committed by Turkish government.

Keywords: genocide, responsibility, crime, limitation, convention, international agreements.

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԽԱՐԳԵԼԵԼՈՒ
ԵՎ ՊԱՏԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿՈՆՎԵՆՑԻԱՆ ՈՐՊԵՍ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ՄԻՋՈՑ՝ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Նունե Ջումարդյան

*Եվրասիա միջազգային համալսարանի Միջազգային կապերի
և հետազոտությունների կենտրոնի ղեկավար,
իրավաբանական ամբիոնի վարիչի տեղակալ*

Ցեղասպանության կանխարգելելու մը յուրաքանչյուր պետության համար ունի նորմատիվ և պարտադիր բնույթ, բացարձակ է և հանդիսանում է անդամ պետությունների ուղղակի պարտականությունը: Հիմնական հարցն այստեղ այն է, թե ինչ պետք է անել կատարված ցեղասպանությունից հետո՝ կանխելու դրանց հետագա կրկնությունը: Ցեղասպանության կանխարգելման կարևոր միջոցներից մեկը անպատժելիության դեմ պայքարն է:

Բանալի բառեր. ցեղասպանություն, ցեղասպանության կանխարգելում, պատասխանատվություն, ցեղասպանության անպատժելիության դեմ պայքար:

Մարդկության պատմության ամենանողկալի, դաժան և անմարդկային ոճրագործություններից մեկի՝ հայ ժողովրդի հանդեպ իրականացրած ցեղասպանությունից անցել է 100 տարի, սակայն մինչ օրս Հայոց ցեղասպանության հարցը չի արժանացել իր պատշաճ քննադատությանն ու ճանաչմանը միջազգային հանրության կողմից, իսկ մեղավոր պետությունը չի կրել համարժեք պատասխանատվություն: Այս փաստը ստիպում է հայ ժողովրդին շարունակել իր հետևողական պայքարը Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Հանգամանք, որն իր արտահայտումն է ստացել նաև 2015թ. հունվարի 29-ին ընդունված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի 6-րդ կետում: Հռչակագրի այս կետում նշվում է, որ փաստաթուղթն «Արտահայտում է Հայաստանի և հայ ժողովրդի միասնական կամքը՝ Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման հասնելու և ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցում...»¹:

Հիմնախնդիրը դիտարկենք «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիայի լույսի ներքո:

Կոնվենցիայի պաշտոնական անվանումից բխում է, որ նրա հեղինակների հիմնական նպատակն էր ցեղասպանությունների կանխարգելումը: Չնայած

¹ <http://www.president.am/hy/press-release/item/2015/01/29/President-Serzh-Sargsyan-visit-Tsitsernakaberd-Genocide/>, մուտք՝ 03 սեպտեմբերի 2015:

այդ մտադրությանը կոնվենցիան հիմնականում կենտրոնացավ պատասխանատվության վրա և միայն երկու հոդվածում անդրադարձավ կանխարգելմանը՝ հոդվածներ 1-ում և 8-ում: Հոդված 1-ում ասված է. «Պայմանավորվող կողմերը հաստատում են, որ ցեղասպանությունը, անկախ նրանից՝ կատարվում է խաղաղ, թե պատերազմական պայմաններում, ըստ միջազգային իրավունքի հանցագործություն է, որը նրանք պարտավորվում են կանխարգելել և պատժել այն կատարելու համար»: Ինչպես տեսնում ենք հոդվածը ընդամենը սահմանում է ցեղասպանությունը կանխարգելելու անդամ պետությունների պարտավորության իրավական հիմքը:

Ցավոք Կոնվենցիայի հեղինակները չեն հստակեցրել, թե ինչ կոնկրետ միջոցառումներ պետք է ձեռնարկեն պետություններն իրենց պարտավորությունների կատարման համար: Միայն 8-րդ հոդվածում նշվում է, որ «Յուրաքանչյուր պայմանավորվող կողմ կարող է դիմել Միավորված ազգերի կազմակերպության իրավասու մարմիններին՝ Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնարկելու այնպիսի գործողություններ, որոնք նրանք անհրաժեշտ են համարում ցեղասպանությունը և 3-րդ հոդվածում թվարկված որևէ այլ արարք կանխարգելելու և ճնշելու համար»:

Հետազոտողների մեծամասնությունն այն կարծիքին է, որ 8-րդ հոդվածը էականորեն չի պարտավորեցնում անդամ պետություններին ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին (օրինակ՝ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդին և Միջազգային դատարանին) փոխանցել այն իրավիճակը, որն ըստ վերջիններիս հանդիսանում է ցեղասպանություն: Հստակեցված չէ նաև թե ընդհանրապես ինչ գործողություններ պետք է իրականացվեն այդ մարմինների կողմից: Այսպիսով երրորդ անձանց պարտականությունները ցեղասպանության կանխարգելման գործում Կոնվենցիայի բովանդակության տեսանկյունից անհասկանալի էին և կարիք ունեին հետագա մեկնաբանման²: Չնայած դրան, այս հարցի վերաբերյալ մինչև 1990-ականները միջազգային հանրության կողմից ոչ մի լուրջ քայլեր չձեռնարկվեցին կոնվենցիայում առկա խնդիրները լուծելու և փրկելու այն հազարավոր մարդկանց կյանքերը, որոնք մահանում էին ցեղասպանությունների բռնկումների ժամանակ:

Առաջին շոշափելի տեղաշարժը տեղի ունեցավ 1993թ-ին, երբ Բոսնիա-Հերցեգովինան դիմեց ՄԱԿ-ի արդարության դատարան մեղադրելով Հարավսլավիայի Միութենական Հանրապետությանը (Սերբիա և Չերնագորիա) ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթների խախտման մեջ: Բոսնիա-Հերցեգովինան ժամանակավոր միջոցներ պահանջեց իր քաղաքացիների պաշտպանության համար: Դատարանը պարտավորեցրեց կողմերին օգտագործել իրենց տրամադրության տակ առկա բոլոր և ցանկացած միջոցներ կանխելու ցեղա-

² Eyal Mayroz, 'The legal duty to 'prevent': after the onset of 'genocide', *Journal of Genocide Research* (2012), 14(1), March 2012, page 81.
http://www.genocidewatch.org/images/About_Genocide_12_3_2_Legal_Duty_to_Prevent.pdf, մուտք՝ 01 մարտի 2015:

սպանության միջազգային սարսափելի հանցագործությունը³: Այսինքն՝ Բոսնիա-Հերցեգովինայի և Հարավսլավիայի վրա դրվեց հստակ պարտավորություն՝ կատարել այնպիսի գործողություններ, որոնք կկանխեն աղետը և կբացառեն նմանատիպ արարքներն ապագայում: Նույն գործով ad hoc դատավոր Լաուբերպախտը իր հատուկ կարծիքում կատարեց մի քանի նշումներ կապված երրորդ կողմի պարտավորությունների հետ: Բոսնիայի կողմից նշանակված դատավորը նշեց, որ ցեղասպանության կանխարգելումը պարտականություն է, որը դրված է բոլոր շահագրգիռ կողմերի վրա և յուրաքանչյուր կողմի պարտականությունն է պարտավորություններ կրել մնացած բոլորի նկատմամբ⁴: Նա փորձեց հարցը ձևակերպել հիմնվելով կանխարգելման jus cogens և erga omnes բնույթի վրա⁵: Այսպիսով՝ միջազգային դատարանում ձեռնարկվեցին առաջին քայլերը ցեղասպանության կանխարգելման պարտականության վերաբերյալ, սակայն շատ մանրամասներ դեռ բաց էին և ունեին հետագա մեկնաբանման անհրաժեշտություն: 1996թ. հուլիսի 11-ին նույն հարցով Միջազգային դատարանի կայացրած որոշումը ևս չվերացրեց առկա իրավական անճշտությունները՝ սահմանափակվելով հետևյալ ձևակերպմամբ. «...ելնելով կոնվենցիայի նպատակներից ու խնդիրներից կարող ենք եզրակացնել, որ նրանում ամրագրված իրավունքներն ու պարտականությունները հանդիսանում են erga omnes իրավունքներ ու պարտականություններ»⁶:

Երրորդ անձանց պատասխանատվությունը ցեղասպանությունների կանխարգելման հարցում առավել մանրամասնվեց 2007թ. փետրվարին՝ Միջազգային դատարանի Բոսնիա-Հերցեգովինան ընդդեմ Հարավսլավիայի Միութենական Հանրապետության գործի վերջնական որոշման մեջ (այսուհետ՝

³ Case Concerning Application of The Convention on The Prevention And Punishment of The Crime of Genocide (Bosnia And Herzegovina V. Yugoslavia (Serbia And Montenegro) (Provisional Measures) Order of 13 September 1993, p. 59, <http://www.icj-cij.org/docket/files/91/7313.pdf>, մուտք՝ 02 ապրիլի 2015:

⁴ Application of the Genocide Convention (Order of 13 Sept.), para. 86 (separate opinion of judge Lauterpacht), <http://www.icj-cij.org/docket/files/91/7313.pdf>, մուտք՝ 02 ապրիլի 2015:

⁵ Paola Gaeta, The UN Genocide Convention: A Commentary. Oxford Commentaries of International Law, Oxford, 2009, p.38, <http://www.ub.unibas.ch/tox/GBV/601482913/PDF>, մուտք՝ 12 մարտի 2015: Erga omnes պարտավորությունը պետության պարտականությունն է ողջ միջազգային հանրության առջև, քանի որ բոլոր պետություններն ունեն իրավական շահ դրա կատարման հարցում: Stu՝ Mark Toufayan, ‘The World Court’s distress’, pp. 249–250,

<http://www.tilj.org/content/journal/40/num2/Toufayan233.pdf>, մուտք 12 մարտի 2015; Marko Milanovic, ‘State responsibility for genocide’, The European Journal of International Law, Vol. 17, No.3, 2006, p. 570, <http://www.ejil.org/pdfs/17/3/204.pdf>, մուտք՝ 12 մարտի 2015:

⁶ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide Case (Bosnia and Herzegovina vs. Yugoslavia (Serbia and Montenegro)), 1996 ICJ 3 (Preliminary Objections, Judgment, 11 July). <http://www.icj-cij.org/docket/index.php?p1=3&p2=3&case=91&p3=4>, մուտք՝ 12 մարտի 2015:

2007թ. ՄԴ վերջնական որոշում): Դատարանը նշեց, որ ցեղասպանության կանխարգելումը չի մտնում պատասխանատվության ենթարկելու պարտավորության մեջ և ունի իր ինքնուրույն իրավական նշանակությունը՝ «ցեղասպանությունը կանխարգելելու յուրաքանչյուր պետության պարտավորությունը նորմատիվ է և պարտադիր», «բացարձակ է» և հանդիսանում է «անդամ պետությունների ուղղակի պարտականությունը»⁷: Այն ունի կիրառման իր ոլորտը, որն ավելին է, քան այն մասնավոր դեպքերը, որոնք նախատեսված են 8-րդ հոդվածով: Դա նշանակում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին դիմելը չի ազատում անդամ պետություններին ցեղասպանությունը կանխարգելելու ընդհանուր պարտականությունից:

Միաժամանակ, կարևորելով ցեղասպանության դեմ պայքարը, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին կից 2004թ-ին ստեղծվեց ցեղասպանության կանխարգելման խորհրդականի, իսկ 2008թ-ին՝ պաշտպանելու պարտականության հարցերով հատուկ խորհրդականի պաշտոնները⁸: Վերջինիս ստեղծումը պայմանավորված էր 2005 թվականի Համաշխարհային գազաթաժողովի արդյունքային փաստաթղթում ամրագրված բնակչությունը ցեղասպանություններից, պատերազմական հանցագործություններից, էթնիկական մաքրումներից և մարդկայնության դեմ կատարած հանցագործություններից պաշտպանելու համար⁹: Համաձայն փաստաթղթի 138-րդ կետի յուրաքանչյուր պետություն պարտավոր է պաշտպանել իր ժողովրդին վերընշված հանցագործություններից, ինչն էլ իր հերթին առաջ է բերում տվյալ հանցագործությունները և դրանց հրահրումը կանխարգելելու անհրաժեշտություն՝ կիրառելով համապատասխան և անհրաժեշտ միջոցներ: Այսպիսով՝ միջազգային հանրությունը միաձայն ընդունեց միջազգային ծանր հանցագործությունների, այդ թվում՝ ցեղասպանությունների կանխարգելման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Կանխարգելումը կարևորվում է նրանով, որ ինտենսիվ բռնությունները հանկարծակի չեն բռնկվում, թշնամության և վնասակար գործողությունների զարգացումը, որպես կանոն, սկսվում է ռասայական անհանդուրժողականությունից, խտրականությունից, «փոքր բռնություններից», որոնք հետզհետե վերաճվում են ինտենսիվ բռնության, իսկ այնուհետև ցեղասպանության¹⁰: Օս-

⁷ ICJ, Case Concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina vs. Serbia and Montenegro), 26 February 2007, para. 427, para. 162, para. 165. <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>, մուտք՝ 14 մարտի 2015:

⁸ ցեղասպանության կանխարգելման հարցերով գլխավոր քարտուղարին կից հատուկ խորհրդականի գրասենյակ <http://www.un.org/ru/preventgenocide/adviser/background.shtml>, մուտք՝ 02 ապրիլի 2015:

⁹ 2005 թվականի Համաշխարհային գազաթաժողովի արդյունքային փաստաթուղթը ՕՈՒԱ/RES/60/1 (2005), հոկտեմբերի 24 2005թ.

http://www.un.org/ru/documents/decl_conv/declarations/outcome2005.shtml, մուտք՝ 01 ապրիլի 2015:

¹⁰ ¹⁰Ответственность по защите: ответственность государств и предупреждение. Доклад Генерального секретаря 2013, пункт 30. <http://daccess-dds->

մանյան կայսրության քաղաքականությունն ու գործելակերպը հայերի նկատմամբ դրա վառ օրինակն է: Երբ վնասակար գործողությունները մնում են անպատիժ, դեռ ավելին՝ արդարացվում են, ապա ավելի են սաստկանում բռնությունները, տեղի է ունենում արժեզրկում: Ձոռերը դուրս են մղվում բարոյականության ոլորտից, փոխվում են սոցիալական նորմերը, տեղի է ունենում բարոյական տրանսֆորմացիա և ի վերջո հանցագործները բարոյապես ճիշտ են համարում իրենց զոհերի սպանությունը: Այս ամենն ավելի է սրվում, երբ հանցագործները բախվում են երրորդ կողմի պասիվությանն ու անտարբերությանը: Նրանք դա ընկալում են որպես կատարվածի ընդունում կամ, անգամ, իրենց գաղափարների և գործողությունների խրախուսում: Ցավոք այս իրավիճակներում, երրորդ կողմը հաճախ ոչ միայն պասիվություն է դրսևորում, այլ նաև հրաժարվում է տվյալ գործողությունները որպես ցեղասպանություն որակելուց և անգամ օգնություն է տրամադրում հանցագործներին, օրինակ՝ կնքելով առևտրային պայմանագրեր¹¹: Այդպես վարվեցին աշխարհի մի շարք պետություններ՝ մինչ օրս հրաժարվելով ճանաչել 20-րդ դարի դարասկզբին իրականացված Հայոց ցեղասպանությունը, այդպես վարվեցին 20-րդ դարի մայրամուտին՝ հրաժարվելով կանխել որոշ ցեղասպանություններ, օրինակ՝ Ռուսադայի դեպքում ԱՄՆ-ն երկար ժամանակ հրաժարվում էր ընդունել ցեղասպանության փաստը, իսկ Ֆրանսիան աջակցում էր խուտունների կռավարությանը թուսաիների դեմ պայքարում: Այդպիսին է վերաբերմունքը 21-րդ դանի սկզբին տեղի ունեցող մի շարք բռնությունների և խտրականությունների նկատմամբ:

Մակայն երրորդ կողմի դիրքորոշումը պետք է լինի դրական՝ ուղղված բռնությունների, խտրականությունների, ռասայական անհանդուրժողականության, այդ թվում՝ ցեղասպանությունների կանխարգելմանը: Հիմնական հարցն այստեղ այն է, թե ինչ պետք է անել ցեղասպանությունից հետո՝ կանխելու դրա հետագա կրկնությունը: Հետազոտողներից շատերը նշում են հակազդելու ազդային կարողություններ ստեղծելու, մարդու իրավունքները պաշտպանելու¹², սոցիալականացման մասին, օրինակ՝ դրական արժեքների ուսուցում, հոգածություն այլ անձանց նկատմամբ, բարոյական քաջություն պատրաստ լինել և կարողանալ գործել սեփական համոզմունքներին համապատասխան և այլն¹³:

ny.un.org/doc/UNDOC/GEN/N13/386/95/PDF/N1338695.pdf?OpenElement, մուտք՝ 14 մարտի 2015:

11 Ervin Staub, A World without Genocide: Prevention, Reconciliation, and the Creation of Peaceful Societies. Journal of Social Issues, Vol. 69, No. 1, 2013, p 184.

<http://web.ebscohost.com/ehost/pdfviewer/pdfviewer?sid=25af9a00-77b1-4107-bdb3-4924a54ffbd2%40sessionmgr111&vid=1&hid=125>, մուտք՝ 14 մարտի 2015:

¹² Ответственность по защите: ответственность государств и предупреждение. Доклад Генерального секретаря 2013, стр. 10-17. [http://daccess-dds-](http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N13/386/95/PDF/N1338695.pdf?OpenElement)

ny.un.org/doc/UNDOC/GEN/N13/386/95/PDF/N1338695.pdf?OpenElement, մուտք՝ 14 մարտի 2015:

¹³ Ervin Staub, A World without Genocide: Prevention, Reconciliation, and the Creation of Peaceful Societies. Journal of Social Issues, Vol. 69, No. 1, 2013, pp. 194-195.

Այնուամենայնիվ՝ կանխարգելման համար կարևոր է դասեր քաղել անցյալից, ինչն էլ պահանջում է պատասխանատվության ենթարկել մեղավորներին: Առավել ևս, որ պատասխանատվության նպատակներից մեկը հենց հանցագործությունների կանխարգելումն է: Եհուդա Բաուերը, խոսելով ցեղասպանությունների կանխարգելման արդի հիմնախնդիրների մասին, նշում է, որ ներկայումս մեծ ջանքեր են գործադրվում զարգացնելու միջազգային իրավական այնպիսի գործիքներ, որոնք կնպաստեն հանցագործների հետցեղասպանության (հետզենցիդալ) պատժին¹⁴: Բարբառա Հարֆի կարծիքով «հետպատերազմական արդարադատությունը կարող է ծառայել որպես զսպման հզոր միջոց»¹⁵: Պատասխանատվության պետք է ենթարկվեն, ոչ միայն ցեղասպանություն կատարած ֆիզիկական անձինք, այլ նաև իր պետական մարմինների գործողությունների համար պատասխանատու պետությունները, ընդ որում վերջիններիս պատասխանատվությունն առաջ է գալիս անկախ այն հանգամանքի՝ ենթարկվել են ֆիզիկական անձինք պատասխանատվության ցեղասպանության համար, թե՛ ոչ¹⁶: Պատասխանատվությունն առաջանում է նաև այն դեպքում, երբ «ցեղասպանությունից այնքան ժամանակ է անցել, որ այլևս հանցագործներից ոչ մեկը ողջ չէ, և հնարավոր չէ նրանց պատժել¹⁷: Այդ ցեղասպանությունների հետևանքների վերացման միակ հնարավորությունը նյութական (դրամական փոխհատուցումներ և աջակցություն, անվտանգության երաշխիքներ, ներդրումներ և այլն) և խորհրդանշական (ճանաչում, ներողություն և այլն) հատուցումներն են: Հայոց ցեղասպանությունը շատ նման է այդ իրավիճակին¹⁸: Եթե վերընշված պատասխանատվությունը չի իրականացվում պատշաճ կերպով, ապա պահպանվում է նմանատիպ արարքների կրկնության վտանգը, իսկ անպատժելիության զգացումը «ոգևորում» է հակաժողովրդավարական վարչակարգերի ղեկավարներին հետևել անպատիժ մնացած երկրի օրինակին: Արդյունքում՝ խտրականություններն ու ցեղասպանությունները, ոչ միայն չեն վերանում, այլ գնալով ավելի լայն տարածում են ստանում՝ վտան-

¹⁴ Yehuda Bauer, Some Current Problems of Genocide Prevention.//GPANet 2010. Prevention and Mitigation of Genocide and Mass Atrocities. Focus on East and Central Africa and the Islamic World, p. 4. <http://www.gpanet.org/content/some-current-problems-genocide-prevention>, մուտք՝ 14 մարտի 2015:

¹⁵ Barbara Harff, Countries at Risk of Genocide and Politicide in 2012. //GPANet 2012. Guiding Principles of the Emerging Architecture Aiming at the Prevention of Genocide, War Crimes, and Crimes Against Humanity, p. 8. http://www.genocidewatch.org/images/Global_Watch_List_-_Harff_2012.pdf, մուտք՝ 14 մարտի 2015:

¹⁶ ICJ, Case Concerning the Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide (Bosnia and Herzegovina vs. Serbia and Montenegro), 26 February 2007, para. 182. <http://www.icj-cij.org/docket/files/91/13685.pdf>, մուտք՝ 14 մարտի 2015:

¹⁷ Օրինակ՝ 1904-1907թթ. հերերոների ցեղասպանությունը: Տես՝ Արդարացի լուծում: Հատուցումներ Հայոց ցեղասպանության դիմաց: Հայոց ցեղասպանության հատուցումների ուսումնասիրման խմբի զեկույցը: Վերջնական զեկույցը – Մեպտեմբեր, 2014, էջ 2:

¹⁸ Նույն տեղում:

գելով ավելի ու ավելի մեծ քանակության մարդկանց կյանքեր, ընդգրկելով նոր աշխարհագրական վայրեր, դրսևորվելով նոր դաժանությամբ:

Հաշվի առնելով այս վտանգը բոլոր պետությունների ու ժողովուրդների համար ՄԱԿ-ի «Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի և արժանապատվության և այդ հանցագործության կանխարգելման միջազգային օր» բանաձևը ցեղասպանության կանխարգելման կարևոր միջոց հռչակեց անպատժելիության դեմ պայքարը¹⁹:

Անպատժելիությունը նոր հանցագործություններ կատարելու քաջություն է ներշնչում կատարողին: Այս տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության փաստն անժխտելի իրողություն է, սակայն դրա չճանաչելը և մեղավորին պատասխանության չենթարկելը, բերում է նրան, որ հանցագործը շարունակում է արդարացնել իր գործողությունները, օրինակ՝ Թուրքիայի քրեական օրենսգրքի տխրահռչակ 301-րդ հոդվածի առկայությունը, Հրանտ Դինքի սպանությունը, խտրական քաղաքականությունը քրդերի նկատմամբ: Ադալիսին են Թուրքիայի հանդեպ անընդհատ հնչող մեղադրանքները իսլամական պետության հովանավորման և առևտրային գործարքների կնքման վերաբերյալ²⁰:

Այդ իսկ պատճառով՝ թուրքական պետության պատասխանատվություն կրելու անհրաժեշտության և անխուսափելիության փաստը պետք է ընկալվի և ընդունվի ինչպես Թուրքիայի, այնպես էլ այլ պետությունների կողմից, ոչ միայն այն բանի համար որ դա կարևոր է երկու պետությունների հաշտեցման, այլ նաև երրորդ կողմի (պետությունների) համար՝ սեփական ժողովուրդների նկատմամբ հետագա ցեղասպանությունների ռիսկերը վերացնելու, ցեղասպանությունից պաշտպանվելու երաշխիքներ ստեղծելու համար:

Պատասխանատվության կանչելով Թուրքիային և վերացնելով ցեղասպանության հետևանքները միջազգային հանրությունը ևս մեկ քայլ կկատարի պաշտպանելու աշխարհի ժողովուրդներին ցեղասպանության հանցագործության կատարումից: Այս տեսակետից արդարացված են Վ.Քոչարյանի այն պնդումները, որ «հայերի ցեղասպանությունը շարունակվում է մինչ օրս և կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ չեն վերացվել դրա հետևանքները»²¹:

¹⁹ 69/323. Международный день памяти жертв преступления геноцида, чествования их достоинства и предупреждения этого преступления. Резолюция, принятая Генеральной Ассамблеей 11 сентября 2015 года. <http://daccess-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N15/278/52/PDF/N1527852.pdf?OpenElement>, մուտք՝ 04 հոկտեմբերի 2015:

²⁰ Տես՝ Բաշար Ասադի հարցազրույցը Paris Match լրատվամիջոցին: <http://www.parismatch.com/Actu/International/Our-Interview-with-Syrian-President-Bashar-al-Assad-661984>, մուտք՝ 30 նոյեմբերի 2015:

²¹ Վիզեն Քոչարյան, Հայոց ցեղասպանության միջազգային իրավական որակումը և դրա ժխտման համար քրեական պատասխանատվությունը://Օրինականություն: ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, 2015, № 1, էջ 41:

**«КОНВЕНЦИЯ О ПРЕДУПРЕЖДЕНИИ ПРЕСТУПЛЕНИЯ ГЕНОЦИДА И
НАКАЗАНИЯ ЗА НЕГО» КАК ПРАВОВОЕ СРЕДСТВО ПРЕДУПРЕЖДЕНИЯ
ГЕНОЦИДА В КОНТЕКСТЕ АКТУАЛЬНЫХ ПРОБЛЕМ**

Нуне Джомардян

*Руководитель Центра международных связей и исследований
международного университета Евразия, заместитель заведующего юридической
кафедры*

Предотвращение геноцида имеет нормативный, обязательный и исключительный характер, является прямой обязанностью государств-членов. Основной вопрос здесь состоит в том, какие меры необходимо принять после совершения геноцида, чтобы не допустить его рецидива. Одним из важных факторов в предупреждении геноцида является борьба с безнаказанностью за данное преступление.

Ключевые слова: геноцид, предотвращение геноцида, ответственность, борьба с безнаказанностью за геноцид.

**«Convention on the Prevention and Punishment
of the Crime of Genocide» as a legal way to
prevent genocides in the contest of new challenges**

Nune Jomardyan

*Head of International Relations and Research Center,
Deputy Head of Law Department at Eurasia International University*

Genocide prevention is normative and compelling, unqualified and bears direct obligation on states parties. The main question is what should be done after the genocide for prevention its reiteration. One of the important factors in its prevention is fighting impunity for the crime of genocide.

Keywords: genocide, genocide prevention, responsibility, fighting impunity for the crime of genocide.

ТЕМА ГЕНОЦИДА В РУССКОЙ ЛИТЕРАТУРЕ

Алла Руденко

Преподаватель Международного университета Евразия

В статье «Тема геноцида в произведениях русских писателей» рассматриваются некоторые произведения русских авторов. Некоторые из них были очевидцами тех трагических событий, другие в своих произведениях обращались к данной теме, выражая свое отношение к происходящему, стараясь повлиять на события, оказать посильную помощь.

Актуальность данной темы - ознакомить студентов и учащихся с произведениями русских писателей, повысить осведомленность, заострить их внимание на данной теме. Тема должна освещаться в периодике, в статьях. Это особенно важно в это время, когда по всему миру вспыхивают межнациональные конфликты.

Эти уроки истории не следует забывать, чтобы не позволить произойти новым трагедиям.

Ключевые слова: очевидцы, трагические события, повлиять на события, заострить внимание, освещать в периодике, не следует забывать.

Русско-армянские связи уходят вглубь веков. На протяжении всей истории можно пронаблюдать интерес русских к армянскому народу. О дружеских связях двух народов можно говорить, читая дошедшие до нас сочинения путешественников, работы историков, литераторов. Об этом говорится и в труде М.Н.Тихомирова «Древнерусские города»¹ и в книге историка П.М.Геруни, в которой упоминается о теплом отношении русских к армянам еще со времен Ивана Грозного, о том, что пушкарями в войске Ивана Грозного были армяне, а Петр I говорил: «Душа моя лежит к этому народу»². Армянские поселения возникали в древних русских городах. Дружеские отношения двух народов на протяжении веков развивались, укреплялись. Доброжелательность и добрососедство отличало отношения двух народов. Древняя культура Армении, ее история издавна привлекала и манила к себе писателей и путешественников. Многие из них стремились попасть в эту библейскую страну, увидеть ее воочию: А.С.Пушкин и А.Грибоедов, С. Городецкий и многие другие.

По словам В.Брюсова, «армянский народ при всех превратностях судьбы, за тысячелетия своей исторической жизни создал самостоятельную культуру,

¹ Тихомиров М.Н. Древнерусские города. М.,1956 г.

² Геруни П.М.Армяне и древняя Армения.Ереван,2008 г., 251-253.

внес свой вклад в науку и оставил миру богатейшую литературу»³. Это, наверно, одна из главных причин, которая привлекала просвещенную мысль России к Армении в ее стремлении узнать, соприкоснуться с ее древностью. И как говорит в своей монографии А.Д. Амирханян, «русская художественная литература истарии уделяла много места инопациональной теме. Русская литература неформально описывала в художественном слове факты инопациональной действительности, вникала в суть событий, одобрила или осуждала отображаемое»⁴. На протяжении веков жили бок о бок два народа, принадлежащие к одной вере, взаимовлияли друг на друга, обогащали свои культуры. И как бы ни были различны их традиции, менталитет, их восприятие окружающего мира, они все равно стремились друг к другу. Так уж исторически сложились судьбы двух народов. И боль другого народа они принимали близко к сердцу, сопереживали вместе с ним. И гонения на армянский народ, трагедию, которую пережила армянская нация, русский народ, естественно, воспринял как свою.

Тема геноцида волновала представителей русской литературы на протяжении веков. Просвещенная и передовая часть русского народа горячо откликнулась на эти события. Тема геноцида нашла отражение в самых разных жанрах литературы: в поэзии, в прозе, в публицистике. Но самые горькие строки были написаны теми, кто был очевидцем этих страшных событий, участником русско-турецкой войны. Когда перечитываешь строки этих авторов, то сквозь века слышишь крик души, призыв о помощи, чувство безысходности, боль, горечь.

В настоящее время особенно актуально говорить о геноциде, рассматривать и перечитывать произведения тех авторов, которые были очевидцами величайшей трагедии, и упоминать о них, так как с течением времени возрастает необходимость чаще говорить об этом в силу того, что временная грань отдаляет от нас те трагические периоды истории, которые за давностью лет могут забываться, может притупляться острота и боль тех событий. В мире сейчас очень неспокойно, обстановка все осложняется, обостряются сложные этнических взаимоотношения, возникают новые очаги межнациональных конфликтов в разных регионах и странах.

Свидетелями геноцида были писатели, военачальники, журналисты, интеллигенция, политические деятели. И все они благодарили судьбу, что она «дала возможность увидеть» эту прекрасную и разоренную страну, ее гениальные творения зодчества. Многие из них оказывали немалую помощь угнетенному народу. Активное участие в судьбе армянского народа принимал А.Грибоедов⁵. Он несколько раз бывал в Армении. Как дипломат он внес свой вклад в дело

³ Брюсов В. Я. Летопись исторических судеб армянского народа. М, 1918г., с.9.

⁴ Амирханян М.А. Русская художественная литература и геноцид армян. Ереван, Айастан, 1990г., с.7.

⁵ Ю.Тынянов. Смерть Вазир Мухтара. М, 1978г.

освобождения армян. Благодаря его стараниям много армянских семей удалось спасти и переправить в Восточную Армению⁶.

Война России с Турцией привела в Армению и генерала А.П.Кулебякина. Книга Кулебякина «несомненно представит большой интерес,- писал известный русский поэт С.Городецкий,- особенно теперь, когда Россия начинает узнавать и любить Армению»⁷. Он воспевал чарующую красоту природы в стихотворении «На Ванском озере», а о древней культуре и творческом полете мысли древних зодчих писал в стихотворении «Хохорские пещеры»:

С работой людскою здесь слита природа
В законченный формах своих сочетаний.
И древняя надпись пестреет у входа
Полосками клинышков всех сочетаний.

Он не только поэтически воспевает природу, но и пишет о трагедии, проводя параллель между былым величием и трагической действительностью. Везде отпечаток величия и древности, свидетельства древней урартийской культуры, «от него не ускользают даже неброские пейзажи». Памятники зодчества вызывают восхищение у всех, кто соприкоснулся с древней культурой. Но это изумление и очарование древностью перемешивается с чувством горечи, возмущения, безысходности и омрачается вся прелесть увиденного величия. Пять месяцев прожил он в Западной Армении, в Ване. И в его стихотворениях стиль соответствовал описываемым событиям. Он писал:

«Невыносимо тяжелое состояние навевает этот,
Дотла разоренный, насыщенный смертью край,
И развалины, развалины без конца»

В другом воспоминании он пишет: «Красота синего в серебряной рамке запорошенных снегом гор, прозрачность вод, чистота воздуха и богатство солнечных красок очаровывает душу каждого наблюдателя. Везде отпечаток величия и древности. И развалины, развалины без конца»⁸. Им была написана поэма «Дверь Мхера», которая познакомила русское общество с древней культурой и героической судьбой народа, борющегося за свою независимость. Он был свидетелем самоотверженной борьбы древнего народа, поставленного на грань уничтожения. Закаленный в боях и много переживший русский генерал был поражен нечеловеческими зверства турок, очевидцем которых он стал. В одном из своих стихотворений он писал о мужестве армян, сопротивляющихся из последних сил:

Бьются, милости не просят.
Все усилия напрягают.
Хлеб, патроны жены носят,
Дети взрослым помогают.

⁶ Балаян Б., Кровь на алмазе «шах». Ереван. Айастан, 1983 г. с. 8.

⁷ С. Городецкий. Об Армении и армянской культуре. Ереван, 1974, с. 55.

⁸ Кулебакин А. П. Дверь Мхера. Отзвуки Вана, 1916, с. 43.

Стихи Кулебякина документальны и историчны, в них описаны трагические факты судеб армянского народа. И ни время, и ничто не может стереть эти поэтические строки и предать забвению те далекие трагические события.

Амирханян М.А. в своей книге «Русская художественная литература и геноцид армян» пишет: «Хотя стихи Кулебякина не всегда отвечают всем канонам поэзии, но в данном случае, как нам кажется, это второстепенно. «Армянские» стихи Кулебякина в своей основе документальны»⁹. Боль целого народа стала его болью. Его переживания и боль вылились в целый ряд поэтических стихотворений.

С целью помочь пострадавшему народу был издан литературно-научный сборник «Братская помощь пострадавшим в Турции армянам». В нем напечатаны материалы Белинского, Герцена, Салтыкова-Щедрина, Тютчева, Бальмонта, Д.Н. Мамина-Сибиряка, Ю.А.Веселовского, В.В.Верещагина и мн. других. Издание литературно-научного сборника «Братская помощь» имело не только культурное, но и общественно-политическое значение. Оно знакомило русского читателя с богатством литературного наследия армянского народа, а также свидетельствовало о трагических фактах настоящего.

Судьбами армян живо интересовался Л.Н.Толстой, он с возмущением и негодованием говорил о всех ужасах и зверствах, происходящих в Сасуне, болезненно воспринимал всю трагедию происходящих событий.

Из переписки А.П.Чехова и Г.А. Джаншиева известно, что А.П.Чехов не мог не отозваться на просьбу принять участие в издании сборника. Но, к сожалению, плохое состояние здоровья не позволило ему участвовать в благотворительном издании. В сборнике напечатали свои произведения: Е.Морозов «Привет», Г.Кансон - «К смерти», В.Шуфа. В каждом из этих стихотворений авторы обращаются к трагедии армянского народа, и каждая строчка полна надежды и оптимизма, что героизм народа одержит верх и «блеснет заря освобождения».

Грядущий век несет конец твоим слезам.
Исчезнет гнусный мрак насилья, жертв без шума.
На старых пажинях воспрянет новый труд,
И возрожденные долины Эрзрума
Красою мирною роскошно зацветут.

Картины, изображающие разгул жестокости, поражают поэтической образностью и рисуют сцены садистской жестокости.

Убийцы дикою толпой,
Как коршунов зловещих стая,
Бегут за жертвою своею,
Несчастный падает в смятеньи,
Встает, бежит вперед, скорей,
И взором молвит о спасеньи.

⁹ Амирханян М.А., там же

Данная тема нашла отражение в дореволюционных рассказах И.А.Бунина «Тень птицы», «Вдовец». Все происходящее с армянским народом было хорошо известно ему. Устами своего героя он осуждает бесчеловечные зверства турок.

В 1916-1917г. «Армянский вестник» опубликовал стихи Немировича-Данченко «За что?», «Маленькие», поэмы «Песни об Армении», «Молитва эмигранта». Военный корреспондент В.Немирович-Данченко написал ряд статей, стихотворений об Армении. Он клеймит тиранов, которые глумятся над древним народом. Его поэтический герой бичует зверства турок и утверждает свое единение с обездоленным народом.

Мы на Голгофу шли с восторженной любовью
И в темные века боролись мы одни.
Могли бы напоить мы ад своею кровью.
И погасить багровые огни.
А унижениям учительного плена?
А пытки, а позор, а горе и боязнь?
О, нас спасли бы всех предательство, измена,
Но мы - мы выбрали апостольскую казнь.

Жестости, зверствам и неистовству врагов противопоставлено было величие древней Армении и непоколебимая отвага и храбрость армян. В стихотворениях звучит душераздирающий вопль, боль, протест против бесчинств. Этот контраст холодит душу, затмевает разум.

В стихотворении другого поэта С. Кроткого звучит надежда:

Армения, страдалица!
И твой народ избавится
От ужасов резни.
Армения, несчастная!
Душою ты воспрянь!

Красной нитью через все произведения малоизвестных поэтов той поры, ставших очевидцами тех трагических событий, проходит описание древней культуры Армении, чудесных долин и городов, которые превратили в развалины. Они благодарны судьбе, что смогли увидеть то бывшее величие древней культуры, ту прекрасную страну, те гениальные творения зодчества.

На протяжении всей истории мы видим интерес русских к армянам. Доказательством этому могут быть строки их поэтических произведений, высказывания, выступления, в которых они четко определяли свою позицию к происходящему, старались оказать посильную помощь пострадавшим и всеми доступными средствами повлиять на эти трагические события. Можно привести несколько примеров из высказываний и поэтических строк известных писателей и поэтов.

К. Саянский устремляет свои надежды к Богу, обращается с мольбой и болью, взывает о помощи пострадавшим, умоляет спасти их от верной гибели.

От Турции спаси Ее, о Боже,
И свет над Ней целительный умножи

И воскреси и раны излечи!
Недопустиво Храме Твоей Воли
Навек погаснуть от смертельной воли
Армении... Святой Твоей свечи.

Валерий Брюсов переводил произведения армянских авторов и многие свои стихотворения посвятил Армении. Он писал: «Чтобы ни говорили защитники турок, как бы ни ссылались на доводы «государственной необходимости», ничто не может оправдать массовых избиений, опустошения целых провинций, обречения на голодную смерть изгоняемого населения деревень и городов. Вовсе не фантастичен подсчет, указывающий, что в начале современной войны в турецких областях от казней, от убийств, от голода, от истощения, в пожарах, на пути в ссылку, в пустынях, назначенных для жительства, и т. п. погибло свыше миллиона душ армянского населения».

Как не любить тебя, родная, бедная,
В скорби покорной страна опаленная,
Снова мечам остро блещущим преданная,
Ты богородица, семь раз пронзенная!

Великий гуманист М. Горький писал: «Рука, которая вчера разбила череп армянина или еврея за то, что они сознавали себя свободными людьми раньше русского или татарина, - кто скажет, на чью голову опустится завтра эта рука?». Неоценимый вклад Максима Горького заключается в том, что в 1918 году он создает «Сборник армянской литературы», куда вошли как прозаические, так и поэтические произведения армянских литераторов. И этот «Сборник» был выпущен именно для того, чтобы привлечь внимание русской общественности к армянам, к армянской истории, культуре и всему, что происходило на тот момент на кавказском фронте в Западной Армении. Горький, благодаря литературному таланту, выразил свою солидарность и продемонстрировал сопричастность к тому, что происходило на международной арене.

Отношение другого писателя - Б. Слуцкого об армянской трагедии:

Это - Армения
Словно волна окатывает -
Так и меня окатывает
От пят до темени
Горящим пламенем
Взгляда
Это - Армения

Благодаря творчеству Ов. Туманяна, Анна Ахматова узнала о всех бедах, постигших армянский народ. Встречи с Ов. Туманяном помогли другому русскому поэту - С. Городецкому понять всю глубину трагедии армянского народа. Он побывал в Западной Армении, увидел все происходящее своими глазами. По совету Ов. Туманяна он организовал спасение детей из Вана. Под впечатлением увиденного он написал цикл стихотворений и в документально-публицистический очерк «Разоренный рай». Свое первое стихотворение «Армения» С. Городец-

кий прислал Ов.Туманяну, которое стало программным и лучше всего отражает взаимоотношения двух народов.

АРМЕНИЯ

Как перед женщиной, неведомой и новой,
В счастливом трепете стою перед тобой.
И первое сорваться с уст боится слово,
И первую смущаются глаза мольбою,
Узнать тебя! Понять тебя! Обнять любовью,
Друг другу золотые двери отворить.
Армения, звенящая огнем и кровью!
Армения, тебя хочу я полюбить!
Я голову пред древностью твоей склоняю,
Я красоту твою целую в алые уста.
Как странно мне, что я тебя еще не знаю,
Страна – кремень, страна- алмаз, страна- мечта!

А О.Мандельштам избрал своим убежищем Армению. Он также не остался равнодушным к армянской трагедии, что и нашло отражение в его поэзии:

А близорукое шахское небо —
Слепорожденная бирюза —
Все не прочтет пустотелую книгу
Черной кровью запекшихся глин.

Арсений Тарковский писал в своем стихотворении « Комитас»:

Ничего душа не хочет,
И, не открывая глаз,
В небо смотрит и бормочет,
Как безумный Комитас.

Многие русские литераторы не остались равнодушными к беде, постигшей армянский народ в 1915г. Важно было, чтобы как можно больше людей узнало о трагедии армян, привлечь внимание широкой общественности. Поездка А. Битова в Армению стала судьбоносной. Было время, когда о геноциде 20 века говорили мало. Поэтому безнаказанность и забвение послужило причиной многих конфликтов в настоящем. А.Битов заговорил об этом смело и громко. Он пишет, что ему стыдно, что он узнал о трагедии только в 30 лет. Его труд «Уроки Армении» знают многие.

События в Нагорном Карабахе всколыхнули воспоминания. И все происходящее в конце 20-ого века напомнило те далекие, но жестокие события 1915 года. И многие писатели провели параллели с геноцидом. Среди них М.Дудин, М.Матусовский, Б.Чичибанин. Михаил Дудин связан с Арменией многолетней дружбой. Он написал предисловие к роману Ф.Верфеля «Сорок дней Муса-дага». И боль армянского народа стала его болью:

Геноцид, то Сумгаит,
То гром землетрясения.
Все кровь и кровь. И все болит
В твоей судьбе, Армения.
Но достает тебе равно
На хлеб и песню рвения.
И я люблю тебя давно
За веру в жизнь, Армения.

В очерке Б.Чичибанина « В сердце моем болит Армения» говорится: «Я знал, что еще до расцвета Эллады и Рима Армения была великим, обширным и могучим государством.... Я знал о ледящей крови трагедии армянского геноцида». Теме геноцида он посвятил несколько стихотворений под общим названием «Псалмы», в которых наравне с восхищением древней страной, ее культурой и духовностью звучит боль, скорбь.

Не в праздничном блеске и не в суете площадной
Является взором, забывшим про казни и войны,
Тот памятник людям, убитым за то лишь одно,
Что были армяне – этого было довольно.

Память об армянской трагедии звучит в стихотворениях М.Петровых, В.Звягинцевой. Она нашла отражение и в поэзии А.Гитовича «Пирь Армении» и Д.Самойлова «Армения». Они никогда не забывали об этом и выражали свой протест и возмущение в своих поэтических строчках. В стихотворении «Армянскому народу» В.Звягинцева пишет:

Ни бездомной печали твоей,
Ни бесчисленных безвестных могил
Не прощу черной злобе людей,
Не прощу до конца моих дней
Даже если бы сам ты простил.

И этот список можно продолжать и продолжать. Можно очень много приводить примеров, говорить и говорить. Многие русские писатели писали и будут писать о геноциде, а узы двух народов будут крепнуть и дальше. Но боль никогда не притупится, рана все время будет кровоточить и никогда не зарубцуются.

Данная тема будет актуальной всегда. Об этом нужно всегда помнить, чтить память жертв трагедии. И особенно важно в процессе обучения данной теме отводить время, проводить мероприятия, посвященные данной теме, поручать учащимся готовить проекты, говорить об отношении русских писателей к данной теме, дополнительно изучать те произведения русских авторов, которые отражают тему геноцида. В ходе работы в учебной аудитории мы постоянно сталкиваемся с тем, что учащиеся и студенты мало знают о русско-армянских связях, не знакомы с произведениями писателей, которые душой преданы Армении, писали о ней, связаны дружескими узами с армянской культурой и народом. Учащимся и студентам было поручено подготовить проекты по темам:

«В.Брюсов – переводчик средневековой армянской литературы», «С.Городецкий и Ов.Туманян», «Роль С.Городецкого в спасении детей во время геноцида», «Роль Ю.Веселовского в деле пропаганды армянской культуры», «Ю.Веселовский и Г.Сундукян». Это умножило знания учащихся и студентов, заинтересовало их, изменило отношение к предмету. А также это будет способствовать укреплению дружбы между двумя народами.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՌՈՒՄ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ալլա Ռուդենկո

Եվրասիա Միջազգային համալսարանի դասախոս

«Ցեղասպանության թեման ռուս գրողների ստեղծագործություններում» հոդվածում ուսումնասիրվում են որոշ ռուս գրողների ստեղծագործություններ, նրանցից ոմանք ականատես են եղել այդ ողբերգական իրադարձություններին, իսկ մյուսները անդրադարձել են այդ թեմային իրենց ստեղծագործություններում, արտահայտելով իրենց վերաբերմունքը տեղի ունեցածի վերաբերյալ, ձգտելով ազդեցություն ունենալ իրադարձությունների վրա, անել ինչ հնարավոր է:

Այդ թեմայի արդիականությունն է՝ ծանոթացնել աշակերտներին ռուս գրողների ստեղծագործությունների հետ, նրանց ուշադրությունը գրավել այդ թեմային: Թեման պետք է լուսաբանվի մամուլում, հոդվածներում: Դա առավել կարևոր է մեր ժամանակ, երբ ամբողջ աշխարհում բռնկվում են միջազգային կոնֆլիկտներ:

Այդ պատմության դասերը չի կարելի մոռանալ և թույլ չի կարելի տալ նոր ողբերգությունների բռնկմանը:

Բանալի բառեր. ականատես, ողբերգական իրադարձություն, լուսաբանել մամուլում, ուշադրությունը գրավել, չի կարելի մոռանալ:

THE TOPIC OF GENOCIDE IN THE WORKS OF RUSSIAN WRITERS

Alla Rudenko

Lecturer at Eurasia International University

In the article «The topic of genocide in the works of Russian writers» some of the authors have been the witnesses of the tragic events, the others referred to those in their works, expressing their own attitude towards that, trying to influence the tragic events, as well as to assist as much as they could.

The actuality of the topic is to get the students and the pupils acquainted with the works of Russian writers, increase the awareness, to sharpen their attention on the topic. This topic should be covered in the periodicals and articles. It is important nowadays more than ever, as international conflicts flush all over the world.

Those lessons of history shouldn't be forgotten, and other tragedies mustn't be allowed to take place in future.

Keywords: tragic events, covered in periodicals, own attitude, influence, lessons of history.

**ՖՐԱՆՍԻԱՑԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂ ՄԱՐԿ ԼԵՎԻՆ
ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ՆՐԱ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Միրա Կարապետյան

*Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի
և Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

Հոդվածը նվիրված է ֆրանսիացի նշանավոր գրող Մարկ Լևիի ստեղծագործական ուղուն, և մասնավորապես, նրա «Պարոն Դալդրիի անսովոր ճանապարհորդությունը» վեպին, որը գաղտնիքներով ու բացահայտումներով լի մի սիրո պատմություն է: Հետևելով գուշակի կանխատեսումներին, վեպի հերոսուհին՝ Ալիսը, երկարատև ճանապարհորդություն է կատարում Թուրքիայում, որտեղ հանդիպում է իր կյանքի տղամարդուն և բացահայտում կյանքի իր իրական պատմությունը, որ իր իսկական անունն Անուշ է, որ ինքը հայի զավակ է և որ իր ծնողները ցեղասպանության զոհեր են:

Հոդվածում ներկայացվում է Մարկ Լևիի աշխարհընկալումը, համոզումները՝ գրողի պատասխանատվության և համամարդկային արժեքները պահպանելու կարևորության մասին, նրա վերաբերմունքն ամեն տեսակ բռնությունների և ցեղասպանությունների նկատմամբ:

Բանալի բառեր. ֆրանսիական ժամանակակից գրականություն, Մարկ Լևի, «Պարոն Դալդրիի տարօրինակ ճանապարհորդությունը» վեպը, հայոց ցեղասպանություն:

Ֆրանսիական գրականությունը համաշխարհային մեծագույն գրականություններից մեկն է, որը միշտ հավակնել է լինելնորաձև գրականության օրենսդիրը: Արդի ֆրանսիական գրականության ինքնատիպությունը նրա հարուստ ժառանգությունն է և հավատարմությունը հումանիստական իդեալներին, որի շնորհիվ նա շարունակում է առաջնային դիրք զբաղեցնել միջազգային գրական ասպարեզում:

Ժամանակակից ֆրանսիացի գրողները շատ տարբեր են միմյանցից: Թեմաները, որ նրանցից յուրաքանչյուրն արձարծում է իր ստեղծագործության մեջ, ինքնատիպ են, արդիական և դիտարկվում են ոչ սովորական տեսանկյունից: Նրանց մեջ կան գրողներ, որոնք արդեն դասվում են կլասիկների շարքին կամ «գրեթե կլասիկներ» են՝ Ռոմեն Գարի, Պատրիկ Մոդիանո, Միշել Ուելբեկ, Ժան-Ֆիլիպ Տուսեն:

Ժամանակակից ֆրանսիական գրականության ազգային հպարտությունն են այնպիսի գրողներ, ինչպիսիք են Ամելի Նատոմբը, որի գրչի տակ «թեթև զվարճալի պատմվածքը դառնում է փոքրիկ փիլիսոփայական տրակտատ», Աննա Գավալդան, որի հեզնական, նրբագեղ և կոշտ էսքիզները դեսերտ են գրական համադամասերների համար՝ պատրաստված իսկական ֆրանսիական հմայքով: Բերնար Վերբերի միստիկական վեպերը արկածային վեպի և փիլիսոփայական էսսեի խառնուրդ են: Ֆրանսիայում արդեն յոթ տարի ապրող չինացի գրող Շան Սանի վեպերի մասին ասում են, որ նրանցում չինական զսպվածությունը համակցվում է ֆրանսիական զվարճասիրության հետ: Իսկ Մարկ Լևիի արձակի արմատները գրական քննադատները փնտրում են ֆրանսիական էզոպիստենցիալիզմի մեջ, այսինքն, «գոյության փիլիսոփայության մեջ»:

Մարկ Լևին ֆրանսիացի ժամանակակից այն հանրաճանաչ վիպասաններից է, ում ստեղծագործությունները բեստ-սելլեր են: «Իմ վեպերը մարդկանց վերադարձրեցին ընթերցանության համը», այսպես է բնութագրում գրողն իր ստեղծագործությունը:

Մարկ Լևին ծնվել է Ֆրանսիայում 1961 թվականին: Նրա կենսագրությունը տպավորություն է գործում զբաղմունքների ընտրության ընդգրկումով: Գրելու ձիրքն անմիջապես չի ի հայտ գալիս: Նա սկսում է իր գործունեությունը ուսումնասիրելով կառավարում, հետո ինֆորմատիկա, իսկ 18 տարեկանում ընդունվում է «Կարմիր Խաչ», որտեղ աշխատում է վեց տարի: Հետագայում, 1983 թվականին նա ձեռնամուխ է լինում տեղեկատվական ընկերությունների ստեղծմանը, որոնցից մեկը «Լոջիթեք Ֆրանս»-ն էր: Մեկ տարի անց, իր հաջողություններից ոգևորված, Լևին մեկնում է Միացյալ Նահանգներ, որտեղ հիմնում է համակարգչային պատկերների մշակման ընկերություն, սակայն 29 տարեկանում կորցնում է իր խմբի վերահսկողությունը և վերադառնում է Ֆրանսիա: 1991թ.նա իր երկու՝ մասնագիտությամբ ճարտարապետ և ինժեներ ընկերների հետ միասին հիմնում է տարածքների դիզայնի և ճարտարապետական նախագծերի մշակման ընկերություն, որը մի քանի տարի անց դառնում է Ֆրանսիայի առաջնակարգ ֆիրմաներից մեկը: «Սակայն ինձ հետաքրքրում էր ոչ այնքան գործարար լինելը, որքան ստեղծագործելը»¹, խոստովանում է այսօր գրողը:

Ի սկզբանե Մարկ Լևին չէր պլանավորել դառնալ գրող: «Երբ աշխատանքը կարգավորվեց և ինձ հարկավոր չէր գործակալությանը շատ ժամանակ տրամադրել, ես սկսեցի գրել: Ես ուզում էի ինչ-որ կարևոր բան փոխանցել այն մարդուն, ով մեծանալուց հետո կլինեիր փոքրիկ որդին» (Մ.Լ.)²:

Սցենարիստ քրոջ խորհրդով նա իր առաջին «Իսկ եթե դա ճիշտ էր ...», վեպի ձեռագիրը ուղարկում է Ռ. Լաֆֆոնի հրատարակչություն և ստանում տպագրության համաձայնությունը: Վեպը ակնթարթորեն դառնում է բեստսելլեր, իսկ Ստիվեն Սպիլբերգը անմիջապես ձեռք է բերում այն էկրանավորելու իրավունքը: Ֆիլմը, որը վերնագրվեց *Just Like Heaven* (Ճիշտ այնպես, ինչպես

¹ Marc Levy : l'écrivain qui veut rendre les autres heureux, www.reussirmavie.net > ...

² www.mafrance.ru

երկնքում), 2005թ. գրադեցնում է ամերիկյան պրակատի առաջին տեղը: Իր առաջին վեպի տպագրությունից հետո, Մարկ Լևինն նվիրվում է վիպասանությանը: Նա աշխատում է օրեկան 15 ժամ և ամեն տարի մի նոր գիրք է հրատարակում, որոնք մեծ արագությամբ սպառվում են Ֆրանսիայում, և միջազգային ճանաչում են բերում հեղինակին («Որտեղ ես³», «Մի ուրիշ անգամ», «Ձեզ կրկին տեսնել», «Իմ ընկերները, իմ սերերը... և այլն):

Մարկ Լևինի վեպերը թարգմանվել են ավելի քան 40 լեզուներով և տպագրվել են մոտ 20 միլիոն տիրաժ օրինակով: Ներկայումս նա աշխարհում ամենից շատ ընթերցվող գրողներից մեկն է, իսկ ֆրանսիական «Ֆիգարո» թերթի տվյալներով, վերջին տարիներին, նա գրադեցնում է առաջին տեղը ֆրանսիացի ամենաշատ թարգմանված հեղինակների ցանկում:

Յուրաքանչյուր ստեղծագործող բացառիկ յուրահատկությամբ է ստեղծում իր պատմությունները՝ ընթերցողի համար բացահայտելով կյանքի, մարդու, տարբեր եղելությունների խորհրդավոր աշխարհը: Մարկ Լևին այն գրողներից է, ով կարողացել է ժամանակակից խնդիրների մասին խոսել անկաշկանդ, իրեն բնորոշ հեղինակային մեկնաբանություններով. իր հերոսներից յուրաքանչյուրի միջոցով Լևին հստակորեն պատկերել է մարդկային հոգու ապրումները, մարդկային փոխհարաբերությունները, տարբեր իրավիճակներում դրսևորվող մարդկային հնարավորությունները: Նա այն գրողներից է, ում ստեղծած գրականությունը ո՛չ միայն ժամանակակից թեմաների ներկայացում է, այլև հետաքրքիր բովանդակությամբ լեցուն մարդկային պատմությունների համայնապատկեր:

«Ես գրում եմ սրտաբաց և սիրում եմ ուրիշների հետ կիսվել այն ամենով, ինչ ինձ հետաքրքրում է»³, և դատելով այն բանից, թե ինչպիսի հաջողությամբ են սպառվում նրա գրքերի տիրաժները, վստահաբար կարելի է ասել, որ Մարկ Լևինն դա հիանալի հաջողվում է:

Հայ ընթերցողն առաջին անգամ հնարավորություն ունեցավ ծանոթանալ Մարկ Լևինի ստեղծագործությանը վերջերս, երբ թարգմանաբար լույս տեսավ «Պարոն Դալդրիի տարօրինակ ճամփորդությունը» վեպը: Այս վեպում հեղինակն իրեն հատուկ ռոմանտիկ ոճով հյուսում է մի գեղեցիկ հուզիչ պատմություն: Հետևելով բախտագուշակի կանխատեսումներին, վեպի հերոսուհին՝ Ալիսը, ով տաղանդավոր օձանագործ է, երկար ճանապարհորդություն է կատարում դեպի Թուրքիա, որտեղ հանդիպում է իր կյանքի տղամարդուն: Այնտեղ Ալիսը բացահայտում է իր կյանքի իրական պատմությունը:

Ալիսի կյանքի պատմությունը ուշագրավ է նրանով, որ կապված է մեր ժողովրդի համար ամենաողբերգական ժամանակաշրջանի՝ 1915թ. Արևմտյան Հայաստանում կատարված հայերի ցեղասպանության հետ: Ալիսի իրական անունը Անուշ է, որի ծնողները սպանվում են թուրք ենիչերների ձեռքով, իսկ նրան որդեգրում են Թուրքիայում աշխատող անգլիացի ամուսինները և իրենց հետ բերում Անգլիա: Հեղինակը իրեն հատուկ զգայականությամբ է նկարագրում այս պատմությունը, ամուսնու սպանությունը տեսած հայ կնոջ ողբեր-

³ www.mafrance.ru

գությունը, երեխաներին կորցնելու սարսափը, վճռականությունը՝ ամեն գնով փրկելու նրանց: Գիտակցելով, որ իրեն փրկություն չկա, նա դատերը՝ Անուշին և որդուն՝ Ռաֆայելին, թողնում է թուրք հարևանուհու խնամակալության տակ, ով հետագայում մեծացնում է Ռաֆայելին, իսկ Անուշին, ով առողջական խնդիրներ ուներ, տալիս է անգլիացի դեղագործ ամուսիններին, ովքեր երեխա չունեին և շատ էին սիրում աղջկան:

Հարցազրույցներից մեկում Մարկ Լևին խոստովանում է. «Ես շատ ուշ բացահայտեցի, որ որոշ չափովունեմ թուրքական արմատներ, քանի որ հայրական կողմից տատու ու պապսիզմի բնույթի հրեաներ են եղել: Նրանք Ֆրանսիա են եկել մոտ մեկ դար առաջ, 1917 թվականին, սակայն հայրս, չգիտես ինչու, երբեք իր թուրքական արմատների մասին չի հիշատակել: Թուրքիան շատ կարևոր երկիր է իմ համար, սակայն դա ինձ չի անգարեց գրելու մի վեպ՝ «Պարոն Դալդրիի տարօրինակ ճանապարհորդությունը» վերնագրով, որտեղ ես պատմում եմ մի հայուհու մասին, ում ծնողները ցեղասպանության զոհեր են: Եվ տեքստում ես այդպես էլ գրել եմ՝ «հայկական ցեղասպանություն»⁴: Մարկ Լևին խորապես վստահ է, որ եթե, ինչ - ինչ շահերից ելնելով, արգելվում է արտահայտել այն, ինչ մտածում ես կամ զգում, ապա «սեփական ազատությունդ ես վտանգում»:

Լրագրողի այն հարցին, թե ինչ կարծիք ունի ֆրանսիական Մենատի կողմից Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագծի ընդունման մասին, որը հակասահմանադրական ճանաչվեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի կողմից, Մարկ Լևին պատասխանում է. «Տասնամյակներ պետք եղավ, որպեսզի Ֆրանսիան ճանաչի իր մասնակցությունը հրեաների և օտարերկրացիների զանգվածային տեղահանությանը երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Գրեթե արգելված թեմա է՝ ճանաչել Ալժիրի պատերազմի ժամանակ կատարված հանցագործությունները: Այնուհանդերձ, ես խորապես համոզված եմ, որ Ֆրանսիան իր մեծությունն ապացուցեց, երբ ճանաչեց անցյալի իր սխալները: Նույն կերպ Թուրքիան կմեծանա, երբ ճանաչի հայերի ցեղասպանությունը»⁵:

Մարկ Լևին չի խուսափում իր բոլոր հարցազրույցների ժամանակ ընդգծել, որ «Պարոն Դալդրիի տարօրինակ ճանապարհորդությունը» վեպը գրել էլիս ցանկացել է Թուրքիայի ամոթալի պատմության վրայից վերցնել այն սև քողը, որը ծածկում է հայերի կոտորածները: «Ես ցանկացել եմ խոսել այդ մասին, քանի որ իմ ինքնության մի մասը թուրք է և, որովհետև հայկական ջարդերը երկար ժամանակ տաբու են եղել Թուրքիայում»⁶:

Մարկ Լևին մեծաքանակ ընթերցողներ ունի Թուրքիայում, բայց այս վեպը դեռևս չի տպագրվել այնտեղ: Նա ասում է. «Հավանաբար, այս վեպի տպագրությունից հետո ինձ ավելի վատ կընդունեն Թուրքիայում, սակայն միայն այս պատճառով, ես չեմ կարող դավաճանել իմ համոզմունքներին»⁷: Ինչպե՞ս է Լևին

⁴ aseko.se.am/news/9/98200-news-armenia.html

⁵ expert.ru/expert/2012/25/osvobozhdennyij-prozoj/

⁶ expert.ru/expert/2012/25/osvobozhdennyij-prozoj/

⁷ expert.ru/expert/2012/25/osvobozhdennyij-prozoj/

հղացել վեպի գաղափարը: Նա հաճախ է հիշատակում իր ընտանեկան ժառանգությունը: Տատն ու պապը հալածանքների են ենթարկվել և սպանվել նացիստների կողմից Օսվենցիմում: Հայրը՝ Ռեյմոնդ Լևին, ակտիվ մասնակցություն է ունեցել Դիմադրության շարժմանը Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ և ճաշակել է գերության և բանտի դառնությունը: Նա դաստիարակվել է մի ընտանիքում, որտեղ ազատության գաղափարը վերացական հասկացություն չի դիտվել, այլ, ընդհակառակը, մի առավելություն և իրավունք, որը պետք էր անպայման պաշտպանել: Ուստի, զարմանալի չէ, որ Լևին իր վեպում անդրադարձել է Հայոց ցեղասպանությանը: Նրա կարծիքով հնարավոր չէ պատմել սիրո կամ տառապանքի մասին, եթե չունես այդ զգացումի փորձառությունը, նույնիսկ եթե խոսում ես ուրիշի սիրո, տառապանքի կամ այլ պատմությունների մասին:

Մարկ Լևին այն հումանիստ գրողներից է, ով զարմացնում է ընթերցողին իր նուրբ հոգեբանությամբ, մարդկային ապրումների սահմանները և նրբերանգները փոխանցելու մեծ կարողությամբ: Նրա ստեղծագործությունները ստիպում են մտածել, ինչ-որ բան վերանայել, հասկանալ: Նրա գրքերը չեն մոռացվում և անջնջելի տպավորություններ են թողնում:

СОВРЕМЕННЫЙ ФРАНЦУЗСКИЙ ПИСАТЕЛЬ МАРК ЛЕВИ И ТЕМА АРМЯНСКОГО ГЕНОЦИДА В ЕГО ПРОИЗВЕДЕНИИ

Мира Карапетян

*Преподаватель Иджеванского филиала Ереванского государственного
университета и Международного университета Евразия*

Статья посвящена жизни и творчеству известного современного французского писателя - гуманиста Марка Леви, в частности его роману «Странное путешествие господина Далдри», в котором автор передает любовную историю, обращаясь к теме армянского геноцида.

Следуя предсказаниям ясновидящей, Алис, героиня романа, талантливый парфюмер, совершает длительное путешествие в Турцию, где она встречает мужчину своей жизни и узнаёт реальную историю своей жизни. Она узнаёт, что её настоящее имя - Ануш, что она - дочь армянина, что её родители - жертвы геноцида.

В статье представлено литературное кредо французского писателя - гуманиста Марка Леви, говорится об ответственности писателя за сохранение общечеловеческих ценностей, о его отношении к разным проявлениям насилия и геноцида.

Ключевые слова: современная французская литература, французские писатели, Марк Леви, роман «Странное путешествие мистра Далдри», армянский геноцид.

**CONTEMPORARY FRENCH WRITER MARC LEVY
AND THE ISSUE OF THE ARMENIAN GENOCIDE IN HIS WORK**

Myra Karapetyan

*Lecturer at Yerevan State University Ijevan Branch and
Eurasia International University*

The present article touches upon the well-known contemporary French writer Marc Levy's life and literary career, especially his novel «The Strange Journey of Mr. Daldry». Here the writer describes a wonderful touching story adverting to the issue of the Armenian Genocide. Following the fortune-teller's predictions Alice, the heroine of the novel, who was a talented perfumer, made a long journey to Turkey where she met her soul mate and there she discovered the real story of her life. Her real name was Anush, she was an Armenian descendent whose parents had been victims of the Genocide.

The article shows the literary beliefs of the French humanist writer, his conviction in the significance of the writer's responsibility and the maintenance of universal values, his attitude towards all kinds of violence and massacre.

Keywords: Modern French Literature, French writers, Marc Levy, the novel Strange Journey of Mr. Daldry by Marc Levy, Armenian Genocide.

**ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԲԱՐՈՑԱԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ
ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ՄԱՏԱՂ ՄԵՐՆԴԻ ՎՐԱ**

Արամ Թումասյան

*ՀՀ ՊՆ Վ. Մարգարյանի անվան ռազմական ինստիտուտի
հասարակագիտական առարկաների և լեզուների ամբիոնի պարսկերենի,
ադրբեջաներենի և թուրքերենի ցիկլի պետ*

Ներկայացվող աշխատության մեջ առաջին անգամ փորձ է արվում շարադրել Հայոց Մեծ Եղեռնի բարոյագա-դափարական ներգործությունը հայ մատաղ սերնդի վրա: Երիտթուրքերի նենգ մտադրությունները հայ ժողովրդի բնաջնջման մասին ի դերն ելան նաև այն պարզ պատ-ճառով, որ հայ նոր սերունդը իր նախնիներից ժառանգեց ոչ միայն կամային և հոգեբանական գոյատևման բարձր հատկանիշներ, նաև ազգի վերականգնման, հայրենաշի-նության և պահանջատիրության հաստատակամ դիրքո-րոշում:

Հայաստանի Հանրապետության որդեգրած ազգային քաղաքականությունը իր արտացոլումը գտավ 2015 թվա-կանի հունվարի 30-ին ՀՀ նախագահ Ս.Մարգարյանի Ծիծեռ-նակաբերդում հրապարակած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը, որով հայոց պետությունը դառնում է հայ ժողովրդի արդար դատի իրավատերը, իսկ նրա պատգամն իրականացնող ուժը՝ հայ մատաղ սերունդը:

Բանալի բառեր. Հայոց Մեծ Եղեռն, հայ մատաղ սերունդ, արմենոիդ ռասսա, ժառանգական հիշողություն, ազգային պաշտպանական ռազմավարություն, հրաշա-ճնունդ սերունդ, ինքնապաշտպանական ազդակներ, հա-մահայկական ինդիքներ, համերաշխություն, միաբանու-թյուն, պատմական արդարությունուն, ռազմահայրենասի-րական դաստիարակություն, հայ դատ, Դողու Փերինչեք, ազատության եվրոպական սկզբունք, ազգային արժանա-պատվություն, մշակութային արժեքներ, հայկական վերա-ճնունդ, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, ռազմահայրենասիրական գաղափարներ, ազգային ար-ժեքներ, համահայկական հռչակագիր, ազգային քաղաքա-կանություն, 100-րդ տարելիցի միջոցառումներ, պետական հանձնաժողով, հայ ժողովրդի արդար դատ:

Դարերի ընթացքում հայ քաղաքակրթությունն անսասանորեն հաղ-թահարել է ընտանիք-տոհմ-ցեղ-ազգ-ժողովուրդ-պետություն զարգացման

շղթան: Այդ աստիճաններով բարձրացած հայ ժողովուրդը բազմիցս ենթարկվել է քոչվոր, բարբարոս ցեղերի հարձակումների և նրանց պատճառած կոտորածների, ուստի հստակորեն տարբերակել է «մենքը» և «նրանքը»: Հայոց լեռնաշխարհը վաղնջական ժամանակներից հայերի հայրենիքն է: Ընդամին ձեռք է բերել մարդաբանական բնորոշ ընդհանուր գծեր (արմենոիդ ռասա):

Երիտթուրքերի ծրագրած Հայոց Մեծ Եղեռնի արհավիրքից հետո անցած մեկդարյա ժամանակահատվածում մազապուրծ հայ ժողովրդի բեկորները վերընձյուղվել և բազում սերունդներ են տվել թե՛ մայր հայրենիքում, թե՛ սփյուռքում:

Հայ ազգին բնաջնջելու թուրք դահիճների ծրագիրը, այնուհանդերձ իրականություն չի դարձել: Հայոց Մեծ Եղեռնը վերապրած և դրանից հետո եկած սերունդների մոտ ցեղասպանությունը թողել է խոր վերքեր, չապաքինվող սպիներ: Հայոց պետականության վերահաստատումից հետո էլ մատաղ սերունդը շարունակում է ծաղկեցնել, վերականգնել հայոց բազմադարյան մշակութային գանձերը՝ չմոռանալով 20-րդ դարի սկզբին թուրքերի կատարած ոճրագործության մասին:

Յուրաքանչյուր անհատ օժտված է կենսաբանորեն և պատմականորեն դրսևորված ժառանգական հիշողությամբ (ինչպես հայկական մշակույթի խաղաղ գոյատևման գենետիկ հիշողությունը) և դրանով պայմանավորված մտածելակերպով ու վարքագծով:

Երեխաների նմանությունը ծնողներին երբեք լիակատար չի լինում, որովհետև սերունդների մեջ գեների ճակատագրերը տարբեր են լինում: Գենը կարող է փոխանցվել կրկնօրինակների տարբեր քանակներով կամ մուտացիոն, փոփոխված վիճակում, այսինքն՝ նոր գենի ձևով, նոր գործառույթով ու ճակատագրով: Հայոց Մեծ Եղեռնի սարսափն ապրած հայ ժողովրդի սերունդներն իրենց գոյությունն ապահովելու համար դիմել են ազգային պաշտպանության՝ վերահիմնելով հայոց պետականությունը, որպեսզի նման չարիք այլևս չվերապրեն:

Մարսափն ու վախը, կյանքին սպառնացող վտանգ լինելով հանդերձ, կյանքի փրկության համար համախմբության ազդանշան կարող են դառնալ: Մարսափը կամ ուժեղ վախը գենետիկ թռչաբաձն փոփոխությունների՝ մուտացիաների պատճառ կարող են դառնալ՝ հանգեցնելով նոր սերնդի մոտ սթրեսային ծանր պայմանների հանդեպ տոկունության, դիմադրողականության աճի:

Թուրքերի եղեռնագործությունը հայ ազգի մեջ առաջացրել է ինքնապաշտպանական մեխանիզմներ, որոնք կարող են տարիների ընթացքում դառնալ ինքնապաշտպանական ռազմավարություն: Թուրքական պետությունը դեռևս շարունակում է մեղքը բարդել իր գոհի վրա՝ հիմք ընդունելով այն պայմանը, որ փոխհատուցումն ու հայկական տարածքների վերադարձը նշանակում է իր տիրապետության վերացում: Այս վտանգը թուրքերին, թուրքական իշխանության վերնախավին ստիպում է հայկական հարցում լինել անզիջում՝ մղելով հիվանդագին ինքնարդարացման, իսկ մատաղ սերնդին ստիպում ոչ թե եղեռնագործության վրա սգալ, այլ դրանից դասեր քաղել՝ այլևս նման իրավիճակում չհայտնվելու համար: Հայ ազգի հրաշածնունդ նոր սերունդը, Հայոց Մեծ Եղեռնի

ողբերգությունը հոգու մեջ ամփոփելով, դրսևորում է վերածննդի անկրկնելի կամային որակներ: Նա կարողանում է համազգային վիշտը դարձնել ոչ թե բարդույթ, այլ համազգային միասնության նպատակ, Հայոց Մեծ Եղեռնի ճանաչման պահանջատիրություն:

Երբ Էթնոսի կամ ազգի կյանքում կատարվում է համընդհանուր ուրախ կամ տխուր իրադարձություն, ապա այն անդրադառնում է տվյալ ազգի ներկայացուցչի էթնիկական ինքնագիտակցության վրա: Հենց այստեղ էլ անհատական էթնիկական «եսը» վերածվում է ընդհանուր ազգային «մենքի»: Էթնոսի կամ ազգի «ես-մենք» գաղափարական շրթան խմբային պատկերացումների, ապրումների, հոգեվիճակի համակարգ է: Հայերս մոտ այն հայերի պատկերացումն է հայերի մասին: Հայոց Մեծ Եղեռնը հայերի ողբերգությունն է հայերի մասին: Քանի դեռ եղեռնի բնույթը ապրում է հայ անհատի հոգեկանում, հայ մարդը այդ խնդրի լուծման պահանջատերն է: Հենց դա էլ հայ ազգի մեջ առաջացնում է պատվախնդրություն, ազգային կորուսյալ արժեքներ վերստեղծման, վերականգնման անհրաժեշտություն:

Հայոց Մեծ Եղեռնի բարոյագաղափարական ներգործությունը հայ ազգի, հայ մատաղ սերնդի վրա դրսևորվում է հետևյալ գլխավոր ուղղություններով.

1. Ինքնապաշտպանական ազդակների ուժեղացում: Ազգի գոյատևման պայքարի ակտիվացում: Քրիստոնեական հավատքի ոչ թե ինքնագոհաբերման, այլ ինքնապաշտպանական իմաստի զարգացում: Հայոց ազգային բանակի կայացում և այն համալրող ռազմական վարժարանների, ուսումնարանների, և ինստիտուտների հիմնադրում և դրանք ժամանակակից տեխնիկայով, հանդերձանքով զինում: ՀՀ նախագահի և պաշտպանության նախարարի հովանու ներքո ամենամյա «Բազե» համահայկական երիտասարդական հավաքի կազմակերպում: Այդ հավաքի մեջ Հայաստանից, Արցախից, Ջավախքից և Սփյուռքից մեծ թվով հայ երիտասարդների, ռազմական վարժարանների, ուսումնարանների և ինստիտուտների սաների մասնակցության ապահովում: Պետության կողմից երիտասարդների հետ տարվող աշխատանքների ընդլայնում: Մրցույթների միջոցով համահայկական խնդիրների լուսաբանում, մատաղ սերնդին հայկական մշակույթին և բանակի առօրյային ծանոթացում, ըստ այդմ երտասարդների մոտ ինքնապաշտպանության երկու մակարդակների՝ մշակութային-էթնիկական և հոգեբանական մեխանիզմների զարգացում:

2. Համախմբվածություն, միաբանություն, համերաշխություն, միասնական ոգի, հայոց պետականության հիմքերի ամրացում: Հայ ազգի համար քրոնիկական դարձած այս խնդրի մասին շատ է խոսվել: Այժմ էլ արդիական են համայն հայության միասնականության, նրա քաղաքական զարթոնքի նպատակով հատկապես դեռահաս ու նորավիթիս հայորդիներին հասցեագրված «Նոր տետրակ, որ կոչվում է հորդորակ» (1772թ., Հնդկաստան, Մադրաս) գրքի հետևյալ տողերը. «Արդ ուրեմն, եկե՛ք, եկե՛ք ոտքի ելնենք, սթափեցնենք մեզ թմբիրից, ծուլությունից: Որ այլևս, ո՛վ անձկալի դու հայոց ազգ, թեպետ այսպես մենք կենդանի, բայց չննջենք իբրև մեռած: Առաջ նետվենք և համախոհ ու միաբան, կանչենք սիրով աստծուն գթած: Եվ նրանից թախանձելով հայցենք, խնդրենք մեզ օգնություն ու զորավիզ»:

Հայաստանի անկախացումից հետո Հայրենիք-Սփյուռք կապերի շրջանակներում ակտիվացել են սփյուռքահայ երիտասարդների այցելությունները Հայաստան՝ մշակութային, մարզական, ուսումնական և այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով:

Այդ նպատակին է ծառայում Սփյուռքի երիտասարդների ճամբարը Պռոշյանում: Նման հավաքները նպաստում են հայ երիտասարդության միասնականությանը, համագգային խնդիրների շուրջ համախմբմանը, հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության մակարդակի բարձրացմանը: Հայ մատազ սերնդի միաբանությունը մեծ ապագա է խոստանում ինչպես վաղվա լուսավոր ու հզոր Հայաստանի կերտման, այնպես էլ անցյալում հայ ժողովրդի հետ կատարված անարդար դեպքերի հարուցած խնդիրների և հարցերի լուծման գործում:

3. Պայքար հայ դատի կայացման, Թուրքիայի կողմից Հայոց Մեծ Եղեռնի ճանաչման պատմական արդարության վերականգման համար:

Հայկական հարցը, Հայոց ցեղասպանությունն ու Հայ դատը գտնվում են մեկ զուգահեռականի վրա: Սփյուռքում տասնամյակներ շարունակ տարված հետևողական աշխատանքներն արդեն տեղափոխվել են Թուրքիայի տարածք:

Ստամբուլ քաղաքի Թաքսիմ հրապարակում 2009 թվականից ի վեր ամեն տարի ապրիլի 24-ին իրականացվում են Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ: Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն այդքան էլ հեռու չէ:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների կազմակերպիչները հիմնականում պոլսահայ երիտասարդներն են: Սակայն մասնակիցների մեջ կան տարբեր ազգություններ և կրոնական պատկանելություն ունեցող մարդիկ:

2015թ. հունվարի 27-ին Ստրասբուրգում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, թուրք մտավորական Դոդու Փերինչեքի դատն էր կայանում: Նա, հիմք ընդունելով համաթուրքական ազգայնական սկզբունքները, հերքում էր հայոց ցեղասպանության փաստը՝ պատճառ բռնելով խոսքի ազատության եվրոպական սկզբունքը: Դատարանի շենքի շուրջ հավաքվել էին բազմաթիվ հայ երիտասարդներ՝ հայկական դրոշակներով ու պաստառներով և հայոց ազգային հիմնը երգելով՝ աջակցում էին հայոց դատին:

4. Ազգային արժանապատվության, հայազգի լինելու հպարտության մեծացում: Օտար ազգերի հետ ձուլվելու ձգտումներից խուսափում, հայրենիքում մշտական բնակության հաստատում, մշակութային արժեքների վերականգնում, նորովի մատուցում:

«Հայկական վերածնունդ» կազմակերպությունը մշակութային շարժում է, որը նպատակ ունի հայոց դարավոր մշակութային արժեքները հասու դարձնել սփյուռքի երիտասարդ սերնդին:

Հայաստանի և Սփյուռքի բազմաթիվ երիտասարդ երգիչ-երգչուհիների, պարարվեստի համույթների, երաժիշտների, արվեստի գործիչների կողմից ազգային երգի և պարի կատարումները խթանում են հայ դարավոր մշակույթի

հարատևմանը, ազգային ինքնությունության և հպարտության զգացմունքների զարգացմանը: Չպետք է մոռանալ, որ հայոց հարուստ մշակույթն այն ամուր կապն է, որը թույլ չի տալիս հայ մատաղ սերնդին օտարանալ արմատներից: Հիշյալ հարցերում անուրանալի է նաև արդեն 19-րդ անգամ Հայաստանում կայացած «Համազգային ուսանողական հավաքի» դերը: Մփյուռքի տարբեր ծայրերից ժամանած հայ երիտասարդների գլխավոր նպատակներից են նաև հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը և հայրենիքում մշտական բնակության հաստատումը:

5. Հայոց ազգային բանակի վարժարանների սաների, զինվորների և զին-ծառայողների, ինչպես նաև հայագրի երիտասարդների մոտ ռազմահայրենասիրական գաղափարների զարգացումն ապագայի հզոր հայոց բանակի կայացման գրավականն է:

Հայոց ազգային բանակի սպայակազմի համալրման գործում իրենց մեծ ներդրումն ունեն շնորհիվ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ու ՀՀ ՊՆ Ա. Խանփերցյանի անվան ռազմավիագիտն ինտիտուտները: Այս գործին նպաստում են նաև Մոնթե Մելքոնյանի անվան (Հայաստան), Քրիստափոր Իվանյանի անվան (Արցախ) ռազմամարզական վարժարանները, ինչպես նաև «Տիգրան Մեծ» վարժարանը, «Փոքր Մհեր» կրթահամալիրը:

Այսօր ժամանակի պահանջ է դարձել համակողմանի զարգացած, բարոյագաղափարական հասուն զիտակցությամբ, կամային բարձր հատկանիշներով օժտված երիտասարդություն և երիտասարդ սպայակազմ ունենալը:

«Բազե» համահայկական երիտասարդական ամենամյա հավաքը համախմբում է ՀՀ մարզերի, Արցախի, Ջավախքի, Մփյուռքի, պետական և ոչ պետական բուհերի, քաղաքական կուսակցությունների երիտասարդական թևերին, Գևորգյան հոգևոր ճեմարանի ու Ոստիկանության ակադեմիայի, ինչպես նաև ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական իստիտուտի ջոկատներին: Նպատակը մեկն է՝ մրցույթների միջոցով հայ երիտասարդներին ծանոթացնել հայոց ազգային բանակի կառույցներին, նրանց մեջ սերմանել նվիրվածություն ազգային արժեքներին, միավորելու ձգտում՝ հանուն ազգի հզորացման, հոգևոր ու մշակութային զարգացման, վեհ նպատակների իրագործման:

Վերովշյալ գաղափարների և նպատակների համագումարն էր 2015թ. հունվարի 30-ին ՀՀ նախագահ Ս.Սարգսյանի կողմից Ծիծեռնակաբերդում հրապարակված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագիրը: Հռչակագրի ընդունումը Հայաստանի ու Մփյուռքի միասնական դրսևորումն է: Սա պետական հանձնաժողովի կողմից ընդունված առաջին փաստաթուղթն է, որն իր մեջ ներառում է Մփյուռքի բոլոր առանցքային կառույցների դիրքորոշումը: Հռչակագրի 6-րդ կետը վերաբերում է Հայոց ցեղասպանության համաշխարհային ճանաչմանը հասնելու և նրա հետևանքների հաղթահարման ուղիներին: Մշակվում է նաև իրավական պահանջների թղթածրար:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի քարտուղար Հայկ Դեմոյանն էլ

փաստում է, որ ընդունված հռչակագիրը միայն 2015 թվականի համար չէ, այլ ուղերձ է գալիք սերունդներին, որով տրվել է կոնկրետ աշխատանքների ուղենիշ:

Հռչակագրով մեկընդմիջտ հաստատվեց Հայաստանի Հանրապետության ազգային այն քաղաքականությունը, համաձայն որի հայ ժողովրդի արդար դատի իրավատերը Հայաստանի Հանրապետությունն է, իսկ նրա պատգամն իրականացնող ուժը՝ հայ մատաղ սերունդը:

2015 թվականի ապրիլի 12-ի Վատիկանի սուրբ Պետրոս տաճարում մատուցված պատարագի ժամանակ Հռոմի Պապի կատարած հայտարարությունը Հայոց Մեծ Եղեռնի դատապարտման և գոհերի հիշատակի հարգման կապակցությամբ մեծ արձագանք է առաջացրել թե՛ հոգևորական և թե՛ քաղաքական դաշտում: Հայոց Մեծ Եղեռնի 100 ամյակի տարելիցը արդիական է հարցի ճանաչման, դատապարտման, հետևաբար կրկնության բացառման առումով:

Ուստի հայ ժողովրդի համար խիստ կարևոր է կաթոլիկ եկեղեցու ճիշտ և արդարացի գնահատականը և նրա առաջադրած պահանջը համաշխարհային հասարակայնությանը Հայոց ցեղասպանությունը անհապաղ ճանաչելու հարցում: Հռոմեական կաթոլիկ եկեղեցու Հայոց Մեծ Եղեռնի ճանաչման ուղղությամբ կատարած այս հսկայական քայլը միաժամանակ մեծ հույսեր է ներշնչում համայն հայության և նրա մատաղ սերնդի մեջ նոր կյանքի, խաղաղ ապագայի հաստատման, ամենակարևորը արդարության հաղթանակի հավատք:

ИДЕЙНОЕ-ПРАВСТВЕННОЕ ВЛИЯНИЕ АРМЯНСКОГО ГЕНОЦИДА НА ГРЯДУЩИЕ ПОКОЛЕНИЯ АРМЯНСКОГО НАРОДА

Арам Тумасян

*Начальник цикла персидского, азербайджанского и турецкого языков кафедры
обществоведческих дисциплин и языков военного института имени Вазгена
Саркисяна Министерства Обороны Республики Армения*

В статье делается попытка изложить идейно-нравственное влияние армянского геноцида на грядущие поколения армянского народа. Несмотря на то, что целью младотурок было уничтожение армян, все же им не удалось полностью совершить это злодеяние, так как армянский народ обладал волевыми качествами, стойкостью и оказывал мужественное сопротивление.

Национальная политика Республики Армения нашла свое отражение в общеармянской декларации, обнародованной Президентом Армении С.Саргсяном в Цицернакаберде 30-ого января 2015 года к 100-летию годовщины Геноцида армян, согласно которой армянское государство становится правопреемником справедливого века, а сила, осуществляющая его завет, молодое поколение Армении.

Ключевые слова: Геноцид армян, молодое поколение, арменоидный тип, генетическая память, национальная оборона, стратегия самообороны, чудом рожденное поколение, импульс самообороны, общеармянские проблемы, солидарность, единство, историческая справедливость, патриотическое воспитание, Догу Перинчек, Европейский принцип свободы, национальное достоинство, культурные ценности, армянский ренессанс, международное признание Геноцида армян, патриотические идеи, национальные ценности, Общеармянская Декларация, национальная политика, мероприятия, посвященные 100-летию Геноцида армян, Государственная комиссия, справедливое требование армянского народа.

ETHICAL AND IDEOLOGICAL INFLUENCE OF THE ARMENIAN GENOCIDE ON THE ARMENIAN NEW GENERATION

Aram Tumasyan

*Head of Persian, Azerbaijani and Turkish Cycle at the Military
Institute after V. Sargsyan,
RA Ministry of Defence*

This report is the first step to present the ethical and ideological influence of the Armenian Genocide on the Armenian new generation. Though the union of Young Turks intended to exterminate Armenians, they didn't succeed in it, as the new Armenian generation inherited from their ancestors such high qualities as psychological survival and strong will. They have also taken the unbending course of demand and restoration of their nation.

On January 30 2015 the president of the Republic of Armenia Serzh Sargsyan adopted a declaration on the 100th anniversary of the Armenian Genocide in Tsitsernakaberd as a part of state policy of the Republic of Armenia. This shows that the Armenian state is the owner of fair trial of the Armenians and the Armenian new generations will be the power to carry out their precept.

Keywords: Armenian Genocide, the younger generation, armenoid race, genetic memory, national defense, self-defense strategy, good generation, self-defense signals, Pan-Armenian problems, solidarity, unity, historical justice, patriotic upbringing, Hay Dat, Dogu Perinjek, European principle of freedom, national dignity, cultural values, Armenian Renaissance, international recognition of the Armenian Genocide, patriotic ideas, national values, Pan-Armenian declaration, national policy, 100-th anniversary events, state commission, Armenian people a fair trial.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԿՐՏՄԵՐ
ՍՊԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԲՆՈՐՈՇ
ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ**

Հայկ Հովհաննիսյան

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի համագորային ֆակուլտետի մարտավարության ամբիոնի ավագ դասախոս

Հետազոտությունն անցկացված է ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կուրսանտների և սպաների շրջանում: Հողվածում անդրադարձ է կատարված ՀՀ ԶՈՒ սպայական կազմի մեջ առաջավարին բնորոշ հատկանիշների ձևավորմանը և, որպես առաջավար, սպայական կազմի կայացմանը խոչընդոտող որոշ հիմնախնդիրներին և դրանց լուծումների ուղղությամբ արված առաջարկություններին: Առաջարկություններից մեկն է՝ ռազմական ուսումնական հաստատություններ դիմորդների շրջանում անցկացնել հոգեբանական ընտրագատում, որի ժամանակ հաշվի կառնվեն անձի հոգեբանական հատկանիշները, հակումները և ապագա սպայի որպես առաջավարի կայանալու հնարավորությունները:

Բանալի բառեր. զինվորական ծառայություն, գորային կառույց, առաջավար, հրամանատար, հատկանիշ, հիմնախնդիր, ռազմաուսումնական հաստատություն, դիմորդ, կուրսանտ, սպա, հոգեբանական ընտրագատում:

Զինվորական ծառայությունը գործունեության առանձնահատուկ ոլորտ է, որում անձնակազմին ներկայացվող պահանջները իրենց բնույթով տարբերվում են այլ գործունեության տեսակներից: Հետևաբար, գերակա խնդիրների շարքին է դասվում այդ պայմաններում առաջնորդի անձնավորության ձևավորումը:

Զորային կառույցում կարևորում են երիտասարդ սպաների՝ որպես առաջնորդ կայանալու հիմնախնդիրը: Սպաները բանակում մարդկային գործունի միջուկն են, զորքի բարոյական ոգու հիմքը: Նրանց պատրաստվածության մակարդակից, ենթակա անձնակազմը ղեկավարելու ունակությունից ու հմտությունից վճռականորեն կախված է ստորաբաժանումների, զորամասերի ու միավորումների հաջողությունը¹:

Նշված հիմնախնդրի լուծումը գտնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ թե ինչ հատկանիշների մասին է գնում խոսքը, երբ ասում ենք առաջ-

¹ Военная педагогика. Под ред. Ефремова О.Ю., СПб., 2008, С. 403.


նորդին բնորոշ հատկանիշներ, որոնք են այն հատկանիշները, որ անհրաժեշտ են հրամանատարին առաջնորդ լինելու համար: Մի շարք հետազոտողների տվյալներով որոշվել էին շուրջ 70 հատկանիշ, որոնք այսպես թե այնպես վերաբերվում են առաջնորդին ներկայացվող պահանջներին: Մակայն այդ տվյալները հաճախ համաձայնեցված չեն իրար, և ձևավորել մարդու մեջ նման քանակի հատկանիշներ, գործնականում անհնար է: Անհրաժեշտություն է առաջանում ընտրելու այնպիսի հատկանիշներ, որոնք, մեր կարծիքով, կլինեն առանցքային և առավել հստակ կրնոթագրեն առաջնորդությունը: Առաջին՝ առաջնորդի հատկանիշները պետք է ընդունելի լինեն հետազոտողների մեծամասնության կողմից: Երկրորդ՝ հատկանիշը պետք է լինի առանցքային կամ գոնե նշանակալի: Անցյալի և ներկայի բոլոր ակնանավոր առաջնորդների մեջ պետք է զարգացած լինեն այդ հատկանիշները: Եվ երրորդ՝ հատկանիշը պետք է ունենա ձևավորված ներքին կառուցվածք, որպեսզի հնարավոր լինի նշելու դրա զարգացման ուղիները՝ բաժանելով այն մասերի: Այսպիսով, ելնելով այդ հատկանիշներից, առանձնացվել է առաջնորդի 12 հիմնական հատկանիշ, դրանք են՝

1. հեռուն տեսնելու ունակություն,
2. նպատակ առաջադրելու և այդ նպատակին հասնելու համար խնդիրների շարքը ներկայացնելու ունակություն,
3. զգայունություն փոփոխությունների նկատմամբ,
4. մտածողության ճկունություն,
5. նպատակաուղղվածություն, համատություն,
6. համոզելու, ոգևորելու, շարժառիթավորելու ունակություն,
7. շփվողականություն,
8. վստահություն իր ուժերի մեջ,
9. համարձակություն,
10. ակտիվություն,
11. ինքնատիրապետում,
12. ներքին ամբողջականություն:

Վերլուծելով հայ ռազմական փորձագետների մասնագիտական կարծիքը՝ առաջնորդին հատուկ առավել կարևոր հատկանիշների վերաբերյալ կարող ենք նշել, որ փորձագետների մեծամասնությունը կարևորում է սպայի բարոյակամային արժանիքների առկայությունը, միաժամանակ նաև բարձր գնահատելով նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների աստիճանը, որն առանց բարոյակամային հատկանիշների բարձր մակարդակի չի բերում ցանկալի արդյունք: Կարևոր դեր է խաղում այն հանգամանքը, թե ով է հրամանատարը, ինչ հատկանիշներ ունի այդ սպան: Արդյո՞ք նա առաջնորդ է և նրան կհետևի անձնակազմը: Կրտսեր սպայական կազմի անմիջական գործունեությամբ է պայմանավորված ստորաբաժանման մարտական պատրաստությունը:

Հիմնախնդիրը առավել ակնհայտ է դառնում երբ վերլուծում ենք 2013-2014 ուսումնական տարվա ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի չորրորդ կուրսի կուրսասնների շրջանում անցկացված հետազոտությունը: Ըստ կուրսասնների մեջ առաջնորդին բնորոշ հատկանիշների առկայության ստուգման հետազոտության, հետազոտված 212 կուրսասններից

առաջնորդին բնորոշ միջինից բարձր հատկանիշներ ունեն ընդամենը 29 կուրսանտ, ինչը կազմում է հետազոտվածների ընդհանուր քանակի ընդամենը 14%: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 4-րդ կուրսի կուրսանտները, կարելի է ասել, արդեն պատրաստի սպաներ են՝ լուրջ մտահոգություն է առաջացնում նրանց մեջ առաջնորդին բնորոշ հատկանիշների առկայության նման ցածր մակարդակը:



Հետազոտության արդյունքներից ելնելով անհրաժեշտություն առաջացավ բացահայտելու առաջնորդության առկայության նման ցածր մակարդակի պատճառները և պարզելու թե երիտասարդ սպային որպես առաջնորդ կայանալուն խոչնդոտող ինչ հիմնախնդիրներ կան:


Ուսումնասիրելով առաջնորդի ձևավորման գործընթացին խոչնդոտող գործոնները, փորձ ենք արել պարզել դրանց առաջացման պատճառները և ծնող - սնող պայմանները: Կարևորելով սպայական կորպուսի, որպես առաջնորդի կայացման գործընթացը, մենք հետազոտել ենք այն գործոնները և պայմանները, որոնց առկայությունը անարդյունավետ է դարձնում տվյալ մանկավարժական գործընթացը: 2012-2013 և 2013-2014 ուսումնական տարիների ընթացքում կատարվեցին հետազոտական աշխատանքներ ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի 4-րդ կուրսի, մեկամյա սպայական դասընթացների կուրսանտների, և սպայական կադրերի որակավորման բարձրացման կենտրոնում վերապատրաստվող վաշտերի, մարտկոցների հրամանատարների շրջանում: Առաջին փուլի նպատակն էր հստակեցնել առաջնորդ սպայի կայացման գործընթացին խոչընդոտող հանգամանքներն ու գործոնները, իսկ երկրորդ փուլինը՝ առանձնացնել առավել կարևորները: Հարցմանը մասնակցել են շուրջ 700 սպա և կուրսանտ: Կուրսանտների կազմը ընտրվել էր այն տարբերակով, որ ավարտական կուրսի կուրսանտները, ունենալով արդեն 4 տարվա ծառայություն, տարբեր գորամասերում ստաժավորումներ և գործուղումներ, ունեին արդեն ձևավորված իրենց պատկերացումը առաջնորդ սպայի՝ հրամանատարի

մասին: Նրանց հնարավորություն էր տրվել արտահայտելու իրենց կարծիքը, առաջարկություններ անել: Կուրսաստների պատասխաններում վեր են հանվել այն հիմնախնդիրները, որոնք ըստ նրանց առկա են գորքերում և որոնց նրանք չէին ցանկանա հանդիպել, որպես սպա, ծառայության տարիներին: Նրանք բարձրացրել են նաև այն հարցերը, որոնք խոչընդոտում են կուրսաստին ուսման տարիներին որպես սպա կայանալուն:

Չնայած այն հանգամանքին, որ բարձրացված բոլոր խնդիրներն ունեն էական նշանակություն առաջնորդի ձևավորման համար, ուշադրություն դարձնենք դրանցից երեքի վրա, որոնք անհանգստացնող են և բացասական բարձր գնահատականի են արժանացել հարցվողների բոլոր՝ կուրսաստական, կրտսեր և ավագ սպայական խմբերում: Առաջնորդության վիճակի գնահատման համար էական նշանակություն ունեն բոլոր երեք խմբերի կարծիքները:

Ընտանեկան խնդիրներով տարվածություն:

Այս հիմնախնդիրը առավել շատ է կարևորած հատկապես կրտսեր և ավագ սպայակազմի կողմից: Տաս բալային համակարգով հիմնախնդիրը միջին թվաբանականի հաշվարկով ավագ սպայակազմը գնահատել է 7.4 միավոր, կրտսեր սպայակազմը՝ 8.12 և կուրսաստական խմբերը՝ 7.24:




Գծապատկերից երևում է, որ կուրսաստական կազմը լիարժեք չի պատկերացնում սոցիալական դժվարությունները ապագա ծառայության ընթացքում, իսկ սպայական կազմը՝ այո:

Առաջնորդ սպայի կայացման գործում այս հիմնահարցը փաստացի ունի լուծման երկու տարբերակ: Առաջին՝ ռազմական ուսումնական հաստատություններում, նախապատրաստել ապագա սպաներին պրակտիկ ծառայության ընթացքում նրանց սպասվող սոցիալական դժվարություններին և, երկրորդ՝ գորքերում առաջարկել գործամասերի հրամանատարներին իրենց հնարավորությունների սահմաններում նպաստել զինծառայողների սոցիալական ապահովության բարձրացմանը, ստեղծել ծառայության համար նպաստավոր պայման-

ներ, ինչպես նաև ծառայության ներկայանալու առաջին իսկ օրերին նրա հետ անցկացնել հանդիպում, գրույց, ներկայացնել իրերի վիճակը, բարեփոխումների գործընթացը:

Չորամասում սպայակազմի համախմբվածության պակասը


Երկրորդ հիմնախնդիրը Չորամասում սպայակազմի համախմբվածության պակասն է, որին հարցումների արդյունքներում տրվել է կուրսանտական խմբերում՝ 7.8 միավոր,կրտսեր սպայական խմբում՝ 7.45,ավագ սպայական կազմի խմբերում՝ 7.7 միավոր:



Հատկանշանական է, որ կուրսանտները, գտնվելով Չորամասերում ստաժավորման մեջ, անմիջապես զգացել են հրամանատարական կազմի համախմբվածության պակասը և դրանից բխող ներքին տարաձայնությունները: Եվ այդ ամենը միանձնյա կառավարման սկզբունքի առկայության ու ողջ ծառայությունը կանոնակարգված լինելու պայմաններում: Այս հիմնախնդրի պատճառը թաքնված է երիտասարդ սպաների դեռ կուրսանտական տարիներին միմիանց հետ համախմբվածության պակասի մեջ, անձնական բարձր հատկանիշների ձևավորված չլինելը, ինչպես նաև զորային կառույցի ավագ հրամանատարական կազմի կողմից բարոյահոգեբանական վիճակի մասին հետևողական վերաբերմունքի պակասն է: Երիտասարդ սպային որպես առաջավար ձևավորելու համար մեծ նշանակություն ունի, թե ով է որպես սպա նրա ծառայության առաջին Չորամասի հրամանատարը, քանի որ նրա ազդեցությամբ են երիտասարդ սպայի մեջ զարգանալու լավ սպան, հրամանատարը, առաջնորդ լինելու հատկանիշները: Այս երևույթն անհանգստացնող է և առանձին ուսումնասիրման է ենթակա:

Երիտասարդ սպայի մասնագիտության սխալ ընտրությունը:

Երրորդ հիմնախնդիրը, որ կարևորվել է հարցվողների բոլոր խմբերում նույնպես անհանգստացնող է: Ավագ սպայական կազմի շրջանում այն կազմել է 7.8, կուրսանտական և կրտսեր սպաների խմբերի մոտ՝ 7.2 միավոր:



Հետազոտությունը ցույց տվեց, որ առաջնորդության ձևավորման գործընթացում ավագ սպաներն ավելի կայացած են: Նրանք տեսնում են ծառայությանը խանգարող հանգամանքները, ավելի հեռատես են՝ առաջնորդին հատուկ վաղվա օրը կանխատեսող: Իրենց բանավոր գրույցներում նշում էին խոչընդոտների հաղթահարման ուղիները սկսած սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծումից և ավարտած ուսումնական գործընթացի անընդհատ բարեփոխումներով՝ համահունչ գորքերում ծառայության փոփոխություններին:

Աղյուսակ 1

Հիմնախնդիր	Կուրսանտներ	Կրտսեր սպաներ	Ավագ սպաներ
Ընտանեկան խնդիրներով տարվածություն	7.24	8.12	7.4
Զորամասում սպայակազմի համախմբվածության պակասը	7.83	7.45	7.7
Երիտասարդ սպայի մասնագիտության սխալ ընտրությունը	7.25	7.24	7.8

Այս հիմնախնդիրն անդրադարձել է նաև ՀՀ ՊՆ Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի պետի տեղա-

կալ, հոգեբանական գիտությունների դոկտոր Վ.Հ.Մարգարյանը, մասնավորապես ասելով, որ պաշտպանական համակարգում կադրերի ուսուցումը, դաստիարակությունը, վերապատրաստումը, հոգեբանական մասնագիտական կայացումը, ըստ պաշտոնների ռացիոնալ բաշխումը ԶՈՒ-ի շինարարության գերակա խնդիրներից են²:

Դիմորդներն ընդունվելով ռազմաուսումնական հաստատություն նշանակում են ստանում ըստ մասնագիտությունների հաշվի առնելով նրանց մտավոր և ֆիզիկական պատրաստությունը, սակայն հաշվի չեն առնվում նրանց բարոյականային, հոգեբանական հատկանիշները: Դրա հետևանքով ՌՈՒՀ են ընդունվում երիտասարդներ, ովքեր օժտված չեն առաջնորդին բնորոշ հատկանիշների համախմբով, որոնց առկայությունը լավ հիմք կարող էր լինել որպես առաջնորդ նրանց հետագա ձևավորման համար:

Այսպես. սպայական կադրերի պատրաստման համակարգի արդյունավետության մեծացումը ենթադրում է ուշադրության կենտրոնում պահել այն հանգամանքը, որ մասնագիտական գործունեությանը անձնավորության պիտանիությունը չի կարող կանխատեսվել միայն ըստ ուսման մեջ նրա առաջադիմության, քանի որ ուսումնական ընդունակությունները և պրակտիկ գործունեության ընդունակությունները շատ դեպքերում չեն համընկնում³: Այսպիսով, ռազմական ուսումնական հաստատություններում առաջնահերթ խնդիրներից է համարվում ոչ միայն գիտամանկավարժական անձնակազմի ընտրությունը, նրանց որակավորման մակարդակի բարձրացումը, ունկնդիրների պատրաստման եղանակների կատարելագործումը, ուսումնանյութական բազայի զարգացումը, այլ նաև ռազմական ուսումնական հաստատություններ դիմորդների հոգեբանական հատկանիշների հաշվի առնելը:

Մեր կարծիքով անհրաժեշտություն կա ռազմաուսումնական հաստատություններում ընդունելության ժամանակ բացի ընդհանուր գիտական մակարդակը, ֆիզիկական և առողջական վիճակը ստուգելուց, կատարվի նաև հոգեբանական ընտրագատում, որի ժամանակ հաշվի կառնվեն անձի հոգեբանական հատկանիշները, հակումները և ապագա սպայի որպես առաջնորդ կայանալու հնարավորությունները: Անհրաժեշտ է ուսումնական ծրագրում ավելացնել այնպիսի պարապմունքների քանակը, որոնց ընթացքում կզարգանան կուրսանտների ինքնուրույն ակտիվությունը, ստեղծագործական մտածելակերպը, նախաձեռնողականությունը, խիզախությունը, պատրաստակամությունը, ինքնուրույն որոշում կայացնելու և այլ ունակություններ:

Թվարկված բոլոր միջոցառումները, ինչպես նաև մի շարք այլ միջոցառումներ անհրաժեշտ է իրականացնել համատեղ, միասին, և միայն այդ դեպքում կարող ենք ակնկալել սպասվող արդյունքը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը առանձին չի կարող տալ այն արդյունքը ինչը որ կլինի միջոցառումների համակարգված կիրառման դեպքում:

² Մարգարյան.Վ, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրագատման հարցերի շուրջ: ՏՀԲ, 2012, №3:

³ Մարգարյան.Վ, Սպայի անձնավորության ձևավորման հարցերի շուրջ: ՏՀԲ, 2004, №3-4:

К ВОПРОСАМ ФОРМИРОВАНИЯ ЛИДЕРСКИХ КАЧЕСТВ У МЛАДШЕГО ОФИЦЕРСКОГО СОСТАВА ВООРУЖЕННЫХ СИЛ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Гайк Оганесян

*Старший преподаватель кафедры тактики общевойскового факультета
военного института имени Вазгена Саркисяна Министерства Обороны
Республики Армения*

Исследование проведено с офицерами и курсантами военного института им. В.Саркисяна МОРА. В статье представляются некоторые проблемы становления младшего офицерского состава как лидеров и формирования в них лидерских качеств, а также сделаны предложения по решению этих проблем. Одним из путей решения данной проблемы является проведение психологического отбора среди кандидатов на поступление в военные вузы, в процессе которого будут учтены психологические особенности личности и возможности будущего офицера, его становление как лидера.

Ключевые слова: военная служба, войсковая часть, лидер, командир, качества, проблема, военное учебное заведение, абитуриент, курсант, офицер, психологический отбор.

DEVELOPING LEADERSHIP QUALITIES AMONG THE JUNIOR OFFICERS OF THE ARMED FORCES IN THE REPUBLIC OF ARMENIA

Hayk Hovhannisyan

*Senior instructor of Tactics' Chair at the Military Institute after V. Sargsyan,
RA Ministry of Defence*

The research involves the officers and the students of the Military Institute after V.Sargsyan, RA Ministry of Defence. The article highlights some issues in growing leaders and developing leadership skills among junior officers. It also suggests a number of proposals on how to solve these issues. Thus, one of the solutions would be the introduction of psychological selection of the applicants to the military institutions among the entrants. The selection process will consider the psychological qualities of the person as well as the prospects of his future development into a leader.

Keywords: military service, troop unit (military unit), leader, commander, qualities, issue (problem), military educational institution, entrant, cadet, officer, psychological selection.

TRANSITIONS TO AUTHORITARIANISM: THE CASE OF THE SOUTHERN CAUCASUS

David Leupold

PhD Candidate at Humboldt University Berlin,

Erasmus Mundus Grantee hosted at Eurasia International University Yerevan

The article explores the peculiarities of state-building, nation-building and democratization that impaired a successful transition in the Southern Caucasus. It first discusses mass mobilization and the rise of ethno-nationalism. Secondly, unresolved territorial issues in Abkhazia, Nagorny-Karabakh and Ossetia and a resulting securitization of politics around military core interests. Finally, it concludes with the reproduction of totalitarian structures and the emergence of hybrid regimes.

Keywords: Southern Caucasus, nation-state building, Post-Soviet studies, nationalism, elite fragmentation.

1. Introduction:

A quick review over literature on modern state transition suggests strong similarities of the post-Soviet case with what Huntington describes as the third wave of democratization, namely the transition in Southern Europe and Latin America¹. Yet in order to truly understand the dynamics of the post-Soviet transition period it is essential to shed light on the contextual factors that accompanied state-building in the aftermath of the Soviet Union. In fact, processes in the post-Soviet space are distinctly different from previous experiences in Southern Europe and Latin America. While the latter illustrates a case of re-democratization, democratization in the realm of the former Soviet Union often meant a full-fledged building of new democracies endowed with new institutional structures². Hereby, the underlying (internal) reasons for the collapse of the USSR are of paramount importance: a thorough failure of centralized economic planning, political exhaustion, state decay and public apathy as well as a decline of state power in the periphery³. Unlike most of the countries of the third wave, post-Soviet transition was dominated in several countries by an “implosion of

¹ See Bunce: pp. 167.

² Bunce: 2003, p. 168.

³ For explanatory models and literature on the collapse of the Soviet Union, see e.g. Tishkin, Valery. 1997. *Ethnicity, Nationalism and Conflict in and after the Soviet Union: The Mind Aflame* (International Peace Research Institute, Oslo, Dawisha, Karen & Parrott, Bruce (ed.). 1997. "Conflict, cleavage, and change in Central Asia and the Caucasus". Cambridge University Press, Conor, O'Clery. 2011. *Moscow December 25, 1991: The Last Day of the Soviet Union*. Transworld Ireland, Suny, Ron. 1993. *The revenge of the past. Nationalism, Revolution, and the Collapse of the Soviet Union*. Stanford University Press.

the state, civil war and the rise of power contenders whose aim is state disintegration rather than state building”⁴. Although externally-triggered by the reforms of ‘glasnost and perestroika’, liberalizing reforms implemented in this framework soon gained its own momentum, leading eventually to the disintegration of the Soviet Union instead of its reform. In the end, it was less a well-formulated reform plan of the communist politburo in Moskva but rather the socio-political and economic peculiarities of the former titular republics that shaped an open-end road map for the newly-emerging nation-states. In the following paper I will explore these very peculiarities to make sense of the major shortcomings of the transition process that stalemated policies geared towards democratization, justice and economic prosperity.

In face of the limited scope of this paper, I will limit myself with singling out and briefly discussing three peculiarities that impaired a successful democratic transition. In the beginning, I will critically reflect upon the link between popular protest, mass mobilization and the rise of ethno-nationalism. Secondly, I will show how unresolved territorial issues in Abkhazia, Nagorny-Karabakh and Ossetia resulted in a paralyzing securitization of politics around military core interests. Based on this, I will discuss the reproduction of totalitarian structures and the emergence of hybrid regimes. In this regard, I will benefit from research in the field of authoritarian learning to show how undemocratic or partially democratic regimes can equally sustain their power. Finally, I will conclude with addressing the current environment of inertia and political stalemate with Gallina’s notion of *elite fragmentation*.

2. Literature review

There exists a vast scope of academic literature on democratic transition processes in an environment of inter-ethnic conflict such as e.g. Dankwart Rustow’s “Transitions to Democracy: Toward a Dynamic Model” (1970), Renee de Nevers’ “Democratization and Ethnic Conflict” (1993) or Alfred Stepan’s “Modern Multinational Democracies: Transcending a Gellnerian Oxymoron” (2001) to name only a few. Works like Stuart Kaufman’s “Modern Hatreds: The Symbolic Politics of Ethnic War” (2001), Roger D. Petersen’s “Understanding Ethnic Violence: Fear, Hatred, and Resentment in Twentieth-Century Eastern Europe” (2002) and Rui. J.P. de Figuerido Jr. and Barry Weingast’s “The Rationality of Fear: Political Opportunism and Ethnic Conflict” (X) provide a good framework for understanding the rationality behind ethnic conflict.

In order to sketch the contextual framework of ethnic conflict in the Southern Caucasus De Waal’s monograph “Black Garden: Armenia and Azerbaijan through peace and war” (2003) still serves as the main historical overview for the Nagorny-Karabakh conflict. However, further works such as Panossian’s paper on “The Irony of Nagorno-Karabakh: Formal Institutions versus Informal Politics” (2001) and Marutyan’s paper on “The Memory of Genocide and the Karabagh Movement” (2011) complement the first with a stronger elaboration on the domestic context. Research on

⁴ Grugel: 2002, p. 192.

violence and territorial disputes in the Southern Caucasus is complemented by academic scholarship such as e.g. Cheterien (“The August 2008 War in Georgia: From Ethnic Conflict to Border Wars”), Coppieters (“The Georgian-Abkhaz Conflict”), who document well the territorial disputes and ethnic conflicts in the Georgian case. Works by Wheatley (2005, “Georgia from national awakening to Rose Revolution: delayed transition in the former Soviet Union”) and Tudoroiu, T. (2007, “Rose, Orange and Tulip: The Failed Post-Soviet Revolutions”) further shed light on the domestic dimensions of revolution and reform in the Georgian case.).

The cases of post-Soviet transition in Azerbaijan are covered by Ergun (2010, “Post-Soviet Political Transformation in Azerbaijan: Political Elite, Civil Society and Trials of Democratization”) while Suny (2001, “Constructing Primordialism: Old Histories for New Nations”, “Looking toward Ararat. Armenia in Modern History”) enriches our understanding of the Armenian case. Gallina complements this with a comparative study in “Puzzles Of State Transformation: the Cases Of Armenia And Georgia” (2010) while Suny (2000) explores the transition period in a larger geographical context encompassing whole Eurasia in “Provisional Stabilities, The Politics of Identities in Post-Soviet Eurasia”.

2.1 Mass mobilization and the rise of ethno-nationalism

In regard to the analysis of the most successful examples of post-soviet transition, i.e. Czech Republic, Estonia, Hungary, Latvia, Lithuania, Poland, and Slovenia, it is striking to see that - with the exception of Hungary - mass mobilization always emerged as a crucial element, initiating democratic transition in the young nation-states. In this regard, mass movements had a significant symbolic meaning as they not only highlighted the break-down of authoritarian regimes but also elicited confidence in the existence of feasible alternatives. Moreover they urged regime change and constituted a resource advantage for the oppositional leader against the authoritarian leaders of the ancient regime to accept negotiations for bargaining the transfer of state power.

As a matter of fact, mass mobilization often ensured crushing victories for oppositional leaders in the first elections of the newly-established nation-states. Upon disintegration of the Soviet Union mass movements arose throughout the Southern Caucasus, from Armenia over Azerbaijan to Georgia. Yet outcomes should remain far from what was optimistically expected due to both political and economic reasons. In the case of Georgia, mass mobilization was brutally stifled under repressive measures of the Russian army that crushed peaceful protests in Tbilisi in 1989. This event, commemorated on 9th April should emerge as a traumatic experience with a radicalizing impact on Georgian policy. In the case of Armenia, first demonstrations in 1987 “aimed to close down a nuclear power plant and a synthetic rubber factory exploded (...) early the next year in a more militant political movement that called for unification of Karabakh with the Armenian republic”⁵. An apparent “sense of national

⁵ Suny. 2001. Constructing Primordialism. Old Histories for New Nations, p. 30.

danger”⁶ that overshadowed the path towards independence paralyzed attempts to liberalizing and democratizing state and society. In the wake of political tensions and military conflict, multi-faceted and highly heterogeneous popular movements embracing wide-ranging topics from environmental protection over human rights to national self-determination coalesced into monolithic movements for national liberation. Hereby, as Ron Suny notes, “in place of the tattered and discredited Soviet ideology, many in the political and intellectual elite espoused a fervent and increasingly intolerant nationalism”⁷. Under these conditions, mass mobilization reprobated as a vehicle for a pre-eminent and increasingly more aggressive propagandistic rhetoric.

In addition to that, the dire state of a collapsing late-Soviet economy aggravated by the aftermath of destructive inter-ethnic warfare frustrated hopes for short-term economic progress and further discredited a political agenda promoting liberal democracy, social welfare and state of law.

2.2 Territorial disputes and the securization of politics

Another joint pattern that can be observed throughout the Southern Caucasus are territorial disputes framed by its supporters as a struggle for national self-determination yet castigated by its adversaries as a separatistic and/or terroristic agenda⁸. In the case of Armenia and Azerbaijan, the aftermath of the still unresolved Nagorny-Karabakh conflict causes a deadlock in terms of political progress.

As a matter of fact, territorial conflict comes at high costs on the domestic level for both countries. In general terms, any political agenda that does not prioritize aforementioned territorial issues is bound to failure due to lack of popular support and vulnerability to populist propaganda – depicting even the most modest attempt to shift politics away from this quagmire as a betrayal of the 'national interest' . In accordance with this, we note that democratization and economic prosperity requires a previous settlement of national and state questions, in particular on regard to territorial borders . In addition to this, as a result of territorial disputes we witness a securitization of politics throughout the Southern Caucasus. In consequence, this again brings one actor of hard policy back into the nexus of state politics - the military. Militarization of society and state comes at high costs. As a result we note a deterioration of already fragile relations with neighbouring countries further exacerbated by mutual threat of

⁶ Suny, 2001. Constructing Primordialism. Old Histories for New Nations, p. 30.

⁷ Suny: 2000, p. 836.

⁸ For more literature on national self-determination and the rationality of secession, see e.g. Buchanan, Allen E. "Self-determination and the Right to Secede." *Journal of International Affairs* 45, no. 2 (1992), pp. 347-365, Kampelman, Max M. "Secession and the Right of Self-determination: An Urgent Need to Harmonize Principle with Pragmatism," *The Washington Quarterly*, Summer 1993, pp. 5-12, Spencer, Metta. "When States Divide," in *Separatism: Democracy and Disintegration*, Metta Spencer, ed., Rowan and Littlefield, 1998, pp. 5-41, Schaeffer, Robert K. "Separatism: Rationality and Irony," in *Separatism: Democracy and Disintegration*, Metta Spencer, ed., Rowan and Littlefield, 1998, pp. 43-68.\

military action. In addition to that, high military budgets deprive the countries in the Southern Caucasus not only from efficiently tackling poverty and dilapidated infrastructures but also remove the basis for a successful realisation of wide-reaching, urgently-needed economic reforms.

In the case of Georgia, attempts have been made to forestall ethnogenesis in regions, where ethnically Georgians constitute the minority, by forming a more inclusive civic identity.. . However, reckless policies adopted by Saakashvili vis-a-vis ethnic minorities - culminating in the eruption of the August war 2008 - provide little evidence that there was any considerable shift away from an overriding ethno-nationalistic Georgian identity. In this context, John Wheatley notes that under Saakashvili “there was a new emphasis on ‘civic nationalism’, based on the notion that all citizens, irrespective of their nationality, have the right to participate fully in public life. However, this policy led to fears amongst some members of national minorities that what the Georgian government really had in mind was forced assimilation of minorities”⁹.

2.3 Reproduction of totalitarian structures and the consolidation of hybrid regimes

As a matter of fact, unlike examples of Southern Europe and Latin America where coexistence with the ancien regime marked an important stage for democratization in the transition process, severing ties with the ancien regime has proven to be the most successful model in the post-Soviet process. However, in the Southern Caucasus against the background of a state apparatus unable to provide sufficient security para-military groups such as for instance the *Mkhendron* in Georgia have emerged in an environment of political uncertainty and filling a power void and seriously challenging state sovereignty. On the other hand, we note the example of Azerbaijan and Armenia, where oppressive totalitarian rule (Azerbaijan) and corrupt state oligarchies (Armenia) succeeded in sustaining relative stability - albeit under exclusion of the majority from the political decision making process. More than two and a half decades after the formal declarations of independence the prestigious independent watchdog organization *Freedom House* still ranks Armenia and Georgia merely as ‘partly free’, while passing the judgement ‘not free’ to Azerbaijan¹⁰. This is also partly reflected in the *2015 World Press Freedom Index*, where Georgia (69/180) and Armenia (78/180) gain rather modest rating, while Azerbaijan brought up the rear (162/180)¹¹.

We see hereby, in stark contrast to what modernization theories suggest, that political transition is not a linear process with consolidated democracy as a final and inevitable destination. Instead, the case of post-soviet Southern Caucasus has proven that unconsolidated democracies are not per se less sustainable but instead, can reproduce itself in undemocratic structures and consolidate authoritarian regimes that withdraw their political and economic power from informal networks. This aspect is

⁹ Gallina: 2010, p. 20.

¹⁰ See <https://freedomhouse.org/about-us#.VX2R4lLre6Q>.

¹¹ See <https://index.rsf.org/#!/>.

closely linked up with what Ambrosio (2009) coined with reference to the Russian case as ‘authoritarian learning’¹². The idea of ‘authoritarian learning’ contends the wide-spread perception of rigid authoritarian regimes that are doomed to decline in time but instead argues that authoritarian regimes like their democratic antagonists can like-wise reciprocate and learn tactics to overcome democratic protests and oppositional demands.

This may account for why Eduard Amvrosiyevich Shevardnaze – former Soviet foreign minister under Gorbachev and first secretary of the communist party in Georgia (1972-1985) - in 1995 and Heydar Aliyev – first secretary of the communist party in Azerbaijan (1969 - 1982) and full member of the politburo – in 1993 succeeded in having a come - back in the post-Soviet period. In both cases we see a continuity of authoritarian rule where “some communists (were transformed) into nationalists, who then used nationalism to maintain authoritarian control and constructed illiberal successor regimes while deconstructing successor states.” Solely, in Armenia direct return of the old communist elite was forestalled when Robert Kocharian defeated Karen Demirchyan - first secretary of the Armenian SSR (1974 – 1988) – in the 1998 presidential elections.

2.4 Elite fragmentation and political stalemates

Finally, in the case of the Southern Caucasus we witness a wide-reaching elite fragmentation that rendered impossible the emergence of a regime both capable and willing to embark on a path towards a democratic transition. Nicole Gallina describes elite fragmentation as a state “in which there are strong differences apparent within the governing elite and serious problems between the governing and the oppositional elites. This includes trench-mentality and the positioning of elites into enemy-categories. Elite fragmentation poses serious challenges for transformation toward democratic systems, and generally efficient state institutions”¹³. In fact, this applies to all of the democratically-elected first, national presidents, where we see a large-scale failure of Ter-Petrosyan (Armenia), Zviad Gamasakhurdia (Georgia) and Ebulfeyz Elchibey (Azerbaijan) to secure sufficient elite support necessary to successfully implement envisaged reforms. As a result of this prevailing political stalemate, economic crisis, deteriorating social conditions and widespread political corruption persisted. In the light of an overall failure of bringing these nation-states on the track towards democratization leaders of the ancien regime (in Georgia and Armenia) or political stakeholder (the Karabakh group) asserted political power, bringing the democratic transition process to a halt. In the Armenian case, this elite fragmentation exacerbated already prior to the election of Kocharian at the question of how to approach the status of Karabakh in January 1998. While then President Ter-Petrosyan and his elite group advocated a step-by-step approach in line with the immediate

¹² See Ambrosio, T. (2009). *Authoritarian Backlash: Russian Resistance to Democratization in the Former Soviet Union*. Farnham and Burlington (VT): Ashgate Publishing.

¹³ Gallina: 2010, p. 22.

economic benefits possibly resulting from such an agreement, then Prime Minister Kocharian along with the Karabakh elite rejected any settlement of the issue “that might undermine the independent status of the enclave.” This struggle for supremacy among different key actors of the Armenian elite entailed a political deadlock with a paralyzing impact on policy-making in Armenia.

Conclusion: A Parajanovsque Southern Caucasus

The nature of the post-Soviet transition in the Southern Caucasus was marked by hardship, political stalemate and ethnic conflict. In this regard, policies that failed to reconcile territorial disputes such as Nagorny-Karabakh, Southern-Ossetia and Abkhazia overshadowed and finally stifled ambitious agendas for democratic reform. Moreover, the pre-eminence of military conflict suspending like the sword of Damokles over South Caucasian politics upsets the balance in budget making in favour of military expenditures. This again deprived the first leaders of the newly-established republics of room to manoeuvre their countries out of a state of aggravating economic crisis as they failed to allocate state revenue for urgently-needed economic reforms. This observation is in line with Bunce’s remark:

“Instead, uncertainty was higher, and the best result was a compromised democracy, capitalism, and state. Nonetheless, this did not necessarily mean that leaders in these contexts adopted the wrong strategies. Rather, they merely faced the "wrong" conditions”¹⁴.

In face of an overt failure of governing conflict and tackling corruption, dilapidated infrastructure and economic regression the first elected national leaders were soon ousted out of office and, in the case of Georgia and Azerbaijan, replaced by former communist elites from the ancien regime.

Is there a way out of this quagmire? I would argue that it is due time to understand for all three countries that the pathway to national sovereignty means less a military superiority against the enemy country but an internal struggle against corruption and for the rule-of-law, against political isolation and for international collaboration, against oligarchic structures and for economic prosperity for a wider part of the society. The external enemy must not be the excuse for not addressing the grievances of one’s own country. On the contrary, resources must be allocated to create a deeper awareness that these very grievances are in its essence issues that may unify rather than separate societies across the trenchworks of the Southern Caucasus.

However, such an awareness can only flourish in an environment where belligerent rhetoric, military provocations and the recurrent demonization of the purported hostile other are abandoned. Here I would like to end and leave the last words to two artists which the rich cultural dwells of the Caucasus have brought forth and whose works illustratively surmount today’s national borders. One is the artist and film director Sergej Parajanov, who eternalized Azerbaijani, Armenian and Georgian folkloric culture in his surreal works *The Colors of the Pomegranates* (1968), *The*

¹⁴ Bunce: 2003, p. 190.

Legend of Suram Fortress (1984) and *Ashik Kerib* (1988). In regard to the end of reason in war times, he warned in 1988 of the cruel logic of warfare that dictates: “Perhaps you're our brother who's trespassing the land of the enemy, but that makes you our enemy”¹⁵. These words should reverberate in almost two decades later in the work of contemporary Azerbaijani writer Ali Akbar who writes in *Artush and Zaur*¹⁶ (2009): “No choice was left to the ones who did not want to become enemy with each other, to the ones who did not even know what hating the other meant, the judgment was merciless – separation”¹⁷.

ԱՆՑՈՒՄ ԲՈՒՆԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ՕՐԻՆԱԿԸ

Դեվիդ Լյուպոլդ

*Բեռլինի Հունբուրգի անվան համալսարանի ասպիրանտ,
Եվրասիա միջազգային համալսարանում
Էրասմուս Մոնդոս ծրագրի մասնակից*

Հոդվածում ուսումնասիրվում են պետության, ազգի և ժողովրդավարության կայացման այն առանձնահատկությունները, որոնք խանգարում են Հարավային Կովկասի բարեհաջող վերափոխումներին: Հոդվածում քննարկվում են մասսայական շարժումները և էթնո-ազգայնականության վերելքը: Նրանում անդրադարձ է կատարվում այնպիսի տարածքների չլուծված հարցերին, ինչպիսիք են Աբխազիան, Լեռնային Ղարաբաղը և Օսեթիան, որոնց արդյունքում, հիմնական ռազմական շահերից ելնելով, առաջանում է անվտանգ քաղաքականություն: Հոդվածի վերջում ներկայացված են տոտալիտար կառուցվածքները և խառը տիպի ռեժիմների ծագումը:

Բանալի բառեր. Հարավային Կովկաս, ազգային պետության կառուցում, հետխորհրդային ուսումնասիրություններ, ազգայնականություն, մեկուսացված էլիտաներ:

¹⁵ Interview with Sergey Parajanov by Ron Holloway alongside the *Filmfest München* (“Munich film festival”), 1 July 1988.

¹⁶ The novel “Artush and Zaur” published in 2009 narrates the fictional love story of the two men Artush Saroyan and Zaur Jalilov from cohabitation in late-soviet Baku, over times of war until their separation and reunion in the post-Nagorny-Karabakh period. Addressing homosexuality (a prevailing taboo in all Caucasian societies) in a highly sensitive political context publisher houses in Azerbaijan declined to print and publish the novel.

¹⁷ Əkbər (2009), „Düşmən olmaq istəməyənlərə, düşmənçiliyin nə olduğunu bilməyənlərə də seçim haqqı verilmədi. Hökm ağır oldu – ayrılıq! Halbuki bu nifaqa onların nə dəxli ola bilərdi? Torpaq iddiaları, silahlar, axan qanlar – çox uzaqdı onlardan. Çox uzaq” (translation from Azeri).

ПЕРЕХОД К АВТОРИТАРИЗМУ: ДЕЛО О ЮЖНОМ КАВКАЗЕ

Девид Люпольд

*Аспирант Берлинского Университета имени Гумбольда,
Участник программы Эрасмус Мундус в
международном университете Евразия*

В статье исследуются те особенности построения государства, нации и демократизации, которые мешают успешному переходу в Южном Кавказе. В статье обсуждается массовое движение и подъем этно-национализма. В ней также затрагиваются вопросы неразрешенных территорий в Абхазии, Нагорном Карабахе и Осетии, в результате чего возникает секьюритизация политики вокруг основных военных интересов. В конце статьи представлены тоталитарные структуры и возникновение режимов смешанного типа.

Ключевые слова: Южный Кавказ, построение национального государства, постсоветские исследования, национализм, обособление элиты.

ԲԱԺԻՆ 2

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊՄԳ. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Վարդուհի Գաբրիելյան

*Երևանի պետական համալսարանի
տնտեսագիտության ամբիոնի դասախոս*

Պետական մասնավոր գործընկերությունը արտացոլում է տնտեսության մասնավոր հատվածից ֆինանսական ռեսուրսների և ժամանակակից կառավարման նվաճումների դեպի հանրային հատված նպատակաուղղված ներգրավման միտումները: ՊՄԳ տարբեր ձևերի բուռն զարգացումն աշխարհի բոլոր տարածաշրջաններում, դրանց լայն տարածումը տնտեսության ամենատարբեր ճյուղերում թույլ են տալիս պետության և գործարարության փոխգործակցության այդ ձևը մեկնաբանել որպես ժամանակակից խառը տնտեսության բնորոշ գիծ: ՊՄԳ նախագծերը թույլ են տալիս օգտագործել մասնավոր կառույցների փորձը բարձրացնելու պետական սեփականության կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև նպաստում են տնտեսության կապիտալատար ճյուղերում ինովացիոն տեխնոլոգիաների ներդրմանը:

Բանալի բառեր. պետական մասնավոր գործընկերություն, պետական հատված, մասնավոր հատված, պետական սեփականության կառավարում, հանրային բարիքներ, ենթակառուցվածքի զարգացում, կոնցեսիա, լիզինգ, համատեղ ձեռնարկություն:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում մի շարք զարգացած և զարգացող երկրների տնտեսություններում առաջացել է իշխանության և գործարարության փոխգործակցության յուրահատուկ ձև, որը սովորաբար նշանակվում է Public-Private Partnership (PPP) տերմինով: Հայաստանի Հանրապետությունում ընդունված է «պետական մասնավոր գործընկերություն» (ՊՄԳ) տերմինը: ՊՄԳ-ն պետական իշխանության և մասնավոր գործարարության ինստիտուցիոնալ և կազմակերպչական դաշինք է հասարակայնորեն նշանակալի նախագծերի

իրականացման նպատակով գործունեության ոլորտների լայն շրջանակում՝ տնտեսության ռազմավարական կարևոր ճյուղերի զարգացումից մինչև հանրային ծառայությունների տրամադրումը ամբողջ երկրի կամ առանձին տարածքների մասշտաբով: ՊՄԳ տարբեր ձևերի բուռն զարգացումն աշխարհի բոլոր տարածաշրջաններում, դրանց լայն տարածումը տնտեսության ամենատարբեր ճյուղերում թույլ են տալիս պետության և գործարարության փոխգործակցության այդ ձևը մեկնաբանել որպես ժամանակակից խառը տնտեսության բնորոշ գիծ:

Գոյություն ունի «ՊՄԳ» հասկացության մեկնաբանման երկու մոտեցումներ: Առաջին մոտեցման համաձայն ՊՄԳ-ն դիտվում է որպես անուղղակի մասնավորեցում¹: Այս մոտեցումը հաշվի է առնում մասնավոր ընկերությունների լայնածավալ մասնակցությունը սեփականության այն իրավասությունների իրագործմանը, որոնք փոխանցվում են նախագծի շրջանակում պետության կողմից:

Երկրորդ մոտեցման համաձայն գործընկերությունները գտնվում են մասնավոր և պետական հատվածների սահմանին, լինելով ոչ մասնավորեցված, ոչ էլ ազգայնացված ինստիտուտներ: ՊՄԳ-ն իր տեսակի մեջ «երրորդ ուղին» է, որը թույլ է տալիս օգտագործել բնակչությանը հանրային բարիքների մատուցման որակի բարելավման, ըստ էության, քաղաքական ձևեր: Ընդ որում, ի տարբերություն մասնավորեցման՝ որպես ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական սեփականության հատուցելի փոխանցման ձևի, գործընկերություններում սեփականության իրավունքը պատկանում է պետությանը²:

Պետական մասնավոր գործընկերությունը արտացոլում է տնտեսության մասնավոր հատվածից ֆինանսական ռեսուրսների և ժամանակակից կառավարման նվաճումների դեպի հանրային հատված նպատակաուղղված ներգրավման միտումները: Հանրային հատվածի պատասխանատու գոտին ներառում է այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են պետության պարտավորություններով նախատեսված ծառայությունների տրամադրումը բնակչությանը և տնտեսվարող սուբյեկտներին, պետական սեփականության օբյեկտների (այդ թվում հողային և այլ անշարժ գույքի) կառավարումը, ենթակառուցվածքային զարգացման ապահովումը միջպետական, ազգային և քաղաքաշինական նախագծերի մասշտաբներով: Պետական կառավարման գլխավոր խնդիրների թվում են առողջապահության, կրթության և այլ սոցիալական ծառայությունների ժամանակակից մակարդակի ապահովումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը, պատմական և մշակութային ժառանգության պահպանումը, ռազմական և տնտեսական անվտանգությունը, ընդերքի, հողային և այլ բնական ռեսուրսների ռացիոնալ յուրացումը և օգտագործումը, հեռահաղորդակցության, տրանսպորտային և էներգետիկ ենթակառուցվածքի հավասարակշիռ զարգացումը:

¹ St' u Public-Private Partnerships: Financing a Common Wealth. Wash., 1985. P. 67.

² St' u Gerrard M. What Are Public-Private Partnerships, and How Do They Differ from Privatizations? // Finance and Development. 2001. Vol. 38, No 3. P. 35.

Ժամանակակից տնտեսական պատմությունում ՊՄԳ նախատիպ է «Մասնավոր ֆինանսական նախաձեռնությունը» (Private Financial Initiative - PFI), որն առաջացել է մոտ երկու տասնամյակներ առաջ Մեծ Բրիտանիայում՝ որպես մասնավորեցման ձևերից մեկը: Սկզբնապես փոխազդեցության նման ձևեր զարգացել են սոցիալական հատվածում՝ դրա բյուջետային ֆինանսավորման հնարավորությունների նվազման պայմաններում: Այսպես, 1990-ական թթ. Մեծ Բրիտանիայի սոցիալական պաշտպանության Դեպարտամենտը գործընկերության շրջանակներում անշարժ գույքի 700 օբյեկտներ (ավելի քան 15 մլն. մ² մակերեսով) կառավարման հանձնեց մասնավոր ընկերությունների միությանը 20 տարի ժամկետով: Այդ տարիներին Մեծ Բրիտանիայի պաշտպանության Նախարարության բնակելի ֆոնդի մասնավորեցումը, որն ապահովեց 1.6 մլրդ. ֆունտ ստերլինգի մուտք պետական բյուջե, իրականացվեց մասնավոր ֆինանսական նախաձեռնության սխեմայով՝ հետադարձ վարձակալության (Sale-Leaseback) մեխանիզմի հետագա կիրառմամբ: Մասնավորեցման փաստաթղթերում համաձայնեցված էին նախարարության պահանջները զինծառայողներին անհրաժեշտ մակերեսով բնակարաններ վարձակալության տրամադրելու որակի և ժամկետների վերաբերյալ, ինչպես նաև այդ նպատակների համար կառավարության մակարդակով երկարաժամկետ և կայուն պետական պատվերի երաշխիքները: Այդ համաձայնագրերը կրում էին ռազմավարական բնույթ՝ սահմանելով պետական և մասնավոր հատվածի գործընկերների գործողությունների երկարաժամկետ ծրագրերը և այդպիսով, նրանց միջև վստահության բարձր աստիճանը: Ավելի քան 400 նախագծեր իրականացվել են կրթության և առողջապահության ոլորտում: Ընդհանուր առմամբ, մինչև 2000-ական թթ. կեսերը ստորագրվել են 569 գործընկերական համաձայնագրեր մոտ 53 մլրդ. ֆունտ ստերլինգ արժողությամբ կապիտալ ներդրումների ծավալով³: PFI/PPP փորձի տարածումը նպաստել է հանրային հատվածի և ենթակառուցվածքի ճյուղերում անշարժ գույքի կառավարման մեխանիզմների լայն շրջանակի մշակմանը և կիրառմանը: Դրանց թվում են կոնցեսիայի, հետադարձ վարձակալության, աուստրսինգի մեխանիզմները:

Գործընկերության նախաձեռնությունը արդյունք է օբյեկտիվ պատճառների՝ արտաքին և ներքին միջավայրի գործոնների ազդեցությունների: Նախաձեռնողին անհրաժեշտ են մյուս գործընկերոջը պատկանող, երկարաժամկետ հեռանկարում իր համար դեֆիցիտային և կարևոր ռեսուրսները: Տարբեր դեպքերում դրանք կարող են լինել ֆինանսական, գույքային, կառավարչական ռեսուրսներ, որոնք անհրաժեշտ են կայուն և արդյունավետ գործունեության, գործընկեր-նախաձեռնողի հիմնական գործունեության ոլորտում ռազմավարական նպատակներին հասնելու համար: ՊՄԳ շրջանակում դրանք կարող են լինել պետության պարտավորությունները բնակչությանը մատուցելու առողջապահության, կրթության, փոստային կապի, ենթակառուցվածքային ապահովման, մշակութային ժառանգության և այլ որակյալ, մատչելի ծառայություններ:

³ St' u White Alan D. A review of UK public sector real estate asset management // Journal of Corporate Real Estate. Vol. 13. 2011. No 1, pp. 6-15.

Ընդ որում, նման ծառայությունների նկատմամբ բնակչության պահանջմունքները կարող են անընդհատ աճել: Պետության պատասխանատվության և աճող պահանջմունքների համադրությունն էլ պետության կողմից մասնավոր հատվածի գործընկերոջը դիմելու նախաձեռնության օբյեկտիվ պատճառն է:

Պետական մասնավոր գործընկերությունը, ի տարբերություն ավանդական վարչական հարաբերությունների, ստեղծում է ֆինանսավորման, սեփականության հարաբերությունների և կառավարման մեթոդների իր հիմնական մոդելները: Ընդ որում, կարևոր են սեփականության իրավասությունների վերաբաշխման հետ կապված հարցերը, որոնք անխուսափելիորեն առաջանում են պետության և գործարարության միջև հիմնականում վարչական հարաբերությունները կողմերի միջև համաձայնագրերում ամրագրվող գործընկերական հարաբերությունների վերածվելիս: Ավելին, գործընկերության որոշ ձևավորված տեսակներ, օրինակ կոնցեսիան, հաճախ մեկնաբանվում է որպես անուղղակի մասնավորեցում կամ դրա լիարժեք այլընտրանք, այսինքն դիտվում է որպես ներխուժում սեփականության հարաբերությունների համակարգ: Գործընկերությունը իրականում ինստիտուցիոնալորեն վերափոխում է գործունեության ոլորտները, որոնք ավանդաբար վերաբերվել են պետական տիրապետությանը, սակայն դուրս չի բերում դրանք վերջինիս սահմաններից:

Գործընկերության շրջանակներում տնտեսության պետական և մասնավոր հատվածների միջև սեփականության իրավասությունների բաժանումը սովորաբար չի վերաբերվում իրավասությունների ամբողջությանը, որի վրա հիմնվում է տնտեսական շրջանառությունում տիտղոսային սեփականատիրոջ ինքնավար իրավունքը, այլ դրանցից մի քանիսին: Խոսքը գնում է այնպիսի առանցքային իրավասությունների մասին, ինչպիսիք են ակտիվների օգտագործման վերահսկողության իրավունքը, եկամտի իրավունքը, կառավարման իրավունքը, ինչպես նաև համաձայնագրի օբյեկտների կապիտալային արժեքի փոփոխության իրավունքը և այս կամ այն սեփականատիրական իրավասությունները այլ անձանց զիջելու իրավունքը:

Կախված ՊՄԳ շրջանակներում լուծվող խնդիրների բնույթից գործընկերության գոյություն ունեցող և նոր ծագող ձևերի բազմազանությունը կարելի է բաժանել առանձին մոդելների: ՊՄԳ նպատակներին համապատասխան տարբերում են կազմակերպչական մոդելներ, ֆինանսավորման մոդելներ և կոռպորացիաներ: Շատ դեպքերում գործընկերությունները օգտագործում են տարբեր մոդելների առավելությունների և դրանց համադրության վրա հիմնված ձևեր:

Ելնելով զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների փորձից, կարելի է առանձնացնել ՊՄԳ հետևյալ բնորոշ գծերը, որոնք տարբերում են այդ նախագծերը պետության և մասնավոր գործարարության միջև հարաբերությունների այլ ձևերից.

- գործընկերության մասին համաձայնագրի գործողության որոշակի, հաճախ երկարատև, ժամկետ (10-ից մինչև 20 տարի և ավելի, կոնցեսիայի դեպքում՝ մինչև 50 տարի): Նախագծերը հաճախ ստեղծվում են որոշակի օբյեկտի համար (նավահանգիստ, ճանապարհ, սոցիալական ենթակա-

ռուցվածքի օբյեկտ), որի կառուցումը պետք է ավարտվի նշված ժամկետում,

- նախագծերի ֆինանսավորման հատուկ ձևեր. մասնավոր ներդրումներ լրացված պետական ֆինանսական ռեսուրսներով, կամ էլ մի քանի մասնակիցների համատեղ ներդրում,
- մրցակցային միջավայրի պարտադիր առկայություն, երբ յուրաքանչյուր պայմանագրի կամ կոնցեսիայի համար պայքարում են մի քանի պոտենցիալ մասնակիցներ,
- գործընկերների միջև պատասխանատվության բաշխման հատուկ ձևեր. պետությունը հաստատում է նախագծի նպատակները ելնելով հանրային շահերից և որոշում է արժեքային ու որակական չափանիշները, իրականացնում է նախագծի իրականացման մոնիտորինգ, իսկ մասնավոր գործընկերը պատասխանատվություն է կրում նախագծի տարբեր փուլերի համար՝ նախագծում, ֆինանսավորում, շինարարություն, շահագործում, կառավարում, ծառայությունների մատուցում սպառողներին,
- ռիսկերի բաշխում համաձայնագրի մասնակիցների միջև կողմերի պայմանավորվածության հիման վրա⁴:

Ակնհայտ է, որ գործընկերության երկու կողմերն էլ շահագրգռված են նախագծերի հաջող իրականացման գործում: ՊՄԳ նախագծերը թույլ են տալիս դուրս գալ կապիտալի համաշխարհային շուկա, խթանում են օտարերկրյա ներդրումների ներհոսքը տնտեսության իրական հատված: ՊՄԳ-ն հատուկ նշանակություն ունի տարածաշրջանների, մարզերի տնտեսությունների համար, որտեղ դրա հիման վրա զարգանում են կապիտալի, աշխատանքի, ապրանքների և ծառայությունների շուկաները:

Յուրաքանչյուր գործընկեր ունենում է իր ավանդն ընդհանուր նախագծում: Գործարարությունն ապահովում է ֆինանսական ռեսուրսներ, մասնագիտական փորձ, արդյունավետ կառավարում, որոշումներ կայացնելու ճկունություն, նորարարության ունակություն: Ներդրվում են աշխատանքի առավել արդյունավետ մեթոդներ, կատարելագործվում են տեխնիկան և տեխնոլոգիան, ստեղծվում են նոր ձեռնարկություններ, այդ թվում օտարերկրյա կապիտալով, հաստատվում են արդյունավետ կոոպերացիոն կապեր մատակարարների և կապալառուների հետ: Աշխատանքի շուկայում աճում է պահանջարկն աշխատանքի նկատմամբ:

Պետությունն իր կողմից ապահովում է սեփականատիրոջ իրավասությունները, հարկային և այլ արտոնություններ, երաշխիքներ, ինչպես նաև նյութական և ֆինանսական ռեսուրսներ տրամադրելու հնարավորություն: Նա իրականացնում է վերահսկողության, կարգավորման, հանրային շահերի պաշտպանության հիմնական գործառույթները:

Ելնելով համաշխարհային պրակտիկայում ընդունված ՊՄԳ դասակարգումից կարելի է առանձնացնել դրա հետևյալ ձևերը:

⁴ St' u Gosudarstvo i biznes: institutsionalnye aspekty. M.: IMEMO РАН, 2006. С. 40.

Պայմանագրերը, որոնք կնքվում են պետության (տեղական ինքնակառավարման մարմնի) և մասնավոր ֆիրմայի միջև հասարակայնորեն անհրաժեշտ որոշակի գործունեություն իրականացնելու համար: ՊՄԳ պրակտիկայում առավել տարածված են աշխատանքների կատարման, հանրային ծառայությունների մատուցման, կառավարման, պետական կարիքների համար անհրաժեշտ արտադրանքի մատակարարման, տեխնիկական օգնություն ցուցաբերելու պայմանագրերը: Վարչական պայմանագրային հարաբերություններում սեփականության իրավունքը չի փոխանցվում մասնավոր գործընկերոջը, ծախսերը և ռիսկերը ամբողջությամբ կրում է պետությունը: Որպես կանոն, պետական մարմնի հետ պայմանագրի կնքումը մասնավոր ձեռնարկատիրոջ համար բավականին գրավիչ գործարք է, քանի որ բացի հեղինակությունից, այն երաշխավորում է կայուն եկամուտ և շուկա, հնարավոր արտոնություններ:

Վարձակալությունը և լիզինգը: Իշխանական կառույցների և մասնավոր գործարարության միջև վարձակալական հարաբերությունների առանձնահատկությունը նրանում է, որ պայմանագրով նախատեսված պայմաններով տեղի է ունենում պետական կամ համայնքային գույքի փոխանցում մասնավոր գործընկերոջը ժամանակավոր օգտագործման որոշակի վարձատրության դիմաց: Վարձակալության ավանդական պայմանագիրը ենթադրում է վարձակալության օբյեկտի վերադարձելիություն, ընդ որում, սեփականատերը պահպանում է գույքի տնօրինման իրավունքը, որը չի փոխանցվում մասնավոր գործընկերոջը: Լիզինգի պայմանագրի դեպքում լիզինգատուն սովորաբար իրավունք ունի վարձակալության ժամկետը լրանալուց հետո գնել պետական կամ համայնքային գույքը՝ վճարելով պայմանագրով նախատեսված գինը: Հատուկ վերապահված դեպքերում վարձակալության պայմանագրում նույնպես կարող է նախատեսվել վարձակալած գույքը գնելու պայման:

Կոնցեսիան պետության և մասնավոր գործընկերոջ միջև առավել լայն տարածում ստացած հարաբերությունների ձև է: Դրա առանձնահատկությունը նրանում է, որ պետությունը (տեղական ինքնակառավարման մարմինը) գործընկերական հարաբերությունների շրջանակում մնալով կոնցեսիոն համաձայնագրի առարկայի լիիրավ սեփականատերը, լիազորում է մասնավոր գործընկերոջը որոշակի ժամկետի ընթացքում իրականացնել համաձայնագրում վերապահված գործառույթները և այդ նպատակով նրան օժտում է համապատասխան իրավասություններով, որոնք անհրաժեշտ են կոնցեսիայի օբյեկտի նորմալ գործառնության համար: Պետական կամ համայնքային սեփականությունը օգտագործելու համար կոնցեսիոները (մասնավոր գործընկերը) պարտավոր է վարձավճար մուծել, որի կարգը և պայմանները որոշվում են կոնցեսիոն համաձայնագրով: Թողարկված արտադրանքի սեփականության իրավունքը պատկանում է կոնցեսիոներին:

Կոնցեսիան հիմնվում է կոնցեսիոն հարաբերությունների առարկայի վերադարձելիության սկզբունքի վրա: Եթե վարձակալության և կապալի պայմանագրերի դեպքում պետությունը և համայնքային մարմինները հանդես են գալիս որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ և դրանց արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ են Քաղաքացիական օրենսգրքի նորմերը,

ապա կոնցեսիայի շրջանակներում պետությունն, առաջին հերթին, հանրային իշխանության մարմին է: Այս առումով, նա ոչ միայն համաձայնագրերի հիման վրա գործընկերներին տրամադրում է իր՝ որպես սեփականատիրոջ իրավասությունների մի մասը, այլև իր բացառիկ իշխանական գործառնությունների մի մասը: Այսպիսով, կոնցեսիոն համաձայնագրով տրամադրվող իրավունքների բացառիկ բնույթը պայմանավորված է ոչ թե պետության՝ որպես սեփականատիրոջ կարգավիճակով, այլև որպես հանրային իշխանության մարմնի արտոնությամբ⁵: Պետության կողմից կոնցեսիոններին տրամադրվող իրավունքների բացառիկ բնույթը նրանում է, որ տարածքի կամ գործունեության տեսակի շրջանակներում, որի նկատմամբ նա ստանում է բացառիկ իրավունք, չի թույլատրվում ցանկացած երրորդ անձանց, ինչպես նաև պետության նմանատիպ գործունեություն:

Կոնցեսիոն համաձայնագրերի հանրային-իրավական հայտանիշներից են դրանցում հանրային շահերի ամրագրումը, որոնց արտահայտողն ու ներկայացնողը պետությունն է: Կոնցեսիոն համաձայնագրի համաձայն պետության մասնավոր գործընկերը պարտավոր է ենթարկվել հանրային շահերի պահանջներին, այսինքն՝ ապահովել ծառայությունների մատուցման անխափանություն, ծառայությունների հանրամատչելիություն, միանման ծառայությունների սակագների հավասարություն: Կոնցեսիաները լայն տարածում են գտել ենթակառուցվածքային ճյուղերում, որտեղ անհրաժեշտ է մասնավոր ներդրումների հոսք և բարձրորակ կառավարում:

Արտադրանքի բաժանման համաձայնություններ: Եթե կոնցեսիայի դեպքում ամբողջ թողարկված արտադրանքը սեփականության իրավունքով պատկանում է կոնցեսիոններին, ապա արտադրանքի բաժանման համաձայնագրերում պետության գործընկերոջը պատկանում է դրա միայն մի մասը: Համաշխարհային պրակտիկայում նման համաձայնություններն ակտիվորեն կիրառվում են նավթի արդյունահանման ոլորտում: Ինչպես և կոնցեսիայի դեպքում, այս դեպքում էլ պետությունը տրամադրում է ընդերքի օգտագործման բացառիկ իրավունքը մասնավոր ներդրողին հատուցելի հիմունքներով և որոշակի ժամկետով: Բացառիկ իրավունքների հասանելիությունը մասնավոր գործընկերներին (այդ թվում օտարերկրյա գործընկերներին) իրականացվում է կապիտալատար ճյուղերում ներդրումների ներգրավման նպատակով:

Համատեղ ձեռնարկությունները պետության և մասնավոր գործարարության գործընկերության տարածված ձևերից են: Կախված համատեղ կապիտալի կառուցվածքից և բնույթից, դրանք կարող են լինել կամ բաժնետիրական ընկերություններ կամ համատեղ ձեռնարկություններ կողմերի բաժնային մասնակցությամբ: Բաժնետիրական ընկերություններում որպես բաժնետերեր կարող են հանդես գալ պետական մարմինները և մասնավոր ներդրողները: Մասնավոր գործընկերոջ ինքնուրույն վարչատնտեսական որոշումներ ընդու-

⁵ St' u Cosna C. Концессионное соглашение – новый вид договора в российском праве // Журнал российского права – www.concession.ru

նելու հնարավորությունները սահմանվում են բաժնետիրական կապիտալում նրա ունեցած բաժնով:

Համատեղ ձեռնարկությունների կարևոր առանձնահատկությունը պետության անընդհատ մասնակցությունն է արտադրական, վարչատնտեսական և ներդրումային ընթացիկ գործունեությանը: Մասնավոր գործընկերոջ որոշումների ընդունման ինքնուրույնությունը այստեղ ավելի սահմանափակ է, քան կոնցեսիայի դեպքում: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ բաժնետիրական կապիտալի կառուցվածքի փոփոխությունը համատեղ ձեռնարկության կողմերից մեկի օգտին ենթադրում է միայն բաժնետոմսերի վերաբաշխում ներդրողների միջև, և չի բերում կապիտալի ընդհանուր չափերի և համապատասխանաբար, հիմնական ֆոնդերի ու աշխատատեղերի թվի մեծացման: Պետության մասնակցությամբ համատեղ բաժնետիրական ընկերության ազգայնացման դեպքում բաժնետոմսերի առքը կատարվում է ընթացիկ փոխարժեքով և կախված չէ մասնավոր գործընկերոջ կողմից սկզբնապես ներդրված կապիտալի ծավալից: Նկատենք, որ համաշխարհային պրակտիկայի համաձայն կոնցեսիոն ձեռնարկության ազգայնացման դեպքում պետությունը պարտավոր է փոխհատուցել կոնցեսիոններին ներդրված կապիտալի արժեքը և բաց թողնված օգուտը:

Վերջին տարիներին ՊՄԳ տարբեր ձևերի կիրառման ոլորտները զգալիորեն ընդլայնվում են: Արագ զարգանում են նաև գործընկերության ձևերը: Այսպես, եթե կոնցեսիոն համաձայնագրերը սկզբնապես կիրառվում էին ավտոմայրուղիների, ավտոկայանատեղիների կառուցման, կենտրոնացված ջերմամատակարարում ապահովելու համար, ապա ներկայումս դրանք տարածում են գտել այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ազգային պաշտպանությունը, կրթությունը, մալուխային հեռուստատեսությունը, քաղաքային հասարակական տրանսպորտի որոշ տեսակներ⁶:

ՊՄԳ նախագծերի իրագործման դեպքում կիրառվում են պետական կառույցների և մասնավոր գործարարության ձեռնարկությունների համագործակցության տարբեր մեխանիզմներ: Դրանք տարբերակվում են՝ կախված մասնավոր գործընկերոջը փոխանցվող սեփականության իրավասությունների ծավալից, կողմերի ներդրումային պարտավորություններից, գործընկերների միջև ռիսկերի բաշխման սկզբունքներից, տարբեր տեսակի աշխատանքների կատարման պատասխանատվությունից: Առավել տարածված են գործընկերության հետևյալ մեխանիզմները.

- BOT (Build, Operate, Transfer-շինարարություն, շահագործում/ կառավարում, փոխանցում): օգտագործվում է հիմնականում կոնցեսիաների դեպքում: Ենթակառուցվածքի օբյեկտը ստեղծվում է կոնցեսիոնների հաշվին, որը շինարարությունը ավարտելուց հետո օբյեկտի շահագործման իրավունք է ստանում որոշակի ժամկետի ընթացքում, որը բավական է ներդրված կապիտալի հետգնման համար: Ժամկետի ավարտին օբյեկտը հանձնվում է պետությանը: Կոնցեսիոնները օբյեկտի օգտագործման

⁶ St' u Варнавский В. Концессионные механизмы партнерства государства и частного сектора.-М.: ИМЕМО РАН, 2003.-СС. 105-123.

իրավունք է ստանում, բայց ոչ տիրապետման իրավունք: Օբյեկտի սեփականատերը պետությունն է:

- BOOT (Build, Own, Operate, Transfer-շինարարություն, տիրապետում, շահագործում/կառավարում, փոխանցում): Այս դեպքում մասնավոր գործընկերը ոչ միայն օբյեկտի օգտագործման իրավունք է ստանում, այլև տիրապետման իրավունք համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում, որից հետո այն հանձնվում է հանրային իշխանությանը:
- BTO (Build, Transfer, Operate-շինարարություն, փոխանցում, շահագործում/կառավարում): Այս մեխանիզմը ենթադրում է օբյեկտի փոխանցումը պետությանը շինարարության ավարտին: Այնուհետև օբյեկտը հանձնվում է մասնավոր գործընկերոջ օգտագործմանը, բայց առանց տիրապետման իրավունքի փոխանցման:
- BOO (Build, Own, Operate-շինարարություն, տիրապետում, շահագործում/կառավարում): Այս դեպքում ստեղծված օբյեկտը համաձայնագրի ժամկետի գործողության ավարտին չի փոխանցվում պետության սեփականությանը, այլ մնում է ներդրողի տնօրինմանը:
- BOMT (Build, Operate, Maintain, Transfer-շինարարություն, շահագործում/կառավարում, սպասարկում, փոխանցում): Այստեղ շեշտադրվում է մասնավոր գործընկերոջ պատասխանատվությունը իր կողմից ստեղծված ենթակառուցվածքի օբյեկտի պահպանման և ընթացիկ վերանորոգման համար:
- DBOOT (Design, Build, Own, Operate, Transfer-նախագծում, շինարարություն, տիրապետում, շահագործում/կառավարում, փոխանցում): Այս դեպքում մասնավոր գործընկերը ոչ միայն պատասխանատվություն է կրում ենթակառուցվածքի օբյեկտի շինարարության, այլև նախագծման համար:
- LROT (Lease, Renovate, Operate, Transfer-լիզինգ, արդիականացում, շահագործում/կառավարում, փոխանցում): Այս դեպքում օբյեկտի օգտագործումը տեղի է ունենում մասնավոր գործընկերոջ կողմից լիզինգի, արդիականացման, շահագործման և կառավարման մեխանիզմների միջոցով, այնուհետև օբյեկտը փոխանցվում է պետության սեփականությանը:
- DBFO (Design, Build, Finance, Operate-նախագծում, շինարարություն, ֆինանսավորում, շահագործում/կառավարում): Այս տիպի համաձայնագրերի դեպքում մասնավոր գործընկերը պատասխանատու է նաև ենթակառուցվածքի օբյեկտի շինարարության ֆինանսավորման համար:

Deloitte & Touche խորհրդատվական ընկերության կողմից առաջարկվում է հետևյալ սխեման, որը թույլ է տալիս դասակարգել ՊՄԳ մոդելները կախված մասնավոր հատվածին իրավասությունների փոխանցման աստիճանից (նկ. 1):

ՆԱԽԱԳԾԵՐ					
Նախագծում, շինարարություն (DB)	Նախագծում, շինարարություն, պահպանում (DBM)	Նախագծում, շինարարություն, շահագործում (DBO)	Նախագծում, շինարարություն, շահագործում, սպասարկում (DBOM)	Շինարարություն, տիրապետում, շահագործում, փոխանցում (BOOT)	Շինարարություն, տիրապետում, շահագործում (BOO)
← Պետության պատասխանատվությունը գործընկերոջ պատասխանատվությունը			Մասնավոր →		
-	Ծառայության մատուցման պայմանագիր	Կառավարման պայմանագիր	Վարձակալության պայմանագիր	Կոնցեսիա	Մասնավորեցում
Գոյություն ունեցող օբյեկտները և ծառայությունները					

Նկար 1. Պետական մասնավոր գործընկերության մոդելները:
 Աղբյուրը՝ Closing the Infrastructure Gap: The Role of Public-Private Partnerships.
 A Deloitte Research Study. 2006.

Գործընկերական հարաբերությունների զարգացման համաշխարհային միտումների վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել պետական (համայնքային) սեփականության կառավարման առաջնահերթ խնդիրները՝ հաշվի առնելով գործընկերության մեխանիզմները.

- Պետական սեփականության օբյեկտների, այդ թվում հողային և այլ անշարժ գույքի, կառավարման և զարգացման հայեցակարգի մշակում: Առաջին հերթին ուշադրություն պետք է դարձնել կառավարման գործառույթների կատարման և ծառայությունների մատուցման որակին, այլ ոչ թե օբյեկտների սեփականության ձևին:
- Պետության և մասնավոր հատվածի փոխհարաբերությունների, այդ թվում նաև ՊՄԳ, իրականացումը քաղաքացիական-իրավական հարաբերությունների դրույթների և նորմերի սահմաններում կոնկրետ ներդրումային նախագծերի և ծրագրերի միջոցով, որոնց դեպքում պահպանվում են մասնավոր գործընկերոջ ընտրության մրցութային, մրցակցային հիմքերը:
- Պետական և մասնավոր հատվածների ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների լավագույն համադրությունների և փոխազդեցության ձևերի որոշումը գործառույթների իրականացման և բնակչությանն ու տնտեսվարող սուբյեկտներին մատուցվող ծառայությունների պահանջվող որակի ապահովման համար:

- Փոխգործակցության արդյունավետության գնահատում երկարաժամկետ հեռանկարում, որն կընդգրկի գործընկերական հարաբերությունների ամբողջ կենսացիկլը և սեփականության ձևերի հնարավոր հերթափոխը:
- Սոցիալ-տնտեսական և մշակութային բնագավառներում նպատակաուղղված աշխատանքների իրականացում իշխանության պետական (համայնքային) մարմինների և մասնավոր հատվածի համագործակցող տնտեսվարող սուբյեկտների միջև վստահության մթնոլորտի, գործընկերների սոցիալական պատասխանատվության կայուն քաղաքականության ստեղծման և պահպանման ուղղությամբ:

Սկսած 2008թ.-ից ՀՀ Կառավարության կողմից զգալիորեն վերանայվել են Կայուն զարգացման ծրագրի մոտեցումները և, ի հավելումն գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության ու միջոցառումների, պետության կողմից իրականացվել են գործարարության ու առանձին ոլորտների ֆինանսական օժանդակման միջոցառումներ⁷: Նոր հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի մշակման կարևոր պատճառ է ինչպես տնտեսական քաղաքականության, այնպես էլ դրա գործիքակազմի նկատմամբ տեսակետների փոփոխությունը, որը դրսևորվել է համաշխարհային տնտեսական ճգնաժամի ընթացքում և շարունակվում է մինչ այժմ՝ հիմնականում շեշտադրելով պետության կարգավորիչ դերի և «ուղղակի» քաղաքականության նշանակության մեծացման կարևորությունը: Նոր քաղաքականությունը կիրականացվի օգտագործելով ՊՄԳ գործիքակազմը՝ մասնավոր հատվածը ուղղակիորեն ներգրավելով ոլորտային և ճյուղային զարգացման քաղաքականության մեջ:

ГЧП: НОВЫЕ ТЕНДЕНЦИИ ВЗАИМОДЕЙСТВИЯ ГОСУДАРСТВА И БИЗНЕСА

Вардуи Габриелян

*Преподаватель кафедры экономической теории
Ереванского государственного университета*

Государственно-частное партнерство (ГЧП) отражает тенденции целенаправленного вовлечения финансовых ресурсов и достижений современного менеджмента из частного сектора экономики в зону публичного сектора. Бурное развитие многообразных форм ГЧП во всех регионах мира, их широкое распространение в самых разных отраслях экономики позволяют трактовать эту форму взаимодействия государства и бизнеса как характерную

⁷ Տե՛ս ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, ՀՀ կառավարության 2014թ. մարտի 27-ի թիվ 442 որոշման հավելված:

черту современной смешанной экономики. Проекты ГЧП позволяют использовать опыт частных структур для повышения эффективности управления государственной собственностью, а также способствуют внедрению инновационных технологий в капиталоемкие отрасли экономики.

Ключевые слова: государственно-частное партнерство, государственный сектор, частный сектор, управление государственной собственностью, публичные блага, развитие инфраструктуры, концессия, лизинг, совместное предприятие.

PPP: NEW TRENDS OF INTERACTION BETWEEN STATE AND BUSINESS

Varduhi Gabrielyan

Lecturer of the Economic Theory Department at Yerevan State University

Public-private partnership (PPP) reflects the trends of purposeful involvement of financial resources and achievements of modern management of the private sector in the area of the public sector. The rapid development of various forms of PPP in all regions of the world, their widespread use in a variety of industries allows us to treat this form of interaction between government and business as a characteristic feature of modern mixed economy. The PPP projects enable to use the experience of private entities to improve the efficiency of state property management, as well as contribute to the adoption of innovative technologies in capital-intensive industries.

Keywords: public-private partnership, the public sector, the private sector, state property management, public goods, infrastructure development, concession, leasing, joint venture.

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ**

Լուսինե Սարգսյան

*Եվրոպական Կրթական Տարածաշրջանային Ակադեմիայի
Տնտեսագիտության ամբիոնի հայցորդ, դասախոս*

Ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմներն անմիջականորեն փոխկապակցված են «արդյունավետ ինովացիոն համակարգ» ստեղծելու գաղափարի հետ:

Առաջին հերթին կատարելագործման կարիք ունի նորարարությունների դաշտը կարգավորող իրավական ակտերի համակարգը: Իրավական համակարգում կարգավորման առաջին քայլերից մեկը պետք է լինի նորամուծական գործունեության հարկերից հնարավորինս ազատումը, քանի որ հարկային բեռի ներքո ինովացիոն ծրագրերի իրագործումը դառնում է ոչ արդյունավետ:

Հաջորդ կարևորագույն համակարգային տարրը, առանց որի հնարավոր չէ հասնել գիտական, տեխնիկական և ինովացիոն գործունեության, ինչպես նաև ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման կամ բարելավման, գործուն ֆինանսավորման մեխանիզմների առկայությունը և մշակումն է:

Եվ, իհարկե, կարևորվում է նաև պետության կողմից խթանման համակարգը՝ որը պետք է արվի ոչ միայն առանձին կազմակերպությունների, այլ նաև առանձին գիտահետազոտական կազմակերպությունների գիտաշխատողների համար:

Բանալի բառեր. ազգային ինովացիոն համակարգ, մրցունակ ազգային ինովացիոն համակարգ, համաշխարհային տնտեսություն, գիտություն, գիտական, տեխնիկական և ինովացիոն գործունեության, վենչուրային հիմնադրամ:

Մրցունակ ազգային ինովացիոն համակարգի ձևավորումն ու արդյունավետ գործունեությունը հաստուկ է ոչ բոլոր երկրերին: Դրա համար անհրաժեշտ է ունենալ մշակված հաջորդական քայլերի սխեմա կամ ճանապարհային քարտեզ: Դեռ ավելին, առանձին մոդելներով առաջնորդվելը դեռևս չի երաշխավորում, որ կոնկրետ երկրի փորձին հետևելով, կարելի է հասնել հաջողության: Այս առումով անառարկելի է մի փաստ, Հայաստանում գործուն

ազգային ինովացիոն համակարգ ունենալը հրատապ անհրաժեշտություն է, քանի որ առանց դրա ՀՀ տնտեսության զարգացման հեռանկարները մշուշոտ են և լի սպառնալիքներով, մասնավորապես, գիտելիքահենք տնտեսություն ունենալու համար անհրաժեշտ բոլոր ինստիտուցիոնալ միավորները և ենթակառուցվածքները իրենց ձևավորման և զարգաման ճանապարհին կարող են կորցնել առկա մրցակցային առավելությունները: Փաստ է, որ նորարական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նպաստավոր ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի առկայությամբ: Հայաստանում նորարական գործունեության աջակցմանն ուղղված օրենսդրական դաշտի վերլուծությունը¹ ցույց է տալիս, որ համապատասխան օրենքները և այլ իրավական փաստաթղթերը առանձին-առանձին վերցրած բավականին հուսադրող են: Սակայն պատկերը միանգամայն փոխվում է, երբ այս օրենքները փորձ է արվում համատեղել մեկ ընդհանուր տրամաբանության մեջ, հատկապես այն պարագայում, երբ զարգացումները դիտարկում ենք ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման համատեքստում:

Իրավական համակարգում կարգավորման առաջին քայլերից մեկը պետք է լինի ինովացիոն կամ նորամուծական գործունեության հարկերից հնարավորինս ազատումը, քանի որ հարկային բեռի ներքո ինովացիոն ծրագրերի իրագործումը դառնում է ոչ արդյունավետ, այն պարզ պատճառով, որ ինովացիոն նախագծերը սկզբնական շրջանում չեն կարողանում ծածկել իրենց ծախսերը, իսկ եթե դրան գումարվում են նաև հարկերը (շահութահարկ, հողի հարկ, գույքահարկ և այլն), ապա առանց վնասաբերության աշխատելը դառնում է բավականին բարդ:

Այս տեսանկյունից ոչ պակաս կարևոր է նաև գործարկել ՓՄՁ-ների նորամուծական գործունեության հարկերից ազատելու մեխանիզմը, այսինքն, եթե ՓՄՁ-ներն իրենց գործունեության արդյունքում որոշակի միջոցներ են ուղղում նորամուծական արդյունքների ստացմանը, ապա դրանք պետք է ազատել հարկերից: Սակայն այստեղ պետք է ցուցաբերել զգուշավորություն, քանի որ նման արտոնություններից կարող են օգտվել անբարեխիղճ ՓՄՁ-ները կամ նման ծախսերի անվան տակ կարող են իրականում թաքցվել նաև մուծվող հարկերը, իսկ դա կտանի նրան, որ տրամադրվող արտոնությունը, որպես այդպիսին չի ծառայի իր հիմնական նպատակին:

Մյուս կողմից անհրաժեշտ է նաև ինովացիոն ենթակառուցվածքների (վարձակալվող տարածքների) համար ևս սահմանել արտոնյալ պայմաններ, այն է՝ բոլոր տեխնոպարկերի, տեխնոլոգիաների տրանսֆեր ապահովող կենտրոնների, գիտահետազոտական կազմակերպությունների, իրավաբանական անձանց, որոնք ծառայություններ են մատուցում հետազոտությունների, ինչպես նաև մշակումների բնագավառում: Դա կնպաստի նրան, որ նմանատիպ գործունեությամբ զբաղվողների համար կկրճատվեն վարձակալական ծախսերը և

¹ Մարգարյան Լ.Ս., «Ազգային ինովացիոն համակարգի ձևավորման իրավական հիմքերը և առկա խնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Ֆինանսներ և Էկոնոմիկա 9-10 (171-172) 2014, Երևան 2014, էջ 97-99

իրենց միջոցները հնարավորություն կտան ուղղել գիտահետազոտական ու ինովացիոն արդյունքների ստեղծմանը:

Մարզերում և համայնքներում գիտության զարգացման համար անհրաժեշտ է բոլոր մարզպետարաններին, քաղաքապետարաններին, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական շրջաններին և ՀՀ խոշոր համայնքներին կից ստեղծել անկախ ինովացիոն զարգացման կենտրոններ: Իհարկե, նման կենտրոններ պետք է կցված լինեն նաև առանձին նախարարություններին, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններին ևս: Մա հենց այն մոտեցումն է, որն ապահովում է ամբողջ պետական համակարգում ինովացիոն գործունեության խթանումը և կարելի է ասել գաղափարական (ուղեղային) կենտրոնների առկայությունը: Հատկապես, եթե հնարավոր լինի ապահովել այդ միավորների կամ կենտրոնների անկախ գործունեությունը՝ դրանք, իսկապես, կարող են վերածվել «գաղափարական» կամ «ուղեղային» կենտրոնների, որոնք ամեն քայլի կմատուցեն այն նորամուծական փաթեթներն ու նախագծերը, որոնք կտանեն ՀՀ ինովացիոն համապետական և ազգային համակարգի ձևավորմանը:

Իհարկե, եթե այս լուրջ առաջարկին կամ կարելի է ասել ինովացիոն մոտեցմանը մոտենանք չիրագործելիության տեսանկյունից, կարելի է դրա համար գտնել բազմաթիվ պատճառներ, սկսած կադրային ներուժի բացակայությունից, մինչև այն հարցը՝ որտեղից հայթայթել այն ֆինանսական ռեսուրսները, որոնք պետք է ուղղվեն ինովացիոն այդ կից մարմինների կամ կենտրոնների ձևավորմանը: ՀՀ պետական բյուջեում իրական ծախսային քաղաքականությունն այնքան էլ արդյունավետ չէ և շատ արագ կարելի է յուրաքանչյուր պետական և տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում գտնել կետեր, որոնց հաշվին կարելի է ֆինանսավորել այս նախաձեռնությունը: Մյուս կողմից նման ինովացիոն կենտրոնների առկայությունը չի ենթադրում, որ դրանք մշտապես սնվելու են պետական բյուջեի հաշվին, քանի որ ինովացիոն կենտրոնների առկայությունը ոչ միայն դրվում է բյուջեից ստացվող դրամական միջոցների հաշվին գոյատևելու համատեքստում, այլ առաջին հերթին տարբեր գիտական և ինովացիոն նախաձեռնությունների համար նաև վենչուրային կապիտալ ներգրավելու առումով: Այսինքն՝ ձևավորվող կենտրոնների գործունեության արդյունավետությունը կարելի է նաև հետագայում գնահատել սեփական միջոցներ հայթայթելու, ինչպես նաև առանձին ինովացիոն ծրագրեր ներկայացնելով՝ դրամական միջոցներ հայթայթելու և հասարակական կյանքի, ինչպես նաև գիտահետազոտական առանձին նախագծեր կյանքի կոչելու և շուկայում առևտրայնացված արդյունքներ դուրս բերելու առումով:

Մա բավականին բարդ գործընթաց է, սակայն իրականում դրանով կստեղծվի նաև առանձին խնդիրների լուծմանն ինովացիոն մոտեցումներ առաջարկող թիմերի գաղափարը, որոնք կմասնագիտանան այս կամ այն ոլորտում, քաղաքներում և համայնքների առանձին խնդիրներ լուծելու բնագավառում: Հարկ է նշել նաև, որ այս մարմինները կամ կենտրոնները չպետք է ունենան որևէ քաղաքական ուղղվածություն: Նման շտաբային կառուցվածքային ստորաբաժանումներ ունեն գրեթե բոլոր խոշոր կորպորացիաները, որոնք իրենց

որոշումների կայացման և նոր նախագծերի ներկայացման ժամանակ պարտադիր հաշվի են նստում ինովացիոն զարգացման իրական վեկտորների որոշման հետ:

Օրենսդրական մյուս մեխանիզմը, որը կարելի է գործարկել, կապված է բարձր արդյունավետությամբ աշխատող, շահութաբերության ցուցանիշներով, նորարարական ապրանքների վաճառքի տեմպերով աչքի ընկած կազմակերպություններին հարկային և վարկային արտոնություններ տալով: Այսինքն՝ ստեղծելով բանկային ցածր տոկոսադրույքներով վարկեր ստանալու, կուտակած շահույթը ներդրումների վերածելու և արտաքին շուկաներ գրավելու համար նախապայմաններ:

Իհարկե, այս մոտեցումների որդեգրումն արդարացված է, քանի որ իրականում ստեղծում է խթանման համակարգ՝ պետության կողմից տրվող արտոնություններից օգտվելու համար, և դա պետք է արվի ոչ միայն առանձին կազմակերպությունների, այլ նաև առանձին գիտահետազոտական կազմակերպությունների, գիտաշխատողների համար (ի դեպ այդ համակարգը վերջերս է ներդրվել ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի կողմից ամենաարդյունավետ աշխատող գիտաշխատողների հավելավճար տալու տեսքով)², որոնք յուրաքանչյուր իրենց նոր նախաձեռնությունը սկսելիս համոզված կլինեն, որ դա ոչ թե անտեսվելու է պետության կողմից, այլ արժանանալու է խրախուսման, ինչպես նաև պարգևատրման, այսինքն՝ նման պարգևատրման և խթանման համակարգերն իրականում շատ քիչ են կամ բացակայում են ՀՀ-ում, որոնք առաջին հերթին ունեն իրավական մեխանիզմների միջոցով կարգավորման անհրաժեշտություն:

Գիտական, տեխնիկական և ինովացիոն գործունեության կառավարման արդյունավետության բարձրացում ապահովելու համար ՀՀ-ում անհրաժեշտ է իրականացնել լուրջ փոփոխություններ: Փորձենք առանձնացնել հաջորդ մեխանիզմների խումբը, որոնց միջոցով կարելի է հասնել դրան: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է մշակել «նորարարական» արտադրանքի միջոցով տեղական և համաշխարհային շուկա դուրս գալու ռազմավարություններ: Իհարկե, համարել, որ նման ռազմավարությունները հեշտ են կյանքի կոչվում և կառավարման արդյունավետության խնդիրն այդքան հեշտ է լուծել, սխալված կլինենք, քանի որ դրա համար անհրաժեշտ են ոչ միայն մեծ ներդրումներ և երկար փողեր, այլ նաև ժամանակակից նորարարական տեխնոլոգիաներ: Իհարկե, շատ մեծ կարևորություն ունի ոչ միայն ինովացիաների կառավարումը, այլ նաև կառավարման գործընթացում ինովացիոն տեխնոլոգիաների կիրառումը, որը կարող է արտահայտված լինել «էլեկտրոնային կառավարության»³ (ի դեպ այս համակարգը ևս ՀՀ-ում գործում է), թվայնացման ծավալների, մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսքով և այլն:

Հարկավոր է ստեղծել հասուկ Ինովացիոն բանկ, որը կաշխատի առանձնահատուկ իրավական ռեժիմում, այսինքն՝ իր մասնագիտական ուղղվա-

² <http://scs.am/uploaded/orensdrutyun/Hraman-AG-2014-Winners-storagrvac.pdf>

³ <https://www.e-gov.am/>

ծությամբ, վարկավորմամբ և այլն կտարբերվի ՀՀ-ում գործող մյուս բանկերից և կզբաղվի բացառապես ինովացիոն նախագծերի և “start up” կամ նոր ինովացիոն գործունեություն սկսող կազմակերպությունների ֆինանսավորմամբ: Սա բավականին մեծ ռիսկայնությամբ աշխատող բանկ կարող է լինել, այդ իսկ պատճառով վերջինիս առանձնահատուկ կարգավիճակը չի ստիպի, որ այն դիտարկեն ՀՀ մյուս բոլոր բանկերի գործունեության հետ միևնույն հարթությունում: Այս բանկի առաջնային խնդիրներից պետք է լինի նաև ցածր տոկոսադրույքներով վենչուրային կապիտալի ներգրավումը, այսինքն՝ այդ բանկը պետք է ունենա վենչուրային և ինովացիոն ուղղվածություն:

Այս բանկի գործառնություններից պետք է լինի նաև առանձին խոշոր ներդրումային հիմնադրամների, ինչպես նաև խոշոր ինովացիոն կենտրոնների հետ համագործակցության շրջանակների ընդլայնումը, քանի որ իրականում բակը կարող է հանդիսանալ ոչ միայն ֆինանսական ռեսուրսներ տրամադրող, այլ նաև ներգրավող, ինչպես նաև ստեղծված արդյունքների առևտրայնացման համար արտերկրից գործընկերներ որոնող: Այսինքն՝ նման ֆինանսական միջնորդական ծառայություններ մատուցող հատուկ կարգավիճակ ունեցող կառույցները կարող են բացել դռները նորամուծությունների ոլորտ ֆինանսական ռեսուրսներ մուտք գործելու առումով:

Աշխարհում իրականում բավականին շատ են լուրջ ներդրումային նախաձեռնություններ ֆինանսավորել ցանկացողները, պարզապես հայկական ստեղծագործական միտքը և այդ կենտրոնների համագործակցությունը միավորող կառույցների և ինստիտուցիոնալ միջավայրը ստեղծողների պակաս կա: Այս հարցին միայն որոշ անհատներ են կարողանում ճիշտ լուծումներ տալ, սակայն ընդհանուր և համակարգված բնույթ դա չի կրում:

Հաջորդ կարևորագույն առաջարկն ուղղված է ՀՀ ԳԱԱ կազմում գիտահետազոտական ինստիտուտների կողմից ստեղծված արդյունքների առանձին «Գիտական-գործնական և գիտատեխնոլոգիական կենտրոնի» ստեղծումը, որի կողմից կհավաքագրվեն և առևտրայնացման գործընթացով կանցնեն ստեղծված լուրջ գիտական արդյունքներ: Այսինքն՝ հարկավոր է ձևավորել այն ֆիլտրացիոն կենտրոնը, որը տարանջատելով ստեղծված գիտական արդյունքներն ըստ կարևորության՝ կզբաղվի վերջիններիս պատենտավորման, առևտրայնացման, շուկա դուրս բերելու և ընդհանրապես ստեղծված արդյունքների իրացմամբ, եթե դրան դեմ չեն գիտաշխատողները և պատրաստ են իրենք անել այդ ողջ գործընթացը: Կամ կարելի է դա կազմակերպել պայմանագրային հիմունքներով: Իհարկե, այստեղ կարող են ստացվել գիտական արդյունքներ, որոնք նյութական չեն և առևտրայնացման ենթակա չեն, սակայն այս հարթությունում ևս կարելի է մշակել մոտեցումներ և, օրինակ՝ հումանիտար և հասարակական գիտությունների համար ընտրել արդյունքների իրացման այլ մոտեցումներ կամ մեխանիզմներ (հղման բարձր գործակից ունեցող ամսագրերում տպագրության կազմակերպում, թվայնացում և www.amazon.com-ում վաճառքի կազմակերպում): Կարելի է նաև մտածել լուրջ գիտական աշխատանքների թարգմանության խնդրի մասին, այսինքն՝ Հայաստանում գիտության միջազգայնացման խնդրի լուծման համար կարելի է ստեղծել նաև մասնագիտական թարգմա-

նությունների կենտրոններ: Դեռ ավելին, հնարավոր է նաև ստեղծել միջազգային դրամաշնորհային հայտերի մշակման, դրանց դիմելու, տարբեր լեզուներով զեկույցներ պատրաստելու աջակցության կենտրոններ և օգտագործել լեզվաբանական կրթություն ունեցողների ներուժը, այսինքն՝ ստանալ լուրջ սիներգետիկ արդյունք գիտահետազոտական աշխատանքով զբաղվող և լեզվաբանական հմտություններ ունեցողների միավորման շնորհիվ:

Բայց, այնուամենայնիվ. նշենք, որ առաջնային դիրքում են մնում գիտագործնական և տեխնոլոգիական բնույթի ինովացիաները: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ վերջիններս նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն են ընձեռում: Այսինքն՝ գիտությանն աջակցող այս ողջ ինստիտուցիոնալ առանձին փոքր միավորների համակարգը պետք է փորձի լրացնել այն բացը, որը չի կարողանում գիտական հետազոտություններից հետո ապահովել նպատակային արդյունքներ: Կարելի է ասել, որ գիտության մեջ ևս գոյություն ունի լոգիստիկ շղթա այնպես ինչպես արտադրության մեջ, և գիտության այս լոգիստիկ շղթայի տարրերը փորձեցինք ներկայացնել վերևում:

Հարկ ենք համարում նշել, որ մարզերում՝ քաղաքային և գյուղական համայնքներում ձևավորվող ինովացիոն կենտրոնները, որոնք կլինեն մարզպետարանի, քաղաքապետարանի, գյուղապետարանի կազմում, պետք է իրենց մեջ ունենան նաև նորամուծությունների առևտրայնացում ապահովող գործառնություններ, այսինքն՝ ցանկացած նոր գաղափար և առաջարկություն, որը կարող է տվյալ համայնքի համար ապահովել լրացուցիչ եկամուտներ, պետք է այդ կենտրոնի միջոցով առևտրայնացում ապահովող մեխանիզմներով անցնի, իսկ վերջինիս անհնարինության դեպքում դա կազմակերպվի նաև այդ կենտրոնների ցանցի միջոցով: Այսինքն՝ տարածաշրջանային մակարդակում նորամուծությունների զարգացման համար պետք է լինի ինովացիաների առևտրայնացման միասնական ցանց մուտք գործելու հնարավորություն: Սա շատ նման է Եվրոպական «Հորիզոն 2020» մոդելին, սակայն այստեղ ոչ թե ինովացիոն միասնական ցանցին կամ համակարգին միանում է երկիրը, այլ երկրի ներսում է ձևավորվում նման մոդել, որի կիրառությունը գաղափարների զենեքացիա է ապահովում ամբողջ Հայաստանի մակարդակով: Իհարկե, պետք է նաև հստակ սահմանվի եկամուտների բաշխման աստիճանակարգման համակարգը, քանի որ իրականում ամենամեծ արդյունքը պետք է ստանա նորարարության հեղինակը: Դա նաև լուրջ խթանող ազդեցություն կարող է ունենալ հետագայում նորարարական նախագծերի քանակական և որակական ավելացման հարցում:

Իհարկե, որպես այդպիսին չի կարող ազգային ինովացիոն համակարգը սահմանափակվել այս ամենով, քանի որ պետք է նպատակաուղղված ձևով ստեղծվեն կոնստրուկտորական-տեխնոլոգիական կենտրոններ, փորձարարական արտադրություններ սկսվեն, գիտությունը տեղափոխվի արտադրություն՝ ստեղծելով գիտաարտադրական միավորումներ, ճյուղային լաբորատորիաների ցանցեր, համատեղ գիտաարտադրական կենտրոններ, ինժեներական ընկերությունների ցանց և այլն:

Հաջորդ կարևորագույն համակարգային տարրը, առանց որի հնարավոր չէ հասնել գիտական, տեխնիկական և ինովացիոն գործունեության, ինչպես

նաև ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման կամ բարելավման, գործուն ֆինանսավորման մեխանիզմների առկայությունը կամ մշակումն է:

Հարկ ենք համարում նշել, որ ֆինանսավորման մեխանիզմների կատարելագործումն ինքնանպատակ բնույթ չունի, քանի որ վերջինս ուղղված է լինում, սովորաբար, կատարվող հետազոտությունների և մշակումների արդյունավետության բարձրացմանը, պետական աջակցությանն այն արտադրողներին, որոնք ունեն արտահանման ուղղվածություն և որոնց արտադրանքի մեջ գիտատեխնիկական բնույթի արտադրանքն ունի մեծ տեսակարար կշիռ: Ֆինանսավորման ծավալների աճը կամ առանձին մեխանիզմների ներդրումը շատ դեպքերում նպաստում է ինովացիոն ենթակառուցվածքների զարգացմանը, ինչպես նաև ՕՈՒՆ-ների ներգրավմանը և այլն:

Բիարկե, ազգային ինովացիոն համակարգի ֆինանսավորման մեխանիզմները պետք է չլինեն տարանջատված, այլ ընդհակառակը պետք է գործի միասնական ֆինանսական ենթակառուցվածքի մոդելով: Հարկ է նշել, որ այս առումով Հայաստանում դեռևս շատ անելիքներ կան, քանի որ այդ միասնական սխեման անգամ իր առանձին տարրերով որպես այդպիսին չկա: Բիարկե, գուցե գիտահետազոտական աշխատանքներ իրականացնողների համար նշանակություն չունի թե դա ինչ կառույցից է ստացվում, ինչպես են միջոցները ձևավորվում և այլն: Եվ գիտահետազոտական աշխատանք կատարողը պետք է ինչ որ ձևով ֆինանսավորվի և հետո ստանա իր առևտրայնացվող արդյունքը: Սակայն ֆինանսական կառավարման տեսանկյունից այս հարցը շատ կարևոր է: Այստեղ, կարծում ենք, պետք է գործի մեկ պատուհանի սկզբունքը, ինչպես նաև պարզ մեխանիզմներ մշակվեն, որոնք հնարավորություն կտան կազմակերպել ողջ ինովացիոն գործընթացը: Հակառակ պարագայում, առաջանում է լուրջ մրցակցություն ֆինանսավորման այդ լծակներն ունենալու համար, դեռ ավելին փորձագիտական գնահատականներ և ֆինանսավորում սովոր մարմինների նույնացման պարագայում առաջանում է սուբյեկտիվ մոտեցման հիմքեր: Այսինքն՝ հարկավոր է ֆինանսավորման քվոտավորված համակարգ սահմանել և ըստ ոլորտների բազային և թեմատիկ ֆինանսավորում իրականացնել՝ բացառելով այս կամ այն ոլորտին նախապատվություն տալու հարցը (բացառությամբ՝ հատուկ կարևորության թեմաների): Այսինքն՝ փորձագիտական գնահատականներ սովորների և ֆինանսավորողներին բաժանել իրարից, իսկ քվոտաների միջոցով ֆինանսավորել գիտության համաչափ զարգացումը:

Գիտահետազոտական և նորամուծական գործունեության ֆինանսավորման ներքին աղբյուրների հարցը կամ պետական բյուջեից հատկացվող միջոցներն այս առումով կարելի է արդյունավետ կառավարել, սակայն խնդրի բարդությունը կայանում է դրսից հատկացվող կամ ստացվող դրամաշնորհների և առանձին վենչուրային հիմնադրամների միջոցների կոորդինացված կառավարման մեջ: Սա կազմակերպելու պարագայում լուծում կստանա ազգային ինովացիոն համակարգում առկա ամենակարևոր խնդիրներից մեկը, այն է՝ կհստակեցվի «գիտություն - տեխնոլոգիաներ-արտադրություն-շուկա» շղթան, ինչպես նաև ինովացիոն կապիտալի ձևավորման համակարգը:

Իհարկէ, նշված հարցերի կարգավորման մեխանիզմների համար, նախ և առաջ, անհրաժեշտ է Հայաստանում բարձրացնել ներքին ծախսերը, որոնք ուղղվում են հետազոտություններին, ինչպես նաև ՀՆԱ-ի մեջ դրանց տեսակարար կշիռը հասցնել գոնե 1%-ի, ինչպես նաև տարեկան դրանք ավելացնել 0.1%-ով, մինչև լուրջ գիտական արդյունքներ չարձանագրվեն:

Շատ կարևոր է նաև, որ հարկաբյուջետային, դրամավարկային և ներդրումային քաղաքականություններն այս դաշտում ուղղորդել այնպես, որ ստեղծվեն բարենպաստ պայմաններ հանրային-մասնավոր համագործակցության ընդլայնման և գիտական, տեխնիկական և ինովացիոն գործունեության ֆինանսավորման համար:

Գիտության և ինովացիաների ֆինանսավորումը չպետք է լինի միակողմանի, այնպես ինչպես հիմա ՀՀ-ում է և, դեռ ավելին, ազգային ինովացիոն համակարգի մինչև 2020թ.-ի մոդելի հիմքում հենց միակողմանի ֆինանսավորման սխեման է, դա կարող է հանգեցնել մյուս ոլորտներում գիտության լուրջ խնդիրների: Այդ իսկ պատճառով գիտության բազմավեկտոր ֆինանսավորման համակարգն ամենաարդյունավետը կարող է լինել: Որի գործունեության վեկտորները պետք է լինեն գիտական գործունեության, գիտատեխնիկական, տեխնոլոգիաների մշակման և ինովացիոն նախագծերում նոր ֆինանսական գործիքների (կենսաթոշակային, վարկային, ապահովագրական, վենչուրային կապիտալի) կիրառումը, մի խոսքով երկար փողերի ուղղորդումը դեպի գիտություն: Ֆինանսական համակարգում առկա ամենալուրջ դժվարություններից մեկը նա է, որ կարճաժամկետ և երկարաժամկետ նախագծերի ֆինանսավորման գործիքները, այն է՝ երկար և կարճ փողերը մտնում են հակասության մեջ, այսինքն՝ կարճ փողերի հաշվին գիտություն չի կարելի ֆինանսավորել, քանի որ վերջինս ունի ավելի երկար ետգնման ժամանակահատված, ինչպես նաև մի նախագծի հաշվին հաջողության չհասած նախորդ նախագծի ծախսերը փոխհատուցելու մեխանիզմ: Սա բավականին լուրջ խնդիր է նաև մի շարք բանկերի համար, քանի որ նման խնդիրների պատճառով կարող են սկսվել ֆինանսական և բանկային ճգնաժամեր:

Հարկավոր է նաև մշակել լուրջ համաֆինանսավորման սխեմաներ, որի շրջանակներում հետազոտությունների և գիտատեխնիկական փորձաքննությունների ժամանակ կներգրավվեն արտասահմանյան փորձագետներ՝ ապահովելով գիտական, տեխնիկական և ինովացիոն համակարգի առաջավոր փորձի տեղայնացում կամ փոխանակում, սակայն պետք է փորձել արտերկրից ներգրավել ոչ թե խորհրդատվության սխեմաների միջոցով, այլ անմիջապես գործին մասնակցելու և արդյունք ստեղծելու մեխանիզմով:

Այսպիսով՝ ազգային ինովացիան համակարգի կատարելագործման գործընթացը բավականին բարդ է, քանի որ եթե պայմանականորեն հիմք ընդունենք, որ ՀՀ-ն ունի այս կամ այն չափով ձևավորված ազգային ինովացիոն համակարգ, ապա վատահաբար կարող ենք ասել, որ մի շարք միջազգային համաթվերի, ինչպես նաև արդյունքային ցուցանիշերի տեսանկյունից այն ոչ մրցունակ է: Սա նշանակում է, որ կա՛մ հիմնովին պետք է վերանայվի և նոր տողից սկսվի ազգային ինովացիոն համակարգի ձևավորումը, կա՛մ արդի-

ականացվի ու կատարելագործվի գործողը: Այս հարցի շրջանակներում բավականին շատ առաջարկություններ ներկայացրեցինք ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման ուղղությամբ, սակայն ինչպես ցույց է տալիս ՀՀ անկախացումից հետո ընկած մոտ 1/4 դարյա պատմությունը, գիտական և ազգային ինովացիոն համակարգի զարգացման փոխարեն Հայաստանն ունի միայն հետընթաց և դեռ ավելին դանդաղ կորցնում է այն գիտական ներուժը, որը կուտակել էր ԽՍՀՄ-ի տարիներին:

МЕХАНИЗМЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ НАЦИОНАЛЬНОЙ ИННОВАЦИОННОЙ СИСТЕМЫ РА

Лусине Саргсян

*Соискатель и преподаватель кафедры Экономики
Европейской региональной академии образования*

Механизмы усовершенствования инновационной системы непосредственно связаны с идеей создания "эффективной инновационной системы".

Прежде всего необходимо усовершенствование правовой системы, которая регулирует сферу инноваций. Для урегулирования правовой системы в первую очередь необходимо освобождение от налогов в инновационной деятельности, так как под налоговой ношей реализация инновационных проектов не может быть эффективной.

Следующим наиболее важным системным элементом, без которого невозможно достичь научной, технической и инновационной деятельности, а также усовершенствования или улучшения национальной инновационной системы, является наличие или создание эффективных механизмов финансирования.

И, конечно, особенно важна система поощрения со стороны государства, которая должна действовать не только для отдельных компаний, но и для отдельных научно-исследовательских организаций и научных сотрудников.

Ключевые слова: национальная инновационная система, конкурентоспособная национальная инновационная система, мировая экономика, наука, научная, техническая и инновационная деятельность, венчурный фонд.

THE MECHANIZMS OF IMPROVEMENT OF THE NATIONAL INNOVATION SYSTEM OF THE RA

Lusine Sargsyan

*Ph.D. Student and Lecturer of the Economic Department
at European Educational Regional Academy*

The mechanisms of improving innovative system are directly linked to the idea of creating an "efficient innovation system".

First of all, it is necessary to improve the legal system that regulates the field of innovation. The first step of the legal system regulation should be exemption from taxes of the innovative activities, as the implementation of innovation projects under the tax burden becomes non effective.

The next fundamental element of the system is the availability or creation of effective financing mechanisms. Without this very element it is impossible to achieve scientific, technical and innovation activities, as well as improving the national system of innovation.

Indeed, an importance is also given to the state promotion system. It should be implemented not only for individual companies, but also for individual research organizations and scientists.

Keywords: national innovation system, competitive national innovation system, world economy, science, scientific, technical and innovation activities, venture funds.

**ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ
ԱՐԴՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ**

Արաքսյա Թաղամագյան

ՀՀ էկոնոմիկայի նախարարության փորձագետ

Աշխատանքում քննարկվել են Հայաստանի Հանրապետությունում գնահատման գործունեության կազմակերպման և կանոնակարգման հարցերը, ինչպես նաև բացահայտվել են գույքի գնահատման մեթոդիկայում տեղ գտած թերությունները: Գնահատման գործունեության գոյություն ունեցող խիստ կենտրոնացված կազմակերպման համակարգը և այն հանգամանքը, որ օրենսդրորեն սահմանված են միայն անշարժ գույքի գնահատման կանոնները, չեն նպաստում գնահատման գործունեության արդյունավետության բարձրացմանը և, որպես հետևանք, նաև այդ ոլորտի կառավարման որակի բարելավմանը: Հեղինակը առաջարկում է գնահատման գործունեության կազմակերպման և օրենսդրական կանոնակարգման այնպիսի համակարգ ստեղծել, որում նշանակալի տեղ կհատկացվի գնահատողների ինքնուրույնության մակարդակի բարձրացմանը, մասնավորապես՝ առաջարկում է օրենսդրորեն ամրագրել գնահատողների ինքնակարգավորման կարգավիճակը և ստեղծել գնահատողների միասնական պետական գրանցամատյան: Անհրաժեշտ է նաև անշարժ գույքի գնահատումից անցնել գույքի բոլոր տեսակների գնահատման միասնական իրավական դաշտի ստեղծմանը:

Բանալի բառեր. գույք, գնահատում, արժեք, գին, ստանդարտ, մեթոդ, կազմակերպում, ինքնակարգավորում:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող գրեթե բոլոր երկրներում գույքի գնահատման գործունեությունը, որպես իրավական կարգավորման օբյեկտ, մի կողմից իրենից ներկայացնում է գույքի շուկայական արժեքի մեծությունը որոշող անկախ փորձագետների (գնահատողների) կողմից մատուցվող ծառայություն, իսկ մյուս կողմից՝ օրենսդրության պահանջներին համապատասխան նախապես կնքված պայմանագրի հիման վրա գույքի շուկայական արժեքի որոշման և դրա վերաբերյալ սահմանված կարգով հաշվետվության կազմման գործընթաց: Գործընթացի արդյունքում ձևավորված հաշվետվություն-

նը, օրենսդրությամբ գույքի պարտադիր գնահատում պահանջող դեպքերում¹, հանդես է գալիս որպես իրավական փաստաթուղթ, որում արտացոլված արդյունքներն ու եզրահանգումները իրենցից ներկայացնում են գույքի արժեքի վերաբերյալ մասնագիտական կարծիք:

Ըստ էության գույքի գնահատումը, որպես գույքի արդյունավետ կառավարման կարևոր գործիքներից մեկը, վերջին հաշվով, ապահովում է նաև տնտեսական համակարգի ամփոփ արդյունքների քանակական պատկերի բնութագրումը, բնութագրում, որը պատկերացում է տալիս գույքի կառավարման արդյունավետության մակարդակի մասին: Այդ տեսանկյունից գույքի շուկայական արժեքի գնահատման որակի բարձրացումը համարվում է գույքի արդյունավետ կառավարման անհրաժեշտ պայման:

Մեր երկրում ձևավորված և կայացած ծառայությունների մատուցման քաղաքակիրթ շուկան, որի մեջ իր որոշիչ դերը կունենա գույքի գնահատման գործունեությունը, հուսով ենք, որ տեսանելի ապագայում կդառնա տնտեսության զարգացման հենասյուններից մեկը:

Մակայն այսօր դեռ այնքան էլ տեսանելի չէ այն ցանկալի իրավիճակը, երբ գույքի գնահատումը, որպես գույքի բոլոր տարատեսակների գնահատման համալիր գործընթաց, աստիճանաբար կայանում է, և իր ընդգրկուն գործառույթները ծավալելով, դառնում է ծառայությունների մատուցման քաղաքակիրթ և հստակ կանոնակարգված ոլորտ:

ՀՀ-ում գույքի գնահատման ոլորտը զարգացնելու համար նախ անհրաժեշտ է կատարել գնահատման մեթոդական դաշտի բարեփոխում, ապա գնահատման գործունեության կազմակերպման կատարելագործման ուղղությամբ այնպիսի ակտիվ քայլեր իրականացնել, որոնց արդյունքում կընդլայնվեն նաև գնահատման գործունեության ինքնակարգավորման միտումները:

Հասկանալի է, որ խնդիրը վերաբերում է և՛ գույքի գնահատման գործընթացի մեթոդական կարգավորման ոլորտի առկա թերությունների վերացմանը, և՛ այդ ոլորտի ինքնակարգավորումն ապահովող իրավական դաշտի ստեղծմանը, պետության կողմից այդ ոլորտի զարգացման օժանդակման և փոխհամագործակցության շրջանակների ընդլայնմանը:

Նշվածից բխում է, որ գույքի գնահատման ոլորտի հեռանկարային զարգացման վերջնական նպատակը պետք է հանդիսանա սահմանափակ պետական միջամտությամբ ինքնակարգավորվող ոլորտի ստեղծումը:

Այսպիսով, գույքի գնահատման ոլորտի համակարգված զարգացման և վերջնական նպատակին (ինքնակարգավորման վիճակին) հասնելու համար անհրաժեշտ է անհապաղ հետևողական և հաջորդական միջոցառումներ իրականացնել գնահատման գործունեության ոլորտի օրենսդրական դաշտում առկա թերությունների վերացման ուղղությամբ:

Հայտնի է, որ ներկայումս ՀՀ-ում գնահատման ոլորտում գործող իրավական ակտերը կանոնակարգում են միայն անշարժ գույքի գնահատման

¹ <<Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին>> ՀՀ օրենք, հոդված 8, www.arlis.am պաշտոնական կայք:

գործընթացը: Այսպես, անշարժ գույքի գնահատման ոլորտը կանոնակարգվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով և Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գնահատման ստանդարտով: Հաշվի առնելով, որ անշարժ գույքը կազմում է գույքի միայն մի մասը, ապա, պարզ երևում է, որ շարժական գույքը, ինչպես նաև ոչ նյութական ակտիվները, արժեթղթերը և, ընդհանրապես, բիզնեսի գնահատումը իրավական տեսանկյունից ՀՀ-ում հստակ կանոնակարգված չեն: Այդ խնդիրների իրավական լուծումը օրենսդիրը, հավանաբար, գտել է ՀՀ-ում գործող ստանդարտի 1-ին կետի 3-րդ պարբերությունում նշված հետևյալ ձևակերպման մեջ. «սույն ստանդարտում չներառված, չարտացոլված դրույթների կիրառման դեպքում հիմք են հանդիսանում միջազգային ստանդարտների պահանջները»:

ՀՀ-ում գույքի գնահատման գործող օրենսդրական դաշտի ամբողջական ներկայացման նպատակով, նշենք նաև, որ դեռևս 1998թ.-ին ընդունված «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքի համաձայն մասնավորեցվող պետական գույքի գինը հաշվարկվում է հետևյալ մեթոդների օգնությամբ².

1. Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգ (ընդունված 27.03.1998թ., ՀՀ կառավարության թիվ 209 որոշում):

2. Կանխիկ հոսքերի ընթացիկ արժեքի որոշման մեթոդով մասնավորեցվող պետական գույքի գնահատման կարգ (ընդունված 18.05.2000թ., ՀՀ կառավարության թիվ 246 որոշում):

3. Համանման ձեռնարկությունների կամ գույքի շուկայական գնի որոշման մեթոդ (ընդունված 31. 03. 2000թ., ՀՀ կառավարության թիվ 134 որոշում):

4. Եկամուտների (շահույթի) բազմապատկիչի մեթոդով մասնավորեցվող պետական գույքի գնահատման կարգ (ընդունված 14.06.2000թ., ՀՀ կառավարության թիվ 309 որոշում):

1995թ.-ից մինչ այսօր մասնավորեցման ենթակա պետական գույքը, բացառությամբ «փոքր» օբյեկտների, գնահատվել են միայն հաշվեկշռային մեթոդով: Գնահատման մյուս երեք մեթոդները, ինչպես նաև միջազգային պրակտիկայում ընդունված այլ մեթոդներ, պետական գույքի գնահատման ժամանակ ոչ մի անգամ չեն օգտագործվել: Փաստորեն վերոնշյալ ժամանակահատվածում պետական գույքը մասնավորեցվել և օտարվել է միայն հաշվեկշռային մեթոդով գնահատված արժեքով: Քանի որ պետական գույքի գնահատումը անցած տարիների ընթացքում կատարվել է միայն հաշվեկշռային մեթոդի օգնությամբ, փորձենք շատ համառոտ ներկայացնել այդ մեթոդով պետական գույքի արժեքի հաշվարկման կարգը: Այս մեթոդով պետական գույքի գնահատման համար (մեթոդի կիրառման սկզբում) հիմք է ծառայել գույքի հաշվեկշռային արժեքը (հենց վերջինով էլ պայմանավորված է մեթոդի անվանումը) և գույքի կառուցվածքային մաս կազմող անշարժ գույքի, մեքենա-սար-

² Տես «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենք, հոդված 25, կետ 1. www.arlis.am պաշտոնական կայք:

քավորումների, տրանսպորտային միջոցների և այլ մաշվածություն ունեցող գույքի մաշվածքը:

Հետագայում, գնահատման հաշվեկշռային մեթոդում տեղ գտած ակնառու թերությունների վերացման և այդ ժամանակահատվածում անշարժ գույքի գնահատման ոլորտում ընդունված օրենսդրական ակտերին համապատասխանեցնելու նպատակով, մեթոդի հաշվարկման կարգում տեղի ունեցան բազմաթիվ փոփոխություններ: Ըստ էության այսօր վերոնշյալ գնահատման մեթոդից մնացել է միայն անվանումը: Իրականում գնահատման մեթոդի անվանումը և գույքի հաշվարկման կարգը ոչ մի կապ չունեն միմյանց հետ, քանի որ գույքի գնահատման կարգը չի համապատասխանում գույքի գնահատման մեթոդի անվանմանը: Հաջորդական փոփոխությունների արդյունքում այս մեթոդում կիրառվեցին «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենքի և «ՀՀ անշարժ գույքի գնահատման ստանդարտ»-ի դրույթները: Սկզբում մասնավորեցման և օտարման ենթակա անշարժ գույքը, այնուհետև նաև շարժական գույքը սկսեցին գնահատվել «Անշարժ գույքի գնահատման մասին» ՀՀ օրենքի և գնահատման ստանդարտների դրույթներին համապատասխան: Այսօր ընկերությունների բաժնետոմսերը գնահատելու ժամանակ ըստ հաշվեկշռի գնահատվում են միայն ընթացիկ ակտիվները և պարտավորությունները:

Հաշվեկշռային մեթոդի կիրառման առավելությունը, թերևս, կայանում է նրանում, որ այս կարգում առկա է գույքի գնահատման արդյունքների վավերության ժամկետների սահմանման նորմ: Ընդ որում, եթե նախկինում գույքի գնահատված արդյունքների վավերության ժամկետը սահմանվում էր գնահատման պահից հետո մեկ տարի, ապա ներկայումս, կապված անշարժ գույքի շուկայում տեղի ունեցող արագ փոփոխությունների հետ, գնահատման արդյունքների վավերության ժամկետ սահմանվում է մինչև 6 ամիս³:

Ընդհանրացնելով վերը նշվածը՝ կարելի է հանգել մեկ հստակ եզրահանգման, որ ՀՀ գործող գույքի գնահատման օրենսդրական դաշտը ենթակա է արմատական փոփոխության: Այդ մասին է վկայում նաև Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Բելառուսի, Ղազախստանի այդ ոլորտի օրենսդրական փորձի ուսումնասիրությունը: Այդ առումով ուսանելի է գույքի գնահատման ոլորտի կառավարման և օրենսդրական կանոնակարգման հատկապես ռուսական փորձը, որտեղ գործում է գույքի բոլոր տարատեսակների գնահատումը կանոնակարգող օրենք, իսկ գույքի գնահատման գործունեության կազմակերպման գործառույթները իր վրա է վերցրել մեկ պետական կառավարման մարմին: Պարզ է, որ մեկ համակարգող պետական կառավարման մարմնի դեպքում գույքի գնահատման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված քայլերը մի քանի անգամ ավելի արագ և արդյունավետ կլինեն, քան, երբ այդ ոլորտի կառավարման և օրենսդրական կանոնակարգման հարցերով զբաղվում են մի քանի պետական կառավարման մարմիններ ինչպես դա

³ Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգը, կետ 14, 3-րդ պարբերություն, հաստատված է ՀՀ կառավարության 1998 թվականի N 209 որոշմամբ, տես www.arlis.am պաշտոնական կայքը:

արվում է ՀՀ-ում: Այսպես, «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմինը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Համաձայն ՀՀ կառավարության **2005թ.-ի դեկտեմբերի 29-ի** թիվ 2277-Ն որոշման՝ ՀՀ-ում անշարժ գույքի գնահատման գործունեության ոլորտը կարգավորող և հսկողություն իրականացնող լիազոր մարմինը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն է: ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը իրականացնում է մասնավորեցման ենթակա պետական գույքի գնահատման մեթոդական դաշտի մշակման և կիրառման գործառույթներ, քանի որ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն սույն օրենքի պահանջները չեն տարածվում մասնավորեցման ենթակա պետական գույքի գնահատման գործընթացի վրա⁴: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կանոնակարգում է անշարժ գույքի գնահատման մեթոդական դաշտի մշակման աշխատանքները:

Բերված փաստերը վկայում են, որ ժամանակն է ՀՀ-ում նույնպես գնահատման գործունեության կազմակերպման աշխատանքները կենտրոնացնել մեկ պետական կառավարման մարմնում: Տվյալ մարմնի դերում կարող է հանդես գալ կամ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, կամ էլ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը:

Միաժամանակ, գնահատման գործունեությունը հանդիսանում է շուկայական տնտեսության կարևոր ենթակառուցվածք: Գնահատումը խորհրդատվական ծառայությունների տեսակ է, որը ենթադրում է գնահատողի անկախություն և որոշակի գիտելիքներով պատրաստվածություն: Այս պատճառով գնահատման ոլորտի կարգավորման հիմնական սկզբունքներից է այդ գործընթացում պրոֆեսիոնալ գնահատողների անմիջական մասնակցությունը, այսինքն՝ տվյալ ոլորտի ինքնակարգավորումը: Մյուս կողմից, քանի որ գնահատման ոլորտը ունի մեծ տնտեսական և հասարակական կարևորություն, պետությունը ներկայումս չի կարող լիովին ազատ թողնել դրա կարգավորումը և պետք է որոշ կարգավորման գործառույթներ պահի իր վերահսկողության ներքո:

Զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրների գնահատման իրավական դաշտի ուսումնասիրության արդյունքում մենք գտանք այդ երկրներում գնահատման գործունեության կանոնակարգման ընդհանրություններ, որոնք տարբերվում են ՀՀ-ում և հետխորհրդային մի շարք երկրներում գործող իրավական դաշտից:

Այսպես, արևմտյան Եվրոպայի շատ երկրներում գնահատման գործունեության պետական կարգավորումը կամ բացակայում է, կամ կրում է շատ սահմանափակ բնույթ: Այդ երկրների մեծ մասում գործում է շատ զարգացած և

⁴ «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 2, www.arlis.am պաշտոնական կայք:

պետության կողմից ակտիվորեն հովանավորվող գնահատման գործունեության հասարակական կարգավորման համակարգ, որում հիմնականում մասնակցում են մասնագիտացած հասարակական կազմակերպություններ: Ոչ թե պետությունը, այլ հասարակական կազմակերպություններն են մշակում գնահատման ստանդարտներ, և նրանք էլ խստորեն վերահսկում են դրանց կատարումը: Մեծամասամբ հենց հասարակական կազմակերպություններն են իրականացնում գնահատման լիցենզավորումը: Գնահատման դաշտի բոլոր հասարակական կազմակերպություններն ունեն վարքագծի (էթիկայի) մշակված կանոններ, և նրանք էլ պատասխանատու են դրանց վերահսկման և իրականացման համար:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի գրեթե բոլոր զարգացած երկրներում ընդունված է գնահատման գործունեության պետական-հասարակական կարգավորումը: Այդ երկրներում գնահատման ինքնակարգավորվող կազմակերպությունները ակտիվ կերպով ներգրավված են կարգավորման գործընթացներին, մասնավորապես՝ ստանդարտների և էթիկայի կանոնների մշակմանը:

ԱՊՀ երկրներից մեծ մասում ընդունված գնահատման օրենսդրական նորմերը հիմնական դերը հատկացնում են պետական կարգավորմանը: Նման դեպքերում պետական կարգավորման ապարատը երբեմն կայացնում է որոշումներ, որոնք ունենում են ոչ նեղ մասնագիտական ուղղվածություն և հաճախ արհեստական խոչընդոտներ են ստեղծում գնահատման գործունեության զարգացման ճանապարհին:

Ընդունված է համարել, որ գնահատման գործունեության կարգավորման գործընթացներին ակտիվ պետական մասնակցություն ունեցող երկրներից է ԱՄՆ-ն: Երբ ընդհանուր առմամբ ծանոթանում ենք ԱՄՆ գնահատման ոլորտի կարգավորման սկզբունքներին, ապա ակնհայտ է դառնում, որ պետական կարգավորման նույն անվան ներքո տարվող գործընթացները ԱՄՆ-ում և ԱՊՀ երկրներում շատ տարբեր են:

ԱՄՆ գնահատման ոլորտի կարգավորող օրգանը «Գնահատման ֆոնդ»-ն է (Appraisal Foundation), որում ներկայացված են 1987թ.-ից ԱՄՆ Կոնգրեսի կողմից հավաստարմագրված գնահատման *ինքնակարգավորվող* առաջատար բոլոր այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են գնահատման ոլորտի հանրային կարգավորում: Գույքի գնահատման, լիցենզավորման և որակավորման հարցերով զբաղվում է «Գնահատման որակավորված խորհուրդ»-ը (Appraiser Qualification Board): Հասարակական կառուցվածքի այս ստորադաս մարմնի ներկայացուցիչները նշանակվում են «Գնահատման ֆոնդ»-ի կողմից:

ԱՄՆ գնահատման ոլորտում պետական անմիջական միջամտությունը իրականացվում է «Գնահատման ենթակոմիտե»-ի (Appraisal Subcommittee) միջոցով, որը նշանակվում է Կոնգրեսի կողմից՝ հանդես գալով որպես գույքի գնահատման շուկայի դիտորդ: Վերջինիս գործառույթներն են՝ Կոնգրեսի կողմից նախանշած գնահատման ծրագրերի համապատասխանության հարցերի վերահսկողությունը, գույքի գնահատման ոլորտում «Գնահատման ֆոնդ»-ի

գործունեության վերլուծությունը, ազգային գնահատման ռեեստրի հովանավորությունը:

Այսպիսով, մենք եկանք այն եզրակացության, որ ՀՀ ներկայիս գնահատման դաշտի կարգավորումը հիմնված է ստատիկ մոդելի վրա, որն այսօրվա դինամիկ փոփոխվող տնտեսական հարաբերությունների պայմաններում իրեն չի արդարացնում: Մեր կողմից առաջարկվող գնահատման գործընթացի կարգավորման հիմնական ուղղությունները հետևյալն են.

- Անշարժ գույքի գնահատման մասին օրենքում իրականացնել այնպիսի փոփոխություններ և լրացումներ, որոնք կկանոնակարգեն անշարժ գույքից բացի նաև գույքի այլ տարրերի շուկայական գնահատումը:

- Գնահատման գործունեության կարգավորումը իրականացնել պետական լիազոր մարմնի և ինքնակառավարվող հասարակական կազմակերպությունների հավասար անդամներից կազմված գնահատման հարցեր կարգավորող համապատասխան խորհրդի միջոցով:

- Գնահատման գործունեության պետական կառավարման գործառույթները վերապահել մեկ համակարգող պետական կառավարման մարմնի, որը, հաշվի առնելով գնահատման ոլորտում առկա կուտակված փորձը, մեր կարծիքով, առավել արդյունավետ կարող է իրականացնել գնահատման գործունեության կազմակերպումը: Նման մարմնի դերում կարող է հանդես գալ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կամ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը:

ОЦЕНКА ИМУЩЕСТВА КАК ФАКТОР ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ИМУЩЕСТВЕННОГО ОБОРОТА

Аракся Тарламазян

Эксперт Министерства Экономики РА

В статье рассматриваются вопросы регулирования и организации оценочной деятельности в Республике Армения, а также выявлены недостатки в области методики оценки имущества. Существующая строго централизованная система организации оценочной деятельности и то обстоятельство, что законодательно установлены только правила определения рыночной стоимости недвижимого имущества, не способствуют повышению эффективности оценочной деятельности, и как результат – улучшению качества управления.

Автор предлагает создать такую систему организации и законодательного регулирования оценочной деятельности, в которой значительная роль будет отведена саморегулирующемуся союзу оценщиков. В частности, предлагается законодательно закрепить статус такой организации (союза) и создать единый государственный реестр оценщиков, необходимо также разработать единые подходы для оценки всех видов имущества.

Ключевые слова: Имущество, оценка, стоимость, цена, стандарт, метод, организация, саморегулирование.

THE VALUATION OF PROPERTY AS A MEANS OF INCREASING THE EFFECTIVENESS OF THE PROPERTY TURNOVER

Araksya Tarlamazyan

Expert at Ministry of Economy of RA

The article analyzes the results achieved in the Republic of Armenia in the sphere of property valuation organization and regulation, along with discussing the lapses in the methodology of the property valuation. There exists a strictly centralized system of organising valuation activities and the fact that only legally established rules for determining the market value of real estate, do not promote to the effectiveness of valuation activities, and as a result - improving the quality of governance. The author suggests creating a system of organization and legal regulation of valuation activities, which would play a significant role of self-regulating Appraisers Union. In particular, it is proposed to legalize the status of an organization (union) and create a unified state register of appraisers to develop uniform standards, rules for assessing all types of property.

Keywords: property, valuation, value, price, standard, method, organization, self-regulation.

Մենիկ Ջուլիակյան

*Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարանի հայցորդ*

Հողվածում ներկայացված են էլեկտրաէներգիայի սպառման համաշխարհային վերջին միտումները: Աշխարհի խոշոր տարածաշրջանների և տնտեսական միավորումների կտրվածքով ներկայացվել է ըստ ստացման աղբյուրների (նավթ, բնական գազ, ածուխ, միջուկային էներգիա, հիդրոէլեկտրաէներգիա, վերականգնվող էներգիա) վառելիքի սպառումը 2012-2013թ.թ., 2003-2013 թվականներին էլեկտրաէներգիայի սպառումը և կառուցվածքը՝ ըստ դրա ստացման աղբյուրների, հիդրոէլեկտրաէներգիայի սպառումը ըստ երկրների 1965-2013 թվականներին՝ նավթի համարժեքով և տերրավատ ժամերով հաշվարկված:

Ելնելով վերլուծությունից կատարվել են համապատասխան եզրահանգումներ:

Բանալի բառեր. էլեկտրաէներգիա, էլեկտրաէներգիայի սպառում, տարածաշրջան, տնտեսական միավորում, նավթ, բնական գազ, ածուխ, միջուկային էներգիա, հիդրոէլեկտրաէներգիա, վերականգնվող էներգիա:

Ինչպես հայտնի է, թողարկված էլեկտրաէներգիան պետք է սպառվի, առավել ևս որ, ի տարբերություն արտադանքի շատ տեսակների, այն հնարավոր չէ կուտակել կամ էլ պահեստավորել:

Աշխարհում 1965-2013 թվականներին էլեկտրաէներգիայի համընդհանուր սպառման (միլիոն տոննա նավթի համարժեքով) տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն ավելացել է 11.7 անգամ, ըստ որում ՏՀԶԿ երկրներում 2.1 անգամ, ոչ ՏՀԶԿ երկրներում 6.4 անգամ, Եվրամիության երկրներում՝ 1.7 անգամ, նախկին ԽՍՀՄ երկրներում՝ 1.67 անգամ: Ըստ որում 2013 թ.-ի տվյալներով էներգիայի համաշխարհային սպառման ծավալում Չինաստանի բաժինը կազմել է 22.4%, ԱՄՆ-ի բաժինը՝ 17.8%, ՌԴ-ինը՝ 5.5%, Հնդկաստանինը՝ 4.7%, Ճապոնիայինը՝ 3.7%, Գերմանիայինը՝ 2.6%, Կանադայինը՝ 2.2%, Բրազիլիայինը՝ 2.2%: Նշված պետությունների բաժինը կազմել է էներգիայի համաշխարհային սպառման 61.6%-ը: 2013 թվականին էներգիայի համաշխարհային սպառման ծավալի 43.5%-ը բաժին է ընկել ՏՀԶԿ երկրներին, 56.5%-ը ոչ

ՏՀԶԿ երկրներին, 13.2%-ը Եվրամիության երկրներին և 8.1%-ը նախկին ԽՍՀՄ երկրներին¹:

Աղյուսակ 1-ում բերված է վառելիքի սպառման մասին տվյալները ըստ դրա ստացման աղբյուրների աշխարհի խոշոր տարածաշրջաններում և տնտեսական միություններում 2012-2013 թվականներին: Համաձայն բերված տվյալների աշխարհում վառելիքի սպառման խոշոր տարածաշրջանը Ասիայի-Խաղաղ օվկիանոսի երկրներն են, որին բաժին է ընկել սպառված վառելիքի 40.5%,-ը (2013թ.-ին և 40.0%,-ը՝ 2012 թ.-ին), որին հաջորդում է Եվրոպան և Եվրասիա տարածաշրջանը համապատասխանաբար՝ 23.0%, և 23.6% ցուցանիշներով և Հյուսիսային Ամերիկյան համապատասխանաբար՝ 21.9%, և 21.8%:

Եթե 2012թ.-ին աշխարհում սպառված էլեկտրաէներգիայի ծավալում հիդրոէլեկտրաէներգիայի բաժինը կազմել է 6.68%, ապա 2013 թ.-ին՝ 6.72%: Սպառված էներգիայի մեջ 2013թ. հիդրոէլեկտրաէներգիայի բաժինը ամենամեծը եղել է Ասիայի-Խաղաղ օվկիանոսի երկրներում՝ 36.1%, այնուհետև Եվրոպայում և Եվրասիայում՝ 23.5%, Հարավային և Կենտրոնական Ամերիկայում՝ 18.5%:

Այդ բաժինը ցածր է Մերձավոր Արևելքում (0.3%) և Աֆրիկայում (3.0%): Արտադրված հիդրոէլեկտրաէներգիայի 37.3%,-ը սպառվում է ՏՀԶԿ երկրներում, 62.7%,-ը՝ ոչ ՏՀԶԿ երկրներում, Եվրամիության երկրներում սպառվող էլեկտրաէներգիան 9.6%,-ը բաժին է ընկնում հիդրոէլեկտրաէներգիային: Նախկին ԽՍՀՄ երկրներում այդ ցուցանիշը կազմում է 6.9%:

2003-2013թթ.-ին հիդրոէլեկտրաէներգիայի սպառումը աշխարհում ավելացել է 143.3%-ով, ըստ որում՝ ՏՀԶԿ երկրներում էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքում հիդրոէլեկտրաէներգիայի բաժինը 48.1%-ից նվազել է մինչև 37.3%, ոչ ՏՀԶԿ երկրներում ընդհակառակը այդ բաժինը 51.9%,-ից հասել է 62.7%-ի Եվրամիության երկրներում համապատասխանաբար՝ 11.8% և 8.6%, նախկին ԽՍՀՄ երկրներում՝ 8.6% և 6.9% (աղյուսակ 2):

Աղյուսակներ 3 և 4-ում բերված է աշխարհում ըստ առանձին երկրների հիդրոէլեկտրաէներգիայի սպառումը 1965-2013 թվականներին մլն տոննայով՝ նավթին համարժեք տերրավատժամերով:

Աղյուսակ 3-ի տվյալներից հետևում է, որ հիդրոէլեկտրաէներգիայի սպառման ծավալի մեջ 2013 թ.-ին ամենամեծ բաժին են ունեցել Չինաստանը (24.1%), Կանադան (10.4%) Բրազիլիան (10.2%), ԱՄՆ-ը (7.2%), Ռուսաստանի Դաշնությունը (4.8%), Հնդկաստանը (3.5%), Նորվեգիան (3.4%), Ճապոնիան (2.2%), որոնց միագումար սպառման չափը կազմել է ընդհանուր սպառման շուրջ 2/3-ը: Հատկանշական է նշել, որ Չինաստանում 1965-2013 թթ.-ին հիդրոէլեկտրաէներգիայի սպառումը ավելացել է 41.3 անգամ, Արգենտինայում՝ 30.7 անգամ, Վենեսուելայում՝ 63.3 անգամ:

¹ Տես՝ BP Statistical Review of World Energy, June 2014, 63th edition, էջ 40-ը, ինչպես նաև BP-ի տվյալների բազայում առկա տվյալները: 2014 թվականի դեկտեմբերի 13-ի դրությամբ հասանելի է <http://www.bp.com/en/global/corporate/about-bp/energy-economics/statistical-review-of-world-energy.html> ինտերնետային հասցեում:

Բնակչության մեկ շնչի հաշվով ամենաշատ և ամենաքիչ էլեկտրաէներգիա սպառող 10 երկրների և դրանցում էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստների (%-ով ամբողջ արտադրանքի ծավալի մեջ) տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ լավագույն տասնյակը գլխավորում է Իսլանդիան (52.374 կվտ/ժամ), որին հետևում են Նորվեգիան (23.174 կվտ/ժամ) և Կաբո-Վերդեն (16.473 կվտ/ժամ): Առաջին տասնյակը եզրափակում են ԱՄՆ-ը (13.246 կվտ/ժամ) և Ավստրալիան (10.712 կվտ/ժամ): Այդ խումբ երկրներում էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները ամենացածրը՝ Կատարում է (2%), իսկ ամենաբարձրը՝ Քուվեյթում (12%), ԱՄՆ-ում՝ (6%): Մեկ շնչի հաշվով, ամենաքիչ էլեկտրաէներգիա սպառող 10 երկրների «առաջատարը» Հայիթին է (32 կվտ/ժամ), որտեղ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները կազմել են 55% (այս խմբում կորուստների լավագույն ցուցանիշ ունեն Էթովպիան (10%) և Նիգերիան (10%))²:

Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման ամենաշատ կորուստներ ունեցող երկրների տասնյակը «գլխավորում» է Բոթսվանան (56%), իսկ ամենաքիչ կորուստներ ունեցող երկրներից Կատարը՝ (2%) և Սլովենիայի Հանրապետությունը (2%)³:

ՏՀԶԿ երկրներում էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով միջինը կազմում է 7395 կվտ/ժամ, ըստ որում այդ ցուցանիշը ամենաբարձրն է Նորվեգիայում (23.174 կվտ/ժամ): Ֆինլանդիայում (15738 կվտ/ժամ), Շվեդիայում (14630 կվտ/ժամ): Այս խումբ երկրներում էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները ամենաքիչն են Սլովակիայի Հանրապետությունում (2%), իսկ ամենաշատը՝ Մեքսիկայում (15%), միջին ցուցանիշը կազմում է (7%)⁴:

Եվրամիության երկրներում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառումը կազմել է 6273 կվտ/ժամ: Այս ցուցանիշը ամենաբարձրն է Ֆինլանդիայում (15738 կվտ/ժամ), իսկ ամենացածրը՝ Ռումինիայում (2639 կվտ/ժամ): Էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները ամենացածրն են Սլովակիայի Հանրապետությունում (2%), ամենաբարձրը՝ Խորվաթիայում (17%), (խմբի միջինը 8% է)⁵:

Էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը մեկ շնչի հաշվով նախկին ԽՍՀՄ երկրներում ավելի քան 2 անգամ ցածր է, քան Եվրամիության երկրներում: Ընդ որում նախկին Խորհրդային Միության երկրների շարքում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառումը ՌԴ-ում ավելի քան 2 անգամ գերազանցում է այս խմբի միջին ցուցանիշը (3070 կվտ/ժամ): Հայաստանում այդ ցուցանիշը կազմել է 1755 կվտ/ժամ, ինչը կազմում է այս խմբի միջին ցուցանիշի 57.2%-ը: Այս ցուցանիշը ամենացածրն է Ուզբեկստանում (1.626 կվտ/ժամ): Այս խմբի երկրներում էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները

² Հաշվարկվել է BP Statistical Review of World Energy, June 2014, 63th edition, ինչպես նաև BP-ի տվյալների բազայում առկա տվյալներով:

³ Հաշվարկվել է վերը նշված աղբյուրներում առկա տվյալներով:

⁴ Հաշվարկվել է վերը նշված աղբյուրներում առկա տվյալներով:

⁵ Հաշվարկվել է վերը նշված աղբյուրներում առկա տվյալներով:

ամենաբարձրն են Ղրղզստանում (22%), այնուհետև Լիտվայում (21%) և Մոլդավայում (21%), Ադրբեջանում (20%):

Հայաստանում այս ցուցանիշը կազմել է 12%, ինչը մեկ տոկոսային կետով ցածր է այս խմբի երկրների միջին ցուցանիշից (1.3%)⁶:

Տարածաշրջանում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշով Հայաստանը չի զիջում միայն Ադրբեջանին, մինչդեռ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստների մեծությամբ լավագույն ցուցանիշ ունի Վրաստանը (11%), որի հաջորդում է Հայաստանը (12%): Այս խմբի մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման միջին ցուցանիշը կազմել է 2147 կվտ/ժամ, իսկ էլեկտրաէներգիայի հաղորդման և բաշխման կորուստները՝ 14%:

Բնակչության մեկ շնչի հաշվով աշխարհի երկրների էլեկտրաէներգիայի սպառման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի կորուստների մեծությունները արտադրանքի հաղորդման և բաշխման ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ցածր եկամուտներով երկրներում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառումը 2011թ.-ին կազմել է աշխարհի միջին ցուցանիշի (3045 կվտ/ժամ) 7.2%-ը (2005թ.-ին՝ 14.6%): Այսինքն, 2005-2011 թթ. Ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման ցուցանիշների միջև եղած խզումը ցածր եկամուտներով և աշխարհի երկրների միջև 2 անգամ վատացել է:

Վատացել է նաև միջին եկամուտներով երկրներում մեկ շնչի հաշվով էլեկտրաէներգիայի սպառման մակարդակը նույնպես չի բարելավվել և նվազել է 5.8%-ով: Ի դեպ, էլեկտրաէներգիայի սպառումը մեկ շնչի հաշվով նվազել է նաև բարձր եկամուտներով երկրներում (նշված ժամանակահատվածում 8.8%): Էլեկտրաէներգիա հաղորդման և բաշխման կորուստները շարունակվում են բարձր մնալ ցածր եկամուտներով երկրներում (15%), ինչպես նաև միջին եկամուտներով երկրներում (10%), այն դեպքում, երբ բարձր եկամուտներով երկրներում այդ ցուցանիշը կազմում է (6%):

Այսպիսով, ամփոփելով վերը շարադրված նյութը, կարելի է եզրակացնել, որ

- աշխարհում 2013 թվականին ըստ ստացման աղբյուրների վառելիքի սպառման կառուցվածքում ամենամեծ բաժինն ունեն նավթը՝ 32.9%, ածուխը՝ 30.1% և բնական գազը՝ 23.7%: Մինչդեռ հիդրոէլեկտրաէներգիան (6.7%), միջուկային էներգիան (4.4%) և վերականգնվող էներգիան (2.2%) ունեն համեմատաբար համեստ կշիռներ: Հատկապես նշված վերջին երեք աղբյուրների տեսակարար կշիռների ավելացումը վառելիքի սպառման կառուցվածքում (ընդամենը ամբողջի 13.3%-ը) առաջիկա տարիներին մնալու է համընդհանուր զարգացման կարևոր խնդիրներից մեկը,

- աշխարհում էլեկտրաէներգիայի սպառման կառուցվածքում 2003-2013 թվականներին, եթե հիդրոէլեկտրաէներգիայի սպառման ծավալներն ավելացել են 143.3%-ով, ապա միջուկային էներգիայինը՝ 94.1%-ով, վերականգնվող էներգիայինը՝ 417.5%-ով, ածխի էներգիայինը՝ 146.5%-ով, բնական գազինը՝

⁶ Հաշվարկվել է վերը նշված աղբյուրներում առկա տվյալներով:

128.8%-ով, նավթինը՝ 112.3%-ով, իսկ առաջնային էներգիայինը՝ 128.0%-ով: Թեև վերականգնվող և հիդրոէներգիայի սպառման չափերն ավելացել են ավելի արագ տեմպերով, քան վառելիքի մյուս տեսակներից ստացվող էլեկտրաէներգիայի ծավալները, այնուհանդերձ ավելի շատ ռեսուրսներ և միջոցներ է անհրաժեշտ ներդնել էկոլոգիապես ավելի մաքուր էներգիայի այդ տեսակների ստացման գործում,

- հիդրոէլեկտրաէներգիայի սպառման տեսակարար կշիռն առավելապես մեծ է ոչ ՏՀԶԿ երկրներում (ընդամենը աշխարհի հիդրոէլեկտրաէներգիայի սպառման 62.7%-ը), որը 168.1%-ով ավելի է ՏՀԶԿ երկրների հիդրոէլեկտրաէներգիայի սպառման տեսակարար կշռից:

Վատելիքի սպառումը ըստ դրա ստացման աղբյուրների աշխարհի խոշոր տարածաշրջաններում և տնտեսական միություններում 2012-2013 թվականներին

Տարածաշրջանը կամ տնտեսական միությունը	2012թ.							2013թ.						
	Նավթ	Բնական գազ	Ածուխ	Միջուկային էներգիա	Հիդրոէլեկտրատրանսմիսի էներգիա	Վերականգնվող էներգիա	Ընդամենը	Նավթ	Բնական գազ	Ածուխ	Միջուկային էներգիա	Հիդրոէլեկտրատրանսմիսի էներգիա	Վերականգնվող էներգիա	Ընդամենը
Հյուսիսային Ամերիկա	1013.6	819.2	470.5	206.9	156.2	57.0	2723.4	1024.2	838.6	488.4	213.7	156.3	65.4	2786.7
	24.5	27.4	12.6	37.0	18.7	23.7	21.8	24.5	27.8	12.8	37.9	18.3	23.4	21.9
Հարավային և Կենտրոնական Ամերիկա	299.2	146.1	27.6	5.0	164.3	14.7	656.9	311.6	151.8	29.2	4.7	158.1	18.3	673.5
	7.2	4.9	0.7	0.9	19.7	6.1	5.3	7.4	5.0	0.8	0.8	18.5	6.5	5.3
Եվրոպա և Եվրասիա	884.2	974.3	524.3	266.7	191.2	101.8	2942.6	878.6	958.3	508.7	263.0	201.3	115.5	2925.3
	21.4	32.6	14.1	47.6	22.9	42.3	23.6	21.0	31.7	13.3	46.7	23.5	41.3	23.0
Մերձավոր Արևելք	377.7	371.6	9.7	0.3	4.9	0.2	764.4	384.8	385.5	8.2	0.9	5.7	0.2	785.3
	9.1	12.4	0.3	0.1	0.6	0.1	6.1	9.2	12.8	0.2	0.2	0.7	0.1	6.2
Աֆրիկա	166.1	110.7	95.9	2.8	25.5	1.4	402.4	170.9	111.0	95.6	3.1	25.7	1.7	408.1
	4.0	3.7	2.6	0.5	3.1	0.6	3.2	4.1	3.7	2.5	0.6	3.0	0.6	3.2
Ասիայի - Խաղաղ Օվկիանոսի երկրներ	1398.1	564.4	2595.7	78.1	291.5	65.7	4993.5	1415.0	575.2	2696.5	77.8	308.7	78.2	5151.5

	33.8	18.9	69.7	13.9	35.0	27.3	40.0	33.8	19.0	70.5	13.8	36.1	28.0	40.5
Աշխարհը	4138.9	2986.3	3723.7	559.9	833.6	240.8	12483.2	4185.1	3020.4	3826.7	563.2	855.8	279.3	12730.4
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
որից՝ ՏՀԶԿ երկրներ	2072.9	1423.1	1055.2	444.5	316.6	172.1	5484.4	2059.9	1444.4	1066.9	447.0	319.3	195.6	5533.1
	50.1	47.7	28.3	79.4	38.0	71.5	43.9	49.2	47.8	27.9	79.4	37.3	70.0	43.5
Ոչ ՏՀԶԿ երկրներ	2066.0	1563.1	2668.5	115.4	517.0	68.7	6998.9	2125.1	1576.0	2759.8	116.1	536.5	83.7	7197.3
	49.9	52.3	71.7	20.6	62.0	28.5	56.1	50.8	52.2	72.1	20.6	62.7	30.0	56.5
Եվրամիություն	618.8	399.7	293.4	199.9	76.1	97.7	1685.5	605.2	394.3	285.4	198.5	81.9	110.6	1675.9
	14.9	13.4	7.9	35.7	9.1	40.6	13.5	14.5	13.1	7.5	35.3	9.6	39.6	13.2
Նախկին ԽՍՀՄ	206.9	529.6	183.8	61.1	54.5	0.7	1036.6	212.2	517.9	178.8	58.5	59.3	0.9	1027.7
	5.0	17.7	4.9	10.9	6.5	0.3	8.3	5.1	17.1	4.7	10.4	6.9	0.3	8.1

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է BP Statistical Review of World Energy, June 2014, 63th edition, էջ 41-ի տվյալներով:

Ծանոթագրություն՝ նավթի սպառումը չափվում է միլիոն տոննայով, վառելիքի մյուս տեսակներինը՝ նավթին համարժեք միլիոն տոննայով:

* Համարիչում՝ նավթին համարժեք մլն տոննա, հայտարարում՝ %-ով աշխարհի ցուցանիշի նկատմամբ:

Էլեկտրաէներգիայի սպառումը և կառուցվածքը ըստ դրա ստացման աղբյուրների աշխարհում և խոշոր տնտեսական միություններում 2003-2013 թվականներին

Աշխարհը կամ տնտեսական միությունը	2003	2005	2007	2008	2009	2010	2011	2012	2013
1. Հիդրոէլեկտրաէներգիա									
Ընդամենը՝ աշխարհ	597.2	661.8	700.3	728.1	737.8	783.9	795.8	833.6	855.8
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	287.3	295.3	292.6	302.3	299.5	309.5	314.9	316.6	319.3
	48.1	44.6	41.8	41.5	40.6	39.5	39.6	38.0	37.3
Ոչ ՏՀԶԿ երկրներ	309.9	366.5	407.7	425.8	438.3	474.4	481.0	517.0	536.5
	51.9	55.4	58.2	58.5	59.4	60.5	60.4	62.0	62.7
Եվրամիություն	70.7	70.9	71.5	74.6	76.3	85.7	71.2	76.1	81.9
	11.8	10.7	10.2	10.3	10.3	10.9	8.9	9.1	9.6
Նախկին ԽՍՀՄ	51.2	55.8	56.4	53.9	55.6	55.8	54.5	54.5	59.3
	8.6	8.4	8.0	7.4	7.5	7.1	6.8	6.5	6.9
2. Միջուկային էներգիա									
Ընդամենը՝ աշխարհ	598.3	626.4	621.7	619.4	614.0	626.2	600.7	559.9	563.2
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	505.7	532.4	521.8	516.8	511.6	521.1	488.9	444.5	447.0
	84.5	85.0	83.9	83.4	83.3	83.2	81.4	79.4	79.4
Ոչ ՏՀԶԿ երկրներ	92.6	94.0	99.9	102.6	102.4	105.1	111.8	115.4	116.1
	15.5	15.0	16.1	16.6	16.7	16.8	18.6	20.6	20.6

Եվրամիություն	226.0	226.0	211.9	212.5	202.5	207.6	205.3	199.9	198.5
	37.8	36.1	34.1	34.3	33.0	33.2	34.2	35.7	35.3
Նախկին ԽՍՀՄ	56.0	56.4	60.0	60.0	58.8	59.3	60.1	61.1	58.5
	9.4	9.0	9.6	9.7	9.6	9.5	10.0	10.9	10.4
3. Վերականգնվող էներգիա									
Ընդամենը՝ աշխարհ	66.9	85.1	108.4	123.7	142.5	168.0	204.9	240.8	279.3
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	54.1	69.7	88.3	99.6	112.0	128.1	149.4	172.1	195.6
	80.8	81.9	81.5	80.5	78.6	76.2	72.9	71.5	70.0
Ոչ ՏՀԶԿ երկրներ	12.8	15.4	20.1	24.1	30.5	39.9	55.5	68.7	83.7
	19.2	18.1	18.5	19.5	21.4	23.8	27.1	28.5	30.0
Եվրամիություն	23.2	34.2	46.6	52.8	59.1	68.5	82.5	97.7	110.6
	34.7	40.2	42.9	42.7	41.5	40.7	40.3	40.6	39.6
Նախկին ԽՍՀՄ	0.1	0.2	0.2	0.2	0.3	0.4	0.5	0.7	0.9
	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3	0.3
4. Ածխի էներգիա									
Ընդամենը՝ աշխարհ	2611.8	2926.3	3204.2	3262.3	3239.0	3469.1	3630.3	3723.7	3826.7
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	1161.5	1180.8	1207.7	1182.5	1055.6	1121.7	1098.4	1055.2	1066.9
	44.5	40.4	37.7	36.2	32.6	32.3	30.3	28.3	27.9
Ոչ ՏՀԶԿ երկրներ	1450.3	1745.5	1996.5	2079.8	2183.4	2347.5	2531.9	2668.5	2759.8
	55.5	59.6	62.3	63.8	67.4	67.7	69.7	71.7	72.1
Եվրամիություն	328.7	315.1	324.3	300.3	264.9	278.2	283.1	293.4	285.4
	12.6	10.8	10.1	9.2	8.2	8.0	7.8	7.9	7.5

Նախկին ԽՍՀՄ	174.5	164.2	170.9	181.6	165.6	166.3	175.7	183.8	178.8
	6.7	5.6	5.3	5.6	5.1	4.8	4.8	4.9	4.7
5. Բնական գազ									
Ընդամենը՝ աշխարհ	2344.5	2495.5	2666.4	2732.5	2667.9	2868.2	2914.7	2986.3	3020.4
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	1262.9	1294.6	1338.2	1358.7	1320.1	1402.1	1391.0	1423.1	1444.4
	53.9	51.9	50.2	49.7	49.5	48.9	47.7	47.7	47.8
Ոչ ՏՀԶԿ երկրներ	1081.6	1200.9	1328.3	1373.9	1347.8	1466.1	1523.7	1563.1	1576.0
	46.1	48.1	49.8	50.3	50.5	51.1	52.3	52.3	52.2
Եվրամիություն	429.0	447.4	437.7	446.7	418.9	452.0	405.9	399.7	394.3
	18.3	17.9	16.4	16.3	15.7	15.8	13.9	13.4	13.1
Նախկին ԽՍՀՄ	496.6	512.8	541.6	535.5	488.4	523.4	539.0	529.6	517.9
	21.2	20.5	20.3	19.6	18.3	18.2	18.5	17.7	17.1
6. Նավթ									
Ընդամենը՝ աշխարհ	3725.2	3919.3	4018.4	4000.2	3924.6	4040.2	4085.1	4138.9	4185.1
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	2249.4	2306.2	2278.9	2211.6	2099.5	2115.8	2093.3	2072.9	2059.9
	60.4	58.8	56.7	55.3	53.5	52.4	51.2	50.1	49.2
Ոչ ՏՀԶԿ երկրներ	1475.8	1613.1	1739.5	1788.6	1825.1	1924.4	1991.8	2066.0	2125.1
	39.6	41.2	43.3	44.7	46.5	47.6	48.8	49.9	50.8
Եվրամիություն	711.8	725.1	709.1	707.1	669.4	660.9	643.1	618.8	605.2
	19.1	18.5	17.6	17.7	17.1	16.4	15.7	14.9	14.5
Նախկին ԽՍՀՄ	181.9	181.2	188.1	190.5	181.8	186.2	200.7	206.9	212.2
	4.9	4.6	4.7	4.8	4.6	4.6	4.9	5.0	5.1

7. Առաջնային էներգիա									
Ընդամենը՝ աշխարհ	9943.8	10714.4	11319.5	11466.2	11325.9	11955.6	12231.5	12483.2	12730.4
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ ՏՀԶԿ երկրներ	5520.9	5679.0	5727.5	5671.5	5398.3	5598.2	5535.8	5484.4	5533.1
	55.5	53.0	50.6	49.5	47.7	46.8	45.3	43.9	43.5
Ոչ ՏՀԶԿ երկրներ	4423.0	5035.4	5592.0	5794.7	5927.5	6357.3	6695.7	6998.9	7197.3
	44.5	47.0	49.4	50.5	52.3	53.2	54.7	56.1	56.5
Եվրամիություն	1789.6	1818.7	1801.1	1794.0	1691.2	1752.8	1691.2	1685.5	1675.9
	18.0	17.0	15.9	15.6	14.9	14.7	13.8	13.5	13.2
Նախկին ԽՍՀՄ	960.3	970.7	1017.1	1021.7	950.5	991.4	1030.5	1036.6	1027.7
	9.7	9.1	9.0	8.9	8.4	8.3	8.4	8.3	8.1

Աղբյուրը՝ կազմվել և հաշվարկվել է BP Statistical Review of World Energy, June 2014, 63th edition, էջ 11, 25, 33, 35, 36, 38, 40-ի տվյալներով:

Ծանոթագրություն՝ նավթի սպառումը չափվում է միլիոն տոննայով, վառելիքի մյուս տեսակներինը՝ նավթին համարժեք միլիոն տոննայով:

* Համարիչում՝ նավթին համարժեք մլն տոննա, հայտարարում՝ %-ով աշխարհի համապատասխան ցուցանիշի նկատմամբ:

Հիդրոէլեկտրակենտրոնների սպառումը 1965-2013 թվականներին, մլն տոննա՝ նավթի համարժեքով

Երկիրը և տարածաշրջանը	1965	1970	1975	1980	1985	1990	1995	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2013թ-ի վախճանային 2012թ. համեմատ	2013թ.-ին %-ը բնութագրի մեջ
ԱՄՆ	45.0	57.4	69.3	63.8	65.0	66.9	71.0	63.0	61.8	66.1	56.6	58.2	62.5	59.5	73.0	63.1	61.5	-2.3%	7.2%
Կանադա	26.5	35.1	44.1	50.3	68.7	66.9	75.6	80.8	82.1	80.2	83.6	85.2	82.9	79.4	85.2	86.0	88.6	3.3%	10.4%
Մեքսիկա	2.0	3.4	3.4	3.8	5.9	5.3	6.2	7.5	6.2	6.9	6.1	8.8	6.0	8.3	8.1	7.1	6.2	-11.9%	0.7%
Շնորհաներ՝ Հյուսիսային Ամերիկա	73.5	95.9	116.9	118.0	139.7	139.2	152.9	151.2	150.1	153.2	146.3	152.2	151.4	147.2	166.3	156.2	156.3	0.3%	18.3%
Արգենտինա	0.3	0.3	1.2	3.4	4.7	4.1	6.5	7.7	9.0	9.8	8.5	8.4	9.2	9.2	9.0	8.4	9.2	10.3%	1.1%
Բրազիլիա	5.4	9.0	16.4	29.2	40.4	46.8	57.5	68.9	76.4	78.9	84.6	83.6	88.5	91.2	96.9	94.0	87.2	-7.0%	10.2%
Չիլի	0.9	1.0	1.4	1.7	2.3	2.0	4.2	4.5	6.0	7.0	5.2	5.7	5.9	5.0	4.7	4.6	4.4	-2.8%	0.5%
Կոլումբիա	0.8	1.4	2.2	3.3	4.2	6.2	7.2	7.0	8.9	9.2	9.5	9.9	9.3	9.1	10.9	10.8	10.0	-6.6%	1.2%
Էկվադոր	0.1	0.1	0.1	0.3	0.7	1.1	1.2	1.7	1.5	1.6	2.0	2.5	2.1	2.0	2.5	2.8	2.5	-9.5%	0.3%
Պերու	0.6	0.9	1.2	1.6	2.1	2.3	2.9	3.7	4.1	4.4	4.4	4.3	4.5	4.5	4.9	5.0	4.8	-4.0%	0.6%
Տրինիդատ և Տոբագո	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վենեսուելա	0.3	0.9	2.0	3.3	5.1	8.4	11.6	14.2	17.4	18.4	18.8	19.6	19.4	17.3	18.8	18.5	19.0	2.8%	2.2%
Հարավային և Կենտրոնական Ամերիկայի մյուս երկրները	0.8	1.5	1.8	2.7	4.8	11.3	14.3	18.3	18.3	18.4	19.4	19.4	19.2	20.3	20.3	20.4	20.9	3.2%	2.4%
Շնորհաներ՝ Հարավային և Կենտրոնական Ամերիկա	9.2	15.1	26.4	45.3	64.4	82.3	105.5	126.0	141.6	147.8	152.4	153.5	158.1	158.7	168.1	164.3	158.1	-3.5%	18.5%

Ավստրիա	3.9	4.8	5.4	6.6	7.0	7.1	8.4	9.5	8.3	8.1	8.4	8.7	9.2	8.7	7.7	9.9	8.4	-14.9%	1.0%
Ադրբեջան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	0.3	0.2	0.4	0.3	0.7	0.6	0.5	0.5	0.5	0.8	0.6	0.4	0.3	-18.0%	♦
Բելառուս	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	-15.8%	♦
Բելգիա	0.1	0.1	^	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	^	0.1	0.1	2.0%	♦
Բուլղարիա	0.5	0.5	0.6	0.8	0.5	0.4	0.5	0.5	1.0	0.9	0.7	0.7	0.8	1.1	0.7	0.7	0.9	26.6%	0.1%
Չեխիայի Հանրապետություն	0.5	0.4	0.4	0.5	0.4	0.3	0.5	0.5	0.7	0.7	0.6	0.5	0.7	0.8	0.6	0.7	0.9	27.2%	0.1%
Դանիա	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	-22.9%	♦
Ֆինլանդիա	2.2	2.2	2.8	2.3	2.8	2.5	2.9	3.3	3.1	2.6	3.2	3.9	2.9	2.9	2.8	3.8	2.9	-23.5%	0.3%
Ֆրանսիա	10.6	12.8	13.6	15.7	14.1	12.2	16.5	15.3	11.8	12.7	13.2	13.6	13.0	14.3	10.3	13.1	15.5	18.6%	1.8%
Գերմանիա	3.7	4.0	3.9	4.3	3.9	3.9	4.9	5.6	4.4	4.5	4.8	4.6	4.3	4.8	4.0	4.9	4.6	-5.7%	0.5%
Հունաստան	0.2	0.7	0.5	0.9	0.6	0.5	0.9	0.9	1.3	1.5	0.8	0.9	1.3	1.7	1.0	1.0	1.5	40.5%	0.2%
Հունգարիա	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	0.1	^	0.1	^	^	0.3%	♦
Իռլանդիա	0.2	0.2	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.1	0.2	0.2	0.1	-27.3%	♦
Իտալիա	10.4	9.9	8.1	9.2	9.3	7.2	8.6	10.0	8.2	8.4	7.4	9.4	11.1	11.6	10.4	9.5	11.6	23.3%	1.4%
Ղազախստան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	1.2	1.7	1.9	1.7	1.8	1.8	1.8	1.7	1.6	1.8	1.8	1.8	1.8	1.8%	0.2%
Լիտվա	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	22.6%	♦
Նիդեռլանդներ	-	-	-	-	-	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	8.8%	♦
Նորվեգիա	11.2	13.1	17.5	19.0	23.3	27.5	27.7	32.2	30.9	27.1	30.6	31.8	28.8	26.7	27.6	32.3	29.2	-9.5%	3.4%
Լեհաստան	0.2	0.4	0.5	0.7	0.9	0.8	0.9	0.9	0.5	0.5	0.5	0.5	0.5	0.7	0.5	0.5	0.6	20.1%	0.1%
Պորտուգալիա	0.9	1.3	1.5	1.8	2.4	2.1	1.9	2.6	1.0	2.5	2.3	1.5	1.8	3.6	2.5	1.2	3.1	150.3%	0.4%
Ռումինիա	0.2	0.6	2.0	2.9	2.7	2.5	3.8	3.3	4.6	4.2	3.6	3.9	3.6	4.6	3.4	2.8	3.4	24.2%	0.4%
Ռուսաստանի Դաշնություն	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	36.1	37.8	40.1	37.4	39.5	39.6	40.5	37.7	39.9	38.1	37.3	37.3	41.0	10.2%	4.8%
Սլովակիա	0.5	0.4	0.5	0.5	0.6	0.6	1.2	1.1	1.1	1.0	1.0	1.0	1.0	1.3	0.9	1.0	1.2	15.8%	0.1%
Իսպանիա	4.5	6.4	5.9	6.7	7.1	5.8	5.2	7.7	4.0	5.8	6.2	5.3	6.0	9.6	6.9	4.6	8.3	79.5%	1.0%
Շվեդիա	10.5	9.4	13.1	13.4	16.2	16.5	15.3	17.8	16.5	14.0	15.0	15.7	14.9	15.1	15.1	17.8	13.9	-21.8%	1.6%
Շվեյցարիա	5.5	6.6	7.3	7.6	7.3	6.7	8.0	8.3	7.1	7.0	8.0	8.2	8.1	8.2	7.2	8.6	8.6	0.1%	1.0%
Թուրքիա	0.5	0.7	1.3	2.6	2.7	5.2	8.0	7.0	9.0	10.0	8.1	7.5	8.1	11.7	11.8	13.1	13.4	2.7%	1.6%
Թուրքմենստան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	0.1	0.2	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	♦	♦
Ուկրաինա	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	2.4	2.4	2.3	2.6	2.8	2.9	2.3	2.6	2.7	2.9	2.4	2.4	3.1	32.8%	0.4%
Միացյալ Թագավորություն	1.0	1.0	0.9	0.9	0.9	1.2	1.1	1.2	1.1	1.0	1.1	1.2	1.2	0.8	1.3	1.2	1.1	-10.4%	0.1%
Ուզբեկստան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	1.2	1.5	1.4	1.3	1.4	1.4	1.4	2.6	2.1	2.3	2.3	2.3	2.6	13.8%	0.3%

Հնդկաստան	4.3	6.9	9.0	12.5	11.7	15.0	17.2	17.4	22.0	25.4	27.7	26.0	24.0	25.0	29.8	26.2	29.8	14.3%	3.5%
Ինդոնեզիա	0.4	0.9	0.4	0.3	0.6	1.3	1.7	2.3	2.4	2.2	2.6	2.6	2.6	3.9	2.8	2.9	3.5	23.9%	0.4%
Ճապոնիա	15.8	16.6	18.3	19.5	18.7	19.8	17.8	18.5	17.9	20.4	17.5	17.5	16.4	20.6	19.3	18.3	18.6	1.8%	2.2%
Մալայզիա	0.1	0.3	0.3	0.4	0.9	0.9	1.4	1.7	1.2	1.6	1.5	2.0	1.6	1.6	1.9	2.1	2.1	-2.2%	0.2%
Նոր Զելանդիա	2.3	2.9	3.8	4.4	4.5	5.2	6.2	5.5	5.3	5.3	5.3	5.1	5.5	5.6	5.7	5.2	5.2	0.9%	0.6%
Պակիստան	0.5	0.7	1.1	2.0	2.9	3.9	5.1	4.0	6.9	6.8	7.1	6.1	6.4	6.7	6.9	6.4	7.4	15.6%	0.9%
Ֆիլիպիններ	0.2	0.3	0.5	0.8	1.3	1.4	1.4	1.8	1.9	2.2	1.9	2.2	2.2	1.8	2.2	2.3	2.2	-5.7%	0.3%
Սինգապուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հարավային Կորեա	0.2	0.3	0.4	0.5	0.8	1.4	0.6	0.9	0.8	0.8	0.8	0.7	0.6	0.8	1.0	1.1	1.3	16.8%	0.2%
Թայվան	0.8	0.8	1.2	0.7	1.3	1.4	1.0	1.0	0.9	0.9	1.0	0.9	0.8	0.9	0.9	1.2	1.2	-4.1%	0.1%
Թաիլանդ	0.2	0.5	0.7	0.3	0.8	1.1	1.5	1.4	1.3	1.8	1.8	1.6	1.6	1.3	1.8	2.0	1.3	-35.6%	0.1%
Վիետնամ	0.3	0.3	0.3	0.3	0.3	1.2	2.4	3.3	3.7	4.5	5.1	5.9	6.8	6.2	9.3	11.9	12.2	2.7%	1.4%
Խաղաղ Օվկիանոսի տարածաշրջանի մյուս երկրները	2.5	2.7	3.0	3.5	4.3	5.7	6.0	5.5	6.5	7.3	7.9	8.4	8.0	10.0	11.1	10.4	12.8	23.4%	1.5%
Շնորհիվ Խաղաղ Օվկիանոսի երկրներ	34.4	40.8	52.1	61.5	72.4	90.6	109.2	117.2	164.4	181.7	193.6	214.4	218.5	251.8	254.1	291.5	308.7	6.2%	36.1%
Շնորհիվ աշխարհ	208.8	265.5	324.7	383.7	448.2	489.8	562.9	602.4	661.8	688.7	700.3	728.1	737.8	783.9	795.8	833.6	855.8	2.9%	100.0%
որից՝ ՏՀԶԿ երկրներ	161.2	193.7	227.8	240.8	269.7	272.2	299.3	311.0	295.3	300.6	292.6	302.3	299.5	309.5	314.9	316.6	319.3	1.1%	37.3%
Ոչ ՏՀԶԿ երկրներ	47.6	71.8	96.9	142.9	178.5	217.6	263.6	291.4	366.5	388.2	407.7	425.8	438.3	474.4	481.0	517.0	536.5	4.0%	62.7%
վրամիություն	50.1	55.1	59.6	67.6	70.5	64.8	75.5	83.7	70.9	71.6	71.5	74.6	76.3	85.7	71.2	76.1	81.9	8.0%	9.6%
Նախկին ԽՍՀՄ	19.3	29.0	29.4	41.5	48.7	53.4	54.5	52.0	55.8	55.5	56.4	53.9	55.6	55.8	54.5	54.5	59.3	9.2%	6.9%

Կազմվել է՝ BP Statistical Review of World Energy, June 2014, 63th edition, էջ 36-ի և տվյալների բազայում առկա տվյալներով: 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հասանելի է <http://www.bp.com/en/global/corporate/about-bp/energy-economics/statistical-review-of-world-energy.html> ինտերնետային հասցեում:

Ծանոթագրություն՝ աղյուսակի տվյալները ներառում են հիդրոէլեկտրակայանների ընդամենը արտադրությունը և հաշվի չեն առնում երկրների միջև էլեկտրաէներգիայի մատակարարումը: Վերափոխված է ջերմային համարժեքության հիման վրա, որը ժամանակակից ՋԷԿ-երում ապահովում է վերափոխման 38%-անոց արդյունավետություն:

^ 0.05-ից փոքր է, ♦ 0.05%-ից փոքր է:

Հիդրոէլեկտրակայանների սպառումը 1965-2013 թվականներին, տերրապատ ժամով

119

Երկիրը և տարածաշրջանը	1965	1970	1975	1980	1985	1990	1995	2000	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2013թ.-ի փոփոխությունը 2012թ. համեմատ	2013թ.-ին %-ը ներխուժող մեջ
ԱՄՆ	199.0	253.5	306.2	282.0	287.2	295.8	314.0	278.4	273.1	292.2	250.0	257.4	276.2	262.8	322.6	279.0	271.9	-2.3%	7.2%
Կանադա	117.1	155.3	195.0	222.5	303.8	295.8	334.2	356.9	362.8	354.6	369.5	376.4	366.5	350.9	376.5	380.2	391.6	3.3%	10.4%
Մեքսիկա	8.9	15.0	15.2	16.9	26.2	23.6	27.5	33.1	27.6	30.3	27.0	38.9	26.4	36.7	35.8	31.2	27.4	-11.9%	0.7%
Ընդամենը՝ Հյուսիսային Ամերիկա	325.0	423.8	516.4	521.4	617.2	615.2	675.7	668.3	663.5	677.1	646.5	672.7	669.2	650.5	734.9	690.4	690.9	0.3%	18.3%
Արգենտինա	1.2	1.5	5.1	15.0	20.7	18.2	28.6	34.1	39.6	43.4	37.7	37.3	40.7	40.6	39.6	37.0	40.7	10.3%	1.1%
Բրազիլիա	24.0	39.8	72.3	128.9	178.4	206.7	254.0	304.5	337.5	348.8	374.0	369.6	391.0	403.3	428.3	415.3	385.4	-7.0%	10.2%
Չիլի	4.0	4.3	6.1	7.3	10.4	9.0	18.6	20.1	26.7	31.1	22.8	25.0	26.0	22.3	20.7	20.2	19.5	-2.8%	0.5%
Կոլումբիա	3.5	6.1	9.7	14.4	18.4	27.5	32.0	30.8	39.2	40.5	42.1	43.7	41.1	40.4	48.3	47.6	44.4	-6.6%	1.2%
Էկվադոր	0.3	0.6	0.6	1.2	3.3	5.0	5.5	7.4	6.7	6.9	8.7	11.0	9.2	8.6	11.1	12.2	11.0	-9.5%	0.3%
Պերու	2.6	3.8	5.5	7.0	9.4	10.2	12.9	16.2	18.0	19.6	19.5	19.0	19.8	20.0	21.6	22.0	21.1	-4.0%	0.6%
Տրինիդադ և Տոբագո	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Վենեսուելա	1.4	4.1	8.9	14.6	22.6	37.0	51.5	62.9	77.1	81.4	83.0	86.7	85.8	76.7	83.2	81.7	83.8	2.8%	2.2%
Հարավային և Գենտրոնական Ամերիկայի մյուս երկրները	3.5	6.4	8.2	11.9	21.2	50.0	63.3	81.0	80.9	81.4	85.8	85.9	85.0	89.6	89.9	90.0	92.6	3.2%	2.4%

Ընդամենը՝ Հարավային և Գենտրո- նական Ամերիկա	40.5	66.6	116.5	200.4	284.4	363.5	466.4	557.0	625.6	653.2	673.6	678.3	698.7	701.5	742.8	726.1	698.5	-3.5%	18.5 %
Ավստրիա	17.3	21.3	23.8	29.1	30.8	31.5	37.1	41.8	36.7	35.8	37.1	38.4	40.9	38.4	34.2	43.7	37.1	- 14.9%	1.0%
Ադրբեջան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	1.3	0.7	1.6	1.5	3.0	2.5	2.4	2.2	2.3	3.4	2.7	1.8	1.5	- 18.0%	♦
Բելառուս	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	0.1	0.1	- 15.8%	♦
Բելգիա	0.3	0.2	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.5	0.3	0.4	0.4	0.4	0.3	0.3	0.2	0.4	0.4	2.0%	♦
Բուլղարիա	2.0	2.2	2.5	3.7	2.2	1.9	2.3	2.4	4.3	4.0	2.9	2.9	3.5	5.1	2.9	3.2	4.1	26.6%	0.1%
Չեխիայի Հանրապե- տություն	2.2	1.7	1.8	2.4	1.7	1.5	2.3	2.3	3.0	3.3	2.5	2.4	3.0	3.4	2.7	3.0	3.8	27.2%	0.1%
Դանիա	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	^	- 22.9%	♦
Ֆինլանդիա	9.5	9.5	12.2	10.2	12.3	10.9	12.9	14.6	13.7	11.5	14.1	17.1	12.7	12.9	12.4	16.8	12.8	- 23.5%	0.3%
Ֆրանսիա	46.9	56.7	60.1	69.5	62.3	53.8	72.9	67.8	52.1	56.2	58.2	60.3	57.5	63.2	45.6	57.8	68.4	18.6%	1.8%
Գերմանիա	16.2	17.5	17.1	19.1	17.4	17.4	21.6	24.9	19.6	20.0	21.2	20.4	19.0	21.0	17.7	21.8	20.5	-5.7%	0.5%
Հունաստան	0.8	2.9	2.2	3.8	2.8	2.0	3.8	4.1	5.6	6.5	3.4	4.1	5.7	7.5	4.3	4.6	6.4	40.5%	0.2%
Հունգարիա	0.1	0.1	0.2	0.1	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.2	0.3%	♦
Իռլանդիա	0.9	0.8	0.5	0.8	0.8	0.7	0.7	0.8	0.6	0.7	0.7	1.0	0.9	0.6	0.7	0.8	0.6	- 27.3%	♦
Իտալիա	46.0	43.9	35.9	40.8	41.1	31.6	37.8	44.2	36.1	37.0	32.8	41.6	49.1	51.1	45.8	41.9	51.5	23.3%	1.4%
Ղազա- խաստան	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	5.2	7.4	8.3	7.5	7.9	7.8	8.2	7.5	6.9	8.0	7.9	8.0	8.1	1.8%	0.2%
Լիտվա	տ.չ.	տ.չ.	տ.չ.	տ.չ.	0.4	0.4	0.4	0.3	0.5	0.4	0.4	0.4	0.4	0.5	0.5	0.4	0.5	22.6%	♦
Նիդեռ- լանդներ	-	-	-	-	-	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	0.1	8.8%	♦
Նորվեգիա	49.4	57.9	77.4	84.0	103.0	121.4	122.5	142.2	136.6	119.8	135.3	140.5	127.1	117.9	122.1	142.9	129.0	-9.5%	3.4%
Լեհաստան	0.9	1.9	2.4	3.3	3.9	3.3	3.8	4.1	2.2	2.0	2.4	2.2	2.4	2.9	2.3	2.0	2.4	20.1%	0.1%
Պորտուգալ իա	4.0	5.8	6.4	8.0	10.7	9.2	8.3	11.3	4.6	10.9	10.0	6.6	8.0	15.8	11.3	5.4	13.5	150.3 %	0.4%

Մերձավոր Արևելքի սյուսերկրները	0.2	0.4	1.7	4.3	4.5	3.5	3.8	4.3	9.5	10.8	9.9	6.8	5.8	8.3	8.4	9.3	10.3	10.9%	0.3%
Ընդամենը Մերձավոր Արևելք	1.9	2.9	5.1	9.9	10.1	9.9	12.2	8.1	22.6	29.4	27.9	14.3	12.3	17.8	18.8	21.5	25.2	17.6%	0.7%
Ալժիր	0.4	0.6	0.3	0.3	0.6	0.1	0.2	0.1	0.6	0.2	0.2	0.3	0.3	0.2	0.4	0.4	0.1	-74.5%	♦
Եգիպտոս	1.7	4.7	6.8	9.8	8.7	9.9	11.5	14.2	12.6	12.9	15.5	14.7	12.9	13.0	12.9	14.1	12.9	-7.9%	0.3%
Հարավային Աֆրիկայի Հանրապետ.	-	-	1.1	1.0	0.6	1.0	0.5	1.1	1.3	2.9	0.9	1.2	1.4	2.1	2.1	1.2	1.1	-2.7%	♦
Աֆրիկայի սյուսերկրները	8.7	15.6	26.4	36.0	38.4	45.9	48.6	59.2	75.9	80.3	78.5	80.9	84.5	93.0	90.9	96.9	99.5	2.9%	2.6%
Ընդամենը Աֆրիկա	10.9	20.8	34.6	47.1	48.3	56.9	60.8	74.6	90.5	96.4	95.1	97.1	99.1	108.3	106.3	112.6	113.6	1.2%	3.0%
Ավստրալիա	7.7	10.2	14.9	13.5	13.9	14.8	15.8	15.8	15.7	15.9	14.4	12.0	11.1	16.6	14.1	17.1	20.1	18.1%	0.5%
Բանգլադեշ	-	-	0.4	0.6	0.7	0.9	0.4	0.7	0.7	0.7	0.7	1.0	0.4	0.7	0.9	0.8	0.9	4.2%	♦
Չինաստան	22.1	24.0	43.6	58.2	92.4	126.7	190.6	222.5	397.0	435.8	485.3	585.2	615.6	722.2	698.9	872.1	911.6	4.8%	24.1%
Հոնկոնգ, Չինաստան	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հնդկաստան	19.2	30.4	39.7	55.4	51.8	66.4	75.9	77.0	97.4	112.4	122.4	115.0	106.2	110.7	131.6	115.7	131.9	14.3%	3.5%
Ինդոնեզիա	1.8	4.2	1.8	1.3	2.8	5.7	7.5	10.0	10.8	9.6	11.3	11.5	11.4	17.5	12.4	12.7	15.7	23.9%	0.4%
Ճապոնիա	70.0	73.4	80.7	86.4	82.5	87.3	78.7	81.8	79.0	90.1	77.5	77.5	72.5	90.9	85.3	81.0	82.2	1.8%	2.2%
Մալայզիա	0.6	1.3	1.3	1.7	3.8	4.0	6.2	7.4	5.2	7.1	6.7	8.7	7.2	7.0	8.2	9.5	9.3	-2.2%	0.2%
Նոր Զելանդիա	10.0	12.7	16.7	19.4	19.7	23.2	27.5	24.4	23.3	23.6	23.6	22.3	24.2	24.7	25.1	22.9	23.0	0.9%	0.6%
Պակիստան	2.2	2.9	4.9	8.9	13.0	17.1	22.7	17.6	30.7	30.2	31.6	27.0	28.2	29.5	30.4	28.4	32.8	15.6%	0.9%
Ֆիլիպիններ	0.8	1.5	2.2	3.4	5.6	6.1	6.2	7.8	8.4	9.9	8.6	9.8	9.8	7.8	9.7	10.3	9.6	-5.7%	0.3%

Սինգապուր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Հարավային Կորեա	0.7	1.2	1.7	2.0	3.7	6.4	2.8	4.0	3.6	3.5	3.6	3.1	2.8	3.7	4.6	5.1	5.9	16.8%	0.2%
Թայվան	3.7	3.6	5.3	2.9	5.7	6.1	4.6	4.4	3.8	3.9	4.2	4.1	3.6	4.0	3.8	5.4	5.2	-4.1%	0.1%
Թաիլանդ	1.1	2.0	3.0	1.3	3.7	5.0	6.7	6.0	5.8	8.1	8.1	7.1	7.1	5.5	8.2	8.7	5.6	-35.6%	0.1%
Վիետնամ	1.2	1.2	1.2	1.2	1.5	5.4	10.6	14.6	16.5	19.7	22.4	26.0	30.0	27.5	40.9	52.8	54.1	2.7%	1.4%
Խաղաղ Օվկիանոսի տարածաշրջանի մյուս երկրները	11.1	11.8	13.2	15.5	19.0	25.4	26.3	24.2	28.7	32.5	35.1	37.1	35.5	44.3	49.1	45.9	56.5	23.4%	1.5%
Ընդամենը Խաղաղ Օվկիանոսի երկրներ	152.1	180.4	230.5	271.7	319.8	400.3	482.7	518.1	726.6	803.0	855.7	947.4	965.6	1112.7	1123.1	1288.3	1364.3	6.2%	36.1%
Ընդամենը աշխարհ	922.8	1173.2	1435.0	1695.9	1980.9	2164.7	2487.7	2662.2	2924.6	3043.7	3094.8	3217.7	3260.7	3464.4	3517.1	3684.1	3782.0	2.9%	100.0%
որից՝ ՏՀԶԿ երկրներ	712.3	855.9	1006.6	1064.4	1192.0	1202.9	1322.9	1374.5	1304.9	1328.3	1293.1	1335.9	1323.5	1367.6	1391.5	1399.2	1411.2	1.1%	37.3%
Ոչ ՏՀԶԿ երկրներ	210.5	317.2	428.4	631.5	788.8	961.8	1164.8	1287.7	1619.7	1715.4	1801.7	1881.8	1937.2	2096.8	2125.5	2285.0	2370.9	4.0%	62.7%
Եվրամիություն	221.6	243.7	263.5	299.0	311.4	286.4	333.5	370.0	313.4	316.3	316.1	329.9	337.2	378.9	314.7	336.1	362.1	8.0%	9.6%
Նախկին ԽՍՀՄ	85.3	128.1	129.7	183.6	215.0	236.1	240.8	229.9	246.8	245.5	249.0	238.3	245.6	246.7	240.8	240.8	262.3	9.2%	6.9%

Կազմվել է՝ BP Statistical Review of World Energy, <http://www.bp.com/en/global/corporate/about-bp/energy-economics/statistical-review-of-world-energy.html> ինտերնետային հասցեի տվյալների բազայում առկա տվյալներով:

Ծանոթագրություն՝ աղյուսակի տվյալները ներառում են հիդրոէլեկտրակենտրոնների ընդամենը արտադրությունը և հաշվի չեն առնում երկրների միջև էլեկտրաէներգիայի մատակարարումը:

^ 0.05%-ից փոքր է, ♦ 0.05%-ից փոքր է:

МИРОВЫЕ ТЕНДЕНЦИИ ПОТРЕБЛЕНИЯ ЭЛЕКТРОЭНЕРГИИ

Сеник Джулакян

*Соискатель Армянского национального университета
архитектуры и строительства*

В статье представлены последние мировые тенденции потребления электроэнергии. Проведен сравнительный анализ по разным регионам мира и экономическим объединениям для ряда показателей, таких как: потребление энергии, полученной из различных источников (нефть, природный газ, уголь, атомная энергия, гидроэлектроэнергия, возобновляемые источники энергии) в 2012-2013 годах; потребление электроэнергии, полученной из различных источников в 2003-2013 годах; потребление гидроэлектроэнергии в разных странах за 1965 - 2013 годы – в пересчете на нефтяной эквивалент и рассчитанной в тераватт-часах.

На основе исследований автор представил обобщения и соответствующие предложения.

Ключевые слова: электроэнергия, потребление электроэнергии, регион, экономическое объединение, нефть, природный газ, уголь, атомная энергия, гидроэлектроэнергия, возобновляемые источники энергии.

GLOBAL TRENDS IN ELECTRIC POWER CONSUMPTION

Senik Julhakyan

PhD student of State University of Architecture and Construction

The article presents the latest global trends in energy consumption. A comparative analysis on different regions of the world and economic unions for a number of indicators, such as the consumption of energy derived from a various sources (oil, natural gas, coal, nuclear power, hydropower, renewable energy) in 2012-2013; consumption of electricity produced from various sources in the years 2003-2013; hydropower consumption in different countries for the 1965-2013 years calculated in oil equivalent and in terawatt-hours.

Based on the research the author has presented the synthesis and proposals.

Keywords: electricity, power consumption, region, economic union, oil, natural gas, coal, nuclear power, hydropower, renewable energy.

**ՄԻՋԱԳԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Գոհար Ավագյան

*Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի հայցորդ,
«Հայրիզնեսբանկ» ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի զարգացման վարչության
Կորպորատիվ բիզնես զարգացման բաժնի գլխավոր մասնագետ*


Անկախության ձեռքբերումից անմիջապես հետո ՀՀ-ն ստիպված էր ներգրավվել միջազգային վարկային հարաբերություններում որպես վարկառու երկիր, ինչը պայմանավորված էր ստեղծված տնտեսական և ոչ տնտեսական մի շարք անբարենպաստ հանգամանքներով: ՀՀ արտաքին պետական պարտքի և ՀՆԱ-ի ու արտահանման ծավալների աճի անհամամասնությունը, արտաքին պարտքի զգալի աճին զուգահեռ աղքատության մակարդակի նվազման ավելի ցածր տեմպերը փաստում են ներգրավված միջազգային վարկերի տեղաբաշխման ոչ բավարար արդյունավետության մասին: Այս կապակցությամբ հողվածում առաջարկվել են ՀՀ կողմից միջազգային վարկերի ներգրավման արդյունավետությունը բարձրացնող մի շարք ուղիներ:

Բանալի բառեր. արտաքին ֆինանսական ռեսուրսներ, ներդրումների ներգրավում, արտաքին պարտք, սուբսիդիաներ, դրամաշնորհներ, բազմակողմ վարկատուներ, երկկողմ վարկատուներ, արտաքին վարկի սպասարկում, համաշխարհային ֆինանսական ճգնաժամ:

Անկախության ձեռքբերումից անմիջապես հետո ՀՀ-ն ստիպված էր ներգրավվել միջազգային վարկային հարաբերություններում որպես վարկառու երկիր, ինչը պայմանավորված էր ստեղծված տնտեսական և ոչ տնտեսական մի շարք անբարենպաստ հանգամանքներով: Սկզբնական շրջանում Հայաստանը փոխառու միջոցներ էր ներգրավում ապրանքային վարկի տեսքով, որոնք հիմնականում ուղղված էին էներգետիկ համակարգի պահպանմանն ու զարգացմանը, ինչպես նաև երկրի պարենային ապահովմանը: Համաշխարհային բանկին և Արժույթի միջազգային հիմնադրամին անդամակցումից հետո 1993թ.-ից ՀՀ-ն սկսեց վարկեր ստանալ նաև այս միջազգային կազմակերպություններից, որոնք ուղղված էին կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցությանը, ՀՀ առևտրային

հաշվեկշռի պակասուրդի ֆինանսավորմանը, արժույթային փոխարժեքի կայունության պահպանմանը: Նշենք, որ 1993թ. սեպտեմբերի 7-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև նախկին ԽՍՀ Միության արտաքին պետական պարտքերի և ակտիվների նկատմամբ իրավահաջորդության հարցերի կարգավորման մասին» համաձայնագրի հիման վրա՝ նախկին ԽՍՀՄ արտաքին պետական պարտքում և ակտիվներում ՀՀ մասնաբաժինը 01.12.1991թ. դրությամբ ամբողջությամբ փոխանցվել է Ռուսաստանին, որի արդյունքում Հայաստանի արտաքին պետական պարտքը անկախության ձեռք բերման պահին եղել է զրոյական:


Ներգրավված վարկերի և փոխառությունների գծով ձևավորված ՀՀ արտաքին պարտքը մշտապես ունեցել է աճի միտում (տես՝ գծապատկեր 1): 31.12.2014թ. դրությամբ այն կազմել է մոտ 3.8 մլրդ ԱՄՆ դոլար, որի զգալի մասը գոյացել է 2009թ. սկիզբ առած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդյունքում: Այսպես, եթե մինչև 2008թ.-ը ՀՀ արտաքին պարտքը կազմել է մոտ 1.6 մլրդ ԱՄՆ դոլար, ապա 2009թ. աճել է միանգամից 88%-ով՝ հասնելով 3.0 մլրդ ԱՄՆ դոլարի: Աճին մասամբ նպաստել է նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ SDR-ի փոխարժեքի բարձրացումը, և ադ միտումը պահպանվել է նաև հետագա տարիներին:



Գծապատկեր 1. ՀՀ արտաքին պարտքի շարժը 1996-2014թթ. ընթացքում (մլն ԱՄՆ դոլար)¹

¹ Գծապատկերները և աղյուսակները կազմվել են Հայաստանի Ֆինանսների վիճակագրությունը 1994-1998թթ., (էջ 29-30), ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Ֆինանսների վիճակագրությունը 1998-2002թթ., (էջ 17), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվարին (էջ 49), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2005թ. հունվարին (էջ 56), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2006թ. հունվարին (էջ 60), ՀՀ սոցիալ-տնտեսական

Ընդ որում, արտաքին պարտքի կառուցվածքում բոլոր տարիներին գերակշռել են ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունները՝ չնայած, որ տոկոսային հարաբերակցությամբ 2009թ. վերջիններս նվազել էին՝ նախորդ տարվա 89% մակարդակից հասնելով 83%-ի, ինչը պայմանավորված էր արժուրային կայունության պահպանման նպատակով 2009թ. Արժույթի միջազգային հիմնադրամից ստացված մոտ 300 մլն ԱՄՆ դոլար վարկով, որի արդյունքում ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի ծավալը նախորդ տարվա համեմատ աճեց 2.8 անգամ՝ 2009թ. կազմելով 500.8 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՀ ընդհանուր արտաքին պարտքի 17%-ը (2008թ. 11%-ի համեմատ): Վերջին 6 տարիների ընթացքում ՀՀ կառավարության արտաքին պարտքի տեսակարար կշիռը կրկին աճել է և մոտեցել 88% մակարդակին: Նշենք, որ մինչև 2008թ.-ը ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքում փոքր մասնաբաժիններով տեղ են գրառեցրել նաև ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի երաշխիքներով և հատուկ ծրագրերով տրամադրված վարկերը, որոնք 2009թ.-ից հետո կրկնաձևավարկից խուսափելու նպատակով արտացոլվել են ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի մեջ: 31.12.2014թ. դրությամբ ՀՀ արտաքին պարտքի 88%-ը (3,345.3 ԱՄՆ դոլար) կազմել են ՀՀ կառավարության և 12%-ը (440.0 ԱՄՆ դոլար)՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտավորությունները (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 1996-2014թթ. ընթացքում (%)

վիճակը 2007թ. հունվարին (էջ 60), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2008թ. հունվարին (էջ 55), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2009թ. հունվարին (էջ 54), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2010թ. հունվարին (էջ 51), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2011թ. հունվարին (էջ 56), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվարին (էջ 60), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2013թ. հունվարին (էջ 64), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվարին (էջ 69), ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2015թ. հունվարին (էջ 68), ՀՀ ԱՎԾ, վիճակագրական ժողովածուների տվյալների հիման վրա:

ՀՀ արտաքին պարտքի զգալի մասը մշտապես կազմել են բազմակողմանի վարկային ծրագրերի շրջանակներում (միջազգային ու տարածաշրջանային կազմակերպություններից և բանկերից) ստացված վարկային միջոցները: Թեև ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումների ֆինանսավորման նպատակով 2009թ. Ռուսաստանից ներգրավված 500 մլն ԱՄՆ դոլար վարկի արդյունքում երկկողմանի արտաքին պարտքի պորտֆելը գրեթե եռապատկվեց՝ 342 մլն ԱՄՆ դոլարից հասնելով 953 մլն ԱՄՆ դոլարի, այնուամենայնիվ, 2013թ. եվրապարտատոմսերի թողարկման արդյունքում տվյալ վարկի մարման շնորհիվ այդ պորտֆելը կրկին նվազեց՝ կազմելով 548 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՀ արտաքին պարտքի ընդհանուր ծավալի 14.1%-ը: 2014թ. տարեվերջի արդյունքներով, ՀՀ արտաքին պարտքի 68.8%-ը կազմում են բազմակողմանի, 13.3%-ը՝ երկկողմանի, 17.4%-ը՝ ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերի և ընդամենը 0.4%-ը՝ առևտրային բանկերից ստացված վարկերի գծով ձևավորված պարտավորությունները (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկային ծրագրերի 2001-2014թթ.


մլն ԱՄՆ դոլար

	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Արտաքին պետական պարտք	905.5	1,025.2	1,097.7	1,182.9	1,099.2	1,205.6	1,448.9	1,577.1	2,966.7	3,299.0	3,568.2	3,739.1	3,899.1	3,785.3
այդ թվում՝														
Բազմակողմանի վարկային ծրագրեր	705.8	820.2	966.0	1,068.5	982.9	1,070.5	1,203.7	1,234.7	2,013.9	2,253.7	2,475.4	2,638.9	2,637.0	2,604.6
Երկկողմանի վարկային ծրագրեր	199.6	205.0	131.7	114.5	116.4	135.1	245.2	342.4	952.8	1,045.3	1,092.8	1,086.5	548.4	504.2
Առևտրային բանկերից ստացված վարկեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	12.9	16.7	16.3
Ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված արտարժույթային պետական պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	695.3	659.2
Ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսեր	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	0.8	1.6	0.9

Բազմակողմանի վարկային ծրագրերի շրջանակներում ՀՀ-ն միջազգային վարկեր է ստացել այնպիսի միջազգային կառույցներից, ինչպիսիք են Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային բանկը՝ ի դեմս Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և Զարգացման միջազգային ընկե-

րակցության, Ասիական Ջարգացման բանկը, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը, Եվրոպական ներդրումային բանկը, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը, Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) միջազգային զարգացման հիմնադրամը, Եվրամիությունը (որը համարվում է Հայաստանի առաջին վարկատուն) և ԱՊՀ Միջպետական բանկը:

31.12.2014թ. դրությամբ ՀՀ կառավարության և կենտրոնական բանկի կողմից ստացված բազմակողմանի միջազգային վարկերի գերակշիռ մասը՝ ավելի քան 61%-ը (1,609.2 մլն ԱՄՆ դոլար) պատկանում է Համաշխարհային բանկին (որից 75%-ը (1,198.4 մլն ԱՄՆ դոլար) բաժին է ընկնում Ջարգացման միջազգային ընկերակցության, իսկ 25%-ը (410.8 մլն ԱՄՆ դոլար)՝ Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի կողմից տրամադրված վարկերին), 17%-ը (442.1 մլն ԱՄՆ դոլար)՝ Արժույթի միջազգային հիմնադրամին, 12%-ը (311.1 մլն ԱՄՆ դոլար)՝ Ասիական զարգացման բանկին, իսկ մնացած մասը՝ ընդհանուր պարտքի 10%-ը (242.3 մլն ԱՄՆ դոլար)՝ Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին (2.4%), Եվրամիությանը (3%), Եվրոպական ներդրումային բանկին (1.7%), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկին (0.8%) և Նավթ արդյունահանող երկրների կազմակերպության (ՕՊԵԿ) միջազգային զարգացման հիմնադրամին (1.3%) (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. Բազմակողմանի վարկային ծրագրերի կառուցվածքը՝ ըստ վարկատուների 31.12.2014թ. դրությամբ (%)

Երկկողմ վարկային հարաբերություններում ՀՀ հիմնական վարկատուներն են եղել Ռուսաստանը, Գերմանիան, Ճապոնիան, ԱՄՆ-ը, Ֆրանսիան,

Թուրքմենստանը, Ավստրիան: Հայաստանի առաջին վարկատուներից մեկը եղել է Ռուսաստանը, որը դեռևս 1991թ. 400 մլն ռուսական ռուբլի (մոտ 71 հազ. ԱՄՆ դոլար) էր տրամադրել էներգետիկ համակարգի կայունության ապահովման նպատակով: 1993թ. Հայաստանի ատոմակայանի վերագործարկման նպատակով տրամադրվեց ևս 2 մլրդ ռուսական ռուբլու (մոտ 346 հազ. ԱՄՆ դոլար) վարկ: Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, Ռուսաստանը մշտապես եղել է ՀՀ ամենախոշոր երկկողմ վարկատուն, բացառությամբ 2004-ից 2008 թվականների, ինչը պայմանավորված էր ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև 2002թ. հուլիսի 17-ին ստորագրված «Ռուսաստանի Դաշնության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված պետական վարկերի գծով պարտքի մարման համար Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող գույքը Ռուսաստանի Դաշնությանը փոխանցելու մասին» համաձայնագրով, որի հիման վրա Ռուսաստանի նկատմամբ արտաքին պարտքը մարվել է ՀՀ սեփականությունը հանդիսացող 93.76 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժողության գույքերի՝ Հրազդանի ՋԷԿ-ի գույքային համալիրի, «Մարս» ՓԲԸ, «Երևանի կառավարման ավտոմատացված համակարգերի գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ և «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ բաժնետոմսերի՝ Ռուսաստանին որպես սեփականություն փոխանցելու հիման վրա: Ռուսաստանի նկատմամբ հաջորդ խոշոր պարտքը առաջացել է 2009թ.՝ 500 մլն ԱՄՆ դոլար գումարի չափով, որը, ինչպես նշվեց, եվրապարտատոմսերի հաշվին ամբողջությամբ մարվել է 2013թ.:

ՀՀ տնտեսության զարգացման գործում կարևոր նշանակություն են ունեցել նաև Գերմանիայի կողմից տրամադրված վարկերը, որոնք ուղղված են եղել մեր երկրում վերականգնվող էներգետիկ համակարգի, հիփոթեքային շուկայի, գյուղատնտեսության զարգացմանը, փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցմանը: Էներգետիկ ոլորտի զարգացմանն են ուղղված եղել նաև Ճապոնիայից ստացված վարկային միջոցները, որոնց տեսակարար կշիռը ՀՀ արտաքին պարտքի ընդհանուր ծավալի մեջ մեծացել է հատկապես 2007թ.-ից հետո:

31.12.2014թ. դրությամբ, երկկողմ վարկային ծրագրերի գծով ձևավորված արտաքին պարտքի զգալի մասը՝ 49%-ը (252.6 մլն ԱՄՆ դոլար) բաժին է ընկնել Ճապոնիային, 41%-ը (211.9 մլն ԱՄՆ դոլար)՝ Գերմանիային, 5%-ը (25.3 մլն ԱՄՆ դոլար)՝ ԱՄՆ-ին:

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ երկկողմանի վարկային ծրագրերի և առևտրային բանկերից ստացված վարկերի 1998-2014թթ.

մլն ԱՄՆ դոլար


	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Երկկողմանի վարկային ծրագրեր և առևտրային բանկերից ստացված վարկեր	186.4	192.3	198.2	199.6	205.0	131.7	114.5	116.4	135.1	245.2	342.4	952.8	1,045.3	1,092.8	1,099.4	565.1	520.4
այդ թվում՝																	
ԱՄՆ	43.8	50.2	57.7	64.6	61.3	45.0	42.8	41.3	40.3	39.3	37.2	34.7	33.1	31.1	29.3	27.5	25.3
Գերմանիա	2.5	1.7	5.7	15.5	35.2	49.6	65.1	69.3	86.5	110.4	125.3	142.7	132.7	155.0	193.1	219.8	211.9
Ֆրանսիա	2.8	2.7	2.5	3.1	3.7	4.5	4.8	4.2	4.7	5.2	5.0	4.8	4.3	4.1	4.0	5.2	8.7
Ճապոնիա	0.0	0.0	0.0	1.0	1.5	1.7	1.7	1.6	3.7	90.4	174.9	270.6	374.4	397.2	355.9	290.8	252.6
Ռուսաստանի Դաշնություն	98.1	109.4	114.7	99.3	93.8	31.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	500.0	500.0	500.0	500.0	0.0	0.0
Աբու-Դաբիի զարգացման հիմնադրամ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.9	3.1	4.2	5.1	5.7
Թուրքմենստան	20.7	14.4	12.8	11.1	9.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Շվեյցարիա	18.5	14.0	5.0	5.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Բելգիա (ԿԲՄ բանկ)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	2.2	4.2	5.7	5.8
Ավստրիա (Ռաֆազ բանկ)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	8.7	11.0	9.7
Ավստրիա (Էոստե բանկ)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.7

Ելնելով այն հանգամանքից, որ երբեմն պետությունների կողմից տրվող վարկային միջոցները ժամանակի ընթացքում թե՛ տնտեսական, և թե՛ քաղաքական սպառնալիքի վերածվելու առումով առավել հավանական և վտանգավոր են, քան միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների հատկացրած վարկերը, ուստի խիստ կարևոր է, որ վարկառու երկրները, արտաքին ֆինանսական ռեսուրսների ներգրավման անհրաժեշտության դեպքում, նախ և առաջ, դիմեն բազմակողմ վարկատուներին՝ խորացնելով համագործակցությունը վերջիններիս հետ: Մինչդեռ միջազգային կազմակերպությունների (հատկապես Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի) աջակցության ստացումը պայմանավորված է, առաջին հերթին, վերջիններիս կողմից պետությունների կառավարությունների առջև դրված պարտավորությունների (կոռուպցիայի վերացում, ներդրումների ներգրավման համար բարենպաստ միջավայրի ստեղծում, վարչարարության բարեփոխումների իրականացում, մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարձրացում) կատարմամբ, ինչը, կարծում ենք, հնարավոր է միայն քաղաքական կամքի առկայության դեպքում:

Ինչ վերաբերում է զարգացած տնտեսական միությունների և երկրների հետ մեր երկրի վարկային հարաբերություններին, ապա տնտեսական համագործակցության խորացման արդյունքում «Հայաստանը պետք է նրանց հետ

զարգացնի ավելի արդյունավետ, ուղղակի տնտեսական կապեր, ձգտելով առավելագույնս օգտագործել բարեփոխումների ընթացքում ձեռք բերած հաջողությունները, ապահովելով հնարավորինս մեծ ծավալի օտարերկրյա ներդրումների ներգրավում»²:

Միջազգային վարկերի՝ տնտեսության վրա թողած ազդեցության մասին է վկայում երկրի արտաքին պարտքի, համախառն ներքին արդյունքի և արտահանման ծավալների աճի համեմատական բնութագիրը: Եթե դիտարկենք 1996-2014 թվականների, վերջին տասը տարիների՝ 2004-2014 թվականների և համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո ընկած՝ 2009-2014 թվականների վիճակագրական տվյալները, ապա կնկատենք, որ նշված երեք ժամանակահատվածներում էլ ՀՀ արտաքին պարտքի աճի տեմպերը գերազանցել են ՀՆԱ-ի աճի տեմպերին: Նույն միտումն արձանագրվել է նաև արտահանման ծավալների դեպքում՝ բացառությամբ հետճգնաժամային ժամանակահատվածի, երբ վերջինս աճել է 2.1 անգամ, այն պարագայում, երբ արտաքին պարտքը՝ 1.3 անգամ (տես՝ գծապատկեր 4): Արտաքին պարտքի աճի տեմպերը համաչափ չեն եղել նաև երկրի աղքատության մակարդակի կրճատման տեմպերի համեմատ: Այսպես, եթե 1999-2012թթ. ընթացքում ՀՀ արտաքին պարտքն աճել է 4.3 անգամ, ապա նույն ժամանակահատվածում աղքատության մակարդակը կրճատվել է ընդամենը 2.7 անգամ: Այս անհամաչափությունը պահպանվել է նաև վերջին տասնամյակի (1994-2012թթ.) ընթացքում, երբ արտաքին պետական պարտքն աճել, իսկ աղքատության մակարդակը նվազել է համապատասխանաբար 3.2 և 1.6 անգամ:



Գծապատկեր 4. ՀՀ արտաքին պետական պարտքի, ՀՆԱ-ի և արտահանման ծավալների փոփոխությունները 1996-2014թթ., 2004-2014թթ. և 2009-2014թթ. ընթացքում

Ընդհանրացնելով, կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտաքին պետական պարտքի և ՀՆԱ-ի ու արտահանման ծավալների աճի անհամամասնությունը, արտաքին պարտքի զգալի աճին զուգահեռ աղքատության մակարդակի նվազ-

² Կիրակոսյան Վ.Լ. «Համաշխարհային տնտեսությանը ՀՀ ինտեգրման ուղիները», Եր., «Տիգրան Մեծ», 2007, էջ 8

ման ավելի ցածր տեմպերը փաստում են ներգրաված միջազգային վարկերի տեղաբաշխման ոչ բավարար արդյունավետության, հնարավոր է՝ նաև մասնակիորեն ոչ նպատակային օգտագործման մասին: Մա այն դեպքում, երբ արտաքին պարտքի ժամանակին և ամբողջական սպասարկումը հնարավոր է միայն ՀՆԱ-ի և արտահանման ծավալների առնվազն համաչափ աճի ապահովման պարագայում: Դա նշանակում է, ՀՀ տնտեսության զարգացման գործում արտաքին վարկային միջոցների դերը միանշանակ դրական համարվել չի կարող, ինչը հակասում է տնտեսական այն օրինաչափությանը, ըստ որի՝ «օտարերկրյա փոխառությունների ներգրավումը հնարավորություն է տալիս ընդլայնել սպառումը և կատարել ներդրումներ ավելի մեծ չափերով, քան թույլ են տալիս ներքին ռեսուրսները, ինչպես նաև խթանում են տնտեսության աշխուժացմանը՝ հիմքեր ստեղծելով ներքին արտադրության և արտահանման հետագա աճի համար»³:

Նշենք նաև, որ նոր միջազգային վարկային պայմանագրերի կնքմանը և դրա հիման վրա արտաքին պարտքի ավելացմանը զուգահեռ՝ ՀՆԱ-ի աճի ապահովումն անհրաժեշտ է նաև արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության թույլատրելի սահմանաչափի պահպանման առումով: Այսպես, եթե հաշվի առնենք, որ արտաքին պետական պարտք/ՀՆԱ միջազգային մասշտաբով ընդունված թույլատրելի առավելագույն սահմանաչափը 50% է, ապա ակնհայտ է, որ անհրաժեշտ է մշտապես ապահովել ՀՆԱ-ի այնպիսի աճ, որի մակարդակը ցանկացած պահին առնվազն կգերազանցի արտաքին պետական պարտքի ծավալի կրկնապատիկը: Հավելենք, որ 1997-2014թթ. ընթացքում Հայաստանի արտաքին պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցության առավելագույն ցուցանիշը գրանցվել է 1999թ.՝ կազմելով 47%, իսկ նվազագույնը՝ 2008թ.՝ կազմելով 14%:

Այսպիսով, միջազգային վարկերի ներգրավման արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորում ենք.

- բարձր և լողացող տոկոսադրույքով վարկերի վերաֆինանսավորումն առավել արտոնյալ պայմաններով և ֆիքսված տոկոսադրույքով նոր վարկերի ներգրավմամբ,
- արտաքին աղբյուրների հաշվին իրականացվող նախագծերի իրագործման համար ներգրավվող միջազգային վարկային միջոցների օգտագործման զուգակցումն արտաքին ֆինանսավորման այնպիսի մատչելի և բարձր արդյունավետություն ապահովող աղբյուրների հետ, ինչպեսիք են արտաքին սուբսիդիաները, դրամաշնորհները և այլն,
- միջազգային վարկերի աճին զուգընթաց՝ օտարերկրյա ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ստեղծումն ու դրանց ծավալի մեծացումը,

³ Մարկոսյան Ա.Խ., Նազարյան Գ.Ա., Հախվերդյան Դ.Ն. «Միջազգային տնտեսական հարաբերություններ», Մաս 2: Եր., ԵՃՇՊՀ, 2012, էջ 23

- միջազգային վարկային միջոցների տեղաբաշխումը հատկապես տնտեսության արտահանող և արտահանման ներուժ ունեցող, ինչպես նաև ներմուծմանը փոխարինող արտադրությունների ոլորտներում,
- միջազգային վարկերի նպատակային օգտագործումը վերահսկող անկախ պետական մարմնի ստեղծումը և վերջինիս կողմից վերահսկողության իրականացումը ոչ միայն առանձին նախագծերի իրականացման կամ վարկային միջոցների տեղաբաշխման ավարտին կամ ավարտից հետո, այլև պարբերաբար՝ դրանց իրականացման ողջ ընթացքում՝ փուլային եղանակով, ընդ որում՝ անհրաժեշտ ենք համարում վարկի՝ յուրաքանչյուր հաջորդ փուլով սահմանված գումարի հատկացումը միայն նախորդ փուլերով տրամադրված վարկային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման վերաբերյալ դրական եզրակացության առկայության դեպքում:

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ПРИВЛЕЧЕНИЯ МЕЖДУНАРОДНЫХ КРЕДИТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Гоар Авагян

*Соискатель в Европейском региональном академии образования,
Главный специалист Управления развития корпоративного бизнеса ЗАО
«Армбизнесбанка»*

После приобретения независимости РА была вынуждена войти в международные кредитные отношения как заимствующая кредиты страна, что обусловлено некоторыми неблагоприятными экономическими и не экономическими условиями. Неравномерность внешнего государственного долга РА, ВВП и роста объема экспорта, низкие темпы сокращения уровня бедности, роста внешнего долга фиксируют неэффективность распределения привлеченных международных кредитов. В этой связи в статье предлагаются некоторые пути повышения эффективности привлечения международных кредитов со стороны РА.

Ключевые слова: внешние финансовые ресурсы, привлечение инвестиций, внешний долг, субсидии, гранты, многосторонние кредиторы, двусторонние кредиторы, обслуживание иностранных кредитов, мировой финансовый кризис.

THE WAYS OF INCREASING THE EFFICIENCY OF INCLUSION OF INTERNATIONAL LOANS IN THE REPUBLIC OF ARMENIA

Gohar Avagyan

*Researcher in European Regional Educational Academy,
Head specialist of the Corporate Business Development Department
of “Armbusinessbank” CJSC*

Since achieving independence, Armenia had to be involved in the international loan relations as a borrowing country, which was due to the existing economic and non-economic adverse conditions. The imbalance of external public debt, GDP and export growth, as well as the lower rates of poverty reduction parallel to significant growth of external debt have proved the insufficient effectiveness of distribution of international loans. In this regard, this article suggests several ways of increasing the effectiveness of international loans inclusion by the Republic of Armenia.

Keywords: external financial resources, attracting investment, external debt, subsidies, grants, multilateral creditors, bilateral creditors, servicing of foreign loans, the global financial crisis.

Անի Թորոսյան

*Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի հայցորդ*

Կայուն զարգացումը ժամանակի հրամայականն է ու պարտադիր պահանջը: Այն նոր մտածելակերպ է՝ որը ենթադրում է տնտեսական, սոցիալական, մշակութային, էկոլոգիական և քաղաքական ոլորտների ներդաշնակություն: Աներկբայորեն կարելի է փաստել, որ այս ներդաշնակության մեջ կարևորագույն ռեսուրս է մշակույթը:

Մշակույթն այսօր ընկալվում է որպես հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային հատկանիշների ամբողջություն, որն հատուկ է յուրաքանչյուր հասարակությանը, սոցիալական խմբի և անհատի: Մշակույթի նման ընկալումը ուղղակի և անուղղակի կերպով պայմանավորում է նաև մարդկանց միջև փոխհարաբերությունների բնույթը, փոխհամագործակցության շրջանակները, մրցակցությունը և փոխազդեցությունները: Ուստի և տրամաբանորեն, հարց է ծագում. համարվում է արդյո՞ք մշակույթը «զարգացման» տարր, նպատակամետ գործոն՝ որնիր դրսևորման ամենաբազմազան ձևերով հանդերձ պայմանավորում է առաջընթաց և ներդաշնակ զարգացումներ: Այո, 21-րդ դարասկզբին մշակույթը յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ամենակարևոր հիմնասյուններից մեկն է: Այն ներագրում է մարդկային քաղաքակրթության զարգացման վրա ամենատարբեր ձևերով՝ համարվելով վերջինիս նպատակը և միջոցը:

Բանալի բառեր. մշակույթ, կայուն զարգացում, մշակութային կապիտալ, նորտնտեսություն, գլոբալ հիմնախնդիրներ:

Կայուն զարգացումը ժամանակի հրամայականն է ու պարտադիր պահանջը: Այն նոր մտածելակերպ է՝ որը ենթադրում է տնտեսական, սոցիալական, մշակութային, էկոլոգիական և քաղաքական ոլորտների ներդաշնակություն: Աներկբայորեն կարելի է փաստել, որ այս ներդաշնակության մեջ մշակույթը կարևորագույն ռեսուրս է:

Մշակույթն այսօր ընկալվում է որպես հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային հաստիքների ամբողջություն, որն հատուկ է յուրաքանչյուր հասարակությանը, սոցիալական խմբի և անհատի: Մշակույթի նման ընկալումն ուղղակի և անուղղակի կերպով պայմանավորում է նաև մարդկանց միջև փոխհարաբերությունների բնույթը, փոխհամագործակցության շրջանակները, մրցակցության խորությունն ու ուղղվածությունը և անշուշտ՝ բազմաշերտ փոխազդեցությունները: Ուստի և տրամաբանորեն, հարց է ծագում. Համարվում է արդյոք մշակույթը «գարգացման» տարր, նպատակամետ գործոն՝ որն իր դրսևորման ամենաբազմազան ձևերով հանդերձ մարդկային քաղաքակրթության մեջ պայմանավորում է առաջընթաց և ներդաշնակ զարգացումներ: Այո, 21-րդ դարակգրին մշակույթը յուրաքանչյուր երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ամենակարևոր հիմնասյուներից մեկն է: Այն ներագրում է մարդկային քաղաքակրթության զարգացման վրա ամենատարբեր ձևերով՝ համարվելով վերջինիս զարգացման նպատակը և միջոցը:

Այս է պատճառը, որ ժամանակակից մարդկային քաղաքակրթությունն արդեն մի քանի տասնամյակ է, ինչ կուտակված էկոլոգիական, տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնախնդիրների սրման խառնարանում ընտրության առջև է կանգնած: Մարդկությանն սպառնացող գլոբալ հիմնախնդիրները, զարգացած ու զարգացող երկրների միջև ավելի ու ավելի խորացող անհամամասնությունները շարունակում են սպառնալ ողջ մարդկությանը և նրան շրջապատող գլոբալ միջավայրի ներդաշնակ զարգացմանը: Մտահոգիչն այն է, որ երրորդ հազարամյակն իր զարգացման ներկա միտումներով «սպառնում է» մարդկանց նորմալ, ներդաշնակ կենսագործունեությանը: Իհարկե, մարդկային քաղաքակրթությունը բազմիցս ապրել է գլոբալ ճգնաժամային իրավիճակներ և ինչպես վկայում է համաշխարհային տնտեսության զարգացման անցած ուղին, դրանք հաղթահարվել են ամենատարբեր հեղափոխություններով՝ սկսած արդյունաբերական հեղաշրջումից մինչև վերջին տեխնոլոգիական հեղաշրջումները: Նմանօրինակ քայլ է կատարվում նաև մեր օրերում՝ ի դեմս կայուն զարգացման գործընթացի: Կայուն զարգացման գործընթացն անշուշտ ուղի է, որն առավել դյուրին է դարձնում երկրի ինտեգրումն համաշխարհային տնտեսական առաջընթացին, նպաստում է լոկալ և գլոբալ տնտեսական դաշտում խնդիրների առավել արդյունավետ լուծման ուղիների բացահայտմանն ու դրանց ներդրմանը: Կայուն զարգացումը գիտական կատեգորիա է, որում արտացոլվում են բավականաչափ բարդ երևույթներ և գործընթացներ: «Կայուն զարգացում» հասկացությունն ի սկզբանե ընկալվում էր առավելապես էկոլոգիական հիմնախնդիրների տեսանկյունից: Մակայն, այսօր այն ենթադրում է մարդկային քաղաքակրթության զարգացման նոր փուլ. որը հիմնված է վերջինիս պատմականորեն ձևավորված չափորոշիչներում (տնտեսական, քաղաքական, էկոլոգիական, մշակութային և այլն) տեղի ունեցող արմատական փոփոխությունների վրա:

Այսպիսով, «կայուն զարգացում»-ը համարվում է բարդ և բազմագործոն երևույթ, որն հիմնականում դրսևորվում է որպես.

- գլոբալ համամարդկային արժեքների ձևավորում
- բացարձակապես ներդաշնակ և հավասարակշռված զարգացում
- փաստացի զարգացում
- եկամուտների բաշխման անհավասարության նվազեցում
- պետական ինվեստիցիաների խթանում մշակութային կապիտալում, հատկապես առողջապահության, կրթության ոլորտներում
- որոշումների կայացման առավել արդյունավետ մեխանիզմների ձևավորում, որը ոչ միայն խթանում է բազմակարծությունը, այլ նաև հաշվի է առնում երկրի մշակութային ավանդույթները և պատմական փորձը:

Այս է պատճառը, որ 21-րդ դարում կայուն զարգացումը հասարակության զարգացման այլընտրանքային ուղի է, նպատակ: Համաշխարհային տնտեսության ներկա կերպափոխումները, որոնց նյութական հիմքը արտադրության տեխնոլոգիական եղանակների հերթափոխումն է, տնտեսության սոցիալականացումը, էկոլոգիականացումը, մարդասիրությունը, պահանջում են նոր տնտեսական հայեցակարգեր և պարադիգմեր: Եվ միանգամայն օրինաչափորեն, միջազգային տնտեսական կազմակերպությունները, պետություններն առայժմ խնդրո առարկայի լավագույն լուծման ուղին համարում են պաշտոնապես ընդունված մի դոկտրին՝ այն է՝ կայուն զարգացման տեսությունը: Կայուն զարգացումն այսօր ասոցացվում է պետությունների, ժողովուրդների, տնտեսա-մշակութային և պատմական պարբերաշրջանային զարգացման քաղաքակիրթ մոտեցումների հետ: Առաջին հայացքից կայուն զարգացումը մարդկային քաղաքակրթության համընդհանուր ծաղկման «վարդագույն» հնարավորությունն է՝ ի հակադրություն հասարակության տեխնոգեն զարգացման, որն ընկալվում է որպես հասարակության դանդաղ «կործանում»: Տեխնոգեն քաղաքակրթության զարգացման տեմպերն այսօր աշխարհում ստեղծել են պարադոքսալ իրավիճակ, երբ մարդկության գիտատեխնիկական ներուժն իր գործադրման շրջանակներով գրեթե սահմաններ չի ճանաչում և մյուս կողմից այս համատեքստում անհանգստացնող է ցանկացած երկրի տնտեսական անվտանգության ապահովման խնդիրը՝ իր բոլոր դրսևորումներով: Սակայն, ինչպես իրավամբ նշում է Գ. Վարդանյանն իր «Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ» գրքում՝ դիլեման լուծելի է. «Մարդկային ներուժի զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացը կարող են փոխադարձաբար ուժեղացնել միմյանց՝ ստեղծելով նպաստավոր շրջան»¹: Այս տեսանկյունից, թերևս մշակույթը, մշակութային քաղաքականությունը, մշակութային մտածելակերպը՝ մի խոսքով առավել ընդգրկուն՝ մշակութային կապիտալն այն գործիքն է, որը կայուն զարգացման շրջանակներում ի գործ է լուծել վերոնշյալ խնդիրը և փրկել մարդկային քաղաքակրթությունը վերահաս աղետից: Առաջին անգամ կայուն զարգացման մասին խոսվել է դեռևս Ստոկհոլմում 1972 թվականին՝ Շրջակա միջավայրի և զարգացման գծով

¹ Գ.Բ Վարդանյան, Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008. էջ 239:

միջազգային գիտաժողովում: Այնուհետև, 1987 թվականին նույն հանձնաժողովը Բրունդելենդի հաշվետվության մեջ կոնկրետացրեց «Կայուն զարգացում» եզրույթը և գիտական շրջանառության մեջ ներդրվեց հետևյալ բնորոշումը. «զարգացում, որը բավարարում է ներկայի պահանջմունքները, չխաթարելով ապագա սերունդների կարողություններն իրենց պահանջմունքները բավարարելիս»: Հետագայում, կայուն զարգացմանը նվիրված մի շարք համաշխարհային գագաթաժողովներ՝ Ռիո դե Ժանեյրո -10 (1992թ.), Յոհաննեսբուրգ (2002թ.), Հետագայում, կայուն զարգացմանը նվիրված մի շարք համաշխարհային գագաթաժողովներ՝ Ռիո դե Ժանեյրո-10 (1992թ.), Յոհաննեսբուրգ (2002թ.), Ռիո դե Ժանեյրո - 20 (2012թ.) ուրվագծվեցին կայուն զարգացման խնդիրները, խոչընդոտները, հնարավոր հեռանկարները: «Rio+20» համաժողովում քննարկվեցին 2 հիմնական հարցադրումներ.

- Ինչպե՞ս ստեղծել «Կանաչ տնտեսություն», որը կապահովի կայուն զարգացում և աղքատության հիմնախնդրի լուծում
- Ինչպե՞ս բարելավել Կայուն զարգացման միջազգային կոորդինացման շրջանակները:

Համաժողովում ընդունվել է վերջնական փաստաթուղթ՝ «Ապագան, որը մենք ցանկանում ենք» անվանումով: Փաստաթղթում նշված է. «Եթե մենք ցանկանում ենք մեր երեխաներին և թոռներին թողնել ապրելու համար ենթակա երկիր, ապա համաշխարհային աղքատության և շրջակա միջավայրի քայքայման խնդիրները պետք է լուծել հիմա»²: Այս տեսանկյունից փաստաթղթում կարևորվել են ներքոնշյալ հիմնախնդիրները.

- Այսօր աշխարհում ապրում է 7 մլրդ մարդ, իսկ 2050թ.-ին նրանց թիվը կհասնի 9 մլրդի:
- Ներկայումս աշխարհի բնակչության յուրաքանչյուր հինգերորդը (1.4 մլրդ մարդ) ապրում է 1.25 դոլար օրական կամ ավելի քիչ եկամտով:
- 0,5 մլրդ մարդ էլեկտրաէներգիայից չի կարող օգտվել:
- 2,5 մլրդ մարդ չունեն սահմանափակ:
- 1 մլրդ մարդ սոված է ամեն օր:
- Շարունակվում են մեծանալ ջերմոցային գազերի արտանետումները և դրա պատճառով կենդանական աշխարհի 1/3-ը վտանգված է և գտնվում է ոչնչացման եզրին, եթե չկարողանանք կանգնեցնել կլիմայի փոփոխությունները³:

Տարեցտարի մարդկանց քանակը ավելանում է և դրա հետ մեկտեղ աճում է սպառվող բնական ռեսուրսների նկատմամբ պահանջարկը, մեծանում են նաև բոլոր երկրներում մարդկանց եկամուտների միջև տարբերությունները: Իսկ կայուն զարգացումը ենթադրում է արժանապատիվ կենսամակարդակի

² <https://sustainabledevelopment.un.org/rio20> (03.05.215):

³ <https://sustainabledevelopment.un.org/rio20> (03.05.215):

ապահովում երկրագնդի բնակիչների համար, որի իրականացման շնորհիվ լուծում կտրվի հետևյալ հարցերին:

- Ինչպե՞ս կարելի է օգնել մարդկանց դուրս գալ աղքատությունից և ստանալ լավ աշխատանք՝ չմոռանալով շրջակա միջավայրի պաշտպանության մասին:
- Ինչպե՞ս կարելի է ապահովել մարդկանց մաքուր էներգիայով, երաշխավորելով, որ էներգիան որը արատադրվելու է չի բերի կլիմայի փոփոխության:
- Ինչպե՞ս կարելի է ապահովել բոլոր մարդկանց ջրով, ապրանքներով և համապատասխան սնունդով:
- Ինչպե՞ս կարելի է անել, որ յուրաքանչյուր մարդ ունենա արժանապատիվ կյանք:
- Ինչպե՞ս կարելի է բարելավել տրանսպորտային համակարգը, որը թույլ է տալիս մեզ հասնել այնտեղ որտեղ ցանկանում ենք առանց խցանումների և շրջակա միջավայրը աղտոտելու:
- Ինչպե՞ս կարելի է ապահովել օվկիանոսների մաքրությունը:
- Ինչպե՞ս կարելի է մարդկանց դիմացկուն դարձնել տարրերային աղետների դեմ⁴:

Այս հարթությունում խթանելով կայուն տնտեսական զարգացումը նպաստավոր պայմաններ են ստեղծվում սպառման և արտադրության աճի համար, ինչն էլ կոչված է նվազեցնելու մարդկանց միջև անհավասարությունները և բարձրացնելու բնակչության կենսամակարդակը⁵:

Փաստաթղթում նշվում է նաև, որ նախատեսվում է կանխել հիվանդությունների տարածումը, նպաստել կանանց և տղամարդկանց միջև հավասարության նվաճմանը և մշակել այնպիսի ռազմավարություններ՝ որպեսզի ամբողջ աշխարհի երիտասարդներն ունենան աշխատանք գտնելու իրական հնարավորություն: Այս տրամաբանության ներքո արդեն Յոհաննեսբուրգում կայուն զարգացման երեք բաղադրիչներին ավելացավ ևս մեկը՝ մշակույթը: Իսկ արդեն ՅՈՒՆԵՍԿՈ-ի 2013 թվականի մայիսի 17-ին տեղի ունեցած միջազգային գիտաժողովում՝ «Մշակույթը՝ կայուն զարգացման բանալի» խորագրով հրապարակվեց Խանչժոուի դեկլարացիան, ևս մեկ անգամ կարևորելով այն հանգամանքը, որ «..մշակույթը պետք է դառնա կայուն զարգացման քաղաքականության առանցքը»: Ինչու :

Բանն այն է, որ մեր օրերում հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող կերպափոխումներն իրենց արտացոլումն են գտնում ոչ միայն տրնտեսական, սոցիալական, այլ նաև մշակութային ոլորտներում: Հետևանքը՝ աշխարհի երկրների մեծ մասում ձևավորված նոր տիպի տնտեսությունն է՝ հետարդյունաբերական, տեղեկատվական, գիտելիքների, կամ պարզապես այսպես կոչված՝ նոր տնտեսությունը: Հետարդյունաբերական հասարակությունը

⁴www.un.org/en/sustainablefuture/index.shtml (25.05.2015):

⁵www.un.org/disabilities/documents/rio20_outcome-document-complete.pdf (17.03.2015):

ներառում է նոր տնտեսության հիմնական գծերը, որտեղ զարգացման որոշիչ ոլորտը՝ ծառայություններն են և հիմնական գործիքը՝ գիտելիքները: Նոր տիպի տնտեսությունն իր հերթին համարվում է գերազանցապես սպասարկող, և ոչ թե արտադրող, և դրանում դեֆիցիտային ռեսուրսը որակյալ ստեղծագործ աշխատողներն են, տեղեկատվությունը, տեխնոլոգիաները, այսինքն ծանրության կենտրոնում՝ մարդն է, անհատը: Նոր տնտեսության սոցիալ-տնտեսական հայեցակարգը անհատին կամ որ նույնն է մարդկային գործոնը համարում է հասարակության վճռական ռեսուրս, գործարարության հիմնական կապիտալ, շուկայական կերպափոխումների արմատական գործոն: Եվ օրինաչափորեն, այս հարթությունում կարևորվում է մշակույթի դերը՝ որպես շուկայական միջավայրի գործոն, կազմակերպությունների ոչ նյութական ակտիվ, որպես ճյուղ՝ որտեղ արտադրվում են մշակութային ապրանքներ, որոնցով բավարարվում են բնակչության պահանջմունքները՝ մշակութային զարգացման, հանգստի կազմակերպման, կյանքի որակի ապահովման ընթացքում: Եվ միանգամայն իրատեսորեն, Խանչժոուի դեկլարացիայի դրույթներին համաձայն նախատեսվում են միջոցառումներ, որոնք կապահովեն մշակույթի էական դերակատարումը կայուն զարգացման գործընթացներում, մասնավորապես⁶ նախատեսվում է.

- մշակույթը ներառել զարգացմանը վերաբերող բոլոր դասընթացներում,
- մշակույթի դերի խթանում աղքատության հաղթահարման և ներառական տնտեսության ձևավորման գործում
- մշակույթի զարգացում՝ շրջակա միջավայրի կայունության պահպանման վրա ներգործելու նպատակով,
- մշակույթի միջոցով տարերային աղետների և կլիմայական փոփոխությունների նկատմամբ հարմարվողականության արմատավորում,
- մշակույթի օգտագործում՝ որպես քաղաքների կայուն զարգացման ռեսուրս,
- մշակույթի օգտագործումը՝ երկրների միջև համագործակցության նոր մոդելների ձևավորման նպատակով:

Գիտական շրջանակներում ընդունված մեկնաբանումների մեջ մշակույթն ընկալվում է որպես հոգևոր, նյութական, մտավոր և զգացմունքային հատկանիշների ամբողջություն, որն հատուկ է յուրաքանչյուր հասարակությանը: Այն իր մեջ ներառում է ոչ միայն արվեստը և գրականությունը, այլ նաև մարդկանց ապրելակերպը, մարդու հիմնական իրավունքները, ընդունված արժեմահամակարգերը, ավանդույթները, հավատալիքները և այլն: Գործնականում, մշակույթը երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ամենակակեր հիմնասյուներից է: Այն ներառում է երկրի տնտեսական զարգացման վրա ամենատարբեր ձևերով, համարվելով զարգացման վերջնական նպատակը և

⁶http://russian.china.org.cn/china/txt/2013-05/17/content_28857841.htm (22.05.2015):

միջոցը: Մշակույթն ապահովում է անմիջական տնտեսական օգուտ՝ այն միաժամանակ զբաղվածության աղբյուր է՝ ուղղակի և անուղղակի առումներով: Մշակութային արդյունաբերությունը ստեղծում է աշխատատեղեր: Մշակույթը կարող է պոզիտիվ ազդեցություն ունենալ սոցիալական համակարգում՝ ամրապնդելով կանանց դիրքորոշումը հասարակության մեջ, կրճատելով աղքատությունը, նպաստելով սոցիալական արդարությանը: Ավելին, մշակույթի վրա կատարված ծախսերը կարելի է դիտարկել որպես ներդրումներ, որոնք փոխհատուցվում են բազմարկչի էֆեկտով: Մշակույթի նման դրսևորումը պայմանավորում է նաև մարդկանց միջև փոխհարաբերությունների բնույթը, նրանց միջև փոխհամագործակցության և փոխազդեցությունների շրջանակները: Ուստի և տրամաբանորեն, հարց է ծագում. համարվում է արդյոք մշակույթը «զարգացման» տարր, նպատակամետ գործոն՝ որն իր դրսևորման ամենաբազմազան ձևերով հանդերձ պայմանավորում է առաջընթաց և ներդաշնակ զարգացումներ: Ինչպիսիք են մշակույթի և կայուն զարգացման փոխհարաբերությունները, վերջիններիս հրամայականները մշակութային կապիտալի նկատմամբ: Ի սկզբանե կայուն զարգացման հայեցակարգը դիտվում էր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների, առհասարակ էկոհամակարգի շահագործման տեսանկյունից: Բանն այն է, որ ի տարբերություն կապիտալի այլ ձևերի, մշակութային կապիտալն ունի առանձնահատկություններ և թերևս ամենաէականն այն է, որ մշակութային կապիտալը փոխանցվում է սերունդներին, որպես մշակութային ժառանգություն, և այն հանգամանքը, որ կայուն զարգացումն արդեն իսկ ենթադրում է հեռանկար, ապա անխուսափելիորեն այն իր մեջ պարունակում է մշակութային տարր: Օրինակ, Գառնիի հեթանոսական տաճարի կամ Մ. Սարյանի կտավների ժառանգումը սերունդներին արդեն իսկ կայուն զարգացման տարր է իր մեջ պարունակում այն պարզ և հասկանալի պատճառով, որ մշակութային արժեքները ոչ միայն չեն ամորտիզացվում, ոչ միայն դրանց վերականգնման նպատակով կատարված ներդրումները չեն անհետանում, այլ ընդհակառակը, դրանց տնտեսական հատույցը ժամանակի ընթացքում բազմապատկվում է և միանգամայն տրամաբանորեն ենթարկվում մարդկային քաղաքակրթության զարգացման տնտեսական օրինաչափություններին: Եվս մեկ անգամ կարևորենք այն հանգամանքը, որ մշակութային կապիտալը մշակութային բարիքների և ծառայությունների աղբյուր է, որից հատույցը ոչ միայն ներկայում է, այլև ապագայում: Այնքանով, որքանով մշակութային կապիտալն առանձնանում է իր յուրահատկությամբ, (մասնավորապես էական է այս պարագայում ժամանակի գործոնը), այդքանով մշակութային կապիտալի դրսևորումները կայունության համատեքստում հարկ է դիտարկել որոշակի սկզբունքներից ելնելով, մասնավորապես, ինչպես Դ. Թրոսթին է նշում, հարկավոր է պահպանել «միջսերնդային արդարության, մշակութային բազմազանության, մշակութային համակարգերին աջակցության և

այլ սկզբունքներ»⁷, որոնք կոչված են համալրել կայուն զարգացումը և հետադարձ ակտիվ ներգործություն ունենալ վերջինիս ընթացքի վրա:

Այսպիսով, գլոբալացման պայմաններում առավել ցայտուն է դրսևորվում կայուն զարգացման քաղաքակրթական ասպեկտը, որի շրջանակներում մշակութային կապիտալն իր ողջ բազմազանությամբ վերածվում է մարդկային քաղաքակրթության զարգացման հիմնական և երկարաժամկետ գործոնի:

КУЛЬТУРА В КОНТЕКСТЕ СТАБИЛЬНОГО РАЗВИТИЯ

Ани Торосян

Аспирант Европейской региональной академии образования

Устойчивое развитие - это веление времени и обязательное требование. Это новое мышление, предполагающее гармонию экономической, социальной, культурной, экологической и политической сфер. Можно с точностью утверждать, что важным ресурсом данной гармонии является культура.

На сегодняшний день культура воспринимается как целостность духовных, материальных, ментальных и чувствительных особенностей, свойственных каждому обществу, социальной группе и личности. Данное восприятие культуры прямым и косвенным образом обуславливает сущность взаимоотношений между людьми, сферы сотрудничества, конкуренцию и взаимодействия. Соответственно, возникает логический вопрос: считается ли культура элементом «развития», целенаправленным фактором, обуславливающим прогресс и гармоничные развития путем различных проявлений. Да, в начале 21 века культура являлась одной из важнейших опор социально-экономического развития каждой страны. Она влияла на развитие человеческой цивилизации самыми разными путями, считаясь ее целью и средством.

Ключевые слова: культура, стабильное развитие, культурный капитал, новая экономика, глобальные проблемы.

⁷ Д. Тросби, Экономика и культура, Москва, 2013, ст. 88-89.

CULTURE IN THE CONTEXT OF STABLE DEVELOPMENT

Ani Torosyan

Ph.D. Student at European Educational Regional Academy

Stable development is the dictates of the present time and obligatory requirement. It is a new attitude that considers the harmony of economic, social, cultural, ecological and political sphere. It can be stated firmly that the most important resource in this harmony is the culture.

Nowadays, culture is conceived as a unity of spiritual, material, mental and sensitive features that is peculiar to every society, social group and individual. Perception of culture in such a way, directly and indirectly is conditioning the essence of mutual relations between people, circles of cooperation, competition and interactions. Thus, a question arises: is culture considered as “development” element, goal-oriented factor conditioning a progress and harmonic developments by means of various ways? Yes, at the beginning of 21st century culture is one of the most important backbones of the social-economic development in every country. It has an impact on the development of human civilization in a number of ways that is reckoned as its objective and method.

Keywords: culture, stable development, cultural capital, new economics, global primal problems.

ԲԱԺԻՆ 3

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԵՐԿՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ

Միրա Կարապետյա

*Երևանի պետական համալսարանի Բջևանի մասնաճյուղի և
Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս*

Լեզվաերկրագիտությունը մի ուղղություն է, որը մի կողմից իր մեջ ներառում է լեզվի ուսուցում, մյուս կողմից տալիս է որոշակի տեղեկություններ ուսումնասիրվող լեզվի երկրի և մշակույթի մասին: Լեզվաերկրագիտության գլխավոր նպատակը հաղորդակցական կոմպետենցիայի ապահովումն է միջմշակութային հաղորդակցության ժամանակ, ամենից առաջ զրուցակցի խոսքի ադեկվատ ընկալման և բնօրինակ տեքստերը լիարժեք հասկանալու միջոցով: Լեզվաերկրագիտության հիմնական խնդիրը լեզվակիր ժողովրդի մշակույթի ազգային առանձնահատկություններն արտացոլող լեզվական միավորների ուսումնասիրությունն է, որոնք բնորոշ են մեկ մշակույթին, բայց բացակայում են մյուսում, որոնք համընկնում են իրենց նշանակությամբ, բայց տարբերվում են պատմամշակութային իմաստներով, որոնց համարժեքները գոյություն ունեն համեմատվող մշակույթներում, բայց որոնք տարբերվում են կիրառության ազգային առանձնահատկություններով, ձևով, նշանակությամբ:

Հոդվածագիրը կարևորում լեզվաերկրագիտության դերը օտար լեզուների ժամանակակից ուսուցման գործընթացում, քանի որ այն նպաստում է լեզվի ուսուցման մոտիվացիային, սովորողների հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացմանը, ինչպես նաև օտար լեզվի ավելի զիտակցական ուսումնասիրությանը:

Բանալի բառեր. բանասիրություն, մշակույթ, օտար լեզվի ուսուցում, մեթոդիկա, երկրագիտություն, լեզվաերկրագիտություն

Հայտնի է, որ լեզվաերկրագիտական գիտելիքները մեծ նշանակություն են ունեցել լեզուների ուսուցման գործընթացում, բայց չեն առանձնացվել, որպես մանկավարժական ինքնուրույն կատեգորիա:

Դեռևս IV դարում սխոլաստիկական ուղղության ներկայացուցիչները փաստում էին, որ եթե «չիմանաս կյանքը, չես իմանա նաև լեզուն» ուստի լատիներեն ուսուցանելիս նրանք նկարագրում էին Ոսկե և Արծաթե դարերի գրականության ստեղծման պատմական և սոցիալական նախադրյալները: Մխոլաստիկների մեկնաբանություններն ընդարձակ էին և ընդգրկում էին տեղեկություններ ամենատարբեր ոլորտներից՝ սկսած աշխարհագրությունից մինչև սոցիալական վարքագիծ: Միայն XIX դարի վերջին և XX դարում է, որ կարևորագույն տեղ է հատկացվում այն երկրի նյութական և հոգևոր կյանքի հետ ծանոթացմանը, որի լեզուն ուսումնասիրվում է:

«Լեզվաերկրագիտություն» եզրույթն առաջին անգամ գործածության մեջ դրեցին ռուս լեզվաբաններ Մ.Վերեշագինը և Գ.Կոստոմարովը, որոնք սահմանեցին, որ «լեզվաերկրագիտությունը ռուսաց լեզուն օտարերկրացիներին ուսուցանելու մի հայեցակետ է, որի մեջ, ուսուցման հաղորդակցական բնույթը ապահովելու և կրթական ու մարդասիրական խնդիրները լուծելու նպատակով, լեզվադիդակտիկ եղանակով իրականացվում է լեզվի կուլտուրայով գործառույթ և կատարվում է հասցեատիրոջ կրթում, ընդ որում, դասավանդման մեթոդիկական ունի բանասիրական բնույթ՝ ճանաչողությունը անց է կացվում ռուսաց լեզվի միջնորդությամբ և այն սովորելու ընթացքում»¹:

Առանձնացնելով լեզվաերկրագիտության հետևյալ հիմնական ֆունկցիաները՝ հաղորդակցական, կուլտուրայով (կուլտակային) և դիրեկտիվային (անհատին ուղղորդող, ներգործող, ձևավորող), Վերեշագինը և Կոստոմարովը հիմնադրեցին լեզվաերկրագիտությունը, որպես օտար լեզու ուսումնասիրող անհատի զարգացման միջոց: Նրանք վերաձևակերպեցին հոգեբան Գ.Անանի «անհատականությունը մշակույթի արգասիք է» հայտնի աֆորիզմը, «անհատականությունը լեզվի և մշակույթի արգասիք է» աֆորիզմով²:

Սկզբնական փուլում հեղինակները օգտվեցին արդեն գոյություն ունեցող «երկրագիտություն» եզրույթից, որը մեկնաբանվում էր այլ կերպ, և ուսումնական գործընթացում ուսումնասիրվող երկրի մասին ողջ տեղեկատվությունն իր կառուցվածքով և սկզբունքներով էապես տարբերվում էր նրանից, ինչ ավանդաբար հասկացվում էր այդ անվան տակ և կիրառվում էր օտարերկրացիների ուսուցման գործընթացում: Ակնհայտ էր, որ օտար լեզվի իմացությունն անհնարին էր առանց տվյալ երկրի հետ ծանոթության, ուստի առաջադրվեց լեզվի ուսուցումը իրականացնել այդ երկրի մշակույթի հետ սերտ կապի մեջ, այսինքն, սովորողների մոտ ձևավորել մշակութաբանական գիտելիքներ և տվյալ լեզուն կրողի մտածելակերպը հասկանալու կարողություններ:

Օտար լեզուների դասավանդման մեթոդիկայում վաղուց արդեն կիրառվում են «երկրագիտական նյութեր», «երկրագիտական տեքստեր», «երկրագի-

¹ Верещагин Е. М., Костомаров В. Г. Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык. 1990, с.22.

² Верещагин Е. М., Костомаров В. Г. Язык и культура. Лингвострановедение в преподавании русского языка как иностранного. М.: Русский язык. 1990, с.7.

տության ուսումնական ձեռնարկներ» և այլն: Ներկայումս բազմաթիվ բարձրագույն ուսումնական հաստատություններում լեզվի հիմնական դասընթացին ավելացվում են երկրագիտության հատուկ դասընթացներ, որտեղ մեծ ուշադրություն է դարձվում երկրագիտական թեմաներին: Ուսանողները լեզվի ուսուցման ընթացքում ծանոթանում են ուսումնասիրվող լեզվի երկրի (կամ երկրների) աշխարհագրությանը, էկոնոմիկային, պատմությանը, կենցաղին, ավանդույթներին, սովորույթներին: Լեզվական նյութի վրա աշխատելիս օտար լեզու դասավանդողները մշտապես տեղեկություններ են տալիս ուսումնասիրվող լեզվի երկրի մասին:

Լեզվաերկրագիտությունը, որպես բանասիրության հատուկ բնագավառ, ձևավորվել է լեզվի դասավանդման երկարամյա փորձի հիման վրա: Լեզվի և մշակույթի ուսումնասիրության խնդրին անդրադառնալը պատահական չէր, քանի որ այն հնարավորություն էր տալիս հաջողությամբ համակցել երկրագիտության տարրերը լեզվական երևույթների հետ, որոնք ոչ միայն հաղորդակցության, այլև սովորողներին՝ իրենց համար բոլորովին նոր իրականության հետ ծանոթանալու միջոցներ էին:

«Օտար լեզվի ուսուցման այսպիսի մոտեցումը մեծ մասամբ ապահովում է ոչ միայն գործնական, հանրակրթական և դաստիարակչական խնդիրների էլ ավելի արդյունավետ լուծում, այլև ունի հսկայական հնարավորություններ ուսուցման մարտահրավերն ու հետագա մոտիվացիան պահպանելու համար»³:

«Լեզվաերկրագիտություն» եզրույթը ընդգծում է, որ այս ուղղությունը մի կողմից իր մեջ զուգակցում է լեզվի ուսումնառություն, մյուս կողմից տալիս է հիմնարար որոշակի տեղեկություններ ուսումնասիրվող լեզվի երկրի մասին: Մակայն քանի որ նրա հիմնական նպատակը տվյալ երկրի ուսումնասիրությունը չի, այլ լեզվի կրողների գիտելիքները, նրանց մշակույթը, ապա ըստ Տոմախինի ճիշտ կլիներ այն անվանել «մշակութաբանություն»⁴: Մակայն «լեզվաերկրագիտություն» եզրույթն արդեն ամուր մտել է օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի մեջ, և անհրաժեշտ է հստակ տարանջատել երկրագիտությունը լեզվաերկրագիտությունից: Եթե երկրագիտությունը հասարակական գիտություն է, ինչ լեզվով էլ որ այն դասավանդվի, ապա **լեզվաերկրագիտությունը** բանասիրական առարկա է, որը դասավանդվում է օտար լեզվի գործնական պարապմունքների ընթացքում լեզվական միավորների իմաստաբանության վրա աշխատելու ընթացքում: **Լեզվաերկրագիտությունը**, որպես բանասիրական առարկա դիտարկելու դեպքում հնարավոր է լուծել երկու տարբեր խնդիրներ.

³ Саланович Н. А. Лингвострановедческий подход как средство повышения мотивации при обучении иностранным языкам в старших классах средней школы (на материале французского языка): автореф. дисс. ... канд. пед. наук. М., 1995, с.2.

⁴ Томахин Г. Д. Фоновые знания как основной предмет лингвострановедения // Иностранные языки в школе. 1980. № 3.

1. Լեզվական միավորներից դուրս բերել մշակութաբանական տեղեկատվությունը, որի ժամանակ, որպես առաջնահերթ խնդիր, առաջին պլան է մղվում մշակույթի ուսումնասիրությունը:

2. Լեզվական միավորի ներկայացում և ուսուցանում այն պատկերի նմանողությամբ, որը գոյություն ունի այդ լեզուն և մշակույթը կրողի գիտակցության մեջ: Պատկերը, որի վրա կառուցվում է բառի կամ դարձվածքի ձևաբանությունը, օտար լեզու սովորողի մոտ ստեղծվում է աստիճանաբար, լեզվական/խոսքային միավորների իմաստների վրա աշխատելու պրոցեսում: Մեմանտիկայի, բառիմաստի վրա աշխատելու ընթացքում ուսուցման առաջին պլան է մղվում ոչ թե մշակույթը, այլ լեզուն, և լեզվաերկրագիտական կոմպետենցիան այս դեպքում կոչված է ապահովելու հաղորդակցական կոմպետենցիա՝ նմանատիպ պատկերներ ձևավորելով ունկնդրողի և խոսողի գիտակցության մեջ այնպես, ինչպես դա տեղի է ունենում միևնույն լեզուն և մշակույթը կրողների միջև հաղորդակցության ժամանակ:

Այսպիսով, լեզվաերկրագիտության գլխավոր նպատակը միջմշակութային հաղորդակցության ժամանակ հաղորդակցական կոմպետենցիաների ապահովումն է, ամենից առաջ զրուցակցի և լեզուն կրողի համար նախատեսված բնագիր տեքստերի ադեկվատ ընկալման միջոցով: «Լեզվաերկրագիտությունը ապահովում է մի շարք խնդիրների, մասնավորապես գլխավոր բանասիրական խնդրի լուծում՝ տեքստը ադեկվատ ձևով հասկանալը: Ահա թե ինչու, այն ներկայանում է, որպես լեզվաբանական հիմք ոչ միայն լեզվադիդակտիկայի, այլև թարգմանության համար»⁵:

Թարգմանություն կատարելիս շատ կարևոր է լիարժեքորեն հասկանալ օտարալեզու տեքստը իր իմաստային բոլոր նրբերանգներով և ընտրել համապատասխան համարժեքները թարգմանության լեզվում: Կարելի է բերել բազմաթիվ օրինակներ գեղարվեստական գրականությունից, երբ տեքստի թարգմանությունը աղավաղվել է ազգային մշակույթի ոչ բավարար իմացության պատճառով:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարող ենք արձանագրել, որ լեզվաերկրագիտությունը մի ուղղություն է, որը մի կողմից իր մեջ ներառում է լեզվի ուսուցում, մյուս կողմից տալիս է որոշակի տեղեկություններ ուսումնասիրվող լեզվի երկրի և մշակույթի մասին: Լեզվաերկրագիտության գլխավոր նպատակը հաղորդակցական կոմպետենցիայի ապահովումն է միջմշակութային հաղորդակցության ժամանակ, ամենից առաջ զրուցակցի խոսքի ադեկվատ ընկալման և բնօրինակ տեքստերը լիարժեք հասկանալու միջոցով: Լեզվաերկրագիտության հիմնական խնդիրը լեզվակիր ժողովրդի մշակույթի ազգային առանձնահատկությունները արտացոլող լեզվական միավորների ուսումնասիրությունն է, դրանք են՝ իրողություններ (առարկաներ և երևույթներ, որոնք բնորոշ են մեկ մշակույթին, բայց բացակայում են մյուսում), կոնոտատիվ բառապաշար (բառեր, որոնք համընկնում են իրենց նշանակությամբ, բայց տարբերվում են

⁵ Карапетян О. В., Мясковская Т. В., 2012 118 Издательство «Граммота» www.gramota.net

պատմամշակութային իմաստներով), հիմքային բառապաշար (առարկաներ և երևույթներ, որոնց համարժեքները գոյություն ունեն համեմատվող մշակույթներում, բայց որոնք տարբերվում են գործածության ազգային առանձնահատկություններով, ձևով, նշանակությամբ): Մեծ է լեզվատրամադրության դերը օտար լեզուների ժամանակակից ուսուցման գործընթացում, քանի որ այն նպաստում է լեզվի ուսուցման մոտիվացիային, սովորողների հետաքրքրությունների և պահանջմունքների զարգացմանը, ինչպես նաև օտար լեզվի ավելի գիտակցական ուսումնասիրությանը:

ЗНАЧЕНИЕ ЛИНГВОСТРАНОВЕДЕНИЯ ПРИ ИЗУЧЕНИИ ИНОСТРАННОМУ ЯЗЫКУ

Мира Карапетян

Преподаватель Иджеванского филиала Ереванского государственного университета и Международного университета Евразия

Лингвострановедение - это такое направление, в рамках которого даются не только определенные знания о языке, но и общие сведения о культуре и географии той страны, язык которой подлежит изучению. Главной целью данной отрасли является обеспечение коммуникативных компетенций, что способствует формированию адекватного восприятия речи собеседника и полноценному осмыслению языковой оригинальности переводимых текстов. Основной задачей лингвострановедения является изучение языковых единиц, которые отражают этнические и национальные особенности культуры народа-носителя данного языка, характерны для одной субкультуры, но отсутствуют в иной субкультуре, которые совпадают по своему значению, но отличаются своим культурно-историческим смыслом, эквивалент которых существует в сопоставляемых субкультурах, но не совпадают с этническими значениями, формами и особенностями их применения. На современном этапе в области обучения иностранным языкам, лингвострановедение приобрело неоспоримо большое значение, так как оно способствует формированию и определенной мотивации, заинтересованности, познавательной потребности, а также развитию предрасположенности к более осмысленному изучению иностранных языков учащимися.

Ключевые слова: филология, культура, изучение иностранного языка, методика, страноведение, лингвострановедение

THE IMPORTANCE OF LINGO-AREA STUDIES IN THE PROCESS OF FOREIGN LANGUAGE TEACHING

Myra Karapetyan

*Lecturer at Yerevan State University Ijevan Branch and
Eurasia International University*

Lingo-area studies is a field which includes language learning in one hand, and provides one with information about the country and culture of the language being studied on the other hand. The essential goal of lingo-area studies is the provision of communication competence during intercultural communication by means of the adequate perception of the interlocutor's speech and the complete understanding of source texts. The major problem of lingo-area studies is the research of language units expressing the national characteristics of the culture of the native population which are typical to one culture but lack in the other one, which are the same in semantic meaning but different in historical and cultural meanings, which have their equivalents in the cultures being compared but they are different in their national characteristics, form and meaning. Lingo area studies has a crucial role in the process of foreign language learning as it promotes the language learning motivation, the development of interests and demands of the learners, as well as the more conscious studies of the foreign language.

Keywords: philology, culture, foreign language teaching, methodology, area studies, lingo area studies.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
ԲԱԺԻՆ 1	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
Հրանուշ Հակոբյան	
Հայոց ցեղասպանությունը և հայ կինը.....	6
Գառնիկ Սաֆարյան	
Հայոց ցեղասպանության իրավաբանական պատասխանատվության հիմնահարցը	16
Նունե Ջումարյան	
«Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» կոնվենցիան որպես ցեղասպանությունների կանխարգելման իրավական միջոց՝ արդի մարտահրավերների համատեքստում	26
Алла Руденко	
Тема геноцида в русской литературе	34
Միրա Կարապետյան	
Ֆրանսիացի ժամանակակից գրող Մարկ Լեվին և Հայոց ցեղասպանության թեման նրա ստեղծագործության մեջ	44
Արամ Թումասյան	
Հայոց Մեծ Եղեռնի բարոյագաղափարական Ներգործությունը հայ մատաղ սերնդի վրա	50
Հայկ Հովհաննիսյան	
Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կրտսեր սպայական կազմի մեջառաջնորդին բնորոշ հատկանիշների ձեկավորման հարցերի շուրջ	57
David Leupold	
Transitions to Authoritarianism: The Case of the Southern Caucasus	65

ԲԱԺԻՆ 2

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վարդուհի Գարրիեյան

ՊՄԳ. պետության և գործարարության փոխգործակցության նոր միտումները 74

Լուսինե Սարգսյան

ՀՀ ազգային ինովացիոն համակարգի կատարելագործման մեխանիզմները 86

Արաքսյա Թաղամազյան

Գնահատումը որպես գույքային շրջանառության արդունավետության բարձրացման գործոն 96

Մենիկ Ջուլիակյան

Էլեկտրաէներգիայի սպառման համաշխարհային միտումները 104

Գոհար Ավագյան

Միջազգային վարկերի ներգրավման արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում 125

Անի Թորոսյան

Մշակույթը՝ կայուն զարգացման համատեքստում 136

ԲԱԺԻՆ 3

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Միրա Կարապետյան

Լեզվաերկրագիտության նշանակությունը օտար լեզվի ուսուցման գործընթացում 145

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտաժողովի նյութերի ժողովածու
Նվիրված է Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին

Համակարգչային չափաբերման, էջադրման,
ձևավորման աշխատանքները՝ Տաթև Ավագյանի

Տպագրությունը՝ «Ռիզոգրաֆ» եղանակով
Թուղթը՝ Օֆսեթ
Չափսը՝ 60 x 84^{1/8}
Տառատեսակ՝ Sylfaen
Տպաքանակ՝ 250
Գինը՝ պայմանագրային

ISBN 978-9939-866-01-7

Եվրասիա միջազգային համալսարան
ՀՀ, 0014, Երևան Ազատության 24/2
Հեռ.՝ (+374 10) 299088
Էլ.փոստ՝ info@eiu.am
Էլ.կայք՝ www.eiu.am